

ՎԱՆԵՍԱ ԲԵՅՐԴ

ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ՈՒՂԵԿԻՑ

Կենս.գիտ.թեկնածու Կարեն Բաղալյանի
ընդհանուր խմբագրությամբ

ISBN: 9975-9521-1-9
the NO-NONSENSE guide to SEXUAL DIVERSITY
Vanessa Baird

The No-Nonsense Guide to Sexual Diversity
First published in the UK by New Internationalist Publications Ltd.
Oxford OX4 1BW, UK
www.newint.org
in association with
Verso
6 Meard Street
London
W1F 0EG
www.versobooks.com

Copyright . New Internationalist 2001 and individual contributors.

All rights reserved. No part of this book may be reproduced, stored in a retrieval system of transmitted, in any form or by any means, electronic, electrostatic, magnetic tape, mechanical, photocopying, recording or otherwise, without prior permission in writing of the Publisher.

Հայերեն հրատարակության աշխատակազմ
Թարգմանիչներ՝ Է. Ղևոնդյան, Ծ. Մանուկյան
Խմբագիր՝ Ս. Վերանյան
Սրբագրիչ՝ Ա. Ավետիսյան

Գիրքը հրատարակված է «Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ-ի կողմից «PRECIS» ծրագրի շրջանակներում՝ Նիդեռլանդների Թագավորության արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

«Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ-ն խորհին շնորհակալություն է հայտնում «New Internationalist» հրատարակչությանը և հեղինակ Վանեսա Բեյրդին՝ հայերեն լեզվով գրքի հրատարակման հեղինակային իրավունքներն անհատույց տրամադրելու համար:

«Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ
P.O. BOX 67, Երևան 0010, ՀՀ
Էլ փոստ: wfce@wfce.am
URL: www.wfce.am

ՆԱԽԱԲԱՆ

Բոլոր հասարակություններում էլ առկա է եղել և հիմա էլ առկա է սեռական բազմազանությունը: Միայն թե ոչ բոլոր հասարակություններն են հանդուրժում սեռական փոքրամասնություններին, փորձում հասկանալ նրանց կամ պարզապես կողք կողքի խաղաղ ապրել... Շատ երկրներում շարունակում են մարդկանց կտրուկ սահմանազատել որպես «տարասեռական (ավանդական, նորմալ) և «նույնասեռական» (ոչ ավանդական, աննորմալ, այլասերված) կողմնորոշվածություն ունեցողների, ինչը, եկեղեցիների և պետությունների կողմից հավանություն ստանալով, վերածվել է հասարակական կարծրատիպի և խորապես արմատավորվել բոլոր ոլորտներում՝ կրթության, բժշկության, սոցիալական ապահովության ծառայությունների և այլն մինչև անգամ՝ կենսակերպ մտել:

Սա, իհարկե, ոչ բոլոր հասարակություններին է վերաբերել: Որոշ մշակույթներում թույլատրելի են եղել նույնասեռական փորձերը՝ որպես պատասխանատու հասունության շրջան անցնելու տվորույթ, այլ մշակույթներում կանացի հատկանիշներով կամ ոչ ավանդական կողմնորոշվածություն ունեցող տղամարդկանց համար սոցիալական հատուկ դերեր էին ստեղծվում, որոնք կրոնական ծեսերում հատուկ կարևորություն ունեին:

Մեր օրերում պատկերը մի փոքր այլ է. ովքեր չեն համապատասխանում ավանդական մշակույթի նորմերին, խտրաբարո վերաբերմունքի ու քննադատության են արժանանում, շատ հաճախ բռնության են ենթարկվում, մինչև անգամ մահվան են դատապարտվում: Այնուամենայնիվ, որքան էլ փորձել ու փորձում են արմատախիլ անել սեռական բազմազանությունը, այն միշտ էլ եղել և շարունակում է մնալ: Ավելին՝ եթե նախկինում սեռական փոքրամասնություններն «զնդհատակյա» կյանքով էին ապրում, ապա ներկայումս նրանք բարձրաձայն հայտնում են իրենց մասին: Ամբողջ աշխարհում սեռական վտարակները իրավունքների հավասարություն և արդարություն են պահանջում: Ամենահնարավոր միջոցներով նրանք դիմադրում են նախապաշարմունքներին, խտրականություններին, հոմոֆոբիային և ճնշամիջոցներին:

1960-ականներից, հիմնականում զարգացած երկրներում, արդեն դրված են հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու հիմքերը, թեպետ դեռ վաղ է խոսել լիակատար ընդունման մասին: Ակնառու են դիմադրության համաշխարհային այլքն ու արդարադատության մարմիններին դիմելու օրինակները:

Աշխարհը փոխվում է:

Վանեսա Բեյրդի «Սեռական բազմազանության արժանահավատ ուղեկից» գիրքը միաժամանակ և՛ պատմական, և՛ մշակութային համեմատական-վերլուծական է, որը կենդանի ու արտահայտիչ կերպով արժարժում է վերոնշյալ խնդիրները, լուսաբանում, ներկայացնում իրական պատկերը: Այն արտացոլում է սեռական փոքրամասնությունների աշխարհը, իր ավանդի և ներդրում նրա ընկալման և ընդունման գործում, պայքարում է սեռական բազմազանության նկատմամբ հարգանքի դրսևորման համար և այն գնահատում որպես մարդկային աշխարհի անբաժանելի ու կենդանի մասնիկ:

Ջեֆրի Վիքս

Սաուս Բենք համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր
Մեծ Բրիտանիա, Լոնդոն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեքսիկյան վերաբերող հարցերը միշտ հետաքրքրություն են առաջացնում: Եվ սեռական բազմազանությանը նվիրված ցանկացած գիրք ընթերցողի ուշադրությանը կարժանանա միայն այն դեպքում, երբ կարողանա պատասխանել այն հարցին, թե ինչ է մարդու սեռական վարքի բազմազանություն ասվածը:

Այս գիրքը նույնասեռական տղամարդկանց և կանանց, երկսեռականների, փոխսեռականների, ինչպես նաև նրանց մասին է, որոնց կենսաբանական սեռը չի համընկնում իրենց համար նախընտրելի սոցիալական դերին:

Վերոհիշյալ կարգի մարդիկ հաճախ են հետապնդվում և կամ խտրաբարո վերաբերմունքի արժանանում հասարակության կողմից այն պատճառով, որ նման չեն մյուսներին, ու նման հետապնդումների կամ խտրականությունների աստիճանը տարբերվում է՝ ելնելով մի շարք գործոններից և կոնկրետ իրավիճակներից:

Այս մարդիկ պայքարում են իրենց մարդկային իրավունքի համար՝ լինել այնպիսին, ինչպիսին որ կան, ապրել աշխարհում, ուր նրանք բռնության և նկրտումների թիրախ չեն լինի, առանց սեփական կյանքը, ազատությունը կամ գոյամիջոցները կորցնելու վախի, երկկողմանի համաձայնությանը սեռական հարաբերություններ ունենալու իրավունքի համար, հասարակության լիիրավ անդամ ճանաչվելու իրավունքի համար, ուր իրենց կվերաբերվեն նույնպիսի հարգանքով, ինչպիսին հասարակությունը տաժում է իր մնացած բոլոր ներկայացուցիչների նկատմամբ:

Քանի որ այս գրքի հիմնական գաղափարը նվիրված է այն բանին, որ սեռական բազմազանության հարցը առաջին հերթին մարդու իրավունքներին վերաբերող խնդիր է, ես խուսափել եմ խոսել «նորմայից շեղված» այնպիսի դրսևորումների մասին, ինչպիսիք են մանկամոլությունը կամ սեռական բռնությունը, որոնցում փոխհարաբերություններն ամենևին էլ հիմնված չեն երկկողմանի համաձայնության վրա:

Մոռացված ժամանակներից աշխարհում գոյություն ունեն մարդիկ, որոնց սոցիալական սեռն ու սեռական կողմնորոշվածությունը չեն համապատասխանում հասարակության արժեքներին ու չափանիշներին: Երբեմն հասարակությունը բավականին բարյացակամ է ընդունում նրանց, երբեմն էլ ազատվում է նրանցից հնարավոր բոլոր միջոցներով, ընդհուպ փաստաթղթերից նրանց անունների վերացումը: Ներկայումս մենք ապրում ենք մի աշխարհում, որին բնորոշ են ծայրահեղություններն ու պարադոքսները. մի կողմից անկանխակարծություն, բանակցելու պատրաստակամություն, փաստի ընդունում, հետաքրքրություն, մյուս կողմից՝ ատելություն, պահպանողական կարծրատիպ, այսպես կոչված, ավանդական կանխակարծություն և դաժան թշնամանք:

Սակայն ակնհայտ է մեկ բան. եթե XX դարի սկզբին որոշ հարցեր կորցնում էին իրենց արդիականությունը, ապա սեռական բազմազանության խնդիրը դեռ երկար ժամանակ ներկայիս աշխարհում անլուծելի է մնալու: Նույնասեռականությանը վերաբերող հարցերի շուրջ բանավեճերը հատուկ աշխուժությամբ են ծավալվում հարավային երկրներում կամ Մեծամասնության աշխարհում, ուր դեռ մի քանի տասնամյակ առաջ ասում էին, թե նույնասեռականներ գոյություն չունեն: Համեմատաբար հարուստ երկրներում հայտնված և մամուլում ավելի ու ավելի շատ լուսաբանվող փոխսեռականների իրավունքների պաշտպանության շարժումը միտում և խարխիլում է վաղուց հաստատված հավատը այն սեռական համակարգի գոյության մասին, որտեղ ընդգրկված էին միայն տղամարդն ու կինը:

Վանեսա Բեյդո
Օքսֆորդ

1. ՇՐՋԱՅՅ ԱՇԽԱՐՀՈՎ

Համաշխարհային ելք ընդհատակից... գլոբալիզացման ազդեցությունը սեռական ոլորտի վրա... սեռական նույնականացում, աղքատություն և աջակցության հետաքրքիր դեպքեր

Մինչ Վիլյամ Ֆերնանդեսը խոսում է, նրա թիկունքին՝ պատուհանի սառած ապակու միջով ես հեշտությամբ կարող եմ տեսնել շրջակայքում զբոսնող զինված տղամարդկանց: Նախքան մեր գրույցը սկսելը Վիլյամը հետաքրքրվեց՝ ինչ են նման նրանք այստեղ: «Մեր ապահովության համար են,- պատասխանեցի ես,- ֆաշիստական խմբակի կողմից սպառնալիքներ են եղել մեր հասցեին»:

Նա հոգնած ժպտաց: Այս իրավիճակը ծանոթ էր Վիլյամին. նա էլ Սալվադորից նոր էր ժամանել Հռոմ՝ մասնակցելու սեռական փոքրամասնությունների ակտիվիստների միջազգային գիտաժողովին:

«Վերջին երկու տարվա ընթացքում մեր ընկերներից քսանին սպանել են...», - ասաց Վիլյամը՝ նկարագրելով իրավիճակը, որի հետ բախվել էին ինքն ու Սան Սալվադորում հիմնավորված «Entre Amigos» (ընկերների մեջ) կազմակերպության մյուս անդամները: - Սպանություններից միայն երկուսը ոստիկանական հետաքննության առիթ դարձան»:

Նրա նկատմամբ նույնպես մահափորձ էր կատարվել: Այդ ժամանակներից սկսած նա հաճախ է սպառնալիքների ենթարկվել: Կազմակերպությունը կազմալուծվեց, փաստաթղթերը կորան: Երբ դիմեց ոստիկանություն, ասացին, որ գուր հույսեր է փայտալուծվում՝ կարծելով, թե ոստիկանությունը պաշտպանելու է իր նմաններին:

Գեռ մի քանի տարի առաջ, ով էլ լինեք Վիլյամի իրավիճակում, կհուսահատվեք: Սակայն Վիլյամը չհամձնվեց: Նա կապ հաստատեց մարդու իրավունքների պաշտպանության «Միջազգային համաձայնություն» կազմակերպության, ինչպես նաև Գեյերի և լեսբուհիների իրավունքների պաշտպանության միջազգային համաձայնագրի հետ: Նրանք միջազգային շարժում ծավալեցին, և «Entre Amigos»-ը վերջապես ստացավ ոստիկանության պաշտպանությունը:

«Entre Amigos»-ի պատմությունը ցույց է տալիս, թե վերջին տարիներին որքան հեռու և որքան առաջ է գնացել սեռական բազմազանության քաղաքականությունը: Այնքան է, որ սեռական փոքրամասնություններին պատկանող մարդիկ, որոնց թիվն անընդհատ աճում է, նույնիսկ խիստ թշնամական վերաբերմունքի պայմաններում չեն ցանկանում ձեռքերը ծալած նստել:

Սակայն կատարվածն ըմբռնելու համար կարևոր է նաև «Entre Amigos»-ի, որպես կազմակերպության, էությունը: «Մեր կազմակերպության մեջ ընդգրկված են լեսբուհիները, գեյերը, փոխսեռականները, բոլորը՝ բացառությամբ միջսեռականների, սակայն համոզված եմ, որ ժամանակի ընթացքում նրանք էլ կլինեն: Մեր կենտրոն են հաճախում քաղաքի սոցիալապես ամենամեղմված մարդիկ: Նրանց թվում են պոռնիկները, թմրամոլները, գողերը... Բազմազանության ու սոցիալական ներգրավվածության խնդիրները,- ասում է Վիլյամը, - ամենակարևորն են կազմակերպության ոգու համար»:

Գլոբալիզացնելով հարցը

Դեռ տասը տարի առաջ հարուստ երկրներում բնակվող լեսբուհիների և գեյերի համար դժվար կյանք Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի երկրների սեռական փոքրամասնությունների վերաբերյալ որևէ տեղեկություն գտնելը՝ Նույնասեռականությունն այստեղ շատ հաճախ անտեսանելի է եղել:

Բայց ոչ այսօր: Այդ երկրներում գեյերի շարժման ի հայտ գալը նման էր պայթյունի. պատասխան ռեակցիան է՛լ ավելի նկատելի դարձավ:

Ձիմբաբվեի նախագահ Ռոբերտ Մուգաբեի «Նրանք խոզերից ու շներից էլ վատն են»՝ նույնասեռականների հասցեյին ասված հայտյանքի խոսքերը, ինչպես նաև այն փաստը, որ նա արգելեց Ձիմբաբվեի գեյերի ու լեսբուհիների (ՁԳՈւԼ) կազմակերպությանը 1996 թվականին մասնակցել Հարարայում անցկացվող Գրքի միջազգային ցուցահանդեսին, շնորհիվ զանգվածային լրատվամիջոցների՝ հայտնի դարձան ողջ աշխարհին: Ճակատագրի հեզմանքով այսպիսի «գովազդը» շատերին հրահրեց համալրելու ՁԳՈւԼ-ի շարքերը: Հարցի միջազգային կարևորությունն ընդգծելու համար Լոնդոն կատարած այցի ժամանակ Մուգաբեն գեյերի իրավունքների համար պայքարող մարտիկ Փիթեր Թաբչելի կողմից քաղաքական կալանքի ենթարկվեց՝ իր ժողովրդի նկատմամբ կատարած հանցագործությունների համար: Կատաղած Մուգաբեն միջադեպի համար մեղադրեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյի «գեյական մաֆիային»:

Հնդկաստանի զանգվածային լրատվամիջոցներով թե՛ պայքար է ծավալվում գեյերի կողմնակիցների և հակառակորդների միջև, հատկապես պայքարը սրվում է Հնդկաստանի լեսբուհիների առիթով: «Այդպիսի մարդկանց դժբախտ երեխաները, ինչպես ասված է հոդվածներից մեկում, վաղ թե ուշ խելագարության, հոգեկան հիվանդությունների կամ էլ հանցագործությունների վտանգի առջև են կանգնելու»: «Իսկ ո՞ւմ են պետք տղամարդիկ...», - հակաճառում է մյուս հոդվածագիրը: Այսպիսով, նույնասեռականների նկատմամբ խտրականությունը կողմ և դեմ վիճաբանությունները ընթանում են բուռն կերպով:

2000թ. վերջերին անձեռնմխելի ներքինիների վեցերորդ՝ հիջրա կաստայի ներկայացուցիչը քաղաքական պաշտոն էր ստացել, ինչը շարունակությունն էր մի քանի տարի առաջ սկսված այն միտման, երբ անձեռնմխելի ներքինիները բնակչության ամենաաղքատ խավերի քաղաքական ներկայացուցիչներն էին դառնում:

Վերջին տարիներին աշխարհը մեծ հետաքրքրությամբ էր հետևում, թե ինչպես նախ Հարավաֆրիկյան Հանրապետությունը, ապա նաև Էկվադորն առաջին երկրները դարձան, որոնք ընդունեցին սեռական կողմնորոշվածության խտրականության դեմ պայքարի մասին օրենքի դրույթները, ապա դրանք ընդգրկեցին իրենց երկրի սահմանադրության մեջ:

Դանիայի, հետագայում նաև Հոլանդիայի՝ իրենց երկրի նույնասեռական գույգերին օրինական ամուսնության հնարավորություն տալու օրինակին հետևեցին նաև Վիետնամն ու Մեքսիկան, որոնք օրենքի համապատասխան դրույթներն ընդգրկեցին իրենց երկրի օրենքների մեջ:

2001 թվականի հունիսին Միացյալ ազգերի կազմակերպության /ՄԱԿ/ վեց անկախ փորձագետներ լեսբուհիների, գեյերի, երկսեռականների և փոխգեղեցիկների

ընկերություններին ուղղված համատեղ հայտարարություն հրապարակեցին, որով կոչ էին անում ընկերությունների ակտիվիստներին սեռական փոքրամասնությունների հանդեպ կիրառվող՝ մարդու իրավունքների խախտումների դեպքում դիմել ՄԱԿ-ին: Այս հայտարարությունը չափազանց կարևոր դարձավ սեռական փոքրամասնությունների պայքարում՝ նրանց ձայնը ՄԱԿ-ին հասցնելու, ինչպես նաև այն բանի համար, որ այսուհետ մարդու իրավունքները պաշտպանող կազմակերպությունն ավելի շատ տեղեկություն ստանալու հնարավորություն էր ունենում լեսբուհիներին, գեյերին, երկսեռականներին և փոխգեղեցիկներին վերաբերող հարցերի շուրջ:

Սեռական բազմազանությանը վերաբերող տեղեկատվության տարածման համար էական հնարավորություններով է օժտված ժամանակակից ինտերնետը: Անգամ այն երկրներում, ուր գործում են նույնասեռականության արգելքն ու պատիժը դրա դեմ, մարդիկ համերաշխորեն կարող են կայքեր այցելել, միմյանց հետ կապ հաստատել, ինտերնետով շփվել: Օրինակ, այսօր գոյություն ունեն արաբերեն լեզվով բազմաթիվ կայքեր լեսբուհիների, գեյերի, փոխգեղեցիկների համար, ովքեր ապրում են այնպիսի երկրներում, ուր իշխում են իսլամի օրենքները:

Չնայած ինտերնետի օգտվելու հնարավորություն ոչ բոլորն ունեն, համընդհանուր ցանցը, այնուամենայնիվ, քիչ բան չի անում, որպեսզի ոչ ավանդական կողմնորոշվածություն ունեցող մարդիկ, ովքեր ապրում են այնպիսի պայմաններում, որ ստիպված են թաքցնել իրենց պահանջմունքները, հնարավորինս իրենց մեկուսացված չզգան:

Ավանդույթի արգելքները

Մակայն գլոբալիզացումն ունի նաև իր էպպես բացասական կողմերը: Տնտեսական գլոբալիզացման ընթացքը, որը սառը պատերազմի վերջերից աներևակայելի թափ էր առել, ավելի շահավետ պայմաններ ստեղծեց ամենահարուստների համար՝ ամենաաղքատների հաշվին: Քաջ հայտնի են կազմակերպված աշխատանքի հետևանքները, երբ բազմազգային կորպորացիաները լեշակերների պես նախ հարձակվում են աշխատավարձի գերցածր մակարդակ և աշխատանքային գերփափուկ օրենքներ ունեցող երկրների վրա, ապա թողնում նրանց, երբ մի այլ երկիր եկամտի առավել շահավետ պայմաններ է առաջարկում:

Չանգվածային լրատվամիջոցները Լիմայի կամ Ջակարտայի գեյերին և լեսբուհիներին արևմտյան նույնասեռական մշակույթի ձևանմուշներ են տրամադրում, որոնք թերևս ավելի համապատասխան են նրանց, քան այն տարասեռական մորմերը, որոնք նրանց վզին են փաթաթում իրենց սեփական երկրում: Մակայն այդ միտումը նաև իր հակառակ կողմն ունի. համաշխարհային զանգվածային լրատվամիջոցները հիմնականում միայն արևմտյան մի քանի կորպորացիաների ձեռքերում են կենտրոնացված:

Պարզվում է, որ մշակույթի գլոբալիզացման նկատմամբ նման ուժգին արձագանքը՝ սեքսը ապրանքի վերածելու նախկինում բացառված երևույթը, բնորոշ է դարձել այն երկրներին, ուր գերիշխում է կրոնը:

Ինչպես իր «Գլոբալ սեքս» գրքում նշում է Դեմիս Ալթմանը, սրընթաց փոփոխությունները խուճապ առաջացրին, ինչը գերընտրական, տեղի մշակույթի՝ հա-

ճախ հնարածին ավանդական արժեքներին վերադառնալու հատուկ ձևեր ընդունեց: Նա կանխագուշակում է. «Որքան աշխարհն ավելի ու ավելի ենթարկվի սպառողական կապիտալիզմի ազդեցությանը և ձևանմուշներին, այդքան գլոբալիզացմանը հակադրվելու փորձերն ավելի ու ավելի կատաղի ձևեր կընդունեն»:

Ավանդական այս արժեքները շատ հազվադեպ են հոգատարություն և գթություն ենթադրում: Առավել հաճախ դրանք առնչվում են բռնապետությանը, հայրիշխանությանը, ազգայնականությանն ու քսենոֆոբիային, իսկ նրանց գոհերն են դառնում կանայք, ինչպես նաև ռասայական ու սեռական փոքրամասնությունները:

Նույնասեռականությունն ապօրինի է համարվում ավելի քան 70 երկրներում: Իսլամական ֆունդամենտալիստների կողմից վերահսկվող հինգ երկրներում դրա համար մահապատիժ է սահմանված: Հաշվառված է, որ Իրանում ամեն տարի սեռական կողմնորոշվածության պատճառով մահապատիժ է ենթարկվում ավելի քան 200 մարդ: «Միջազգային համայնքում» կազմակերպության տվյալներով՝ վերջին տարիներին գեյերի ու լեսբուհիների նկատմամբ մահապատիժներ են իրականացվել Աֆղանստանում և Սաուդյան Արաբիայում:

Անգամ այն երկրները, որոնք գրկաբաց են ընդունում տնտեսական գլոբալիզացումն ու ազատ շուկայի գաղափարախոսությունը, բավական սառը և պահպանողական են վերաբերվում սրընթաց սոցիալական փոփոխություններին: Մալայզիայում և Ինդոնեզիայում ասիական արժեքները հպարտությամբ են հակադրվում արևմուտքի արժեքներին, միայն թե այդ արժեքներն իրենցում կնոջ ստրկացում ու տեղի նույնասեռական և փոխգեղեցիկ բնակչության մերժում ենթադրեն: Մալայզիայի վարչապետ Մոհամեդ Մահաթիրը դատի էր տվել քաղաքական իր ամենագլխավոր ընդդիմախոս Անվար Իբրահիմին՝ մեղադրելով նրան նույնասեռականության մեջ, պնդելով, որ նույնասեռականությունն արտասահմանյան քայքայման ձև է, որն անարգում է ասիական արժեքները և պետք է մերժվի: Նման քաղաքականությունը ուղղված է միաժամանակ և՛ գեյերի, և՛ Արևմուտքի դեմ: Այսպիսով, իրենց թուլացող քաղաքական իշխանությունը պահպանելու համար և՛ Մուգաբեն, և՛ Մահաթիրն ուժեղ հակազաղութային դիրքեր են ընդունել, չնայած, ճակատագրի հեզմանքով, դրանցում օգտագործվում են գաղութային հին օրենքները, որոնք, իրենց ժողովուրդների «մաքրման» նպատակով ուղղված են նույնասեռականության դեմ: Ենթատեքստը պարզ է. տարասեռականությունից շեղվելը իրենց ժողովուրդների համար խորթ՝ ո՛չ աֆրիկյան, ո՛չ էլ ասիական, այլ ուրիշ երկրներից ներմուծված երևույթ է համարվում: Եվ նման շեղումներն իրենց հասարակություններում տեղ չունեն:

Մենք ամենու՞ր ենք...

Այս հարցի ընդունված պատասխանը (և գեյերի ազատության համար պայքարողների ավանդական միասնական ձայնը) հետևյալն է՝ այո, սեռական փոքրամասնություններն ամենուր են: Վերջին տարիներին զարգացող հարավային երկրներում առաջացած և իրենց բառապաշարում «գեյեր», «լեսբուհիներ» կամ «փոխգեղեցիկներ» բառեր օգտագործող խմբերի աճը տվյալ իրավիճակի համոզիչ արտացոլումն է: Սակայն այս ամենն այդքան էլ հեշտ չէ:

Ոչ բոլորն են համաձայն, որ սեռական բազմազանության երևույթը համապարփակ է: Հակափաստարկն այն է, որ այն պետք է դիտվի որպես արևմուտքի էթնիկ մշակույթի մասնիկ: Հարավում իսկապես շատերն են իրենց գեյ անվանում՝ բառի մեջ զգալի չափով ներդնելով նույն միտքը, որը նրան են վերագրում զարգացած երկրների մարդիկ: Հավանաբար դա հարավային երկրների այն բնակչությունն է, որը միջին խավին է պատկանում, ապրում է քաղաքներում, կամ էլ էլիտայի ներկայացուցիչներն են ու այդպիսով նոր գաղափարներին ծանոթանալու և միջազգային զանգվածային լրատվամիջոցներից օգտվելու հնարավորություն ունեն: Հնարավոր է, որ նրանք եղել են Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, անգամ սովորել են այնտեղ:

Սակայն հարավային երկրներում բնակվող մարդկանց զգալի մասը, նույնասեռ սեռական հարաբերությունների մեջ մտնելով հանդերձ, իրեն չի դասում նույնասեռականների շարքը:

Սա բնորոշ է, օրինակ, տղամարդկանց հետ սեռական կապերի փորձ ունեցող հնդիկ շատ տղամարդկանց: Գրող Ջերեմի Սիբբուկը, որ վերոնշյալ տղամարդկանց հարցազրույցի էր հրավիրել և հետազոտություններ ձեռնարկել այս թեմայի շուրջ, առաջ է քաշում մի շարք պատճառներ, թե ինչու են տղամարդիկ սեռական հարաբերությունների համար տղամարդ փնտրում: Ահա դրանցից մի քանիսը՝ միգրացիոն ընկերություններում կանանց բացակայությունը, երիտասարդ պոռնիկ տղամարդկանց մատչելիությունը, ինչպես նաև այն միտքը, որ տղամարդու հետ սեքսն ավելի անվտանգ է, քան հեշտոցային սեքսը, որը, շատերի համոզմամբ, ՄԻԱՎ վարակի և սիֆիլիսի տարածման միակ աղբյուրն է: Սակայն այդ տղամարդկանցից և ոչ մեկը չասաց, որ տղամարդու հետ սեռական կապի մեջ է մտնում, քանի որ նույնասեռական է: Նույն պատճառով էլ որոշ պատկերացումներ, որոնք, ինչպես պարզել է Սիբբուկը, բնորոշ են տեղի մշակույթին, «խառնաշփոթ առաջացնող և Արևմուտքին անհայտ» են մնում:²

Այսօրինակ բազմաթիվ աշխատանքներ են արվում ամբողջ աշխարհում: Գոյություն ունի նաև «հոմոէրոտիկ» մշակույթների մի ամբողջ շարք, որոնք բարգավաճում են առանց արևմտյան «գեյ» տերմինի որևէ պահանջի: Օրինակ աֆրո-սուրինամյան կանանց մեջ, որոնք իրենց անվանում են մաթի /mati/, տարածված են երկարատև, կանոնավոր և հաճախ բացահայտ սեռական հարաբերությունները միմյանց միջև, ընդ որում՝ նրանք միաժամանակ այդպիսի հարաբերություններ կարող են ունենալ նաև տղամարդկանց հետ: Սակայն մաթիները լեսբուհիներ չեն համարվում:

Որոշ մշակույթներում, սակայն, նկատի են առնվում ոճն ու սեռական նույնականացումը: Ըստ մարդաբան Էվելին Բլեքվուդի՝ Ինդոնեզիայում իսկական լեսբուհիներ՝ տամբուս /tomboys/ են համարվում ուղտրատղամարդկային ոճի կանայք (կանանց այն տիպն է, որն ավելի մոտ է փոխգեղեցիկներին, քան արևմտյան հասկացողությամբ բուրջ բառին): Ավելի կանացի գուզընկերներին այնտեղ տամբուս չեն անվանում, ավելի շուտ նրանց երկսեռականներ են համարում՝ անկախ նրանց սեռական փորձերից:

Այլ մշակույթներում ավելի մեծ ուշադրություն են դարձնում մարդու իրական կամ ենթադրական սեռական դերերին: Այսպես, Լատինական Ամերիկայում տղամարդ-

կանց (հաճախ սխալմամբ) բաժանում են մաշոների՝ ակտիվ գուգրնկերոջ դերը կատարողների, և նրանց, ովքեր հանդես են գալիս կանացիացված, այսինքն՝ պասիվ գուգրնկերոջ դերում: Վերջիններիս այնտեղ արհամարհական անվանում են մարեկոն /marecon/ ոչ իսկական տղամարդ: Ընդ որում, Լատինական Ամերիկայում նման արհամարհական վերաբերմունքին չեն արժանանում «մտցնողները»՝ ակտիվ գուգրնկերները, որոնց հասարակությունը իսկական տղամարդ է համարում: «Տղամարդը նա է, ով մտցնում է», – ձևակերպումն այսպիսին է: Հեզնանքը սակայն այն է, որ «կանացի» տղամարդիկ կամ տրանսվեստիստները, ովքեր զբաղվում են պոռնկությամբ, հաճախ են բողոքում, թե իրենց հաճախորդները՝ «մաշոները», «իսկական տղամարդիկ», ցանկանում են պասիվ գուգրնկերոջ դերում լինել, ինչը զարմանալի չէ:

Սեռական նույնականացումը շատ մշակույթներում հարցականի տակ է դրվում, այսինքն նույն սեռի մարդկանց միջև սեռական հարաբերությունները փոխգեղեցիկության են համարվում: Այսպես, օրինակ, Լատինական Ամերիկայում այնպիսի տերմիններ, ինչպիսիք են լոկա /loca/ և բիչա /bicha/, որոնցով կոչում են համապատասխան կարգի կանանց, գործածվում են նաև գեյ տղամարդկանց հասցեին:

Չինաստանում, որ ներկայումս սեռական փոքրամասնություններն ավելի ու ավելի նկատելի են դառնում, քչերն են լուրջ քննարկում սեռական նույնականացման գաղափարը: Գրող և ակադեմիկոս Չոյ Վախ Շանի տվյալներով՝ ժամանակակից չինարենում ամենատարածված բառը, որով անվանում են գեյերին, լեսբուհիներին և երկսեռականներին, թոնգզի /tongzhi/ է, որը նշանակում է ընկեր: Սոցիալական տարբեր խավեր ներկայացնող 200 թոնգզիների հարցումների արդյունքում նրանցից և ոչ մեկն իրեն թոնգզի գլխի /tongxinglina/, այսինքն նույնասեռական չանվանեց: Չոյը համարում է, որ սեռական փոքրամասնությունների՝ իրենց նույնասեռական լինելու մերժումը պարտադիր չէ որպես հոմոֆոբիայի արդյունք դիտել: Չինացի շատ թոնգզիներն նշում են, որ սեռականությունը կյանքի անբաժանելի մասերից մեկն է, և այն իրենց չի առանձնացնում մնացած բոլոր մարդկանցից: Ավանդական չինական մշակույթում գոյություն ունի սեռազգացության ավելի ճկուն տեսակետ, և նույնասեռականությունը որպես հնարավոր ընտրություն է դիտվում, այսինքն՝ փորձ, որի հետ կարող են առնչվել շատ մարդիկ, բայց ոչ երբեք որպես հաստատված, հստակ ուրվագծված «սեռական փոքրամասնություն» հասկացությամբ սահմանափակված ինչ-որ մի բան: Հոնկոնգի ակտիվիստ Նելսոն Նգուն այս ըմբռնումը հետևյալ խոսքերով է արտահայտում. «Երբեմն ինձ վերմիշելն է դուր գալիս, երբեմն բրինձը, սակայն, եթե շատ քաղցած եմ լինում, ինձ երկուսն էլ դուր են գալիս»:

Սակայն պետք չէ մոռանալ նաև այն, որ Չինաստանում մինչ օրս էլ նույնասեռականությունը հետապնդվում է օրենքով, և նույնասեռականներին բանտարկություն է սպառնում «խուլիզանության» հոդվածով: Պետությունն իրավունքն ունի խառնվելու իրենց իսկ սեռի գուգրնկերոջ հետ սեքսով զբաղվող մարդկանց մասնավոր կյանքին, իսկ նախկինում նրանց նույնիսկ կարող էին ստիպողաբար «բուժման» ենթարկել: Միգուցե Չինաստանի նույնասեռականների համար սա ևս մի զսպող հանգամանք է, որը նրանց թույլ չի տալիս բացահայտորեն և հպարտորեն իրենց գեյ անվանել:

Խռովություն գյուղում

Պոլիյանա Մանգվիրոն 14 տարեկան էր, երբ գիտակցեց, որ ինքը կին է սիրում: Սակայն այդ մասին նա ոչ ոքի չասաց: «Ես լիովին չէի հասկանում, թե ինչ է կատարվում ինձ հետ: Ինձ ծանոթ չէր «լեսբուհի» բառը: Այնտեղ, ուր ապրում էի ես, այդ բառը ոչ ոքի էլ չէր կարող ծանոթ լինել»: Այնպես որ նա արեց այն, ինչ անում են գյուղացի աղջիկներից շատերը՝ ամուսնացավ: Երբ լրացավ նրա 17-ը, արդեն երկու զավակ ուներ: Սակայն երբ դարձավ 20 տարեկան, լքեց իր ամուսնուն: Ես մտածեցի. «Ես չեմ սիրում այս տղամարդուն, ուրեմն ես պետք է հեռանամ նրանից»: Նա Հարարա մեկնեց և 1989 թվականին միացավ վերջերս կազմավորված ՋԳՈՒԼ (Չինբաբվեի գեյեր ու լեսբուհիներ) կազմակերպությանը: 1995 թվականին իսկական դժոխք սկսվեց: Մի անգամ, երբ նա, որպես ՋԳՈՒԼ-ի կամավոր, Հարարայում անցկացվող Չինբաբվեի գրքի միջազգային տոնին իր կազմակերպությունն էր ներկայացնում, անսպասելիորեն նրանց կրպակի վրա հարձակվեց գեյերի դեմ ելույթ ունեցողների մի խումբ: Նրանց արարքները քաջալերվում էին սեմասոֆիաների հետևից գնացող Չինբաբվեի հոմոֆոբ մասնուլի կողմից: Պոլիյանային սկսեցին սպառնալ: Սակայն, երբ նա փորձեց հայրենի գյուղ վերադառնալ, ընկերությունն ու ընտանիքը նրան չընդունեցին: «Նրանք ասացին, որ ես այնտեղ տեղ չունեմ, որովհետև լեսբուհի եմ, իսկ դա միայն սպիտակների համար է»: Բայց այսօր Պոլիյանան չի դատապարտում նրանց. «Այն ժամանակ նրանք չգիտեին: Միայն այսօր են սկսում հասկանալ, որ լեսբուհին նույն մարդն է, ինչպես և մնացած բոլորը»: Նրա երկու որդիները, որ արդեն 18 և 16 տարեկան են, իրենց հոր հետ ապրում են Հարարայում, և նրանք «շատ չեզոք են»: Աշխատանքը հեռավոր գյուղերում ամենակարևորն է Պոլիյանայի համար: «Մենք պետք է բացենք մարդկանց աչքերը և հասկացնենք, որ մեզ նմանները գոյություն ունեն, և որ գեյերն ու լեսբուհիները մեր մշակույթի մասն են կազմում»: Նրանց խոսակցական բառապաշարն անգամ իր մեջ հատուկ բառ ունի, որով անվանել են սեռական ոչ ավանդական կողմնորոշվածություն ունեցող մարդկանց՝ նգոչանի /ngochani/»:

Հարուստ աշխարհ, աղքատ աշխարհ,
նույնասեռական աշխարհ

Մարդու ազատությունը՝ ապրելու այն կյանքով, որը նա է ընտրում, միշտ խստորեն սահմանափակվում է սոցիալական և տնտեսական գործոններով: Եվ դա ուղղակիորեն վերաբերում է սեռական փոքրամասնություններին՝ այն մարդկանց, ովքեր ապրում են աղքատության մեջ՝ լինի դա հյուսիսում, թե հարավում: Ավելի բարդ է բացահայտորեն հայտարարել քո՝ լեսբուհի, գեյ կամ փոխգեղեցիկ լինելու մասին, եթե դու աղքատ ես: Մասնավոր կյանքի իրավունքը շքեղություն է, և եթե դուք ձեր ննջարանը կիսում եք ընտանիքի ևս մի քանի անդամների հետ, ապա հաճախ հնարավորություն չեք ունենում դրսևորելու ձեր ոչ ավանդական սեռազգացությունը:

Շատ հասարակություններում ընտանիքը նույնասեռականության ամենազսպող հակառակորդն է համարվում, քանի որ, ըստ այս մտտեցման՝ ոչ ավանդական սեռական կողմնորոշվածությունը սպառնալիք է ընտանեկան ար-

ժեքների համար: Իսկ աղքատ երկրներում և ընկերակցություններում մարդիկ ամբողջովին կախված են իրենց ընտանիքներից: Ընտանիքը, ամուսնությունը և երեխաները, Ջերեմի Սիբրոուկի խոսքերով, կենդանի մնալու հիմնական պայմանն են: «Հեռու գնալու կարիք չկա, պարզապես անցեք Սան Պաուլուի, Գաբիի կամ Նայրոբիի փողոցներով և կտեսնեք, թե ինչ է տեղի ունենում նրանց հետ, որոնց գրկել են ընտանիքի գրկում գտնվելու անվտանգության իրավունքից»:

«Ընտանիքի գրկում» բարեկեցության կամ սոցիալական պաշտպանվածության բացակայության դեպքում նույնասեռականները մեծ ռիսկի են ենթարկված աշխատավայրում: չէ՞ որ միայն մի քանի երկրներում են ընդունված սեռական փոքրամասնությունների նկատմամբ հակախտրականության վերաբերյալ օրենքները: Գեյերը, որոնց հեռացում են աշխատանքից, երբ «բացահայտվում» է նրանց սեռական նախապատվությունները, ստիպված են ընտանիք վերադառնալ, սակայն վերջիններս, այդ նույն պատճառով, նույնպես կարող են հրաժարվել նրանց ընդունել: Չարմանալի չէ, որ աղքատ երկրներում սեռական փոքրամասնություններին պատկանող շատ մարդիկ ի վերջո փողոցներում են հայտնվում և ստիպված մի կտոր հաց վաստակելու համար պոռնոլոգիայի են զբաղվում: Մեծամասնությունն ապաստան է գտնում ուրբանիզացված կենտրոններում, ուր ընտանեկան կապանքներն ավելի թույլ են: Ուրբանիզացման գործընթացը, որը զարգացման գծով շատ մասնագետների կողմից բացասաբար է ընդունվում, թեթևացնում է սեռական փոքրամասնությունների պես ճնշված սոցիալական խմբերի դրությունը, ինչը մեծ չափով վերաբերում է նաև կանանց վիճակին: Ընդ որում, սոցիալական բեմ դուրս գալով, նույնասեռականներին երբեմն հաջողվում է փոխել շրջապատի վերաբերմունքն իրենց նկատմամբ՝ անգամ, թվում է, ամենաանբարենպաստ պայմաններում:

Վիյյան Ֆերնանդեսը, ում մասին մենք պատմում էինք այս գրքի սկզբում, ծնվել է սուր արտահայտված հոմոֆոբ երկրում, աշխատավորի ընտանիքում: Սակայն նրա ընտանիքը վերջիվերջո ընդունեց և՛ նրան, և՛ նրա սեռազգացությունը: «Ինձ ընդունեցին նույնիսկ ամենաանգիջողները»: Այժմ, նրա խոսքերով, ընտանիքը շատ չեզոք է վերաբերվում նրան: Մարդկային հասարակ աջակցությունը նույնպես բացառություն չէ: Չոյ Վախ Շանը վավերագրել է մի դեպք, երբ երիտասարդ գեյի ծնողները, ում տանը նա բնակվում էր, ուղղակի, առանց նույնասեռականություն բառը շեշտելու, ընդունեցին նրա գուգընկերոջը երկրորդ որդու պես՝ տեսնելով, թե որքան երջանիկ է նրանց նախկինում մերժված որդին:⁴

Փաստեր

- Աշխարհում կանանց մոտ 2%-ը (12 միլիոն) և տղամարդկանց 4%-ը (24 միլիոն) ապրում են բացառապես որպես նույնասեռականներ:

- Աշխարհի 70 երկրներում նույնասեռականությունն օրենքից դուրս է համարվում: Իրանում, Աֆղանստանում, Մաուրիտանիայում, Մավրիտանիայում, Մուդանում և Եմենում նույնասեռականների նկատմամբ մահապատիժ է կիրառվում: Պակիստանում և Գայանայում նույնասեռականությունը ցմահ բանտարկությանը է պատժվում:⁶

- Պորտուգալիայում, Իրանում, Գանայում, Սլովենիայում, Ալբանիայում և Սակեդոնիայում սեռի ֆիզիկական կամ սոցիալական փոփոխությունն արգելված է օրենքով:

Համերաշխություն

Միայլ կլինեք բնութագրել, թե՛ հարուստ աշխարհում գոյություն ունի հանդուրժողականություն նույնասեռականության հանդեպ, իսկ աղքատ աշխարհը հարուստ աշխարհի ճիշտ հակադրությունն է:

Փաստորեն, որոշ առավել ճնշիչ օրենքներ ի սկզբանե հարուստ աշխարհից են բխում, և բրիտանական կայսրությունն առանձնահատուկ շռայլ էր այդ հարցում: Քրիստոնյա ավետարանականները սեռական շեղումներին դիվային բնույթ վերագրելու, ինչպես նաև աշխարհի երեսից նույնասեռ սիրո ավանդույթները վերացնելու գործում, որոնք գոյություն ունեին Ամերիկայի, Ասիայի և Աֆրիկայի տեղաբնակ մշակույթներում, ամենահիմնական դերը խաղացին:

Ներկա ժամանակներում հարուստ Ամերիկայի 20 նահանգներում նույնասեռականության դեմ օրենքներ գոյություն ունեն, և երկրում իշխում են խիստ աջակողմյան ֆունդամենտալիստական կազմակերպությունները, որոնց նպատակն է երկիրը մաքրել նույնասեռականներից: Միևնույն ժամանակ Կալիֆոռնիան ամենահարուստ գեյ մշակույթի և, հավանական է նաև, սեռական փոքրամասնությունների՝ աշխարհում ամենաազդեցիկ շարժման հայրենիքն է համարվում:

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում սեռական փոքրամասնությունների միջազգային համերաշխության աճ է նկատվում: 1991 թվականից «Միջազգային համաներում» կազմակերպությունը սեռական կողմնորոշվածության հողի վրա հետապնդումները ներառեց իր հանձնարարագրի մեջ: Մի շարք երկրներում, այդ թվում և Կանադայում, սեռական կողմնորոշվածության հողի վրա հետապնդումները սկեցին որպես ապաստան տրամադրելու առիթ դիտվել: Լեբուրիաների և գեյերի միջազգային ասոցիացիան (ILGA) 5 աշխարհամասում գտնվող 350 կազմակերպություն է միավորում: Ինչպես «Միջազգային համաներում» կազմակերպությունը, այնպես էլ գեյերի և լեբուրիաների իրավունքների պաշտպանության միջազգային հանձնաժողովն (IGLHRC) իր ավանդը ներդրեց սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և շարժումներ նախաձեռնելու գործում:

Հնդկաստանի գեյ շարժման ակտիվիստ և պիոներ Աշոկ Ռոու Կավիի խոսքերն են. «Մենք իսկապես փոքրամասնություն ենք մոլորակի վրա»:⁷

Այժմ մենք կարող ենք խոսել սեռական փոքրամասնությունների գլոբալ շարժման մասին՝ դրա հետ ընդունելով միօրինակության բացարձակ բացակայությունն ու բազմազանության շլացուցիչ հարստությունը:

1. Global Sex, Dennis Altman, The University of Chicago Press, 2001.
2. "It's what you do", Jeremy Seabrook, New Internationalist, October 2000.
3. Female Desires, Evelyn Blackwood and Saskia E Wieringa eds, Colombia University Press, 1999.
4. Different Rainbows, Peter Drucker ed, Gay Men's Press, 2000.
5. The Penguin Atlas of Human Sexual Behavior, Judith Mackay, Penguin, 2000.
6. Amnesty International, 2000.
7. Crimes of Hate, Conspiracies of Silence, Amnesty International, 2001.

2. ՍԱ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ Է

Շարժման ծնունդը... փոփոխությունների պիոներները... սեռերի ինվերսիա... գեյերի ազատագրական շարժումները... լեսբուհիների առանձնանալը... C&M-սեքսի արմատականները... շքերթ Հյուսիսային Ամերիկայում... ՉԻԱՀ-ի դեմ պայքարի ակցիաներ... ծայրահեղ նույնասեռականների քաղաքականությունը...

1969 թվականի հուլիսի 28: Նյու Յորքում ամառվա շոգ, տոթ գիշեր է: «Գրինվիչ Վիլիջի Սթրունգլո» ոչ մեծ հյուրանոցի բարը լի է գեյերով, լեսբուհիներով և տարօրինակ ու շատ վառ հագուստներ հագած տրանսվեստիստներով:

Գիշերվա ժամը մեկին համկարծ վառվում է լույսը: Պարերը դադարեցվում են. ոստիկանական ստուգայց է, բարքերի ոստիկանությունը կրկին վերադարձել է: Բարի հաճախողներին կոպտորեն դուրս են հանում ոստիկանական մեքենաների մոտ, խմբերով հավաքում ցանկապատերի և փակոցների մոտ...

Բայց այդօրը շատ բան էր փոխվել: Ոստիկանությանը հնազանդ մոտենալու փոխարեն՝ ոմանք սկսում են մետաղադրամներ նետել: Ապա գործի են անցնում շքերթ: Ադմկայից ծեծկռտուք է սկսվում. ամբոխը դիմադրում է ոստիկանությանը, «Գեյերը ուժ են» և այլ լրզունգներ է վանկարկում: Ոստիկանությունը նահանջում է, պատմեշներ շարունակաբար տանը և օգնության կանչ տալիս: Բողոքողների ամբոխը ջարդում է ավտոկանգառում գտնվող երկաթե սյունն ու սկսում նրանով փշրել դուռը:

Միլվիա Ռիվերան այնտեղ էր և լավ է հիշում այդ գիշերվա իրադարձությունները. «Բավական էր: Մենք մինչև կոկորդներս կուշտ էինք այդ ամենով: Մենք առաջինները դարձանք: Ժամանակը եկել էր: Հիշում եմ, երբ մեզանից մեկը ոստիկանի վրա նետեց «Մոլոտով» կոկտեյլը, ես մտածեցի՝ աստված իմ, սա հեղափոխություն է: Վերջապես հեղափոխություն: Ես միշտ հավատում էի, որ մի օր դա կսկսվի, և մենք դիմադրություն ցույց կտանք: Ես պարզապես չգիտեի, որ դա հենց այդ գիշեր էր տեղի ունենալու»:

Նույնասեռականները մի քանի գիշեր շարունակեցին խռովությունը: Այս իրադարձություններին հաջորդեց բողոքի ակցիաների և արշավների մի մեծ ավիք: Սա սկիզբը դարձավ:¹²

Անկարգությունները Սթրունգլոյում հաճախ դիտվում են որպես Արևմուտքի գեյերի ազատագրական շարժման «բռնկման պահ» կամ որպես «բոստոնյան թեյախմություն»: Եվ իսկապես, նրանց գրեթե ծիսական կարևորություն էր հաղորդվում, չնայած այդ գիշերվա խռովությունը նույնասեռականների բողոքի առաջին ակցիան չէր: Նախորդ տարի նման իրադարձություններ տեղի էին ունեցել Փարիզում և Ամստերդամում:

Երևի դրան պետք էր սպասել: Վաթսուրկականները պահպանողականության տառամյակ էին: Բացառիկ ուժ հավաքեցին սևամորթների քաղաքացիական իրավունքների ու կանանց շարժումները: Դա տասնամյակ էր, որի ընթացքում ֆեմինիստ կանայք պայքար էին տանում կանանց հանդեպ խտրականությունների դեմ, իսկ սևամորթ ակտիվիստները պայքարում էին ռասիզմի դեմ կոչերով, ինչպես օրինակ «Սև» ուրեմն գեղեցիկ», և, իհարկե, ժամանակն էր մարտահրավեր նետել նույնասեռականների նկատմամբ եղած նախապաշարմունքներին:

Շարժման առաջնորդներն ու նույնասեռականության ծնունդը

Պետք է նշել, որ գեյերի և լեսբուհիների վերոնշյալ ապստամբական գործողությունները նորություն չեն. պատմությանը հայտնի են ոչ պակաս լուրջ իրադարձություններ: Իրավաբանական ֆակուլտետի գերմանացի ուսանող, իշխանության տարբեր ներկայացուցիչների և դիվանագետների հետ աշխատող քարտուղար ու լրագրող Կարլ Հայնրիխ Ուրիխը փորձում էր ինքնուրույն հասնել նրան, որ անվավեր ճանաչվեին նույնասեռականությունը հանցագործություն համարող բոլոր օրենքները:³

1862 թվականի մայիսին նրա ծանոթ Ջոան Բապտիստ վան Եվեյցերին կալանքի տակ են վերցնում «իրապարակային անպարկեշտության» համար: Ուրիխը կալանավորի պաշտպանությանը վերաբերող խոսք է գրում և այն ուղարկում նրան, սակայն փաստաթուղթը բռնագրավվում է իշխանությունների կողմից: Ուրիխը, որ վաղ հասակից սեր էր տաժում տղամարդկանց նկատմամբ, որոշում է, որ եկել է իր սեռականության գաղտնիքը բացահայտելու ժամանակը:

1864 թվականին նա հրատարակում է իր «Տղամարդկանց միջև սիրո գաղտնիքի ուսումնասիրությունները»: Բարեկամների հանդեպ տաժած հարգանքից էլնելով՝ նա կեղծամվամբ է ստորագրում, սակայն 1868 թվականին արդեն ճանաչում է իր իսկական ունունը: 1879 թվականին նա հրատարակում է այդ հարցին նվիրված 12 հատոր: Օգտագործելով հունական դիցաբանությունը՝ նա մարդկանց տարբեր տիպերի համար անվանումներ հորինեց. նույնասեռական տղամարդկանց նա Ուրնինգ էր անվանում, տարասեռական տղամարդկանց՝ Դիոնինգ, լեսբուհիների՝ Ուրնինգին, իսկ տարասեռական կանանց՝ Դիոնինգին:

Որքան շատ նույնասեռական ծանոթներ էր նա ձեռք բերում, այնքան ընդլայնում էր իր որակավորումը՝ դրանում ներառելով նաև նրանց, որոնց մենք այսօր տարասեռական ենք անվանում, ինչպես նաև լատենտներին կամ քողարկված գեյերին: Նա ապացուցում էր, որ նույնասեռական ցանկությունը բնածին է, և հետևաբար օրենքները, համաձայն որոնց նույնասեռականությունը պատժվում է որպես դիտավորյալ կատարած հանցանք, հակամարդկային են:

Ուրիխին վախեցնում էր երկրում քաղաքական իրավիճակի փոփոխությունը՝ պրուսական գործի ներխուժումը Հանովեր և պրուսական քրեական օրենսգրքի կիրառումը, որը նույնասեռականներին վերաբերող հողված ունեք: Նրա մտավախություններն անտեղի չէին. ամեն ինչ հենց այդպես էլ եղավ: Նա կարճ ժամանակով բանտարկվեց սոցիալ-ժողովրդավարական հայացքներ քարոզելու համար, իսկ 1867 թվականին ոստիկանությունը բռնագրավեց նույնասեռականության ուսումնասիրությունների վերաբերյալ նրա գիտական աշխատանքները:

Գիտնականի տեսակետը մասնավորապես հեզմանքի արժանացավ, և ազատություն ստանալուց հետո Ուրիխին պարտադրեցին լքել Հանովերը: 1867 թվականի օգոստոսին նա Բավարիա տեղափոխվեց, սպա գերմանացի իրավաբանների կոնգրեսի առջև նույնասեռականների իրավունքների վերաբերյալ ելույթ ունեցավ: Նրա ելույթը Գերմանիայում նույնասեռականների ազատագրման հասարակական շարժման սկիզբը դրեց: Բայց 1872 թվականին նույնասեռականների դեմ ուղղված պրուսական կանոնադրության հողվածները տարածվեցին միացյալ Գերմանիայի ողջ տարածքով: 1880 թվականին Ուրիխը ստիպված էր լքել երկիրն ու բնակու-

թյուն հաստատել Իտալիայում, ուր և ապրեց իր կյանքի վերջին 15 տարիները:

Սակայն «նույնասեռականություն» տերմինը Ուրիխը չէր առաջարկել. դա արել էր գերմանա-հունգարացի Քերոլի Մարիա Քերտբենին (ծնված 1824 թվականին Բենքերտում): Տերմինը կազմվել էր երկու՝ հունարեն homo (նույնպիսի) և միջնադարյան լատիներեն sexualis (սեքսուալ) բառերից: Եվ չնայած Քերտբենին հայտարարում էր, որ ինքը տարասեռական է, սակայն գեյերի իրավունքների համար նրա երկարամյա անամուսն ընկերությունը հակառակի մասին էր խոսում:

Մի քանի տասնամյակ պահանջվեց, որպեսզի «նույնասեռական» բառը հայտնվի անգլերենում: 1891 թվականին Ջոն Ադինգտոն Մայնոնդսը իր «Ժամանակակից բարոյագիտության խնդիրը» աշխատության մեջ օգտագործում է «նույնասեռական քնագրներ» արտահայտությունը: Նրա գիրքը տպագրվել էր մասնավոր տպարանում, և տպաքանակն ընդամենը 10 օրինակից էր: «Մեռերի ինվերսիա» (1897թ.) աշխատության մեջ բրիտանացի սեքսաբան Հավելոկ Էլիսը համահեղինակ Մայնոնդսի հետ (ուս անունը հիշատակվել է միայն առաջին հրատարակման շապիկի վրա) ժողովրդականացրեց ինվերսիայի՝ որպես սեռի քնածին ախտաբանական անոմալիայի գաղափարը:

XX դարի սկզբին բրիտանացի սոցիոլոգ և գեյ շարժման պիոներ Էդվարդ Կարպենթերը (1844-1929թթ.) հրատարակեց իր «Միջանկյալ սեռ» վիճելի աշխատությունը: Այդ աշխատությունը նշանակալից ազդեցություն ունեցավ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար: 1912 թվականին «Ֆրիվուդեն» («Ազատ կին») արմատական ամսագրում երկրորդ սերնդի ֆեմինիստուհի Ֆրենսիս Ուայդերը պաշտպանում է ինքնասահմանափակման և զսպվածության դիրքերը, սակայն մի քանի տարի անց, ծանոթանալով Կարպենթերի գաղափարներին, հասկանում է, որ ինքը ոչ թե պարզապես ֆեմինիստուհի, այլ ֆեմինիստ-լեսբուհի է եղել:

Նա գրում է Կարպենթերին. «Վերջերս ես մեծ հետաքրքրությամբ կարդացի Ձեր «Միջանկյալ սեռ» գիրքը, և այն օգնեց ինձ գիտակցելու, որ ինքս էլ պատկանում եմ այդ դասին: Այժմ գրում եմ Ձեզ, որպեսզի իմանամ՝ արդյոք կարող եմ նման մարդկանց հետ ծանոթանալ...»:³

Գեյ շարժման նշանակալից իրադարձություններից էր դարձել նաև 1895թ. Օսկար Ուայդի հայտնի ելույթը դատարանում, երբ նա պաշտպանում էր «իրեն ներկայացնել չհամարձակվող սերը»՝ համեմատելով այն Իոնաֆանեսի հանդեպ Դավիթի տածած սիրո հետ: Վկայակոչելով Պլատոնի, Միքելանջելոյի և Շեքսպիրի ստեղծագործությունները՝ նա խոսում էր նման սիրո գեղեցկության ու վեհանձնության մասին: «Դա արտիստիկ tour de force էր, - ծանվելով մեկնաբանում է Ռիկտոր Նորթոնը,- բայց այն չկարողացավ պաշտպանել նրան պռոնիկ տղաների ցուցմունքներից»:

Լինելով նույնասեռական՝ Օսկար Ուայդն իրեն այն ժամանակի քաղքենիական տարասեռականությանը հակադրված մշակութային էլիտայի մասնիկ էր համարում: Հետագայում նա հայտնեց իր նախկին դիրքերի մերժման մասին և իր վիճակը «խելագարություն» անվանեց, սակայն դա չփրկեց նրան բանտից և երկու տարվա հարկադրական աշխատանքից: Չնայած այսօր Ուայդին «գեյ տառապյալ» են անվանում, իրականում այն ժամանակ նա ոչ մի կերպ չէր օգ-

տագործում իր դատական գործընթացը նույնասեռականության ապաքրեականացման համար: Միակ բանը, ինչին նա հասավ, այն էր, որ նույնասեռականների հանդեպ վերաբերմունքն ավելի... թշնամական դարձավ:

Երբ 1928 թվականին հրատարակվեց Ռեդլիֆ Հոլի «Մեմուրյան ջրհոր» լեսբիական նորարարական վեպը, այն նույնպես դատական հետաքննության առարկա դարձավ: Այս գիրքն «ինվերտների» նկատմամբ համբերատար լինելու կոչ էր անում, պատմում նրանց տանջանքներով և ինքնագոհողություններով լի դժվարին կյանքի մասին: Գրքում ամենևին էլ չէր խոսվում նույնասեռականների միջև եղած երջանիկ սիրո մասին՝ այն սիրո, որը Հոլին և նրա գուգրնկերուհի Ունա Տրուբրիջին հաջողվել էր պահպանել 30 տարի շարունակ: Բայց «Մեմուրյան ջրհորը» պատռեց գաղտնիության վարագույրն այն թեմայի վրայից, որը միշտ շատ խորն է թաքնված եղել, և վեպն այնքան ցնցող էր, որ լորդ-կանցլեր Բիրկենհեդն արգելեց գրքի ընթերցումը: Արգելքի գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ «1000 կանանցից 999-ը նման փորձերի հնարավոր լինելու մասին ակնարկ անգամ երբեք չէին լսել»:⁴

Այդ ժամանակ Գերմանիայում գեյ սեքսաբան Մագնուս Հիրշֆելդը Բեռլինում հիմնեց սեքսուալ գիտությունների ինստիտուտը, որն ամբողջ աշխարհի նույնասեռականների համար ոգևորության և տեղեկատվության աղբյուր դարձավ: Հիրշֆելդի գրադարանը բաղկացած էր 12000 գրքից, 35000 լուսանկարներից և անթիվ ձեռագիր գրություններից. դրանք բոլորը ոչնչացվել են մացիստ ուսանողների կողմից 1933թ. մայիսի 6-ին:⁵

Նույնասեռական փորձերի խստագույն արգելքն ինչպես 1939-1945թթ. պատերազմի ժամանակ, այնպես էլ հետպատերազմյան ժամանակներում, քաղաքական ակտիվացման նոր ալիքի դրոպապատճառ դարձավ: ԱՄՆ-ում «Բիլիտիսի դուստրեր» և «Մետեչին ընկերություն» կազմակերպությունները փոխազակցման նպատակով համախմբեցին գեյերին և լեսբուհիներին: Մարտնչող խառնախմբերի և խմբակցությունների քանակի աճին համընթաց՝ 1960թ. ուժ ստացավ նաև գեյերի իրավունքների պաշտպանության շարժումը: Նախկինում թույլ ու անվճռական սեռական փոքրամասնությունների ձայնն այժմ դարձավ շատ ավելի համարձակ, նույնասեռականները դուրս եկան ընդհատակից՝ «Գեյ լինելը լավ է» նշանաբանով: Եվ այժմ դա արդեն իշխանության միջանցքներում էլիտայի հագիվ լավող շշուկ էր, այլ փողոցային ամբոխի բարձր ձայնն էր, որն ապաքրեականացում և ազատություն էր պահանջում: Հրապարակային արշավներն այդ պահանջները հասցնում էին ոչ միայն Հյուսիսային Ամերիկայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և Եվրոպայի, այլև հարավային որոշ երկրների, ինչպիսիք են Մեքսիկան և Արգենտինան, տարասեռական հասարակությանը: Աշխարհի տարբեր մասերում խաղաղության, սիրո և հեղափոխության համար հանդես եկող՝ քաղաքականապես արմատական գեյերի ազատագրման ճակատներ կազմավորվեցին:

Լաբրիսը որպես հայրիշխանությանը հակադրվող խորհրդանիշ
Լաբրիս - կրեոտական անտիկ երկկողմանի սուր, կիսալուսին հիշեցնող կա-
ցին, լեսբիական հանրահայտ խորհրդանիշ

Երրորդ այիքի ֆեմինիստտիկները նույնպես իրենց հետքը թողեցին շարժման պատմության մեջ: Հայրիշխանության համարձակ և կտրուկ վերլուծություն անց-
կացնելով՝ արմատական ֆեմինիստտիկներն առաջարկեցին այդ համակարգի նոր ընկալում: «Անձնական՝ նշանակում է քաղաքական» ֆեմինիստական նշա-
նաբանը բացեց շատերի աչքերն ու անհավասարության խնդիրները, որոնք մախ-
կինում քանահրանքով դիտվում էին որպես «անձնական» կամ «մասնավոր»:

Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, ֆեմինիզմն օգնեց հեռանալ սեռերի կարծրատիպերից: Այն նոր ձևանմուշներ առաջարկեց, որոնք հիմնած էին ոչ դասակարգային կազմակերպչական ձևերի գիտակցման վրա: Այդ ձևան-
մուշները փոխ էին առնվել ՉԻԱՀ-ի դեմ պայքարի արմատական ակտիվիստե-
րի, միջուկային գեների դեմ պայքարի, էկոլոգիական շարժման կողմից և դար-
ձան գեյերի ու լեսբուհիների ազատագրական շարժման գծերը:

Լեսբուհիները նաև իրենց արմատական ներդրումն ունեն 1970-1980- ական-
ների կանանց շարժման մեջ: Լեսբուհի ակտիվիստները, ինչպիսիք են Օդրի Լորդենը, Ադրիեն Ռիչն ու Մերի Դեյլին, նոր ընթացք տվեցին ֆեմինիստական շարժման զարգացմանը: Նրանց գործունեությունը նույնիսկ ազատական տա-
րասեռական հրահանգների հիմքերն էր թուլացնում և հրահրում դիմադրող հայ-
րիշխանության ամեն տեսակ հնարքների հանդեպ աճող անվստահությունը: Ադրիեն Ռիչի «Մտիպողական տարասեռականությունն ու լեսբուհիների գոյու-
թյունը», ցնցող, մերկացնող աշխատության հրատարակումը՝ «քաղաքական լես-
բիության» յուրատեսակ հրովարտակ դարձավ:⁵ Շատ ֆեմինիստտիկների հա-
մար լեսբիական շարժումն իրենց՝ տղամարդկային գերիշխանությունից ձեռքա-
զատվելու պայքարում հաջորդ տրամաբանական քայլը դարձավ, ինչը բյուրե-
ղացվում էր «Ֆեմինիզմը տեսություն է, լեսբիությունը՝ փորձ» նշանաբանում:

Իր աշխատության մեջ Ռիչը «լեսբուհի» էր անվանում բոլոր այն կանանց, ովքեր իրենց «կանանց հանդեպ ձգտում ունեցող» էին համարում և տղամարդ-
կանց հետ ցանկացած սեռական հարաբերություն դիտում էին որպես ծուղակ ու սպառնալիք իրենց ազատությանը: Այս կանանցից ոչ բոլորը պետք է պարտա-
դիր սեռական ձգողություն ունենային այլ կանանց նկատմամբ, սակայն նրանք, մինևույն է, կարող էին իրենց քաղաքական լեսբուհիների դասին վերագրել: Սե-
ռական արմատականները, այդ թվում և Պետ Կալիֆիան ու Ջոան Նեպլը, ծաղ-
րում էին նման բավական ասեքսուալ մոտեցումը լեսբիության հանդեպ: Նրանք համարում էին, որ սեքսը պետք է գլխավոր տեղը գրավի: Կալիֆիան և մյուսներն ակտիվորեն քարոզում էին իրենց հայացքները՝ գովազդելով լեսբիական սադո-
մազոխիզմն ի հակադրություն իշխող «վանիլային» սեքսի և քաղաքական լես-
բիության: Թե՛ս վիճաբանությունները շարունակվում էին, սակայն, կարելի է ասել, սեռական արմատականները նշանակալից և սեքսուալպապես դրական ազ-
դեցություն թողեցին լեսբիական ժամանակակից մշակույթի վրա:⁶

Մինչ այդ գեյերի ազատագրման շարժման շրջանակներում կանանց վիճա-
կը հաճախակի բարդանում էր: Տղամարդիկ, այդ թվում նաև գեյ տղամարդիկ, կանանց խտրականացնող, գերիշխող մշակույթի մասն էին կազմում, և կանանց հանդեպ արհամարհական վերաբերմունքը շարժման շրջանակներում նույնքան զգալի էր, որքան և այլ ոլորտներում: 1970-ականներին լեսբուհիներն ամբողջ աշ-
խարհով մեկ սկսեցին ձևավորել իրենց սեփական, մեկուսացված խմբերը:

Նրանցից շատերն իրենց ավելի լավ էին զգում կանանց շարժման շրջանակնե-
րում, սակայն այստեղ էլ նախապաշարմունքներ գոյություն ունեին: Լայն տարա-
ծում ստացավ ամերիկյան ֆեմինիստտիկ և Կանանց ազգային կազմակերպու-
թյան (ԿԱԿ) հիմնադիր Բեթի Ֆրայդենի արտահայտությունը, երբ նա քամահրան-
քով հայտնեց, թե «մանուշակագույնները» կանանց շարժման ուշադրությունը շե-
ղում են կարևոր հարցերից (լավանդայի բաց մանուշակագույնը լեսբուհիների խորհրդանիշն է համարվում // թարգմանչի ծանոթագրություն): Մյուսները համա-
րում էին, որ լեսբիության վերաբերյալ վիճաբանությունները կարող են վատ համ-
բավ բերել կանանց շարժմանը: Նման վերաբերմունքը ներկայումս դեռևս գերիշ-
խում է Մեքսիկայում, ուր ակտիվիստտիկ Նորմա Մոգրովեժոն «խորապես արմա-
տակալած լեսբոֆոբիայի» մթնոլորտն է զգում, ինչպես նաև այն, որ լեսբիական հարցերը մեխանիկորեն իրենց մեջ են ներառում հոմոֆոբների պահանջները:⁷

1995 թվականին ՄԱԿ-ի կանանց կոնֆերանսին կանանց՝ իրենց սեռակա-
նությանը վերաբերող ինքնական որոշում կայացնելու իրավունքի հաստատման փորձեր եղան, սակայն դրանք կրկին ցանկալի արդյունքի չհասան: Շնորհիվ կրոնական ու մշակութային նկատառումներին դեմ ելած ԱՄՆ-ի և Աֆրիկայի կանանց կազմակերպության՝ նման ճակատագրի արժանացավ այս հարցը բարձրացնելու ևս մեկ՝ «Գործողությունների ուղեցույց 2000» փորձը:

Այլ հանձնաժողովների ժամանակ, սակայն, կանանց շարժումը լեսբիության ընդունման մեծ միտումներ էր ներկայացնում՝ քննարկելով այն որպես քաղա-
քական այլընտրանք: Այդպես, սկսած 1994 թվականից, լեսբիությանը վերաբե-
րող հարցերը Հնդկաստանի կանանց շարժման Ազգային կոնֆերանսի բանա-
վեճերի մշտական թեման է:

Ռ-ասաներն ու սեռազգացությունը

Ինչպես ֆեմինիստական շարժումն ու գեյերի ազատագրման շարժումները կապված և միահյուսված են իրար, այդպես էլ ընդհանուր շատ բաներ կան ռաս-
սայական հավասարության և նույնասեռականների հավասարության շարժում-
ների միջև: Ինչպես իրենց աշխատանքում, այնպես էլ կյանքում այնպիսի գողո-
ներ և ակտիվիստներ, ինչպիսիք են Բել Հուքսը (Bell Hooks-ը ֆեմինիստական շարժման հայտնի սևամորթ ակտիվիստտիկ Գլորիա Վատկինսի կեղծանունն է //թարգմանչի ծանոթագրություն), Օդրի Լորդենը և Ջեյմս Բոլդուինը, իրար միահյուսեցին իրավահավասարության համար շարժումների տարբեր ձևերը:

Հնարավոր է նաև, որ Հարավային Ամերիկայի՝ քաղաքացիական իրավունք-
ների համար շարժումը ոգևորիչ ուժ դարձավ այլ ազատագրական շարժումների համար, սակայն գունավոր գեյերն ու լեսբուհիները շարունակում էին իրենց

նկատմամբ ռասսայական խտրականության վերաբերմունք զգալ նույնասեռականների կազմակերպությունների ներսում, ուր գերիշխում էին սպիտակամորթները: Նրանցից շատերը զգում էին, որ նույնասեռականների ազատագրական շարժման մեջ անհիմն համապարփակությունն է քարոզվում, որն իրականում չի արտացոլում մաշկի այլ գույն ունեցող գեյերի ու լեսբուհիների շահերը: Իրենց ձայնը լսելի դարձնելու նպատակով՝ նրանցից շատերը միավորվում էին մեկուսացված կազմակերպություններում: 1970-ականներին ԱՄՆ-ի գունավոր լեսբուհիները ձևավորեցին այնպիսի քաղաքական խմբեր, ինչպիսին, օրինակ, Մևանորթ ֆեմինիստուհիների ազգային կազմակերպությունն է, իսկ 1980 թվականին Սան Ֆրանցիսկոյում անցկացրին սևամորթ լեսբուհիների առաջին գիտաժողովը:

1986 թվականին Հարավային Աֆրիկայի նախագահ Տաբո Մբեկի ելույթի ժամանակ այսպիսի խոսքեր հնչեցին. «ԱԱԿ-ը (Աֆրիկյան ազգային կոնգրեսը //թարգմանչի ծանոթագրություն) ազատագրված Հարավային Աֆրիկայում ամեն տեսակ խտրականություններն ու հարստահարումներն արմատախիլ անելու վճռական պայքար է տանում: Եվ այս քաղաքականությունն, իհարկե, պետք է իրականացվի նաև գեյերի իրավունքների պաշտպանության համար»:⁸

1994 թվականին նախագահական երդմնակալության ժամանակ Նելսոն Մանդելան շոշափեց գեյերի համահավասար իրավունքների հարցը: Ավելի ուշ սեռական փոքրամասնությունների իրավահավասարությանը վերաբերող հոդվածը ներառվեց սահմանադրության մեջ, և Հարավային Աֆրիկյան աշխարհում առաջին երկիրը դարձավ, որն իր քաղաքացիներին տվեց սեռական կողմնորոշվածության հողի վրա խտրականություններից ազատվելու սահմանադրական իրավունքը:

Գրող Մարկ Գևիսերը երեք պատճառ է առանձնացնում, որոնց հիման վրա հնարավոր դարձավ գեյերի իրավահավասարության հողվածի այդպես հեշտությամբ ներառել սահմանադրության մեջ: Առաջինը ԱԱԿ-ի լիդերների ուտոպիական առաջադիմական գաղափարախոսությունն է և այն, որ նրանցից շատերը Հարավային Աֆրիկայից աքսորման շրջանում, հնարավոր է, շփում են ունեցել Հոլանդիայի, Կանադայի, Շվեդիայի, Ավստրալիայի և Բրիտանիայի սեռական ազատագրական շարժումների հետ: Երկրորդ՝ Հարավային Աֆրիկայի անգլիական եկեղեցին հիմնականում հոմոֆոբ չէ: Նախկինում այն գլխավորող արքեպիսկոպոս Դեսմոնդ Տուտուն միշտ բացահայտ պաշտպանում էր լեսբուհիների ու գեյերի իրավունքները և իր ելույթներից մեկում անգամ ասել է. «Ապարտեյդի դեմ հաղթանակից հետո Եկեղեցու արժանի նպատակը բարոյական խաչակրոց արշավանքն է ամեն տեսակ հոմոֆոբիաների դեմ»: Երրորդն այն է, որ ապարտեյդի դեմ պայքարում իրենց ուրույն տեղն ունեցող գեյ շարժման ակտիվիստները, և առաջին հերթին Մայնոն Նքոլին, ով 1999 թվականին մահացավ ՉԻԱՀ-ից, 1980-ականների կեսերին Դելմանի՝ քաղաքական դավաճանության մեջ մեղադրանքի հայտնի տխուր դատավարության ժամանակ բացեփակ հայտարարեց իր նույնասեռականության մասին, իսկ ժամանակի ընթացքում նրան նույնիսկ հաջողվեց ստանալ բոլոր նրանց աջակցությունը, ովքեր մեղադրվեցին նրա հետ միասին: Նրանցից շատերը ներկայումս բարձր պաշտոններ են զբաղեցնում ԱԱԿ-ի կառավարությունում:

Նքոլիի մահվան առիթով ԱԱԿ-ի պետնախագահ և Հարավային Աֆրիկայի պաշտպանության նախարար Պատրիկ Լեկտան ասաց. «Ինչպե՞ս մենք կարող ենք խտրականությունից չպաշտպանել Մայնոնի պես տղամարդկանց և կանանց. չէ՞ որ ապարտեյդի դեմ հաղթանակն անհնար էր առանց նրա նմանների»:

1989 թվականին դուրս գալով բանտից՝ Նքոլին հիմնեց ԳԼՈԲ կազմակերպությունը, որն արմատապես տարբերվում էր գեյերի կազմակերպություններից նրանով, որ համախմբում էր սև նույնասեռականներին: Այդպիսով նրա հիմնական ներդրումն այն էր, որ հանդես եկավ Աֆրիկայում տիրող այն կարծիքի դեմ, թե նույնասեռականությունը ոչ միայն ապաքրիստոնեական, այլ նաև ոչ աֆրիկյան երևույթ է և սևամորթ հասարակության «սպիտակ վարակ է»:⁶

Բրազիլիայում իրավահավասարության համար պայքարող տարբեր շարժումների միջև կապը նույնպես շոշափելի է: 1970-ականների վերջերին գեյերի և լեսբուհիների ՍՕՍՕՍ կազմակերպությունն իր աջակցությունն առաջարկեց սևամորթների ու ֆեմինիստուհիների վերջին տարիներին կազմավորված շարժումներին: ՍՕՍՕՍ-ի անդամները մասնակցում էին զանգվածային խտրականության դեմ կազմակերպված միջոցառումներին ու քայլարշավներին, իսկ Սև գիտակցության ազգային օրվա տոնակատարության ժամանակ ՍՕՍՕՍ-ը այսպիսի բռնցիկներ էր տարածում. «Չուժքիի դիմադրությունը (աֆրոբրազիլացի, որը XVIII դարում պայքարում էր ստրկության դեմ) հասարակության բոլոր խոցելի խմբերին օրինակ է ծառայում իրենց ազատության համար պայքարում: Նույնասեռականներ լինելով և խտրականությունների ենթարկվելով՝ մենք մեր համերաշխությունն ենք հայտնում բոլոր սևերին՝ ռասիզմի դեմ մղած իրենց պայքարում»:

Էկվադորում, որը սեռական կողմնորոշվածության հողի վրա խտրականության դեմ օրենքն իր սահմանադրության մեջ ընդունած երկրորդ երկիրն է, սեռական փոքրամասնությունների խմբերն իրենց ուժերը միավորեցին իրավահավասարության համար պայքարող տեղաբնակների շարժման հետ:

Տրանսվեստիտը Հարավային Աֆրիկայից...

...Երկրի Սահմանադրության մեջ ներառված՝ սեռական կողմնորոշվածության հողի վրա խտրականություններից ազատվելու հողվածի կապակցությամբ՝

«Թանկագինս, այս ցնդաբանությունը շատ քաղցր է հնչում, սակայն ոչինչ չի նշանակում: Ինձ կարող են բռնաբարել, թալանել, և ի՞նչ, հետաքրքիր է, ի՞նչ պետք է անեմ ես այդ ժամանակ: Թափահարե՞լ Սահմանադրության հատորը բռնաբարողի քթի առջև: Չէ՞ որ ես ուղղակի ոչ ոքի չպատկանող տրանսվեստիտ եմ... Բայց գիտես, այն պահից, ինչ իմացա այդ Սահմանադրության մասին, ես ինձ ներքուստ ազատ զգացի»:

Մեջբերում հետևյալ աղբյուրներից՝ Mark Gevisser, Different Rainbows, Peter Drucker ed, Gay Men's Press, 2000.

Ծայրահեղական նույնասեռականները

(ընօրինակում՝ inclusively queer //թարգմանչի ծանոթագրություն)

Իր գոյության սկզբնական շրջանում, համենայնդեպս Արևմուտքում, սեռա-

կան փոքրամասնությունների շարժումը գեյ շարժում էին անվանում: Հետո այն դարձավ լեսբուհիների և գեյերի, ապա՝ լեսբուհիների, գեյերի և երկսեռականների շարժում: Ներկայումս նոր կազմակերպություններից շատերն իրենց անվանում են L.G.B.S՝ լեսբուհիներ, գեյեր, բիսեքսուալներ (երկսեռականներ) և տրանսգենդերներ (փոխգենդերներ):

Ծայրահեղական նույնասեռականների քաղաքականությունն իր առանձնահատուկ ներդրումն ունեցավ շարժման ընդլայնման գործում: Այն սկիզբ առավ 1980-ականներին և իր ծաղկունքին հասավ 1990-ականներին: Շնորհիվ ծայրահեղական նույնասեռականների քաղաքականության՝ սեռական փոքրամասնությունների բոլոր խմբերը՝ լեսբուհիները, երկսեռականները, փոխսեռականները և անգամ որոշ տարասեռականներ «համախմբվեցին» մեկ տերմինի ներքո:

Ծայրահեղական նույնասեռականների քաղաքականությունը հայտնություն դարձավ բոլոր կարգերի սեռական փոքրամասնությունների միասնական ուղղության իրականացման համար: Ընդ որում, այն ընթացում էր՝ հատելով գեյերի և լեսբուհիների շարժման իրավաքաղաքական մոտեցումը: Եթե քաղաքականության մեջ պաշտոն ստանալու համար գեյերի իրավաքաղաքական ռազմավարությունն օգտագործում էր «Մենք ամենուր ենք» նշանաբանը և ընդգծում խաղաղասիրությունն ու գեյերի և լեսբուհիների «նորմալ լինելը», ապա ծայրահեղական նույնասեռականների քաղաքականության մոտեցումը քննադատական էր ու ընդդիմական: Նրա նշանաբանն այսպես էր հնչում. «Մենք այստեղ ենք և մենք նույնասեռականներ ենք, այնպես որ, հաշտվե՛ք»:

«Ծայրահեղական նույնասեռականներն ընդգծված հայտնում են, որ նրանք այնպիսին չեն, ինչպիսին որ դուք եք, - գրում է սոցիոլոգ Ջոշուա Համսոնը: - Ծայրահեղական նույնասեռականները ոչ այնքան ընդվզում են իրենց՝ անտեսված լինելու դեմ, որքան որպես մարտահրավեր օգտագործում այն»:

Ծայրահեղական նույնասեռականները գործունեությունը փողոցային քարոզի, մշակութային անհամապատասխանության դեմ ցույցի վերածվելու միտում ունի և նույնիսկ դրսևորվում է «բողոքի համբույրների» ձևով, երբ տղամարդիկ հրապարակավ համբուրվում են տղամարդկանց, իսկ կանայք՝ կանանց հետ: Նրանց տեսությունը մեծ ազդեցություն ունի ակադեմիական հաստատություններում: Այս տեսության կանխադրույթները մասամբ հիմնավորվում են պոստ-մոդեռնիզմի և ֆեմինիզմի ժամանակակից փիլիսոփայության, սակայն մեծ մասամբ Միշել Ֆոուկոյի պատմական և սոցիալական գաղափարախոսությունների վրա, որոնք մեծ ազդեցություն ունեին 1970-80-ականների գեյերի ազատագրական ժամանակաշրջանի ընթացքում:

Ֆոուկոյտը ծայրահեղական նույնասեռականությունը դիտարկում էր իբրև «ռազմավարությամբ դասավորված ծայրահեղական դիրք», որտեղից հնարավոր էր նկատել և վերաբերմունքի նոր ճանապարհներ մշակել թե՛ իրենց, թե՛ ուրիշների նկատմամբ: Ծայրահեղական նույնասեռականների քաղաքականությունը սեռական սահմանափակում է արտացոլում, սակայն այն միաժամանակ զնահատում է նաև սեռական փոքրամասնությունների «արտաքսված լինելու», «ծայրահեղական» կարգավիճակների հեռանկարը:

«Ծայրահեղական նույնասեռական ակտիվիստների և քաղաքացիական իրավունքների համար պայքարողների միջև եղած տարածայնությունների պատճառ են նաև սերունդների միջև առկա տարբերությունները: Տարեց սերնդի որոշ մարդկանց համար «ծայրահեղական նույնասեռական» հասկացությունը մինչ օրս էլ չափազանց բացասական ենթատեքստ ունի, և այդ ենթատեքստը սկսում է վերաբերել ամբողջ շարժմանը»:

Սակայն ծայրահեղական նույնասեռականների շարժման ամենակարևոր մարտահրավերն այն է, որ այն հարցականի տակ է դնում սեքսուալ և սեռական նույնականացման տարբեր ձևերի միասնությունը, կայունությունը և քաղաքական գործնականությունը:

Ծայրահեղական նույնասեռականների քաղաքականությունը նաև իր մեծ ներդրումն ունի փոխգենդերների շարժման ու տեսության կայացման գործում, և այն մարդկանց համար, ովքեր իրենց փոխգենդեր ու երկսեռական են համարում:

Փոխգենդերների խնդիրները

Վերջին տասնամյակում մարդու իրավունքների համար հանդես եկող ակտիվիստները մեծ ուշադրություն են դարձնում նրան, որ փոխգենդերները, հատկապես նրանք, որոնց համար սեքսը աշխատանք է հանդիսանում, ռատիկանության և իրենց հանդես բռնամաքար տրամադրված այլ խմբերի կողմից բռնությունների գոհ դառնալու մեծ ռիսկի են ենթարկված: Այդ ընթացքում աշխարհում ստեղծվել են փոխգենդերների տարբեր կազմակերպություններ, և նրանցից շատերը L.G.B.S-ի առավել ներկայացուցչական կազմակերպությունների մեջ են մտել: Սակայն փոխգենդերների նման համախմբվածություններն այնքան էլ հարթ չի ընթանում և համատարած չէ: Երկար տարիներ գեյերի և լեսբուհիների շարժումը փոխգենդերներին դիտում էր իբրև անջատ, մեկուսացած խումբ: Ոմանք փոխսեռականությանը մոտենում էին որպես կարծրատիպային մտածողության արդյունք, այսինքն՝ եթե տղամարդն ավելի շատ կնոջ է նման, քան տղամարդու, իսկ կինը՝ տղամարդու, քան կնոջ, ապա այս դեպքում չարժե փոխել սեռը: Մյուսները համարում էին, որ փոխգենդերներին մոլորության մեջ գցելով՝ և օգտագործում են արհեստավարժ բժիշկները:

Փոխգենդերների շարժման նկատմամբ առանձնապես տհաճությամբ էին լցված որոշ ինչպես լեսբուհի, այնպես էլ տարասեռական ֆեմինիստուհիներ: Նրանք համարում էին, որ իրենց կանանց սեռի դասին պատկանող համարող փոխսեռական տղամարդիկ, երբեք չեն հասկանա՝ ինչ է նշանակում ճնշված կնոջ դերում լինելը, քանի որ միևնույն է՝ որպես տղամարդ են դաստիարակված: Ակադեմիկոս Ջանիս Ռայնոնդը իր «Փոխսեռականների կայսրություն» գրքում արժարժեց ֆեմինիստուհիների շրջանում հայտնի կարծիքը, որ փոխսեռականները հայրիշխանության համակարգի նեղ գործիքն են, որն արմատներ է գցում կանանց միջավայրում և նրանց լարում մեկը մյուսի դեմ: «Բողոք փոխսեռականները բռնություն են կատարում կնոջ մարմնի վրա՝ ընդօրինակելով նրանց և հարմարեցնելով իրենց սեփական պահանջներին»- գրում է նա:

Սակայն 1990-ականներին քաղաքականությունը նոր դաշինքների սկիզբ էր

դառնում: Այսպես՝ Արգենտինայում, Բրազիլիայում և Կոլումբիայում փոխտե-
ռականների խնդիրների բարձրաձայնումն ի վերջո հանգեցրեց ԼԳԲՏ խմբե-
րում կանոնադրության փոփոխման, ինչպես նաև նրան, որ հասարակությունն
ավելի շատ բան իմացավ մարդու իրավունքների ոտնահարման մասին:

Այդ ընթացքում կանանց շարժման ազդեցիկ խմբերը փոխեցին իրենց տե-
սակետը: 1997 թվականին «Գենդեր Պակ» կազմակերպության և «Ազգի լեսբու-
հիներին իրավունքների համար» խմբի անդամների գաղտնի գործունեություննե-
րի արդյունքում ԱՄՆ-ի Կանանց ազգային կազմակերպությունը (ԿԱԿ) ձայնե-
րի ճնշող մեծամասնությամբ ընդունեց փոխտեռականներին ներառելու մասին
բանաձևը: Գիտաժողովի մասնակիցներից մեկը կարծիք հայտնեց այն մասին,
որ «այսօր փոխգենդերների միությունը հանդես է գալիս պայքարի առաջին
գծում՝ կոտորելով մեզ բաժանող կարծրատիպերն ու պատմեղները»:⁹

Եվ իրականում՝ ֆեմինիստուհիներ Հելենա Միքսոուսի, Ջուլիա Կրիստալայի,
Լյուսի Իրիգարեյի, Ջուլիո Բաթերի և ուրիշների ժամանակակից փիլիսոփա-
յությունն իր մեծ ավանդն ունի սեռի և փոխգենդերների նշանակության արմա-
տական վերանայման հարցում:

Երկսեռականների ռազմավարությունն ու նույնականացումը

Վերջին ժամանակներս գեյերի և լեսբուհիների շարժումներում ավելի մեծ պատ-
րաստականությամբ են ընդունում երկսեռականներին և փոխգենդերներին: 1950-
ականներին Ալֆրեդ Կինսլի և 1970-ականներին ու 1990-ականներին Շեր Խայթի հայտ-
նի հետազոտությունները ցույց տվեցին, որ սեռական ցանկությունը երկու սեռերի
նկատմամբ էլ այնքան լայն տարածում ունի, որ երկսեռականությունը կարելի է մինչև
անգամ որպես օրինաչափություն, այլ ոչ թե սեռական փոքրամասնություն դիտել:

Սակայն, այդուհանդերձ, համեմատաբար քչերն են բացահայտորեն իրենց
դասում երկսեռականների շարքը: Շատերն ապրում են տարասեռական կյան-
քով՝ թաքցնելով միևնույն սեռի նկատմամբ իրենց սեռական ցանկություններն ու
հակումները: Սակայն իրենց երկսեռականությունը չթաքցնողներից շատերը
պահանջում են, որ գեյերի ու լեսբուհիների շարժման մեջ իրենց դիտեն և ընդգր-
կեն որպես առանձին խումբ:

Սի կողմից երկսեռականության խնդիրը մնան է նույնասեռականության խնդ-
րին. հասարակության մեջ խտրականությունն ուղղված է երկսեռականների նույ-
նասեռականության, այլ ոչ թե տարասեռականության դեմ: Սակայն գեյերի և լես-
բուհիների շարժման շրջանակներում երկսեռականներին նախապաշարմունքով
են վերաբերվում, ինչի պատճառն էլ, տվյալ պարագայում, նրանց տարասեռական
լինելն է: Տվյալ իրավիճակը ցուցադրաբար պարզաբանում են Ման Ֆրանցիսկոյի
գեյ մամուլում՝ նամակների փոխանակման ձևով ընթացող բանավեճերը: Մեջբե-
րում մի նամակից. «Կնոջ՝ տղամարդու հետ անկողին կիսելու պատրաստականու-
թյունը նրան աշխատանք, փող, իշխանություն, կարգավիճակ ստանալու հնարա-
վորություն է ընձեռում: Եվ այդ հնարավորությունը ոչ մի տեղ չի կորչում, անգամ եթե
այդ ընթացքում նա քնում է նաև կանանց հետ»: Մեջբերում պատասխան նամա-
կից. «Մա նաև մեր ընկերությունն է: Մենք աշխատում ենք այդտեղ, տառապում, դա
մեր աշխարհն է: Եվ խղճով բարեկամների դերին մենք համաձայն չենք»:⁶

Ավանդական հասարակության մեջ, ուր նույնասեռականությունը դաժանա-
բար պատժվում է, իսկ ամուսնությունը, փաստորեն, հարկադրական բնույթ է
կրում, երկսեռականության մասին, իհարկե, բացահայտ չեն ազդարարում:
Օրինակ՝ Մոզամբիկից գաղթած աշխատավոր տղամարդիկ կարող են տանը
կին ունենալ և տղա սիրելյան՝ Հարավային Աֆրիկայում կամ Պերուում, ըստ լու-
սանկարիչ Անե Բունգարտոի տվյալների, տղամարդիկ կարող են աչք փակելու
համար հարսնացու ունենալ, հանդիպել երեկոյան նրա հետ տանը, բայց դուրս
գալ հանդիպման պռոնիկ տղամարդկանց հետ:

Նման հասարակություններում երկսեռականները ստիպված են ամեն գնով
համակերպվել: Գրող Ջերեմի Սիբբուկը հիշում է հնդիկ տղամարդու հետ կապ-
ված մի պատմություն. վերջինս Վարանասի մոտ գտնվող իր հայրենի գյուղ վե-
րադառնալով՝ կանոնավորապես սեքսով էր զբաղվում քրոջ ամուսնու հետ:
Ամուսնացած կանայք նույնպես կարող են լեսբիական կապեր ունենալ, և դա
շատ ավելի լայն տարածում ունի, քան շատերը կարող են պատկերացնել:

Առավել ավանդապաշտ հասարակություններում լեսբուհիների համար երկսե-
ռականությունը սեփական սեքսուալ և հուզական էությունը որոշ չափով արտա-
հայտելու միակ միջոցն է: Այնպիսի երկրներում, ինչպիսին Հնդկաստանն է, կնոջ
համար ընտանեկան կառուցվածքից անկախ ապրելն իրականում հնարավոր չէ:

Շատ կանայք, ովքեր կապվում են լեսբուհիներին օգնություն ցուցաբերող կենտ-
րոնների հետ, ամուսնացած են և հուսահատ վիճակում են: Դելիի Սանգինի օգնու-
թյան կենտրոնի տվյալներով՝ այդպիսի կանանցից ոմանք մոտ են ինքնասպանու-
թյուն գործելու մտքին: Հազվադեպ չեն նաև լեսբիական կապի բացահայտման պատ-
ճառով կանանց սպանության դեպքերը՝ կատարված իրենց իսկ ամուսինների կողմից:

Միաժամանակ հնդիկ ֆեմինիստուհիներն աճող հետաքրքրությամբ
հետևում են լեսբության և երկսեռականության իրավիճակի զարգացմանը: Ալ-
տիվիստուհի Ֆլավիա Ազնեսը հայտնում է. «Շատերը լեսբությունն ու երկսե-
ռականությունը որպես քաղաքական քայլ են համարում, քանի որ ի վիճակի չեն
համակերպվել կնոջ էության և դերի վերաբերյալ այն պահպանողական
քարացած հասկացողության հետ, որը արմատավորվում է անհավասարության,
շահագործման համակարգով, հարգանքի բացակայությամբ և հաճախ ուղղակի
կոպիտ ֆիզիկական ուժով, որը բնորոշ է տարասեռական հարաբերություննե-
րին՝ ինչպես ամուսնության մեջ, այնպես էլ նրանից դուրս»:⁸

Մա հանդուգն հայտարարություն է

Աշվինի Սուկթհանքարը՝ Դիպ Մեհտի «Կրակ» լեսբիական ֆիլմի ցուցադրու-
թյան առիթով հնդիկ ֆունդամենտալիստների հարձակման հետևանքների մասին:

Մենք աշխատում էինք մեծ խանդավառությամբ՝ մեր առջև նպատակ դնելով
48 ժամվա ընթացքում բողոքի միտինգ կազմակերպել՝ ի պատասխան Շիվ Մե-
նի ֆունդամենտալիստների կողմից կազմակերպվող բռնությունների: Նշանա-
բաններ արտասանող հազարավոր մարդիկ՝ մոմերն ու պատասանները ձեռքնե-
րին, հավաքվել էին «Ռեզալ Սինեմա» կինոթատրոնի մոտ, որը քիչ առաջ գրոհի
էր ենթարկվել ֆունդամենտալիստների ամբոխի կողմից:

Եվ Հնդկաստանի համար առաջին անգամ բողոքողների խմբերում կարելի էր լեսբուհիների տեսնել: Մարդու իրավունքներին, ապակրոնացմանը, կանանց ինքնավարությանը, խոսքի ազատությանը վերաբերող պաստառների տարափում կարելի էր տեսնել նաև ազգային դրոշի գույներով նկարագրոված մի պաստառ, որի վրա գրված էր՝ «Հնդկուհին և լեսբուհին»: Ո՞վ կարող էր մտածել, որ իր ազգային արժանապատվության իրավունքի մասին այդպիսի համարձակ հայտարարությունը կարող էր այդպիսի մեծ ալիք բարձրացնել:

«Ինդիա Թուդեյ» («Հնդկաստանն այսօր») ազգային շաբաթաթերթի խմբագրի տեղակալն իր ցնցումն արտահայտեց այսպիսի խոսքերով. «Գեյերի մարտնչող շարժումը, որը մինչ այժմ Արևմուտքի բողոքարարների շարժման թույլ ընդօրինակումն էր, հանդգնեց բացահայտորեն դրսևորել իրեն՝ հանդես գալով Դեյխուն պաստառներով, որոնք հայտնում էին, թե «լեսբուհիները մեր ազգային արժանապատվության մասնիկն են»: Նա խոսքը շարունակեց հետևյալ հայտարարությամբ. «Գողությունը, խաբեությունը, սպանությունը և այլ (քրեական) հանցագործությունները երկար պատմություն ունեն: Բայց դա նրանց չի բարձրացնում ազգային արժանապատվության մակարդակին»:

Բայց հասարակական բեմի վրա բողոքող նույնասեռականների հայտնվելը թույլ տվեց տարբեր ոլորտների գործիչներին՝ կանանց և տղամարդկանց, տարասեռականների և նույնասեռականների ակտիվիստներին համախմբվել լեսբուհիների իրավունքների համար բողոք կազմակերպելու համար: Ինչո՞ւ էր շեշտը դրված լեսբուհիների իրավունքների վրա: «Լեսբուհիների և կանանց շարժման միջև ավելի հստակ գուգահեռներ անցկացնելու համար, - այսպես ձևակերպեցինք մենք մեր հանձնարարագրում, - կնոջ և հատկապես լեսբուհիների սեռազգացողության սոցիալական ճնշվածության թեման բարձրացնելու համար, ինչը նրանց պայքարը տարբերում է գեյ տղամարդկանց շարժումից»:

Լեսբուհիների՝ իրենց իրավունքների համար պայքարող ընկերակցությունը հայտնություն էր ինձ համար: Առաջին անգամ լեսբուհիների խնդիրները հասարակական քննարկման արժանացան: Մենք համդիսյուն էինք հենց Դեյլի կենտրոնում՝ հնդկական սրճարաններից մեկում, որը հայտնի էր որպես քաղաքական ընդդիմականների հավաքատեղի: Մուրճ էինք խմում և բարձրաձայն քննարկում մեզ հուզող թեմաները: Մենք «Առասպելներն ու լեսբիության իրողությունը» թեմայով հազարավոր թուցիկներ բաժանեցինք Դեյլի այն վայրերում, ուր, շատերի համոզմամբ, թշնամաբար էին տրամադրված ակտիվիստների նկատմամբ, հարյուրավոր գործարաններով արդյունաբերական շրջաններում, Մահաբաթական համալսարանի շրջանում՝ Դեյլի ոստիկանության շտաբից ոչ հեռու: Մենք հաճախում էինք հասարակական հավաքների, որոնք կազմակերպվում էին կանանց, մարդու իրավունքների համար պայքարողների և ուսանողական խմբերի կողմից: Փողոցային բեմականացման համար սցենարներ գրեցինք, որոնք ծանոթ ռիթմերի ու ժեստերի միջոցով գեղարվեստորեն արտացոլում էին շարքային ակտիվիստների փորձը, ովքեր երթնեկում էին Հնդկաստանի ամբողջ հողագործական հյուսիսով և լումս գյուղացի կանանց saheli-rishte-ը՝ կանանց ինտիմ կապերի մասին պատմությունները:

Ես ևս մեկ անգամ պարզեցի ինձ համար, որ շարժումն արդարացված է

միայն այն դեպքում, երբ կարող է փոխել մարդկանց աշխարհայացքը, ու նաև այն, որ մերժումը երկխոսության վերջը չէ, այլ միայն սկիզբը:

Աշվինի Սուկթհանքարի «Մեզ նման մարդիկ» գրքից, New Internationalist, հոկտեմբեր, 2000:

Ընկերակցության դերը ՉԻԱՀ-ի դեմ պայքարում

ՉԻԱՀ-ի համաճարակը մեծ ազդեցություն ունեցավ սեռական փոքրամասնությունների շարժման վրա: Այն արդեն շատերի, այդ թվում նաև գեյ ակտիվիստների կյանքն էր խլել՝ արդյունքում թուլացնելով շարժումը:

Ժամանակակից Աֆրիկայում հիվանդության բարձր մակարդակը (Աֆրիկայի որոշ երկրներում հիվանդանում է յուրաքանչյուր չորրորդը) լուրջ անհանգստության առիթ է: Սակայն, սխալ կյիներ թերագնահատել այն բոլոր ջանքերը, որ ժամանակին ձեռնարկվեցին ՉԻԱՀ-ի տարածումը կանխելու համար:

Երբ 1980-ականների սկզբին սկսվեց ՄԻԱՎ վարակի և ՉԻԱՀ-ի տարածումը, հասարակական կարծիքը գեյերի դեմ շրջվեց. համաճարակն անվանում էին գեյ ժանտախտ: Հատկապես խոցելի և մերժված խմբերին բժշկական օգնություն տրամադրելու պայքարը նոր ալիք բարձրացրեց սեռական փոքրամասնությունների շրջանում: Շատ մեծ դեր խաղաց այն փաստը, որ արդեն գոյություն ունեին գեյերի և լեսբուհիների քաղաքական կողմնորոշում ունեցող ընկերակցություններ, որոնք հասարակության առողջության պաշտպանությունը հոգացող նոր խմբերի հիմքն էին և որոնց առաջնային խնդիրը դարձավ ՉԻԱՀ-ի դեմ պայքարն ու անվտանգ սեռական վարքագծի դրսևորման քարոզումը:

Պերուում, Մեքսիկայում և Նիկարագուայում հենց գեյերի շարժումն իր վրա վերցրեց ՉԻԱՀ-ով հիվանդներին աջակցություն ցուցաբերելու և հասարակությանը համաճարակի դեմ պայքարի վերաբերյալ հարցերի լուսաբանման հոգսը: ՄԻԱՎ վարակի և ՉԻԱՀ-ի դեմ պայքարի կազմակերպություններ ստեղծելու նպատակով՝ Բրազիլիայում գեյերի որոշ խմբեր միավորվեցին սոցիալական և գիտական աշխատողների, ազատական հոգևորականության և հիվանդների հետ: Սակայն աշխարհի այնպիսի հատվածներում, ուր գեյերի հիմնավորված կազմակերպություններ չկային, օրինակ՝ Աֆրիկայի զգալի մասում, Հնդկաստանում և այլուր, այդ խնդրի դեմ պայքարելը շատ ավելի բարդ էր:

Որոշ երկրներում ՉԻԱՀ-ի դեմ պայքարի կազմակերպություններում մեծ նշանակություն չէր տրվում գեյերի դերին: Այսպես, օրինակ, նույնասեռականների դերի մասին լումս էր «ՉԻԱՀ-ի դեմ ակցիա» սինգապուրյան կազմակերպությունը, որն իրականում մեծ մասամբ գեյերից էր կազմված, որոնք, սակայն, պատրաստ չէին բացահայտ հայտարարել իրենց սեռական կողմնորոշվածության մասին:⁶

Սա հեղափոխություն է

Բայց և միաժամանակ այնպիսի երկրներում, ուր նույնասեռականությունն ապօրինի էր համարվում, ՉԻԱՀ-ի դեմ պայքարի ակտիվիստները նաև բացասական վերաբերմունքի էին արժանանում՝ կապված իրենց գործունեության հետ: Այսպես՝ 2000

թվականի մայիսին Յամայկայից մի բուժքույր էր ձերբակալվել՝ հիվանդներին պահպանակներ բաժանելու պատճառով:

Այսօր հստակ ձևով ուրվագծվում է ՉԻԱՀ-ով վարակվելու վտանգի և աղքատության, մերժվածության ու գրկվածության միջև կապը: ՉԻԱՀ-ը թափ է առնում հատկապես աղքատների շրջանում: Աճել է սեքսի առևտուրը, որը ևս աղքատության արդյունք է: ՉԻԱՀ-ի բուժման համար նախատեսված դեղորայքը մեծ գումարներ է պահանջում, որը հասու է միայն ֆինանսապես ապահովվածներին: Չարմանալի չէ, որ աղքատ երկրների սոցիալապես և նյութապես խոցելի մարդկանց մեծամասնությունն ավելի է ենթարկված ՄԻԱՎ-ով վարակվելու և ՉԻԱՀ-ից մահանալու վտանգին: Դեղագործական ընկերությունները, որոնք չափազանց քանկ գներ են պահանջում իրենց դեղորայքի համար և Կենտրոնական Աֆրիկայի մարտիկները, որոնք բռնաբարությունը որպես մարտական միջոց են օգտագործում, աշխարհի այդ տարածաշրջանում վարակի տարածման պատասխանատվության առաջին կրողները պետք է լինեն:

Այթմանի խոսքերով, սակայն, ՉԻԱՀ-ի համաճարակը չի շրջանցել մահ այն երկրները, ուր ֆեմինիզմն ու գեյերի՝ իրենց իրավունքների համար պայքարը նշանակալից դեր են խաղում հասարակության մեջ: Այսպես, աշխարհի որոշ մասերում, ուր ապրում են և՛ աղքատներ, և՛ հարուստներ, գոյություն ունեցող կազմակերպությունները և ընկերակցությունները կարողացան արժանի դիմադրություն ցույց տալ ՉԻԱՀ-ի տարածմանը և հասարակության մեջ ժամանակին անվտանգ սեռական վարքագծի փորձառություն պատվաստել:

Հնարավոր է, սա այնքան էլ մեծ ձեռքբերում չի թվում, եթե նկատի առնենք Աֆրիկայում համաճարակի տարածման չափերը, սակայն նույնասեռականների կազմակերպությունների ակտիվ գործունեությունն, այնուամենայնիվ, զգալիորեն իջեցրել է աշխարհում համաճարակի տարածման վտանգը: Եվ, ինչպես նշում է Այթմանը՝ «Նման կազմակերպությունները չէին կարող գոյություն ունենալ նախորդ տասնամյակի ընթացքում գեյ տղամարդկանց և լեսբուհիների համայնքման շարժումից առանձին, որը հաջորդեց 1968 թվականի Ֆրանսիայի ուսանողների ապստամբությանը և 1969 թվականի Սթոունվոլի բողոքի ակցիաներին»:⁶

Խանութներով են շրջում...

«Մենք այնքան շատ ենք և այնքան տարբեր, մենք՝ լոնդոնյան Օքսֆորդ սթրիթի քայլարշավի մասնակիցներս,- ինչ-որ մեկը սկսում է արտասանել, մյուսները միանալով շարունակում են,- մենք այստեղ ենք, մենք նույնասեռականներ ենք և մենք այստեղ խանութներով շրջելու չենք եկել»:

Նույնասեռականների դեմ ուղղված օրենքի հողվածներին դեմ ելած բողոքի քայլարշավն անցնում է բիզնես-կենտրոնի ամենաաշխույժ առևտրային փողոցով, որը ոմանք սպառողական դրախտ են անվանում, ոմանք էլ՝ գիշերային մոդակամա՝ նայած թե որ տեսակետից ես մտնեմ: Սակայն «մանտրան», որն արտասանում են մասնակիցները, իր մեջ նաև հեզմական ենթատեքստ է պարունակում: Բանն այն է, որ շուկան հատկապես հետաքրքրված է գեյերի ապահովված անժառանգ գույզերով, քանի որ նրանք շատ ապրանք գնելու հնարավորու-

թյուն ունեն: Անգամ «գեյ» հասկացությունը մոդայիկ է դարձել: Սակայն գեյերն ուշադրության կենտրոնում են ոչ թե արմատական խռովարարության, այլ էքստրեմալ ոճի «ներկայացուցիչ» լինելու պատճառով: Մեքսը, և հատկապես նույնասեռականությունը, աշխարհի կողմից մեծ պահանջարկ ունեցող ապրանքներ են դարձել: Եվ անգամ գեյ շքերթները, որոնք նախկինում քաղաքական նպատակներ էին հետապնդում, այսօր շատ երկրներում առևտրական միջոցառումներ են դարձել: Այսպես՝ Սիդնեյի «Մարդի Գրա» նույնասեռականների ամենամյա պարահանդեսը տնտեսությանը 23 միլիոն դոլար է բերում:

Կարելի է ասել, որ սեռական փոքրամասնությունների նկատմամբ սկսել են ավելի հանդուրժող լինել: Համենայնդեպս՝ շուկայի կողմից: Եվ սա հաստատում է այն, որ «գեյերն այստեղ են» և նրանց հրավիրում են շրջելու խանութներով: Շատ մարդկանց համար դա արդեն բավական է: Ո՞ւմ են հուզում քաղաքական իրավունքները, եթե դուք կարող եք նորմալ կյանքով ապրել, և ձեր ցանկացած սպառողական կարիք բավարարված կլինի: Հատկապես, եթե ձեր դուրսը, ֆունտը կամ յուսնը նույնպիսի արժեք են ներկայացնում, ինչպիսին որ տարասեռական գնորդի փողը:

Սակայն այս ցուցադրությանը մասնակցող մարդիկ այլ կերպ են մտածում:

Ոչ մի տեղ աշխարհում շուկան չի կարող քաղաքական իրավունքներ տրամադրել: Եվ եթե գլոբալիզացման փորձն այն ամենն է, ինչին ընդունակ է շուկան, ապա այն ավելի շուտ գրկում է քաղաքական իրավունքներից, քան օժտում դրանցով: Իր էությամբ գլոբալիզացված սպառողական շուկան ժխտում է բազմազանությունը, տեղական շուկաների բազմազանության մեջ այն շահագրգռված է միայն միանման ապրանքների վաճառքի իրականացմամբ: Եվ երբ գլոբալիզացումից առաջացած ռեակցիան ձեռք բերի կնատյացության և հոմոֆոբիայի ձևեր, որոնց համար սահմանված գինը մարդկային կյանքն ու ազատությունն են լինելու, բազմազան կորստից արժանանալու ուղղակի կփորձեն էլ ավելի հարմարվել նոր հիմնավոր իրականությանը, որպեսզի նոր պայմաններն իրենց ավելի մեծ եկամուտներ բերեն:

Շուկայի գայթակղություններն ու մշակութային ճանաչման հարմարավետ պայմանները չպետք է անտեսեն իրավունքների և հավասարության կարիքները: Խտրական օրենքները մարտահրավեր են նետում սոցիալական ճշմարտությանը: Դաժան հալածանքների, աղքատության և ՉԻԱՀ-ից պաշտպանվելու հարցերից անտեղյակ պայմաններում ապրող աշխարհի շատ մարդկանց համար դա տառաջիորեն կյանքի և մահու խնդիր է:

Իսկ ի՞նչ կասեք այն հեղափոխության մասին, որը 1969 թվականին սթոունֆոլյան իրադարձությունների ժամանակ այդպես ողջունում էր Միլիլիա Ռիվերան: Արդյոք այն իսկապե՞ս տեղի էր ունեցել: Մասամբ՝ այո, հնարավոր է որոշ մարդկանց համար: Բայց ոչ բոլորի: Բոլորովին էլ ոչ բոլորի համար:

Մեկուկես դար է արդեն անցել այն ժամանակներից, երբ Կարլ Ուլրիխը թղթին հանձնեց ձերբակալված ընկերոջը պաշտպանող ելույթը: Սակայն, նույնիսկ այս իրադարձությունից հարյուրավոր տարիներ առաջ այն մարդիկ, ովքեր չէին համապատասխանում հասարակության տարասեռական ձևանմուշին, հետևում էին իրենց սեփական ուղուն և ստեղծում իրենց սեփական մշակույթներ:

ըը: Հաջող գլուխը նվիրված է այդպիսի մարդկանցից մի քանիսի և նրանց կազմակերպությունների գաղտնի պատմությանը:

ՓԱՍՏ

1999 թվականին գեյերի շքերթներ են անցկացվել աշխարհի 38 երկրներում, որոնցից 13-ը զարգացող են:¹⁰

1. Trans Liberation, Leslie Feinberg, Beacon Press, 1998.
2. The Global Emergence and Lesbian Politics, Barry D Adam et al eds, Temple University Press, 1999.
3. The Myth of Modern Homosexual, Rictor Norton, Cassell, 1997.
4. Coming Out, Jeffrey Weeks, Quartet Books, 1977.
5. 'Compulsory Heterosexuality and Lesbian Existence' by Adrienne Rich in Signs, 1980.
6. Social Perspectives in Lesbian and Gay Studies, Peter M Nardi and Beth E Schneider eds, Routledge, 1998.
7. Female Desires, Evelyn Blackwood and Saskia E Wieringa eds, Columbia University Press, 1999.
8. Different Rainbows, Peter Drucker ed, Gay Men's Press, 2000.
9. Reclaiming Genders, Kate More and Stephen Whittle eds, Cassell, 1999.
10. The Penguin Atlas to Human Sexual Behavior, Judith Mackay, Penguin, 2000.
11. Crimes of Hate, Conspiracy of Silence, Amnesty International, 2001.

3. ՔՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նույնասեռականության պատմության համաշխարհային տեսություն... հույներն ու հռոմեացիները... սուֆիստների միաստիկան... Վերածննդի սողունահարները...

չինացիներ. դեղձի սիրահարներն ու բուսակերները... լեբուսիները՝ ծովերի տիրուհիներ... ամերիկյան հնդիկները՝ փոխգեղերներ... ավանդական աֆրիկացիները...

Ընկերները հավաքվել էին՝ միասին գինի ճաշակելու և զրուցելու: Թեման, ինչպես լինում է նման կարգի հանդիպումների ժամանակ, հետզհետե անցնում է սեքսին: Կատակերգական պիեսների հեղինակ Արիստոֆանեսը պատմում է մյուսներին, թե ինչ է մտածում սեռերի և սեքսի ծագման մասին:

Ի սկզբանե, ասում է նա, ապրել են երեք սեռի մարդիկ՝ տղամարդիկ, կանայք և հերմաֆրոդիտներ, և նրանք բոլորն էլ բոլորովին այլ տեսք են ունեցել, քան ունեն այսօր: Նրանց մարմինները հսկայական էին, և նրանք չորս ոտք ու չորս ձեռք, երկու գլուխ և երկու ինտիմ օրգան են ունեցել:

Եվ քանի որ մարդիկ այդ ժամանակ շատ զորեղ էին և սկսել էին սպառնալ աստվածներին, Չևսը նրանց երկու մասի կիսեց՝ թողնելով յուրաքանչյուր կիսված մարդուն հուսահատորեն կարտել իր երկրորդ կեսին: Այն տղամարդկանց, ովքեր նախկինում հերմաֆրոդիտների կեսն էին կազմում, գրավում էին կանայք, իսկ

այն կանանց, ում բաժանեցին իրենց տղամարդ կեսից, գրավում էին տղամարդիկ, և դա բնության կանչն էր: Սակայն այն կանայք, ում պոկեցին իրենց մյուս կանացի կեսից, սկսեցին կանանց փնտրել՝ նրանց հետ նորից միանալու համար, իսկ իրենց տղամարդ կեսից բաժանված տղամարդիկ սկսեցին թախծել իրենց երկրորդ տղամարդ կեսի համար: Եվ դա նույնպես բնության կանչն էր:

Այս ամենը շարադրել է Պլատոնն իր «Միմպոզիումի» էջերում: Իհարկե, այնտեղ չենք գտնի «նույնասեռական» կամ «փոխգեղեր» տերմինները, բայց այն, ինչի մասին գրում է նա, ինչպես մեզ հայտնի է դառնում Արիստոֆանեսի պատմությունից, իր արմատներով նույնքան հին է, որքան և Հունաստանի բլուրները:

Որոշ մշակույթներում տարասեռականությունից նման շեղումները բացարձակապես նորմալ երևույթ էին համարվում, և հասարակությունը շատ հանգիստ էր վերաբերվում դրանց: Ավելի ուշ՝ կեղծ բարեպաշտական ժամանակներում, անցյալի հանդուրժողականության մասին տվյալները պարզապես ջնջվում են պատմական քրոնիկներից:

Միայն վերջին մի քանի տասնամյակների ընթացքում նույնասեռականներն ու նրանց մշակույթներն ի վերջո պատմական հետազոտությունների առարկա դարձան, որոնք կարողացան շղարշի տակից երևան հանել նախկինում անհայտ պատմական շատ փաստեր:

Քողարկված պատմություն

Նույնասեռականության պատմության փաստերը վերականգնելը հեշտ չէ: Նրա մեծ մասը, բառի բուն իմաստով, այրվել է կրակի մեջ, այնպես, ինչպես և միջնադարյան Եվրոպայում սողոմահարների դատական ընթացքների գրառումները, որոնք թաղվել են մահապատժի ենթարկվածների հետ:

Շատ բաներ ոչնչացնում էին մահացած գեյերի, լեբուսիների և երկսեռականների ընկերներն ու բարեկամները՝ նրանց «բարի համբավը» պահելու նպատակով: Կարելի է գրողների և արվեստի աշխարհի այլ ներկայացուցիչների մի ամբողջ ցանկ ներկայացնել, որոնց մահից հետո նրանց նույնասեռական ցանկությունների կամ հարաբերությունների ապացույցներ են մնացել, որոնք սակայն հետագայում ոչնչացվել կամ մարդկանց աչքից հեռու են պահվել՝ Էդվարդ Լիար, Շառլոտա Բրոնտե, Մերի Վոլստոնկրաֆտ, Էմիլի Դիկենսոն, Լյուդվիգ Վիտենեն-տեյն, Ջորջ Էլիոտ, Քոլ Փորթեր, Ֆեդերիկո Գարսիա Լորկա և Ջոն Դոն:¹

Եվ եթե գեյերի պատմությունը քողարկված էր կամ պարզապես այդ մասին լուր էին, ապա լեբուսիների դեպքում դա էլ՝ ավելի ակնհայտ էր՝ ինչպես սեռազգացության, այնպես էլ իրենց կին լինելու պատճառով:

Այսօր իրավիճակը փոխվել է: Լեսբիական ավանդույթներ են հայտնաբերվել Մոնբասի և Քենիայի իսլամական աշխարհի հարուստ կանանց միջավայրում, նախահեղափոխական Չինաստանի բուսակեր քույրերի ընկերակցություններում: Կանանց միջև ամուսնության ավանդույթներ են հայտնաբերվել Գանայում, Լեսոտոյում և աֆրիկյան այլ երկրներում: Քույրերի միջև նույնասեռ կապեր են բացահայտված Ավստրալիայի աբորիգենների մեջ: Մրանք ընդամենը մի քանի օրինակներ են:²

Միաժամանակ, կենսագիրները զբաղվել են այնպիսի հայտնի կանանց պատ-

մությունների ուսումնասիրությամբ, ինչպիսիք են Անգլիայի թագուհի Աննան, ով երկարատև կապի մեջ էր իր ֆրոյլայնի՝ Մառա Չապլինի հետ, իսպանուհի սոցիալիստ Մերսեդես դե Կոստան, ում սիրուհիներն են եղել Մառլեն Դիթրիխն ու Գրետա Գարբոն, Իվ Բեֆորը՝ ծնված 1898 թվականին, ով Հոլանդի միության և Էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսության ժամանակակից շարժման հիմնադիրն էր:³

Դեռ 1953 թվականին գեյ պոետ Ջեք Սփայսերը գրել է. «Մենք՝ նույնասեռականներս, փոքրամասնությունների միակ խումբն ենք, որը չունի սեփական մշակութային ժառանգություն»: Սակայն այսօր կարելի է խոսել հակառակի մասին. նույնասեռականների մշակութային ժառանգությունը տարեցտարի համալրվում է նորանոր փաստերով: Ստորև բերվում են սեռական փոքրամասնությունների պատմություններից միայն մի քանիսը:

Հունական սերն ու հռոմեական վարքագիծը

Նույնասեռականությունը Հին Հունաստանի մշակույթի մի մասն էր կազմում, և այդ փաստն այնքանով է ակնհայտ, որ հաջորդող կեղծ բարեպաշտական ժամանակներում այն սքողելու բոլոր փորձերը ձախողման են ենթարկվել:

Դասական արվեստն ու կրոնը լի են նույնասեռ սիրո վկայակոչումներով: Անգամ Ջեսս անտիկ կրոնում ներկայացված է որպես երիտասարդ և չքնաղ Հանիմեդի սերը տեղացուղ երկսեռական: Հունական գրականությունն ու փիլիսոփայությունն այն մասին են խոսում, որ մեծ սեռականությունը լայն տարածում է ունեցել և ընդունված է եղել անտիկ հասարակության մեջ: Հին հույների համար դա նախապատվության, բայց ոչ բարոյականության հարց է եղել:

Նկատի առնելով այն փաստը, որ անտիկ Հունաստանում կանայք սոցիալական ցածր կարգավիճակ են ունեցել՝ հնարավոր է և զարմանալի էլ չէ, որ կանանց միջև սեքսը գործնականորեն չի հիշատակվում: Երևակայությունը բոբբոքում է հանրահայտ Սապֆոն՝ Լեսբոսի լիրիկական բանաստեղծուհին, բայց մենք, ցավոք, շատ քիչ բան գիտենք նրա մասին: Հայտնի է, որ Սապֆոն ապրել է մոտավորապես մ.թ.ա. 620 և 550 թվականների միջև, աղջիկների համար դպրոց է ունեցել և կնոջը կամ տարբեր կանանց հասցեագրված էրոտիկ բանաստեղծություններ է գրել:

Մ.թ. երկրորդ հարյուրամյակին հույն բժիշկ Սորանն իր թարգմանություններն էր մեջ հիշատակում է կանանց, որոնց նա տրիբադես /tribades/ էր անվանում: Սորանը գրում է. «Այս կանայք սեքսի երկու ձև են կիրառում, բայց նրանք ավելի հակված են կանանց հետ սեռական հարաբերությունների, քան տղամարդկանց, և կանանց հետապնդում են գրեթե տղամարդուն հատուկ խանդով»:⁴

Հին հունական և հռոմեական հասարակություններում, ուր փաստորեն բացարձակ հայրիշխանություն էր տիրում, տղամարդու համար կարևոր էր ոչ այնքան իր գույքը կորցնել սեքսը, որքան վերջինիս սոցիալական դերն ու իշխանությունը: Օրինակ, ահա թե ինչ է գրում մ. թ. երկրորդ հարյուրամյակում Արտեմիդորոս Դիլդիանուսը. «Եթե տղամարդու մեջ ներթափանցում է ավելի հարուստ և ավելի հասուն տղամարդ, դա լավ է, որովհետև հասարակությունում ընդունված է ստանալ մեծ տղամարդկանցից: Սակայն, եթե տղամարդու մեջ ներթափանցում է ավելի աղքատ և ավելի երիտասարդ տղամարդ, դա լավ չէ, քանի որ, համաձայն սովորույթի, մեծ տղամարդուց պետք է տալ»:

Եվ նույնասեռ սեքսը ոչ միայն նորմալ էր համարվում, այլև այն կարող էր ավելի էսթետիկ և հուզապես ավելի գայթակղիչ դիտվել: Պլուտարքոսն իր «Միրոն մասին երկխոսություններ»-ում պնդում է. «Ազնվաբար սիրեցյալը սիրային հարաբերություններ է ունենում նրանց հետ, ում մեջ նա կատարելություն և բնատուր գեղեցիկ շնորհ է տեսնում» ուշադրություն չդարձնելով հոգեբանական մանրամասների տարբերության վրա: Այն տղամարդը, ով ի վիճակի է տեսնել մարդկային գեղեցկությունը, ճշմարիտ և հավասար չափով երկու սեռերի սիրո համար էլ միշտ բաց է լինելու՝ չհամարելով, որ կանայք ու տղամարդիկ նույնքան տարբեր են սիրո մեջ, որքան տարբեր են իրենց գգեստների մեջ»:⁴

Հռոմի սեռական վարքաձևը

Հասուն ազատ տղամարդու, Հռոմի քաղաքացու համար պատշաճ էին հետևյալ սեռական դերերը՝ իռուժո /irruo/, այսինքն առաջարկել իր սեռական անդամը բերանային սեքսի համար, ֆուտու /futo/՝ կնոջ հետ սեքսով զբաղվել՝ ներթափանցելով նրա մեջ, և պեդիկո /pedico/՝ ակտիվ հետանցքային սեքսով զբաղվել տղամարդու հետ: Գոյություն ունեին նաև հռոմեական քաղաքացու համար սեռական ոչ պատշաճ դերեր՝ ֆելո /fello/՝ բերանն առնել տղամարդու առանդամը և ցեվեո /ceveo/՝ տերմին, որը, ըստ պատմաբան Դավիթ Հալպերինի, չի թարգմանվում:⁴ Հռոմում բարգավաճում էր նաև ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց օրինական պռոնկությունը, և ովքեր տարբերվում էին ըստ իրենց մատուցած ծառայությունների: Պասիվ դեր կատարող երիտասարդ տղամարդիկ կոչվում էին կատամիտուս /catamitus/: Մշտական գուգրնկերոջն անվանում էին կոնկուբինուս /concupinus/: Էզզոլետի /exoleti/ տերմինն ավելի հաճախ ծառաներին էր վերաբերում, ովքեր սեքս ծառայությունների լայն տեսականի էին առաջարկում: Հատկապես մեծ առնանդամով տղամարդ պռոնկները հայտնի էին դաուչի /dauci/ անունով և իրենց ծառայություններն էին առաջարկում թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց:

Իսլամական կրքեր

Եթե նկատի ունենանք մահմեդական պահպանողականների ժամանակակից վերաբերմունքը նույնասեռականության նկատմամբ, ապա զարմանալի է թվում, որ միջնադարյան Իսլամի երկրներում նույնասեռական էրոտիզմը գովերգող մեծաքանակ գրականություն գոյություն ուներ:

Նույնասեռականները չեզոք կերպով հաճախ են հիշատակվում արաբական դասական գրականության մեջ՝ որպես մարդկանց հատուկ տեսակ: «Հազար ու մի գիշեր» արաբական դասական ստեղծագործության մեջ երեք վիճաբանություն է նկարագրվում նույնասեռական և տարասեռական սիրո թեմայով: 419-րդ գլխում կինը հայացքով հետևում է մի տղամարդու, ով տոփանքով նայում է տղաներին և ասում նրան. «Ես կարծում եմ, որ դու պատկանում ես նրանց, ովքեր տղամարդկանց գերադասում են կանանցից»:

Քվուստա իբն Լիվվոյի կողմից 9-րդ դարում գրված և մարդու հոգեբանությանը նվիրված տեքստը առանձնացնում է 20 ոլորտ, որոնցում մարդկանց միջև գո-

յություն ունեն հոգեբանական տարբերություններ: Որոշ տղամարդիկ, խորհում է Լիկվոն, ավելի հակված են կանանց, մյուսները՝ տղամարդկանց, ոմանք էլ՝ և՛ առաջիններին, և՛ երկրորդներին: Քվուստան, ինչպես և ար-Ռաժին և ուրիշ մահ-մեղական գիտնականներ, համարում է, որ նույնասեռականությունը հաճախ ժառանգաբար է փոխանցվում:⁴

711 թվականին, մահմեդականների՝ Իսպանիա ներխուժումից հետո, վերջ է դրվում նույնասեռականության դեմ ուղղված քրիստոնեական ճնշիչ օրենքներից, համաձայն որոնց՝ նույնասեռ սեքսը պատժվում էր ամորձատմամբ, գլուխը սափրելով, մտրակներով ծեծի և վտարման միջոցներով: 700 տարի շարունակ հարավային Իսպանիայի տարածքում իշխող իսլամական օրենքն ավելի ինտելեկտուալ, հոգևոր և սեռական հանդուրժողականության փուլով նշանավորեց:

Մուֆիստական միստիկ ավանդության պոետները հատուկ ուշադրություն էին դարձնում փոխգեղեցիկային և հոմոէրոտիկ վարքաձևին: Մուֆիստական ավանդությունն աշխարհին տվեց գրականություն, որն, ինչպես համարվում է, տղամարդկանց միջև սիրո ամենագեղեցիկ նկարագրումներն է պարունակում, օրինակ՝ Ջալալ Ալ Դին Ռումիի (1207-1273) բանաստեղծությունները: Գոյություն ունի աշխարհիկ տեքստերի մի շարք, որոնցում սուֆիստների հետևորդները գովերգում են հոմոէրոտիկ սեքսը, այդ թվում մահ XI դարի էմիր՝ Կայ-կա ազ իբն Իսկանդարի գրած «Քվաբուս-մաման», ով համոզում է որդուն սիրահարվել և՛ տղամարդկանց, և՛ կանանց, որպեսզի հնարավորություն ունենա երկու սեռերի հետ էլ ճաշակել սիրո բոլոր վայելքները:⁶

Նկարիչները, հրատարակիչները և գոնդուլավարները

Վերածննդի դարաշրջանը Եվրոպայում յուրատեսակ հակասական երևույթ էր. մի կողմից դաժանագույն պատիժներ էին սահմանված նույնասեռականության դեմ, մյուս կողմից՝ նույնասեռականությունը շարունակում էր լայն տարածում գտնել:

Միապետներն ու սոցիալական վերնախավի ներկայացուցիչներն իրենց թույլ էին տալիս սեփական սեռի հովանավորչալներ ունենալ: Բոլորին հայտնի է այն, որ նույնասեռ սիրո սիրահարներ են եղել Ֆրանսիայի Հենրի III և Անգլիայի Ջեյմս I թագավորները, իսկ անգլիացի կոմս Ռոչեստերը գրում էր. «Կարոտելով պոռնիկիս՝ նույնասեռականությամբ են զբաղվում ձեռագրիս էջերի հետ»: Սոցիալական բոլոր կարգերի տղամարդիկ սեքսով էին զբաղվում միմյանց հետ՝ լինելի լոնդոնյան առևտրականներ թե դերասաններ, վեներտիկյան սափրիչներ, բժիշկներ թե գոնդուլավարներ կամ ժնկյան հրատարակիչներ, բանվորներ, ծառաներ և նավաստիներ:

Ռաուցման համակարգը հատկապես նպաստում էր մման իրավիճակի զարգացմանը, քանի որ աշակերտներն իրենց ուսուցիչների հետ մի հարկի տակ էին ապրում: Նկարիչ Դոնաթելլոն միայն մեկն էր այն բազմաթիվ նկարիչներից, ովքեր համարում էին, որ աշակերտներին պետք է ընտրել «ավելի շուտ իրենց գեղեցկության, քան տաղանդի համար»: Արվեստի գործիչ Գիանտանտոնիո Բազին Սիեմայից պնդում էր, որ ինքը հայտնի է հասարակությանը որպես il Sodomi (սոդոմահար): Քաջ հայտնի է Միքելանջելոյի նեոպլատոնական կիրքը որոշ տղամարդկանց նկատմամբ, թեև նա պնդում էր, որ աստվածավախ կուսական է: Լեոնարդո

դա Վինչիի մոտ նույնպես նկատելի է եղել կիրքը տղամարդկանց նկատմամբ: Եվ նույնիսկ Բենվենուտո Չելլինին, իր թշնամուց ստանալով «կեղտոտ նույնասեռական» անվանումը, պատասխանում է. «Օ՛, որքան կուզեի, որ Աստված իսկապես ինձ այդ ազնվական փորձառության հակումը շնորհեր, բացի այդ, չէ՞ որ մենք կարողացել ենք, որ Ժովը (Ջեսը) դրախտում Հանիմեդի հետ վայելում էր այդ սեռը»:

Կանանց նույնասեռական փորձառություններն այդքան լավ ուսումնասիրված չեն, սակայն XVI դարի ֆրանսիական դատի մասին Պիեռ դե Բուրդիեյի հաշվետվությունը վկայում է. «Այն բանից հետո, երբ Իտալիայից այդ նորածնությունը մեզ մոտ եկավ՝ շնորհիվ մի լեդիի, ում արժանիքները ես չեմ նշելու, սեռական հարաբերությունները կանանց մեջ շատ տարածված դարձան: Նման կանանցից ոմանք երիտասարդ աղջիկներ էին և այրիներ, ովքեր նախընտրում էին սիրային կապեր ունենալ միմյանց հետ, և ոչ թե գնալ տղամարդու մոտ, արդյունքում հողիանալ և կորցնել հպարտությունն ու անարատությունը»: Այսպիսի կանանց մի ուրիշ կարգին էին պատկանում նրանք, ովքեր օգտագործում էին կանանց՝ տղամարդկանց հետ իրենց սեքսն ավելի զգացմունքային դարձնելու համար. «որովհետև այդ փոքրիկ վարժությունները, ինչպես լսել եմ, նպաստում են հաջորդող՝ տղամարդկանց հետ լուրջ սիրային հարաբերությունների ձևավորմանը»:

Գոյություն ունեն XVII դարի պատմական վստահելի աղբյուրներ, որոնցում խոսվում է այն մասին, որ Շվեդիայի թագուհի Քրիստինան հրաժարվել է գահից, որպեսզի չամուսնանա: Ուրիշ աղբյուրներում ասվում է, որ տարբեր խավերի և սոցիալական տարբեր դասերի կանայք նույնասեռ սեքսով էին զբաղվում, և նրանցից են Յորքի կոմսուհու պալատական ազնվական օրիորդը, ֆրանսիական դերասանուհին, երկու տանտիրուհիներ Նոր աշխարհից՝ Պիմոնտից, որոնց «բռնացրել են միասին... անկողնում անառակությամբ զբաղվելիս»: Արձանագրված է նաև մի դեպք, որը տեղի է ունեցել իտալուհի միանձնուհու՝ քույր Բենեդետտա Կարլինիի հետ, ում ցմահ բանտարկության են դատապարտել աստվածանարգության մեղադրանքով: Նա խոստովանել է, որ տեսիլքներ է ունեցել, որոնք նրան պարտադրել են սիրային հարաբերություններ ունենալ մեկ այլ՝ իր հետ նույն սեռյակում ապրող միանձնուհու հետ:⁶

Երկու հոգի ունեցող ամերիկյան հնդկացիները

Նույնասեռ և փոխգեղեցիկային ավանդույթները գերիշխում էին ամերիկյան հնդկացիների տոհմախմբերում: Գոյություն ունեն վկայություններ, որ և՛ տղամարդիկ, և՛ կանայք նույնասեռ ամուսնական կյանքով էին ապրում, ինչպես նաև այն, որ գոյություն ունեին կանայք, ովքեր իրենց հագուստով ու վարքով նմանվում էին տղամարդկանց, և տղամարդիկ, ովքեր ամեն ինչով կանանց էին հիշեցնում:

Այն եվրոպացիների ժամանակագրություններում, ովքեր առաջինն էին, որ բախվել էին մման ավանդույթների, դրանք նկարագրվում են ուշագրավ տերմիններով: Հնդկացի նույնասեռական տղամարդկանց եվրոպացիները բեդոաշ /berdache/ էին անվանում (ֆրանսերեն՝ սորուկ տղաներ): Այս տերմինն օգտագործում էին պասիվ նույնասեռական տղամարդկանց բնորոշելու համար: Բառն ընդունվեց, չնայած նրան, որ նրա «սորկական» ենթատեքստը չափազանց ան-

համապատասխան էր: Այսօր ոմանք մախըմտում են օգտագործել այլ տերմին՝ «երկու հոգի ունեցողներ»:

Տրանսվեստիտ գեյերը հաճախ ցեղերի շամաններն ու բժշկողներն էին: Երբեմն նրանք կրոնական հատուկ ծեսեր էին կատարում, և տոհմացեղերի անդամները համարում էին, որ նրանք ինտելեկտուալ, արտիստիկ և կրոնական հատուկ արժանիքներով են օժտված:⁷

Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների տոհմացեղերի կանանց համար համեմատաբար հեշտ էր իրենց վրա վերցնել ավանդական տղամարդու դերն ու ապրել տղամարդու պես: Յուկոնցի աղջիկները, ովքեր հրաժարվում էին ամուսնանալ և երեխաներ ունենալ, կարող էին հագնվել տղամարդու պես և մասնակցել որսորդական արշավներին: Նման իրավունքներ ունեին նաև Միոքսի աղջիկները. նրանք զինվորներ էին դառնում և ամուսնանում կանանց հետ: Կանադայում կասկիի հնդկական ընտանիքներում ծնողներն իրենց դուստրերից մեկին այնպես էին դաստիարակում, որ նա կարողանար զինվոր դառնալ, և նման դաստիարակություն ստացած աղջիկը մույնասեռական հարաբերություններ էր ունենում: Սակայն, եթե նա սեռական կապ էր ունենում տղամարդու հետ, նշանակում էր, որ նրա լեքիական հաջողությունը երես է թեթել իրենից:

XIX դարի բանակային մի սպա, ով ակնապիշ ուսումնասիրում էր ամերիկյան հնդկացիների սովորույթները, հայտնում է այն մասին, որ հնդկացիների մեջ որոշ տղամարդիկ մույնասեռ ամուսնական կյանքով էին ապրում. «Կարծես նրանք իսկապես սիրահարվում էին տղամարդկանց, և ես ակամատեսն էի այնպիսի օրինակների, երբ նման գույգերը երկար տարիներ պահպանում էին միմյանց հանդեպ կապվածությունը»: Երկու տղամարդու միությունը հաճախ է հասարակության կողմից որպես «ընկերության պար» ընդունվել: Պատմաբան Ռուդոլֆ Վիլյամսը համարում է, որ նման ընկերության ոչ բոլոր դեպքերն են մույնասեռական ենթատեսակ ունեցել, սակայն, դրա հետ մեկտեղ, բոլոր այն տղամարդկանց համար, ովքեր էրոտիկ զգացմունքներ են տածել այլ տղամարդկանց հանդեպ, նմանատիպ միությունները մույնասեռական հսկումներն արտահայտելու բնական հնարավորություն են եղել:

Հնդկացիների հասարակությունը աշխարհը չէր տարանջատում սեռի և սպիտակի, տղամարդու և կնոջ, լավի և վատի հակադրությունների: Նմանատիպ աշխարհայացքը տարածվում էր և՛ սեռական մույնականացման, և՛ սեռական դերերի վրա: Հոգևորն ու ֆիզիկականն ամերիկյան հնդկացիներն ընկալում էին իրենց միասնության մեջ: Խմբակային յուրաքանչյուր սահմանակարգ, յուրաքանչյուր սովորույթ, մարդկային ցանկացած դրսևորում վերաբերում էր հոգևոր ոլորտին: Մարդու համար բնական էր դրսևորել իրեն այնպես, ինչպես նրան իր ոգին էր թելադրում: Այնպես որ, եթե «ոգին» որևէ մեկին հուշում էր երազի կամ տեսիլքների միջոցով հագնվել և ներկայանալ որպես հակառակ սեռի ներկայացուցիչ, ապա չհետևել դրան, նշանակում էր հակառակ գնալ սեփական մշակույթին և վտանգի ենթարկել կյանքը: Հնդկացի տարեցներից մեկի խոսքերով՝ «Մեզ համար մարդն այն է, ինչպիսին նրան դարձնում է նրա երազների բնությունը: Մենք ընդունում ենք նրան այնպիսին, ինչպիսին նա ցանկանում է լինել»:⁸

Ներկայումս գեյերն ու փոխգեղերները, որոնց երակներում ամերիկյան հնդկացիների արյունն է հոսում, իրենց նախնիների պատմության մեջ են աջակցություն փնտրում: Օրինակ, ահա թե ինչ է ասում Գերի Բովենը, ում նախնիները եղել են ապաչի հնդկացիները, շտվանդացիներն ու իռլանդացիները. «Փոխգեղերի իմ սեփական դիրքորոշումը Ռգու սրբազան դրսևորում է, այլ ոչ թե ներքո, ինչպես սպիտակների բժշկությունն է համարում: Իմ երակներում հնդկացիների արյունն է հոսում, և միայն իմ նախնիների ճանապարհը կարող է ինձ ճիշտ ուղին հուշել»:⁸

Չինաստանի բուսակեր քույրերի միությունը և «դեղձի բաժինը»

Չինաստանում մույնասեռականությունն ուշագրավ պատմություն ունի: Այսպես, օրինակ, «Պայքարող տերությունների քրոնիկները»՝ մ.թ.ա. երրորդ դարի բնագիրը, այն ժամանակաշրջանի շատ ու շատ հայտնիների բազում կենսագրություններ է ներառում, ովքեր չէին թաքցնում իրենց մույնասեռականությունը:

«Քրոնիկներից» մենք իմանում ենք Վեայից կոմս Լինգի և նրա նախարար Նի Քսիայի հարաբերությունների մասին: Մի անգամ, երբ նրանք միասին գրոսնում են մրգատու այգում, Նին ծառից մի դեղձ է պոկում և կծում: Միրգն այնքան համեղ է լինում, որ նախարարն առաջարկում է կոմսին այն կիսել իր հետ: «Կիսված դեղձի սերը»՝ տղամարդկանց միջև սիրո հայտնի այլաբանությունն այս պատմությունից է ծնունդ առել:

Ավելի ուշ շրջանի պաշտոնական փաստերը մույնպես չեն թաքցնում պատմական որոշ ակնառու դեմքերի մույնասեռական կողմնորոշվածության փաստը, ինչպես գրում է պատմաբան Վիլիեմ Վ. Նզրն: «Նախնիկն իսանի պատմությունից» մենք իմանում ենք, որ վերջին կայսր Ալիդը (մ.թ.ա. II-I դարում) բազմաթիվ տղամարդ սիրեկաններ է ունեցել, և որ նրան հատկապես դուր է եկել նրանցից մեկը՝ Դոնգ Քսիանը: Մի անգամ, երբ նրանք միասին պառկում են քնելու, և Դոնգի գլուխը կայսեր զգեստի թևքի վրա է լինում, տիրակալին հայտնում են, որ ոմն մեկը նրանից ունկնդրություն է խնդրում: Միրեյի քունը չխանգարելու համար կայսրը կարում է իր զգեստի թևքերը և դրանից հետո միայն վեր կենում անկողնուց: Այս դրվագից է ծնունդ առնում մույնասեռական սերը բնութագրող դուանքսիտ /duxian/ գրականության մեջ տարածում ստացած ևս մեկ տերմին, որը նշանակում է «կտրված թևք»:

Կարծիք է ստեղծվում, որ Հին Չինաստանում մույնասեռականությանը հանդուրժողական էին վերաբերվում այնքան ժամանակ, քանի դեռ այն չէր դառնում սեռական վարքագծի հիմնական ձև և չէր խանգարում տղամարդկանց կատարել իրենց պարտականությունները սերնդի շարունակման գործում: XVII դարի Չինաստանում ի հայտ է գալիս հոմոէրոտիկ գրականություն, որն առանձնանում է իբրև առանձին գրական ուղղություն և ծաղկում է ապրում: Գրող Շեն Դեֆուն գրում է, որ Ֆուչիյան գավառում տղամարդկանց մույնասեռականությունը տարածված երևույթ էր. «Ֆուչիյանի բնակիչները հատուկ բարյացակամությամբ էին վերաբերվում տղամարդկանց մույնասեռականությանը: Այդ նախապատվությունները միայն որոշակի սոցիալական կամ տնտեսական դասակարգերին էին վերաբերում... Նրանք իրար անվանում էին «միմյանց հետ կապված եղբայրներ»: Երբ ավագ «եղբայրը», մտնում

էր կրտսեր «եղբոր» տուն, կրտսեր «եղբոր» ծնողները ուրախ դիմավորում էին նրան և այնպիսի սիրով էին վերաբերվում, կարծես նրանց հարազատ որդին լիներ...»:

Հոնոնդուտիկ գրականության մեծ մասը գովերգում էր տղամարդկանց միջև հարաբերությունները: Գոյություն ունի մի հայտնի գրական տեքստ, որը լեսբու-հիների մասին է, դա Լի Յիի «Գթալով ընկերուհուս, որն այնքան քաղցր է բուրում» պիեսն է, որը պատմում է երկու կանանց (մեկն ամուսնացած էր, իսկ մյուսը բուրդայական միանձնուհի էր) մասին: Նրանք այնքան ուժգին էին սիրում իրար, որ ամուսնացած կինը որոշում է համոզել ամուսնուն ընդունել իր ընկերուհուն իբրև սիրուհու, ինչից հետո կանայք երջանիկ ապրում են միասին:

Բուսակեր քույրերը

XIX դարում հարավ-չինական Գուանգդոնգ գավառում հազարավոր կանայք հարաբերությունների մեջ էին մտնում կանանց հետ՝ ստեղծելով քույրերի միություններ: Այդ կանայք հիմնականում աշխատում էին մետաքսարտադրության մեջ և նրանց եկամուտը թույլ էր տալիս տնտեսապես անկախ լինել: Նրանք երդում էին տալիս Ին աստվածուհուն, որ երբեք չեն ամուսնանա տղամարդու հետ և «Ոսկե խոլորձի ընկերակցություն» կամ «Փոխըմբռնման ընկերակցություն» անվանումներով քույրերի միություններ էին կազմում: Քույրերն ապրում էին միասին և օգնում իրար, եթե նրանց տուն մուտք էր գործում հիվանդությունը կամ մահը:²

Տներին մի քանիսը բուսական կերակրի համար նախատեսված սրահներ էին, որտեղ արգելված էին միս ուտելն ու տարասեռական կապերը: Քույրերի համար այդ տները կրոնական արարողությունների անցկացման կենտրոններ էին, սակայն նրանց կրոնական կյանքը բուրդայական վանքի կյանքի մասն խիստ չէր: Կանայք միմյանց հետ սեռական հարաբերությունների մեջ էին մտնում հատուկ տներում, որոնք կոչվում էին «չամուսնացած կանանց սրահներ»: Նրանք այնքան էլ կրոնասեր չէին և հետևողական չէին իրենց բուսական բաղադրատոմսի հարցում. արգելված էին միայն տարասեռական հարաբերությունները:

1949 թվականին, Կարմիր բանակի հաղթանակից հետո, քույրերի ընկերակցությունները, որպես ֆեոդալական կարգի մնացուկներ, օրենքից դուրս հայտարարվեցին, և քույրերից շատերը Մալայզիա, Սինգապուր, Հոնկոնգ և Թայվան արտագաղթեցին:

Կանայք, ովքեր տղամարդու տեղ էին անցնում

Նոր ժամանակների վաղ շրջանում Եվրոպայում շատ կանայք հագնվում էին տղամարդկանց պես և տղամարդ էին ներկայանում:

Դրա համար գոյություն ունեին բազում դրդապատճառներ: Ոմանք այդ քայլին էին գնում գինվոր կամ նավաստի դառնալու հնարավորություն ունենալու համար, մյուսները՝՝ ճանապարհորդությունների ժամանակ սպահովության մկատառումներից ելնելով, ուրիշներն էլ՝ տղամարդուն ընձեռված իշխանությանն ու ազատությանը հասնելու համար: Նաև գոյություն ուներ կանանց մի շերտ, ովքեր որպես տղամարդ էին ներկայանում կանանց սիրահետելու նպատակով. վերջիններիս հետ նրանց երբեմն նույնիսկ հաջողվում էր ամուսնանալ: Եղել են դեպքեր, երբ կանայք բողոքել են, թե չգիտեին, որ իրենց ամուսինը փոքր-ի՛նչ այնպիսին չէ, ինչպիսին, որ իրենք էին սպասում...

Եթե խաբեությունը բացահայտվում էր, ապա տղամարդու հագուստ կրող կանանց դաժան պատիժ կամ նույնիսկ մահապատիժ էր սպառնում: Ընդ որում՝ գլխավոր հանցանքն այն չէր, որ կինը լեսբուհի էր, այլ այն, որ նա խաբեության էր զննացել՝ տղամարդ ներկայանալով և հասարակության մեջ տղամարդու կարգավիճակի հավակնելով:

Հետազոտողներ Լոտ դե Պոլն ու Ռուդոլֆ Դեկերը XVII և XVIII դարերի ընթացքում այդպիսի 119 դեպք են հայտնաբերել Նիդեռլանդներում և գրեթե նույնքան էլ՝ Անգլիայում: Նման դեպքեր արձանագրված են նաև Դանիայում, Իսպանիայում և Իտալիայում: Սակայն, անշուշտ, այդ թիվը հսկա սառցաբեկորի մի չնչին մասնիկն է կազմում միայն:

Տղամարդ ներկայանալն իրավիճակից ելնելու հնարավորություն էր այն կանանց համար, ովքեր ճանապարհորդության մեկնելու անհագ ցանկություն ունեին, աղքատության մեջ էին կամ դժվարին ժամանակներ էին ապրում: Այն ժամանակների հանրահայտ երգերը պատմում են ծովագնաց և զինվոր կանանց արկածների մասին, և չնայած նրան, որ դրանք լի էին հեզոհանքով, մի քանիսն, այնուամենայնիվ, խոսում էին այդպիսի կանանց հերոսության և դրա համար ստացած պարգևների մասին: 1762 թվականին ոմն անգլիացի հումորով գրել է, որ բանակում տղամարդ ներկայացող այնքան շատ կանայք են ծառայում, որ ավելի հեշտ կլինի նրանց համար առանձին գորագունդ ստեղծել:

Մարիա վան Անտվերպենի հետաքրքրաշարժ պատմությունը

Մարիա վան Անտվերպենի դեպքը հիմնավորված է փաստաթղթերով: Ժամանակին այն իսկական սենսացիա էր դարձել: 1769 թվականի փետրվարի 23-ին Դանիայի Գոտոլ քաղաքի դատարանի կողմից նա մեղադրվեց «փր անվան և արժանիքի փոփոխման կոպիտ և չափազանց խաբեության» և «ամուսնության վերաբերյալ աստվածային և մարդկային օրենքների ծաղրանքի» հանցանքների մեջ:

Այս պատմությունից ոչ տարի առաջ նա տղամարդու հագուստ է հագնում և զինվորական ծառայության գրանցվում: Տղամարդու կերպարանքով նա սկսում է մի կնոջ հետ հանդիպել, և, ի վերջո, նրանք ամուսնանում են: Հետաքրքրաշարժն այն է, որ այդ կինը չի իմանում, որ Մարիան տղամարդ չէ: Եվ սա Մարիայի ամուսնության առաջին փորձը չէր:

Դատարանում Մարիան հայտնում է, որ ինքը նման չէ ուրիշ կանանց, և, այդպիսով, իրեն ավելի հարմար է տղամարդու հագուստ կրելը: Նա ասում է նաև, որ, արտաքուստ լինելով կին, իր բնությամբ ինքը տղամարդ է:

Նա պատմում է մի աղջկա հետ իր հանդիպման մասին, ով մարմնավաճառուհի էր դարձել: Դա թույլ է տալիս Մարիային գիտակցել, թե ինչ էր իրեն ճակատագրով նախատեսված, եթե տղամարդու հագուստ չհագներ ու ձեռքը գեներ չառներ:

1800-ականներին, բյուրոկրատական համակարգի տարածման պատճառով, Մարիայի նման կանանց համար, ովքեր որպես տղամարդ էին ներկայանում, ապրելն ավելի ու ավելի էր դժվարանում. այժմ բոլոր նորակոչիկները պարտավոր էին բժշկական հանձնաժողովին մերկ ներկայանալ: Դժվարացել էր առանց անձը հաստատող փաստաթղթերի ճանապարհորդելը:

Իր ինքնակենսագրության մեջ հնարամիտ Մարիան գրում է. «Ես հաճախ եմ գայրույթ ապրել այն բանի համար, որ մայր բնությունն իմ նախապատվություններին ու սրտիս կրքերին առանց կարեկցանքի է վերաբերվել»:⁹

Աֆրիկյան ավանդույթներ

Աֆրիկյան ժամանակակից լիդերների մի մեծ խումբ հանդես է եկել հայտարարությամբ այն մասին, որ նույնասեռականությունը ոչ մի կապ չունի աֆրիկյան ավանդույթների հետ: Մակայն և՛ մարդաբանները, և՛ պատմաբանները հակառակ եզրակացության են հանգել: Նույնասեռական էրոտիզմն ու փոխգեղեցիկության վարքագիծը, անշուշտ, աֆրիկացիներին (հնարավոր է՝ բացառությամբ եգիպտացիների և լիբիացիների) ծանոթ են շատ ավելի վաղ, քան Աֆրիկան ենթարկվել է այլ մշակույթների ազդեցությանը:

Ազանդացիները, որ բնակվում էին ժամանակակից Սուդանի հարավ-արևմտյան տարածաշրջանում, Կոնգոյից հյուսիս և Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետության հարավ-արևելյան մասում, հոմոէրոտիզմի հատուկ ձև էին փորձարկում տարիքային տարբեր խմբերի միջև շատ ավելի վաղ, քան XX դարի սկիզբը:

Մարդաբան Էդվարդ Էվանս-Պրիտչարդը պնդում է, որ նույնասեռ էրոտիզմի այս և ուրիշ ձևեր տեղական ավանդույթի մասն են կազմել, այլ ոչ թե՝ օտարերկրյա ազդեցության արդյունք են եղել: Բնորոշ էին տիրակալի կամ զինվորականի և ավելի երիտասարդ տղամարդկանց միջև հարաբերությունները: Ազանդացի կանայք նույնպես փորձարկում էին նույնասեռ էրոտիզմը, ինչև, անշուշտ, իրենց ցեղի շատ տղամարդկանց մոտ վախ էր առաջացնում, ովքեր գտնում էին, որ սեռական հարաբերությունները կանանց միջև կրկնապատկում են նրանց ուժերը: Թվում է՝ լեսբիությունը հատկապես տարածված էր արքայական պալատներին կից ապրող կանանց մեջ: Լեսբիության հետ էին կապում նաև մոգական դրսևորումները: Աֆրիկացիների պատկերացմամբ երկու կնոջ միջև սիրուց «կատվամարդիկ» էին ծնվում: Ինչ վերաբերում է ավամերձ Մուդանի նուբո ցեղերի մեջ փոխգեղեցիկության նույնասեռականությունը, ապա դա հաստատվում է փաստացիորեն: Այս ցեղերի լեզուն հատուկ բառեր ունի, որոնցով անվանում են նույնասեռ էրոտիզմը փորձարկող մարդկանց, իսկ մարդաբան Ս. Ֆ. Նադելի տեղեկության համաձայն՝ նրանք նույնիսկ նույնասեռական անուսնության հաստատություն ունեն: Աֆրիկյան մի շարք մշակույթների՝ Ուգանդայի լանգո, Քենիայի մուրուսների, իլանների՝ Հարավային Չամբիայից, Հարավային Աֆրիկայի գուլունների ցեղերի մոտ նույնասեռական տղամարդիկ և փոխգեղեցիկները կրոնական հատուկ ծիսակատարություններ են կատարում:

Յորուբան՝ նիգերական կրոնը, մեծ ազդեցություն ունեցավ աֆրիկյան բոլոր հավատալիքների վրա: Այն 12 միլիոն աֆրիկացիներից շատերը, ովքեր Ամերիկա էին ժամանել XIV դարի սկզբից մինչև XIX դարի վերջն ընկած ժամանակաշրջանում, յորուբայի հետնորդներն են եղել: Նրանց կրոնը, որը հայտնի է նաև «Օրիշի ուրիշ» անվամբ, նույնասեռականության ազատ դրսևորման հնարավորություն էր տալիս: Ավելի քան 25 բառ, որոնց մեծ մասը աֆրիկյան ծագում ունի, օգտագործվում է սեռական փոքրամասնություններին պատկանող մարդկանց բնութագրելու համար: Դրանցից է՝ ադոդի /adodi/ տերմինը, որով կարող են անվանել նույնասե-

ռական, երկսեռական և փոխգեղեցիկ տղամարդկանց, ինչպես նաև ալակուատա /alakuata/ տերմինը, որն օգտագործվում է նույնասեռական, երկսեռական և փոխգեղեցիկ կողմնորոշվածություն ունեցող կանանց դեպքում:

Յորուբայի կրոնը հիմնականում քարոզում են Ամերիկայի տարածքում:⁶ Աֆրիկյան շատ երկրներում վերոհիշյալ նույնասեռականության դրսևորումներն արգելված են, իսկ Մուդանում՝ ազանդացիների հայրենիքում, նույնասեռականների նկատմամբ մահապատիժ է կիրառվում: Գործում են օրենքներ, որոնք վերցված են կամ մահմեդական, կամ էլ բրիտանական հին գաղութային օրենսդրությունից:

Ժառանգորդության զգացողություն

Նույնասեռականության պատմության խախտանկարի այդքան տարբեր մասնիկները, լինելով ինքնին հետաքրքիր, կարող են օգնել շատ մարդկանց, ովքեր պատկանում են սեռական փոքրամասնությունների թվին: Նրանք տալիս են կենսափորձ, որը վերցված է ոչ տարասեռական կյանքի պատմությունից: Դա մարդկության թողած ժառանգությունն է, որը պատկանում է բոլորին՝ լինի նա նույնասեռական, թե տարասեռական: Աֆրո-ամերիկոսի գրող Օդրի Լորդեն իր ուսումնասիրությունների շնորհիվ կարողացավ սեփական սեռականությունը կապել իր ժողովրդի՝ գամբիների ավանդույթների հետ, որը սերում է կարիբյան մշակույթից, ինչպես նաև աֆրիկյան կանանց նույնասեռ միությունների ավանդույթների հետ:

Նույնասեռականության պատմության փորձառությունը, որի մասին լռում, թաքցնում կամ կեղծում էին երկար տարիներ, այժմ շատերին է օգնում իրենց անցյալի հետ շփման եզրեր գտնել:

Հոմոֆոբիան մեծ դեր խաղաց այն հարցում, որ նույնասեռականության իրական պատմությունը մոռացված կամ խեղաթյուրված լինի: Հենց սրա մասին է հաջորդ գլուխը:

1. The Myth of Modern Homosexual, Rictor Norton, Cassell, 1999.
2. Female Desires, Evelyn Blackwood and Saskia Wieringa eds, Columbia University Press, 1999.
3. Portraits to the Wall, Rose Collis, Cassell, 1994.
4. Hidden from History, Martin Baumi Duberman, Martha Vicinus, George Chauncey eds, Penguin, 1989.
5. Homophobia, Byrne Fone, Metropolitan Books, 2000.
6. Cassell's Encyclopedia of Queer Myth, Symbol and Spirit, Randy P Conner, David Hatfield Sparks, Mariya Sparks eds, 1997.
7. 'What your dreams make you', Rae Trewartha, New Internationalist, November, 1989.
8. Trans Liberation, Leslie Feinberg, Beacon Press, 1998.
9. The Tradition of Female Transvestism in Early Modern Europe, Lotte C van den Pol and Rudolf M Dekker, Macmillian Press, 1989.

4. ՀՈՍՄՖՈՐԻԱ

Ատելության երկու հազարամյակ...
քրիստոնեության խարույկները...
կատարներն ու տամպլիները... ացտեկների պատիժը...
ամբողջատիրական վերահսկումը Մանջուրիայում...
Միբիր՝ առանց սիրո... նացիստական հոլոքոստը...
Մաքարտիի գործընթացը ընդդեմ վիուկների...
Կաստրոյի նավակները... խուճապ Աֆրիկայում...

«Եթե մենք քննության առնենք այն, թե ինչ սարսափելի վնաս է պատճառում նույնասեռականությունը պետությանը և թե ինչպիսի լայն տարածում ունի այդ նողկալի ու ծածուկ մեղքը, ապա կհասկանանք, որ նրա համար սահմանված մահապատիժը շատ մեղմ պատժամիջոց է»։ Այս արտահայտությունը պատկանում է XVIII դարի գերմանացի աստվածաբան-բողոքական Ջոան Սիլայեյլիսին։ Սակայն նույն հաջողությամբ այն կարող էր պատկանել ցանկացած ուրիշ հեղինակի, ով կապրեր վերջին երկու հազարամյակի դարերից մեկում, մի ուրիշ երկրում։

Հարյուր հազարավոր մարդիկ իրենց կյանքի գնով են վճարել և շարունակում են վճարել այն բանի համար, որ իրենց սեռազգացությունը ներդաշնակ չէ հասարակության կողմից ստեղծված կանոններին։ Միաժամանակ նույնասեռական վարքագծի համար պատիժները հաճախ էին ուղեկցվում հատկապես կատաղի, ծայրահեղ չարացած տրամադրություններով, որոնք այսօր մենք «հոմոֆոբիա» տերմինով ենք կոչում։

Ներկայումս մենք ապրում ենք փոքր-ինչ այլ աշխարհում, որը սկսեց ծնունդ առնել 1960-ականներին։ Գեորգ Վեյնբերգն իր 1972 թվականին լույս տեսած «Հասարակություն ու առողջ նույնասեռականություն» գրքում հոմոֆոբիան բնորոշում է որպես նույնասեռականության կողքին գտնվելու վախ։ Մարկ Ֆրիդմանն այդ բնորոշմանն ավելացնում է հոմոֆոբիայի բնութագրումը որպես «ռեակցիա նույնասեռականների նկատմամբ, որն ուղեկցվում է կատաղությամբ և մեծ վախով»։¹ Իսկ Օդրի Լորդեն 1978 թվականին էապես ընդլայնում է այդ հասկացությունը և հոմոֆոբիան բնորոշում որպես «իր իսկ սեռի ներկայացուցչի նկատմամբ սիրո զգացմունք ապրելու վախ և, հետևաբար, ատելություն բոլոր նրանց հանդեպ, ովքեր դրսևորում են նման զգացմունքներ»։¹⁵

Ժամտախտ, երկրաշարժ և սով

Նախաքրիստոնեական ժամանակաշրջանում Հունաստանում և Հռոմում գոյություն չունեին ո՛չ նույնասեռականությանն ուղղված օրենքներ, ո՛չ էլ պատիժներ նույնասեռական հարաբերությունների համար։ Սակայն Եվրոպայում և Միջին Արևելքում նույնասեռականության նկատմամբ վերաբերմունքն արմատապես փոխվեց մ.թ.ա. I դարից մինչև մ.թ. IV դարն ընկած ժամանակաշրջանում։ Այն, ինչը ուշ անտիկ դարաշրջանում համարվում էր սիրո վեհագույն դրսևորում, կորցրել էր իր հանդեպ հանդուրժողականությունը։ Ավելի համբավավոր էր դառնում ասկետիզմը, որը ծագում էր ինչպես նեոպլատոնականների և հրեաների հակասեռական փի-

լիստիայությունից, այնպես էլ քրիստոնեական աղանդների ուսմունքներից, որոնք դեմ էին դուրս գալիս «հեթանոսական ուղիներին»։ Հրեական և քրիստոնեական գրավոր աղբյուրները նույնասեռական վարքագծի և հակառակ սեռի զգեստներ կրելու հանդեպ ավելի ու ավելի մեծ զգվանք էին ցուցաբերում։ Նման վերաբերմունքն առավել շատ քարոզվում էր Պողոս առաքյալի կողմից։

Այնուամենայնիվ, վաղ քրիստոնեական որոշ հասարակություններում նույնասեռականությունը բարգավաճում էր։ Անտիոքի քրիստոնեական ընկերության մեջ տիրող բարբերի վերաբերյալ հունական եկեղեցու քահանա Ջոն Քրիստոստոմն արտահայտվում է հետևյալ կերպ. «Այս խայտառակությունները բացահայտորեն են արվում։ Առանց որևէ ամոթի, իրենցից գոհ, քաղաքի ուղիղ կենտրոնում, տղամարդիկ միմյանց հետ աներևակայելի բաներով են զբաղվում, կարծես անմարդաբնակ անապատում են գտնվում»։ Քրիստոստոմը ելույթ էր ունենում նման գործողությունների դեմ մահապատիժ սահմանելու օգտին։

313 թվականին Հռոմի Կոնստանտինոս կայսրն իր կայսրությունը քրիստոնեական հայտարարեց, իսկ 342 թվականին նա իր հրովարտակով կարգադրեց, որ իրենք իրենց «կին» առաջարկող տղամարդիկ պետք է «նրբենի պատժամիջոցներով» ենթարկվեն։ 390 թվականին նույնասեռականությունը ոչ օրինական հայտարարվեց, և եկեղեցին նույնասեռ կապերը մեղք համարեց իրենց «ոչ բնական լինելու» պատճառով։

Նույնասեռականության նկատմամբ քրիստոնեության վերաբերմունքի ձևավորման վրա չափազանց մեծ ազդեցություն ունեցավ Ավգուստինոսը, ով չորրորդ դարում Հարավաֆրիկյան Հիպոլի եպիսկոպոսն էր։ Երիտասարդ տարիներին Ավգուստինոսը կրքոտ սիրում էր մի տղամարդու, իսկ ավելի հասուն տարիքում սկսեց դեմ հանդես գալ սեռական ցանկություններին, փորձերին ու հատկապես նույնասեռական կապերին։ Նա համոզված էր, որ տղամարդու համար կնոջ դերում հանդես գալը սեփական մարմնի ապականում էր նշանակում՝ մարմին, որն աստվածային նախագծով ավելի կատարյալ էր, քան կնոջ մարմինը։ «Այդ անբնական կեղտոտ հանցանքները,- գրում էր նա,- բոլոր ժամանակներում ու բոլոր երկրներում պետք է նողկանք առաջացնեն և պատժվեն այնպես, ինչպես դա Մոդոնում է եղել»։ Երկար դարեր Ավգուստինոսի տեսակետով բնորոշում էր քրիստոնեական բարոյականությունը։

527 թվականին Կոստանդնուպոլսում (ժամանակակից Ստամբուլում) սկսվել էր Հուստինիանոս կայսեր երկարաժամկետ իշխանության ժամանակահատվածը։ Իր առջև խնդիր դնելով արմատախիլ անել հեթանոսական ինտելեկտուալ ազատության վերջին բաստիոնը՝ նա փակեց աֆրիկյան ակադեմիան, որը մ.թ.ա. 347 թվականին հիմնել էր Պլատոնը, ինչպես նաև օրինակարգեց և վերամշակեց հռոմեական օրենսդրությունը։ Նրա վերանայած օրենքներից էր անտիկ Lex Julio-ն, որը պատիժ էր նախատեսում ամուսնական դավաճանության համար։ 533 թվականին Հուստինիանոսը էապես ընդլայնեց Lex Julio-ն՝ նրա մեջ ավելացնելով նույնասեռական կապերի համար սահմանված մահապատիժի իր դիրքորոշումը։ Աստվածամարդության և նույնասեռականության դեմ պետք էր պայքարել այնպես, ինչպես տարերային աղետների՝ ժամտախտի, երկրաշարժի և սովի դեմ... Հին Հռոմին փո-

խարհներու եկած գոթական դարաշրջանի հռոմեացի քրիստոնյաներն արդեն չեզոք չէին վերաբերվում գեյերին: 650 թվականին իսպանացի վեստգոթերի օրենքը նույնասեռականությունն անվանում է «հանցանք, որին պարտադիր կերպով պետք է նողկանքով վերաբերվել»: Նույնասեռական հարաբերություններն աստելությամբ «թունավորող բարոյական անառակություն» էին անվանում, դատավճիռներ կայացվում էին ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ նույնասեռականների համար: Պատժամիջոցները, համաձայն օրենքի, արտաքսումն ու ամորձատումն էին:

Տեսնելով, թե ինչպես է իր թագավորությունում տարածվում նույնասեռականությունը, վեստգոթերի տիրակալ Էգիկա թագավորն օգնության և խորհրդի կարգով դիմում է Տոլեդոյի եկեղեցական խորհրդին: Արդյունքում ընդունվում է մի օրենք, համաձայն որի՝ «նման նողկալի, ոչ բնական փորձառություններ ունեցող բոլոր կղերականները պետք է ամորձատման, գլխի սափրման, ճիպոտահարման և աքսորի ենթարկվելին»:¹

Հավատքի դար, նույնասեռականության դար

II հազարամյակի սկզբին եկեղեցին գլխավորում է պապը, և սկսվում է եկեղեցական իշխանության կենտրոնացման գործընթացը: Այդ գործընթացի մի մասն էր կազմում վերջին հազարամյակում մշակված օրենքների և ուսմունքների օրինակարգը:

Դա հնարավորություն տվեց եկեղեցուն ավելի հստակ տարբերակել հավատքի թշնամիներին: Սկսվեցին դասակարգումներն ու հետապնդումները հերետիկոսների և նրանց հանդեպ, ում սեռական փորձառությունները որպես անբնական էին դիտվում:

Խաչակրաց արշավանքներով ոգեշնչված՝ եկեղեցին քրիստոնեության իշխանության տարածման ուղիներ էր փնտրում այլ ժողովուրդների շրջանում, երագում էր միապետերի և հասարակ ժողովրդի հնազանդեցման մասին: Մակայն դրան հասնելու համար քրիստոնեության լիդերներն իրենց հոտի աչքին պետք է բարոյականության կատարելություն երևային. չէ՞ որ նրանցից շատերն ամուսնացած էին, ոմանք անգամ սիրուհիներ, այդ թվում՝ տղա սիրեկաններ ունեին: Հակաեկեղեցական տրամադրություններն ուժեղ էին, իսկ եկեղեցու բարոյական հեղինակությունը թուլանում էր:

Ռեֆորմների մախանձախնդիր պաշտպան քահանա Փիթեր Դամիանը կոչ արեց Գրեգորի VII պապին խստացնել եկեղեցու վերաբերմունքը նույնասեռականության նկատմամբ: Որպես պատժամիջոց՝ Դամիանն առաջարկում էր եթե ոչ ցմահ, ապա 15 տարվա ապաշխարանք, ինչպես նաև համարում էր, որ նույնասեռականներին պետք է ճիպոտահարության և հրապարակային թքոտման ենթարկել, շղթայել, բանտ նստեցնել, սովամահ անել: Բարենորոգիչները նույնասեռականությունը գրեթե նույնքան ահավոր մեղք էին համարում, որքան սպանությունը:

Պատմաբան Բայրն Ֆոնը գրում է, որ այդ ժամանակ եկեղեցին սկսեց սեռական շեղումները դասել եկեղեցական ուսմունքի հարցերին, նույնասեռականությունը՝ հերետիկոսության: Իսկ բոլոր նրանք, ովքեր քրիստոնեական կրոնին ոչ ուղղափառ դիրքերից էին վերաբերվում, այսինքն՝ քաղաքական չեզոքության

մեջ կասկածյալներն ու պարզապես բոլոր «օտարները»՝ մահմեդականները, հուդայականները, հերետիկոսները, նույնպես մեղադրվում էին սեռական հանցագործությունների, այդ թվում նույնասեռականության մեջ:

Նույնասեռականության մեջ մեղադրանքները որպես քաղաքական զենք օգտագործվում էին թշնամիների դեմ: Այդպիսով, եկեղեցու լիդերներն ու դասային էլիտան հարստամալու հնարավորություն էին ստանում՝ բռնագրավելով մեղադրված հերետիկոսների ունեցվածքն ու հողերը:

XIII դարի ընթացքում սեռական շեղումների հանդեպ անհանդուրժողական վերաբերմունքն ավելի էր ուժեղանում, և դա հաստատվում է գրական տեքստերով ու սարսափազդու նկարներով, որոնցում պատկերված են նույնասեռականները: Լեսբուհիների մասին ամենավաղ հիշատակումները հանդիպում են 1207 թվականին գրված ֆրանսիական օրենքների ժողովածուի փաստաթղթերում: *Li livres di justice et de plet* հոդվածը կարգադրում է՝ «նույնասեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց առաջին հանցագործության դեպքում հեռացնել ամորձապարկը, երկրորդի դեպքում՝ առնանդանը, երրորդի դեպքում՝ մահապատիժ խարույկի վրա»: Լեսբուհիների համար կարգադրվում էր հետևյալը՝ «կտրտել նրանց սեռական օրգաններն առաջին և երկրորդ դեպքերի ժամանակ, երրորդի դեպքում՝ ողջակիզում»:

Հայտնի չէ՝ իրականում քանի մարդ է նույնասեռականության համար մահապատիժ ենթարկվել X-ից XIII դարերի ընթացքում: Ստույգ թվերն անհայտ են մասամբ այն պատճառով, որ, համաձայն դատավճիռների, նույնասեռականներին հաճախ հողին էին հանձնում նրանց վերաբերող դատական գործընթացների արձանագրությունների հետ միասին. նրանց կատարած արարքներն «այնքան այլանդակ էին, որ չէին կարող արձանագրվել»: Այդպիսով՝ գրավոր ապացույցների բացակայությունն ամենևին էլ չի նշանակում, որ նույնասեռականներին մահապատիժ չեն ենթարկել:

Նույնասեռականների մահապատիժի հետ կապված գրառումներ սկսում են հայտնաբերվել սկսած 1292 թվականից, իսկ մոտավորապես XIV հարյուրամյակից սուրբ հավատաքննության բարգավաճման շրջանն է սկսվում, որն արմատապես ոչնչացնում է հերետիկոսներին: Սուրբ հավատաքննության տեսադաշտում է հայտնվում տաճարականների ասպետական միաբանությունը՝ հզոր, հարուստ խաչակիրների էլիտար մի խումբ, որը շատերի մոտ նախանձի և վախի զգացում էր առաջացնում: Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV-ի զինվորներից ընդամենը զիջերային մեկ ստուգայց պահանջվեց, որպեսզի 1307 թվականին բանտարկեն բոլոր տաճարականներին՝ աստվածանարգության, հերետիկոսության և նույնասեռականության մեղադրանքով: Անտանելի տանջանքների ազդեցությամբ՝ ասպետներից շատերը խոստովանեցին, որ մեղավոր են իրենց վերագրած բոլոր հանցանքներում, սակայն տանջալից մահապատիժ իրականացման պահին՝ խարույկի վրա, նրանք հրապարակավ հրաժարվեցին իրենց խոստովանություններից:¹

Խաչակրաց արշավանք ընդդեմ կատարսների

13-րդ դարի սկզբին Նևինի III պապը կարգադրեց բռնագրավել դատապարտված հերետիկոսների հողերն ու նրանց մահվան դատապարտել: Եկեղեցու պարագլխի այս հրովարտակն արդարացնում էր արյունահեղ ընկերակցությունը, որն ալբինգեյցների (կամ կատարսների) հերետիկոսության դեմ էր ծավալվում:

Կատարսներն, ում ուսմունքը բարգավաճում էր Ֆրանսիայի հարավում, հավատում էին, որ մարմինը ֆիզիկական ոլորտին է պատկանում և այդ պատճառով էլ արատավոր է: Նրանք չէին ընդունում համբարձման ուսմունքն ու հավանություն չէին տալիս մարմնական վերարտադրման գործողությանը: Կատարսների ուսմունքի համապատասխան՝ ծնունդը միայն նյութական աշխարհի փոփոխման է նպաստում, ուստի բոլոր նրանք, ովքեր սեքսով են զբաղվում, պետք է խուսափեն երեխա ունենալուց: Եվ չնայած բարձր խավին պատկանող կատարսները կուսակրոնություն էին ընդունում, մնացած բոլորը զբաղվում էին սեքսով՝ առանց երեխա ունենալու: Գուբերտ դե Նոգենտը գրում է. «Հայտնի է, որ տղամարդիկ պառկում են տղամարդկանց հետ, կանայք՝ կանանց»:

Բացի այդ՝ կատարսներին էին պատկանում Ֆրանսիայի հարավ-արևելքում գտնվող որոշ շատ հարուստ հողեր: 1208 թվականին Սայմոն դե Մոնտֆորտի զլխավորությամբ՝ նորմանների կողմից նրանց դեմ տարված խաչակրաց արշավանքը, որը ծավալել էր Նևինի III պապը, հազարավոր մարդկանց կյանք տարավ: Տասը տարի անց կատարսները վերջնականապես ջախջախված էին, իսկ նրանցից վերջիններն ինքնասպան եղան իրենց Մոնթսեգուր լեռնային բերդում:

Գիշերային հեծյալները

Մի կողմից Վերածննդի դարաշրջանի մշակույթը խոսում է նույնատես սիրո ծաղկման ու տարածման մասին, մյուս կողմից հենց այդ ժամանակահատվածում նույնատեսականների դեմ ուղղված հետապնդումները հատկապես մոլեգին են դառնում: XIV և XV դարերում ողջ Եվրոպայում հոմոֆոբիայի իսկական համաճարակ էր տարածվել:

Իտալական Միենայում «ճշմարիտ կարգ ու կանոն ապահովելու և կանոնավոր բարոյականություն պահպանելու համար» քաղաքական խորհուրդը Գիշերային հեծյալների հատուկ ջոկատ է նշանակում, որոնց խնդիրն էր գտնել և դատի ենթարկել սոդոմիտներին: 1325 թվականի ֆլորենցիական օրենքում ասվում էր, որ նույնատեսականության մեջ բացահայտված յուրաքանչյուր ոք ամորձատման է ենթարկվելու: Մինչև 14 տարեկան երեխաներին, ովքեր նույնատեսականության նկատմամբ հակումներ ունեին, մերկացնում և վռնդում էին քաղաքից: Կալանավորներին տանջում էին խոստովանություն կորզելու համար:

Անարգանքի սյունին գամված դատապարտյալներին՝ կանանց և տղամարդկանց, ծիծաղի առարկա էին դարձնում բարեպաշտ քաղաքացիների աչքին: Վերջիններս իրենց հաճույքի համար կարող էին անպատվել, ծեծել և ամեն կերպ ծաղրել դատապարտվածներին: Եթե այդքանից հետո սոդոմիտները դեռ կենդանի էին մնում, ապա նրանց այրում էին խարույկի վրա: Ցանկացած վայր, ուր, ինչպես ենթադրվում էր, կարող էին նույնատեսական հարաբերություններ տեղի

ուներնալ, պղծված էր համարվում: Նա, ով նույնատեսականության մասին որևէ հիշատակում աներ՝ լինի երգերում, թե պոեզիայում, տուգանվում էր: Որոշ քաղաքներում նույնատեսականության նկատմամբ հակում ունեցող կասկածելիների շուրջկալներ էին կազմակերպվում նույնիսկ դպրոցներում, դեղատներում, վարսավիրանոցներում, հիվանդանոցներում, քաղցրավենիքի կրպակներում և այլուր: Տղամարդկանց կամ երիտասարդների ցանկացած մասնավոր հավաք՝ ուտելու և համատեղ ժամանց անցկացնելու նպատակով, կարող էր ճակատագրական դառնալ: Մակայն, չնայած այդ բոլոր միջոցներին, պարզվում է, որ նույնատեսականությունը ծաղկում էր վառ գույներով: Այդպես 1432 և 1502 թվականների ընթացքում Ֆլորենցիայում Գիշերային հեծյալները մոտ 15 000 տղամարդ ու պատանի էին բռնել և ավելի քան 2 000 հոգու դատապարտել:

Միենյան սուրբ Բերնանդինոն գրում է. «Ես լսել եմ տղաների մասին, ովքեր ճոխ հագուստներով շրջում են քաղաքով, պարծենում իրենց սոդոմական մեղքերով և փողով առաջարկում համտեսել այդ զգվելի, մեղսալից պտուղը»: Բերնանդինոն համարում էր, որ նույնատեսականությունը ժամտախտ է առաջ բերում և որ նույնատեսականները վարակը տարածում են ամբողջ քաղաքով:

Անգլալեզու աշխարհում հոմոֆոբիայի մասին առաջին տեղեկությունները գտնում ենք Անգլիայի գրավոր կանոնադրության մեջ՝ թագավոր Հենրի VIII-ի կողմից հավանության արժանացած 1533 թվականի շրջաբերականում: Համապատասխան այդ օրենքի՝ նույնատեսականության պատիժը պետք է մահը լիներ: Փաստաթղթում կանայք չէին հիշատակվում:²

Իսկ ահա 1532 թվականին Իսպանիայում ընդունված օրենքը, որն արժանացել էր հռոմեական Սուրբ կայսրության կայսեր Չարլզ V-ի հավանությանը, հիշատակում է կանանց և ասում, որ սոդոմական մեղքի համար և՛ տղամարդիկ, և՛ կանայք պետք է մահապատժի ենթարկվեն: Ավելի ուշ՝ 1574 թվականին ի հայտ եկած օրենքում ասվում է. «Եթե կինը գործում է այդ հակաբնական արատավոր մեղքը, ապա որպես պատիժ պետք է մերկացնել և հրապարակի մեջտեղում գամել նրան անարգանքի սյունին ու վստահելի պահակի հսկողության տակ թողնել այնտեղ մի ամբողջ օր ու գիշեր, իսկ հաջորդ օրը մեղավոր կնոջը պետք է այրել քաղաքից փոքր-ինչ հեռու»:²

Իսպանիայում կաթոլիկ հավատաքննությանը հազարավոր մարդիկ են դատապարտվել նույնատեսականության և սեռական այլ հանցանքների համար: Երեք քաղաքների՝ Բարսելոնի, Վալենսիայի և Սարագոսայի գրառումները ցույց են տալիս, որ 1560-ից մինչև 1640 թվականները 1600 մարդ է դատապարտվել: Չորրորդ՝ Սևիլիա քաղաքում, 1567-ից 1616 թվականների միջև ընկած ժամանակահատվածում սոդոմական մեղքի համար խարույկի է հանձնվել 70 մարդ:

Բողոքականների վերաբերմունքը նույնատես սեքսի նկատմամբ նույնպես կարեկցական չէր: Շվեյցարական Ժնև քաղաքում, այն բանից հետո, երբ 1541 թվականին Ջոն Կալվինը խիստ բողոքական աստվածապետության ռեժիմ հայտարարեց, տեղական իշխանությունները սկսեցին սոդոմիտների դատական գործընթացների մանրամասն գրառումներ վարել: Համաեվրոպական տեղեկագրերին համապատասխան՝ 1555 թվականին նման գործընթացների քանակը շատացավ:

Ատելություն կայսրություններ

Այդ ժամանակ Ամերիկա ժամանեցին եվրոպացիները, ովքեր ձգտում էին հնազանդեցնել տեղի բնակչությանը: Եվրոպացիներն իրենց խնդիրներից էին համարում նաև հնդկացիներին իրենց կրոնին դարձնելն ու աշխարհի հանդեպ նրանց մեջ եվրոպական հայացքներ պատվաստելը, ներառյալ հոմոֆոբիան:

Նրանք գուր ժամանակ չէին կորցնում: 1513 թվականի հոկտեմբերին իսպանացի նվաճող Վասկո Նունեզ դե Բալբոան հրամայեց կոտորել Քվարեք գյուղի մի քանի հարյուր պանամայան հնդկացիների, որոնցից 40-ը, ինչպես ինքն էր համարում, նույնասեռականությամբ էին զբաղվում:

Տեքստերից մեկը պատմում է այն մասին, թե ինչպես է Բալբոան ներս մտել տեղացի թագավորի տուն ու այնտեղ տեսել կանացի զգեստներով, հարթ մաշկով և կանացի զարդարանքով երիտասարդ տղամարդկանց: Իսպանացին հրամայել է նրանց վրա արձակել իր շներին: 1594 թվականին պատկանող փորագրանկարը ցույց է տալիս մերկացած գոհերին, ովքեր գալարվում են գետնի վրա, երբ շները պատառ-պատառ են անում նրանց մարմինները:

Ինչպես Բալբոան, կոնկիստադոր Ֆերնանդո Կորտեսը նույնպես համարում էր, որ ացտեկների հզոր քաղաքակրթությունը, որի հետ նա բախվեց Մեքսիկայում, նույնասեռականության մեջ է խորտակվել. «Մեզ հայտնեցին, և դա անկասկած ճշմարտություն է, որ նրանք բոլորն էլ սողմանակներ են և կրում են այդ նողկալի մեղքը»:

Սակայն լատինամերիկյան հետազոտողները, որ նույնասեռականության պատմության հետազոտմամբ են զբաղվում, հայտնաբերել են, որ, չնայած և գոյություն ունեն նույնասեռ հարաբերությունների հանդեպ գապոտեկների հանդուրժողական վերաբերմունքի ապացույցներ, այնուամենայնիվ, ացտեկների հասարակությունն այլ կերպ էր վերաբերվում նույնասեռականությանը: Մեքսիկացի գրող Մաքս Մեծիայի տվյալներով՝ ացտեկների մոտ նույնասեռականությանը վերաբերող շատ խիստ օրենքներ էին գործում. նրանց հրապարակավ մահապատժի էին ենթարկում: Հիմնականում մահապատժը կիրառվում էր տղամարդկանց նկատմամբ, սակայն կանայք նույնպես բացառություն չէին:³ Մեծիան նկարագրում է Տեքսկո քաղաքը, ուր իշխում էր Նեգախուալկոյոթզին թագավորը. «Այդ քաղաքում խայտառակ մեղքի համար հատուկ դաժանությամբ էին պատժում. դատապարտյալին գամում էին անարգանքի սյունին, և քաղաքի բոլոր տղաները նրա մարմինն ամբողջովին պատում էին մոխրով: Դրանից հետո նրա սեռական օրգանների շրջակայքից դուրս էին հանվում ներքին օրգանները, ապա նրան թաղում էին մոխրի մեջ»:

Նույնասեռականության համար հատկապես այն կանայք և տղամարդիկ էին պատժվում, ովքեր հակառակ սեռի զգեստներ էին կրում: Իսպանացի վանական Բարդոլոմեոս դե լաս Կասասը գրում է. «Տղամարդիկ, ովքեր կանանց պես էին հագնվում և կանայք, որոնց բռնացնում էին տղամարդկանց շորերով, մահանում էին դրա համար»:

Սակայն գոյություն ունեին նաև բացառություններ: Նման փորձառությանը հանդուրժողական էին վերաբերվում, եթե այն կրոնական ծեսի մաս էր կազմում: Հոգևոր վերնախավի ներկայացուցիչները խուսափում էին պատժից՝ շնորհիվ իրենց աստ-

վաձային կարգավիճակի և աստծո հետ ունեցած հատուկ հարաբերությունների:

Եվրոպացիները փնտրում և նույնասեռականներ գտնում էին Ամերիկայի ողջ տարածքում: Ոմն իսպանացի կոնկիստադոր հավատացնում էր, որ կարիբյան տարածաշրջանի բնակիչները սողմանիներ էին ավելի, քան մնացած բոլոր ռասաները:¹

Ինչ վերաբերում է ավելի հյուսիսային տարածաշրջաններին, ապա այնտեղ իսպանացի, ֆրանսիացի և անգլիացի հետազոտողները նկատում էին հակառակ սեռի հագուստ կրելու սովորույթներ, որոնք բնորոշ էին տեղացի հնդկացիների մշակույթներին (տե՛ս գլուխ 3): Մեկնաբաններից շատերն իրենց զգվածքն էին արտահայտում այն ամենի վերաբերյալ, ինչին ականատես են եղել իրոկեզների, պիոքսների և հնդկացիների այլ ցեղերի մոտ:

Հյուսիսային Ամերիկայում հիմնավորված պուրիտանցիները վախենում էին, որ Նոր Երուսաղեմը, որը նրանք ուզում էին կառուցել, կարող է Նոր Սոդոմի վերածվել: Եվ ոչ միայն տեղացի բնակչության սովորույթների պատճառով, որոնք այդքան անհանգստացնում էին նրանց, այլ՝ հենց գաղթականների միջև նույնասեռականության դեպքերի: Օրինակ, 1629 թվականին հինգ սողմանական տղա հետ են ուղարկվել Անգլիա, ուր պետք է իրենց պատիժը կրեին. հավանաբար նրանց կախաղան էր սպասում: 1636 թվականին Պլիմուտի գաղութն օրենքների ժողովածու ընդունեց, համաձայն որի՝ նույնասեռականության պես մեղքի համար մահապատժի էր սահմանվում: 1666 թվականին ամերիկացի քարոզիչ Սամուել Վայթինգը ելույթ ունեցավ այսպիսի ճառով. «Երբ տղամարդիկ կեղտոտ բաներ են անում տղամարդկանց հետ, իսկ կանայք՝ կանանց... դա տանում է կործանման: Նրանց կրքերի տարօրինակ ցանկություններն իրենց հետևից աներևակայելի պատիժներ են բերում, երկրի վրա հրդեհվող տարօրինակ կրակն իր հետևից անտեսանելի, մոխրացնող երկնային կրակ է բերում: Սովորաբար կրակը վեր է խոյանում, բայց այն հուրը, որ մոխրացրել է Սոդոմը, դեպի երկիր է թեքվում...»:

Գաղութներից շատերում կիրառվում էին անգլիական օրենքները, համաձայն որոնց, նույնասեռականության համար մահապատժի էր սահմանված: Նոր Անգլիայում հիմնավորված գաղթական պուրիտանցիները 17-րդ դարի կեսերին օրենք ընդունեցին, համաձայն որի՝ լեսբիությունը քրեական պատժի էր ենթակա, սակայն մահապատժի դեպքեր հայտնի չեն:

Սպառնալիք պետությանը

Աշխարհի մյուս ծայրում՝ ուշ շրջանի կայսերական Չինաստանում, նույնասեռականության հանդեպ համոզորժողականության ժամանակաշրջանն ավարտին էր մոտենում, և դրա պատճառը 1644 թվականին մանջուրացիների ի հայտ գալն ու նրանց կողմից նոր Քվինգ-Չինգ դինաստիայի ստեղծումն էր: Կիրառելով կոնֆուցիոսաբանության սկզբունքները՝ մանջուրացիներն «անվանումների ուղղումներ» կոչված համակարգն առաջ բերեցին, ըստ որի՝ յուրաքանչյուր մարդ պետք է իմանար իր դերն ու համապատասխանաբար կատարեր այն: Պատմաբան Վիվյեն Վ. Նզըն նկատում է. «Քվինգի կառավարությունը բավական շուտ գիտակցեց, որ օրենսգրքերը պետության հեղինակության հզորագույն խորհրդանիշն են: Նա պնդում էր, որ յուրաքանչյուր տղամարդ պետք է լավ ամուսին լինի, իսկ յուրա-

քանչյուր կին՝ լավ կին իր ամուսնու համար, և ցանկացած շեղում այդ դերերից անբույլատրելի է»։ Այդպիսով, նույնասեռականությունը ուսման գործընթացում էր կատարում «անվանումների ուղղումների» սկզբունքների հանդեպ։ Մակայն այն շարունակում էր գոյություն ունենալ, և 1740 թվականին ընդունվեց օրենք, որը նույնասեռականությունը հանցանք էր համարում։ Այն ժամանակների դատական գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Զվիցգի կառավարությունը տղամարդկանց նույնասեռականության հանդեպ ավելի խիստ էր տրամադրված, քան կանանց, և դա հավանաբար այն պատճառով, որ «անվանումների ուղղումներ» համակարգն ավելի շատ տղամարդկանց էր կարգորոշում և ենթադրում էր, որ հայրիշխան տղամարդու սրբազան պարտքն առաջին հերթին սերունդ տալն է։

Այդ ժամանակահատվածում նմանատիպ իրադրություն գոյություն ուներ նաև Եվրոպայում. համարվում էր, որ սողոմիտներն ինքնին պառնալիք են պետությանը։ Գերմանացի աստվածաբան-բողոքական Ջուան Սիխանելսը հայտարարեց, որ նույնասեռականությունը բնակչության աճի նվազեցման է բերում, թուլացնում է ամուսնությունը և «ազգությունը կանգնեցնում է ոչնչացման վտանգի առջև...»։

Բողոքական Անգլիայում և Հոլանդիայում «ռեֆորմների հասարակությունները» փորձում էին գեյների բարգավաճող ենթամշակույթի վրա խստագույն արգելք դնել, որը գոյություն ուներ այսպես կոչված «քնքուշ» տներում, ուր հանդիպում էին նույնասեռական տղամարդիկ։ 1730-1731 թվականներին Հոլանդիայում մահապատժի է ենթարկվել 60 տղամարդ, ընդ որում նրանցից շատերը դեռահասներ էին։ Անգլիայում տարածված էր նույնասեռականների որսը ռատիկանության և նրա լրտեսների միջոցով։ Այն ժամանակ, երբ մնացած ամբողջ Եվրոպայում գտնվում էր հեղափոխական մտահղացումների ազդեցության նեքո, իսկ 1791 թվականին Ֆրանսիան ընդունեց նույնասեռականության ապաքրեականացում, Անգլիայում սեռական փոքրամասնությունների հետապնդումները միայն աճում էին։

Անտեսելով փիլիսոփա Ջերեմի Բենթամի հետևողների՝ բանականության ու հանդուրժողականության կոչերը՝ նույնասեռականներին դեռ շարունակում էին կախաղան բարձրացնել նաև XIX դարում։ 1806-1836 թ.թ. նույնասեռականության համար կախաղան բարձրացվեց 60 մարդ, և Բրիտանիան եվրոպական վերջին երկիրն էր, որն այդ «հանցանքի» համար սահմանված մահապատժը չեղյալ համարեց։ Դա տեղի ունեցավ միայն 1861 թվականին։

Համաձայն 1861 թվականին ընդունված օրենքի (այսպես կոչված՝ Մաքսուելլի օրենքի)՝ նույնասեռականությունը հանցանք հայտարարվեց, որի համար բանտարկություն էր նախատեսվում։ Տվյալ օրենքը գործում էր Հնդկաստանում և բրիտանական այլ գաղութներում։ Հնդկաստանում բրիտանական կառավարման հաստատումից հետո հիջրա՝ փոխգեներների երկու հազար տարվա պատմություն ունեցող երեքինիների ավանդական կաստան սկսեց կորցնել իր օրինական կարգավիճակը։ Բրիտանացիները հրաժարվեցին հիջրա կաստային տրամադրել իրենց ավանդական գործունեությանը զբաղվելու իրավունքը՝ մուրացկանությունը կամ փողերի շորթումը՝ հույս ունենալով դրանով «հեռու պահել խեղճերին այդ զգվելի փորձառություններից»։ Որոշ նահանգներում, փորձելով պայքարել հիջրաների դեմ, բրիտանացիներն ամորձատուր օրենքից դուրս հայտարարեցին։⁴

Բրիտանացիները շարունակում էին այդ տարածաշրջանում քարոզել իրենց հոմոֆոբիական քաղաքականությունը, ընդ որում՝ և՛ անկախության համար պայքարի ժամանակ, և՛ անգամ նրանում տարած հաղթանակից հետո։ Այդպիսով, հոմոֆոբիան խոր արմատներ գցեց Հնդկաստանում։ 1920–1940 թվականներին երկրում հատուկ միջոցներ ձեռք արվեցին (ցավոք, դրանք գլխավորում էր ինքը՝ Մահաթմա Գանդին), որոնց նպատակն էր մարդկանց հիշողությունից ջնջել հնդկական և հատկապես հինդուիստական մշակույթում երբևէ գոյություն ունեցած ցանկացած հիշողություն, որը վերաբերում էր փոխգեներներին և նույնասեռականությանը։ Այդ ժամանակաշրջանում Գանդիի հրամանով՝ նրա հետևորդները կործանում էին տեղի մշակույթին բնորոշ նույնասեռական էրոտիզմի ցանկացած ակնարկ կամ հիշեցում։ Այդպես ավերվեցին ժամանակին հինդուիստական տաճարները զարդարող հոմոէրոտիկ և լեսբիական հարթաքանդակները, որոնցից ամենահինները թվագրված էին XI դար։

Գրող և փիլիսոփա Ռաբինդրանատ Թագորին հաջողվեց վերջ դնել այդ բարբարոս գործողություններին։ Մակայն Հնդկաստանի՝ սեռական բազմազանության պատմական հիշողության ոչնչացման միտումը շարունակվեց նաև վարչապետ Ջավահարլալ Ներուի օրոք՝ 1946-ից մինչև 1964 թվականը։ Ինչպես և Գանդին, այնպես էլ նա սովորել էր Անգլիայում և իր նախորդի պես կիսում ու քարոզում էր այն տեսակետը, որ նույնասեռականությունը Հնդկաստան է մուտք գործել բրիտանացիների հետ։ Ջավահարլալ Ներուն շատ վշտացավ, երբ նրա ընկեր Ալաին Դանիելյուն հրատարակեց հինդուիստական ավանդական քանդակների լուսանկարները, որոնք փոխգեներ մարդկանց և հոմոէրոտիզմի դրվագներ էին պատկերում, դատապարտվում էին մահապատժի։

Ավստրալիան և Նոր Զելանդիան նույնպես ժառանգել են բրիտանական հոմոֆոբիան և նրա պատժիչ օրենքները, որոնք ուղղված են նույնասեռականության դեմ պայքարին։ Ավստրալիայում դրանք գործում էին մինչև 1972 թվականը՝ նույնասեռականության ապաքրեականացման գործընթացի սկիզբը, որն ավարտվեց միայն 25 տարի անց, վերջին նահանգի՝ Տասմանիայի կողմից նույնասեռականության օրինականացումից հետո։ Նոր Զելանդիան 1986 թվականին օրենքներ ընդունեց, համաձայն որոնց՝ նույնասեռականությունն օրինական էր հայտարարվում։ Մակայն Ասիայում և Աֆրիկայում դեռ գոյություն ունեին երկրներ, նախկին գաղութներ, ուր գործում են հին բրիտանական օրենքները, ըստ որոնց՝ նույնասեռականները պատժվում էին երկարաժամկետ ազատազրկմամբ կամ մահապատժով։

«Սեռական այլատերությունների» դեմ ֆաշիստների հայտարարած պատերազմը 1914-1918 թվականների Համաշխարհային պատերազմն իր հետ արմատական փոփոխություններ բերեց սոցիալական հարաբերությունների ոլորտում և հատկապես սեռի ու սեռականության հարցերում։ Եվրոպայի շատ երկրներում կանայք վերջապես ընտրություններին մասնակցելու իրավունք ստացան։ Հոգեվերլուծության ֆրեյդյան տեսությունները փոխեցին մարդկանց վերաբերմունքը սեքսի և սեռազգացության նկատմամբ։

Սեքսաբանությունը, հատկապես Գերմանիայում, ակադեմիական հետազո-

տությունների առարկայի կարգավիճակ ստացավ: 1920 թվականին Բեռլինը գիտական այնպիսի որոնումների կենտրոն դարձավ, որոնք հիմնականում անց էին կացվում Սեռական ռեֆորմների համաշխարհային լիգայի ակադեմիկոս ակտիվիստ Մարկուս Հիլքվեդի հիմնած սեքսաբանության ինստիտուտում: Գրա հետ մեկտեղ՝ Բեռլինը ձեռք բերեց բարգավաճող գեյ մշակույթով երկրի համբավ:

Սակայն այդ ամենին կտրուկ վերջ դրվեց 1933 թվականին՝ Հիտլերի իշխանության գլուխ գալուց պես: Ազգային սոցիալիստների (նացիստների) կուսակցությունը դեռ 1928 թվականին պարզ շարադրել էր իր հայացքները՝ հայտնելով. «Մեզ թշնամի են բոլոր նրանք, ովքեր կարծում են, որ տղամարդկանց կամ կանանց միջև կարող է սեր գոյություն ունենալ»:²

Հիտլերի իշխանության առաջին տարիներին արդեն նույնասեռականներին, տրանսվեստիտներին, կավատներին և այլ «սեռական այլասերվածներին» կալանավորում էին համակենտրոնացման ճամբարներում: Տարբեր թվեր են բերվում. համաձայն մի աղբյուրի՝ նույնասեռականության մեղադրանքով ձերբակալել են 50 հազար մարդու, մեկ այլ տվյալով՝ 100 հազար, և նրանցից շատերը ճամբարներ են ուղարկվել:³

Ճամբարային հիերարխիայի մեջ նույնասեռականների կարգավիճակը հիմնականում ամենաանմխիթարականն էր: Նրանք վիրավորանքների և բացառիկ տանջանքների էին ենթարկվում, նրանց ամենամանր աշխատանքների էին ուղարկում: Շատերը մահանում էին: Հիմնական քաղաքականությունը մարդկանց իրենց ուժերից վեր աշխատանքով լծելն էր: Նրանց մահ բժշկական փորձերի էին ենթարկում: 1944 թվականին Բուխենվալդի համակենտրոնացման ճամբարում բժշկական փորձերի շարք սկսվեց, որոնց նպատակը նույնասեռականության վերացումն էր:

Հետագոտող Էրվին Գ. Հեյբերլիի տվյալներով՝ նացիստները շարունակում էին ուժեղացնել սեռական փոքրամասնություններին խայտառակությամբ խարանելու, նրանց ճամբարներում փակելու և «սեռական այլասերվածներին» հարկադրական բուժման ենթարկելու իրենց քաղաքականությունը:

Ուսուցանող է նաև այն, ինչը տեղի ունեցավ պատերազմից հետո: Հետագոտողները շրջանցում էին իրենց ուշադրությունը՝ արհամարհելով նույնասեռականների նկատմամբ նացիստական քաղաքականությունը: Մի քանի տասնամյակ այդ թեմայով փաստորեն ոչ մի նյութ չի տպագրվել: Թեման բացասական վերաբերմունք էր առաջացնում ինչպես գերմանացիների, այնպես էլ համախոհների մոտ: Բացի այդ, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Արևմտյան և Արևելյան Գերմանիայում, ինչպես նաև ԽՍՀՄ-ում տղամարդկանց նույնասեռականությունը դեռ քրեական հանցագործություն էր համարվում: Այդպիսով, համակենտրոնացման ճամբարներում բանտարկյալ նույնասեռականները նացիզմի գոհեր չէին համարվում և, համապատասխանաբար, նրանք չէին կարող իրենց տարած տանջանքների համար փոխհատուցում ակնկալել:⁴ Ավելին, նրանք կրկին կարող էին ճաղերի հետևում հայտնվել: Միայն 1960-ականների վերջերին երկու Գերմանիաներն էլ օրենքների բարենորոգում անցկացրին, որոնք նույնասեռականության դեմ էին ուղղված: Եվ միայն 1970-ականներին գեյերի իրավունքների պաշտպա-

նության համար պայքարի ելած շարժման ակտիվիստները «բացահայտեցին» նացիստների կողմից նույնասեռականներին հետապնդելու փաստերը:

Գեներալ Ֆրանկոյի ֆաշիստական Իսպանիայում 1936-1939 թվականների քաղաքական արյունաբերու պատերազմից հետո վերականգնեցին ավանդական իսպանական արժեքները: Բռնապետությունը պետք է հենվեր երեք գլխավորի՝ ընտանիքի, կաթոլիկության և հայրենասիրության, ինչպես նաև նույնասեռականության հանդեպ ավանդական ատելության վրա: Բանաստեղծ Ֆեդերիկո Գարսիա Լորկան ֆալանգիստ հոմոֆոբների բռնության ամենահայտնի գոհր դարձավ: Նույնասեռականներին հետապնդում և բանտ էին նստեցնում ամենատարբեր օրենքների համաձայն՝ «հրապարակային վիճաբանության», «թափառաշրջիկության և շարագործության» պատրվակով: Նույնասեռականների համար նախատեսված վերականգնողական կենտրոնում բուժման զգվելի մեթոդներ էին կիրառվում՝ էլեկտրաշոկ, փսխեցուցիչ միջոցներ, սակայն գեյերին ու լեսբուհիներին բացահայտ հետապնդելու հարցում վարչակարգը նախընտրում էր լռել և ժխտել ողջ կատարվածը: Միայն Ֆրանկոյի մահից հետո Իսպանիայում երևան եկան սեռական փոքրամասնությունների շարժման առաջին ծիլերը:⁷

Իմպերիալիզմի վերապրուկները

1905 թվականի հեղափոխության և 1917 թվականի փետրվարյան հեղափոխության միջև ընկած ժամանակահատվածում Ռուսաստանում գեյ մշակույթի ծաղկունքի շրջան էր նկատվում ինչպես գրականության, այնպես էլ քաղաքականության ոլորտներում, որը մինչև 1920-ականները զնալով մարեց: Նույնասեռականներին իրավունքներ ընձեռելու գաղափարը երբեք չի դիտարկվել ոչ Լենինի, ոչ էլ Տրոցկու կողմից: Խորհրդային մեր ժամանակ նույնասեռականությունը հիվանդություն էր համարում, որը բուժել էր պետք:

1923 թվականին բնակչության առողջության ժողովրդական կոմիսարիատը հայտնում է. «Այսօր գիտության կողմից արժանահավատության լիակատար աստիճանով հաստատված է, որ նույնասեռականությունը չար կամք կամ հանցագործություն չէ. այն հիվանդություն է»: Մարկ Սերեյսկին՝ նույնասեռականության հետ կապված հարցերի, այսպես կոչված, «փորձագետը», նկարագրում էր փորձերը, որոնք պետք է կիրառվեին սեռական շեղումներից բուժելու նպատակով. դա տարասեռականների ձվիկների փոխպատվաստումն էր նույնասեռականներին:²

Խորհրդային գրականության մեջ ավելի ու ավելի հազվադեպ էր հիշատակվում նույնասեռականության մասին, իսկ 1930-ականներին մոտ արդեն հնարավոր չէր ինչ-որ բան կարդալ այդ թեմայով: Լեսբուհիների և գեյերի գրչին պատկանող բանաստեղծություններն ու արձակ գործերը պարբերաբար անտեսվում էին կամ պատշաճ չէին համարվում տպագրման համար՝ իրենց նույնասեռական ուղղվածության պատճառով: Կուսակցության գեյ անդամներին ստիպում էին հոգեբուժարանում բուժում անցնել: Խորհրդային պետությունը շանտաժի ենթարկեց նույնիսկ խորհրդային ֆիլմերի մեծագույն արարիչ Մերգել Էյզենշտեյնին՝ ստիպելով նրան ցուցադրաբար ամուսնանալ:

Նույնասեռականության նկատմամբ աճող ատելության վերջնակետը դարձավ 1933 թվականի օրենքը, որը 1934 թվականին վավերացվեց խորհրդային բոլոր հան-

րապետություններում: Օրենքն արգելում էր տղամարդկանց միջև սեռական հարաբերությունները, սողմնախոնկներին պատժում հինգ տարվա տաժանակիր ուղղիչ աշխատանքով: Խորհրդային թերթերում գրող Մաքսիմ Գորկին 1933 թվականի օրենքը «պողոտարական հումանիզմի հաղթանակ» է անվանում ու գրում, որ ֆաշիզմի հիմնական պատճառը նույնասեռականության օրինականացումն էր: Գեյերին հետապնդելը կոմունիստական կատեխիզիսի մեջ ներառվեց: Խորհրդային օրենքը նույնասեռականությունը ոչ միայն հասարակական բարոյականության դեմ գործած հանցանք որակեց, այլև ավագակությանը, հակահեղափոխական գործունեությանը, նենգադուլին և լրտեսությանը հավասար այժմ սկսեց դիտարկել որպես պետության դեմ ուղղված հանցագործություն: 1936 թվականին արդարադատության կոմիսար Նիկոլայ Ռուլենկոն հայտարարեց, որ սոցիալիզմի գոյության երկրորդ տասնամյակից հետո ոչ ոք արդեն նույնասեռական լինելու պատճառ չունի, իսկ բոլոր նրանք, ովքեր դեռ շարունակում են պնդել իրենց ոչ ավանդական սեռական կողմնորոշվածության մասին, «չափազործող դասակարգերի մնացուկներն են»:

Նույնասեռականների համոզեալ թշնամական էր շարունակում մնալ նաև Չինաստանի մադիստական քաղաքականությունը: 1949 թվականի հեղափոխությունից հետո Չինաստանի գեյերին սկսեցին բանտարկել և պարզապես գնդակահարել: Քույրերի ընկերակցության անդամ-լեսբուհիները փախան երկրից: Պաշտոնապես հայտարարվել էր, որ Չինաստանում նույնասեռականությունը գոյություն չունի: Հաջորդող տասնամյակներում նույնասեռական հարաբերությունները պատժվում էին «խուլիգանության» հողվածով, քանի որ քրեական օրենսգրքի մեջ հնարավոր չէր հողված ներառել այն մասին, ինչը գոյություն չուներ:

XX դարի մեծ մասի ընթացքում ձախակողմյանների միջազգային հակակապիտալիստական քաղաքականության մեջ գերակշռում էին ստալինյան և մադիստական ուղղությունները, որոնք հոմոֆոբ նախապաշարմունքներ էին արմատավորում: Հեղափոխության առաջին տարիներին կուբայական սոցիալիստական հեղափոխության միավորված կուսակցությունը, որը սերտորեն կապված էր Խորհրդային Միության հետ, Կուբայում ակտիվորեն հոմոֆոբիա էր քարոզում: Կաստրոն նույնասեռականությունն անվանում էր Բատիստի կաշառված դարաշրջանի մնացորդ և պորիտանական հեղափոխության կոչ անում: Կրթության և մշակույթի առաջին ազգային կոնգրեսը «նույնասեռական շեղումների սոցիալ-ախտաբանական բնույթն» էր վկայակոչում և որոշեց, որ «հարկավոր է համառորեն մերժել նույնասեռական շեղումների բոլոր դրսևորումները և հետևել, որ նրանք տարածում չստանան»:

1960-ականներին գեյերին վերականգնողական ճամբարներում էին մեկուսացնում, իսկ 1983 թվականին՝ «մարիեթլյան» զանգվածային տարագրման ժամանակ, նրանք, որպես սոցիալական անցանկալի տարրեր, Կուբայից ԱՄՆ արտաքսվեցին: Լավագույն դեպքում նույնասեռականությունը դիտվում էր որպես իմպերիալիզմի վերապոկ, վատագույն դեպքում՝ որպես սոցիալական այլասերման ծանրագույն դրսևորում:⁸

Նույնքան վտանգավոր են, որքան կոմունիստները

XX դարի կեսերին ԱՄՆ-ում նույնասեռականությունը համարում էին հիվանդություն, որն արդեն համաճարակի վերածվելու միտում ուներ: Երկրորդ համաշ-

խարհային պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի բանակում գեյերին փոխադրում էին հատուկ զինվորական հոգեբուժական ջոկատներ, ուր նրանց օգտագործում էին նույնասեռականներին բացահայտելու տեխնիկայի մշակման համար: Հետագոտությունը, որն անցկացվում էր հոսպիտալներից մեկի 1400 հաճախորդների միջև, ցույց տվեց, որ նույնասեռականների մոտ բացակայում է «կոկորդի ռեֆլեքսը», այսինքն՝ լեզվի արմատը սեղմելուց նրանք չէին «խեղդվում»: Համապատասխանաբար, հետագոտողները եկան եզրակացության, որ «կոկորդի ռեֆլեքսի» ստուգումը կարող է օգտագործվել ոչ միայն զինվորական ծառայության թեկնածուների ընտրության ժամանակ, այլև այն պաշտոնների, որոնց զբաղեցումը անցանկալի է սեռական շեղումներ ունեցող անձանց կողմից: Նույնասեռականների զինվորական նույնականացումը նախադեպ դարձավ զանգվածային ստուգումների համար, որոնք կատարվում էին պատերազմից հետո:²

Բուժումը, որը մի շարք դեպքերում գեյերի համոզեալ հարկադրաբար էր կիրառվում, իրականացվում էր հիպնոսի, վիրահատական միջամտության, էլեկտրաշոկազդման և փսիխեման թերապիայի մեթոդներով: Լեսբուհիների «բուժման» համար մինչև 1950-ականները կիրառվում էին արգանդի հեռացման, հորմոնալ ներարկումների և ծղիկի հատման մեթոդները:⁹

Որպես նախընտրելի գեյեր սկսվեց օգտագործվել հոգեբուժությունը: 1949 թվականին «Նյուսվիք» ամսագիրը կոչ էր անում, որ «ղեգրադացված (այլասերված) անձինք» կարող են «նորմալ կյանքի վերադարձվել հոգեբուժության մեթոդներով»:

1950 և 1955 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ի կառավարությունն աշխատակիցների՝ զինված ուժերի և այլ ծառայությունների ներկայացուցիչների շրջանում հետաքննություն է անցկացնում՝ փորձելով հայտնաբերել կոմունիստների և նրանց կարեկցող մասնիկների: Հետաքննության բաղկացուցիչներից մեկն էլ քաղաքական հայացքների և սեռական նախապատվությունների միջև գոգահեռների գոյության հայտնաբերումն էր: Եվ ահա կոմունիզմին համակրանք ցուցաբերելու մեջ կասկածյալներից շատերը միաժամանակ մեղադրվում էին նաև նույնասեռականության մեջ: Նույնասեռականություն հասկացությունն առօրյա էր մտել որպես քաղաքական սպառնալիք: 1950 թվականին «Նյու Յորք Թայմս» թերթը գրում է. «Վերջին տարիներին սեռական այլասերվածները ներխուժել են մեր կառավարություն, և նրանք, հավանաբար, ոչ պակաս վտանգավոր են, քան իրական կոմունիստները»:

1950 թվականին ԱՄՆ-ի սենատի հանձնաժողովի գեկույցում հնչեց. «Հուզական կայունության բացակայության, որը բնորոշ է բոլոր սեռական այլասերվածներին, ինչպես նաև նրանց բարոյական հիմքերի տկարության պատճառով նրանք գործիք են դառնում գաղտնի գործակալ-լրտեսների, ինչպես նաև նենգաշողքների համար»:

Շատ նույնասեռականներ մանրագնին հետաքննության տակ ընկան՝ Մաքարտիի «վիուկների դատավարությունների» համաձայն: 1955 թվականի հունվարին 8000-ից ավելի մարդ անվտանգության նկատառումներով հեռացվեց պետական ծառայությունից, ընդ որում նրանցից 600-ից ավելին անվանվել էին «սեռական այլասերվածներ»:¹ Չավելչտալի է, բայց այդ 1950-ականների դատավարությունները՝ կոչված մաքրելու պետական համակարգը «կոմունիստներից» և այլ «քայքայիչ տարրերից», միայն խթան հանդիսացան նույնասեռականների իրավունքների ժամանակակից շարժման առաջացմանը ԱՄՆ-ում:

Վերջ տալ նրանց

Չհնվորական բռնապետությունների ալիքի հայտնվելուն պես 1970-80-ականներին Լատինական Ամերիկայում սաստկացավ նաև հոմոֆոբիան: Չիլիում գեյերի և լեսբուհիների խմբերի կազմակերպումը օրենքով համարվում էր անաբեկչական ակտ, որովհետև այն դարձել էր «ընտանիքի դեմ հանցավոր»։ Բրազիլիայում, չնայած գեյերը զինվորականների հատուկ թիրախը չէին, գրական և արտիստիկ դրսևորումների խիստ արգելքը չէր նպաստում հասարակությունում գեյերի երևան գալուն (բացի դիմակահանդեսի շրջանից) և շարժման կազմակերպման հնարավորություն չէր տալիս:

Արգենտինայում ռեժիմն ուներ հստակ արտահայտված հոմոֆոբ ուղղվածություն: 1976 թվականի մարտին զինվորական հեղաշրջումից հետո գեյ ակտիվիստներին սկսեցին կատալոնների ենթարկել և գնդակահարել: Նրանցից շատերը երկրից փախան: Նրանք, ովքեր մնացին, հարկադրված էին դադարեցնել իրենց հասարակական գործունեությունը: Այսպիսին էր դրությունը դաժան բռնապետության կառավարման գրեթե բոլոր տարիներին: Սակայն, հետագայում, 1982 թվականին, նորից սկսեցին խմբեր կազմավորվել: Բռնապետությունը, որը շունչը փչելու վրա էր, սկսեց վրեժ լուծել. սպանությունների նոր ալիք բարձրացավ: 1982 թվականի հունիսին Կոմանդո Կոնդոր /Comando Condor/ կիսազինվորական խմբավորումը հայտարարություն հրապարակեց նույնասեռականներին «վերջ տալու» ստադիայի մասին: Հանձնաժողովի (Comision National Sobre la Desapricion de Presonas COMANDER) անդամներից մեկը տվյալներ է բերում այն մասին, որ համեմայն դեպք 400 լեսբուհիներ ու գեյեր «ամենտացել են», և դա հիշատակվել է հանձնաժողովի պաշտոնական զեկույցում:⁷

Ֆունդամենտալիստների մոլեգնությունը

Վերջին տարիներին պետության կողմից խրախուսվող հոմոֆոբիայի ամենաբռնի օրինակները բխում են այն երկրներից, որոնց բնորոշ է կրոնական ֆունդամենտալիզմը: Իրանում Այաթոլլա Խոմենիի իշխանության գալուց հետո 1979 թվականին Թեհրանում սկսվեցին գեյերի զանգվածային խոշտանգումները. սպանվեցին հարյուրավոր մարդիկ: Նույնասեռականների իրավունքները պաշտպանող ալ Ֆաթիհա /Al Fatiha/ իսլամական կազմակերպության տվյալներով՝ ֆունդամենտալիստական հեղափոխության օրերից երկրում սպանվել են մոտ 4000 լեսբուհիներ ու գեյեր:¹⁰

2000 թվականին «Միջազգային համայնքում» կազմակերպությունը տեղեկություններ հրապարակեց Մաուդյան Արաբիայում 6 տղամարդու մահապատժի մասին, ովքեր մեղադրված էին նույնասեռական ակտեր կատարելու մեջ, իսկ Աֆղանստանում 1998 և 1999 թվականներին ամենաքիչը 6 տղամարդ, հրապարակված ծեծի ենթարկվելով, սպանվել է թալիբների դաժան դատաստանով՝ մեղադրվելով նույնասեռականության մեջ:¹³ Դուրանը հստակ վկայակոչումներ չունի այն մասին, թե ինչպես պետք է վերաբերվել սեռական փոքրամասնություններին, բայց նույնասեռականությունն իսլամական օրենքով արգելված է, և մեղադրյալին սովորաբար քարկոծում են մինչև մեռնելը: Հանցանք կարող է դառնալ անգամ նույնասեռականության գոյության ճանաչումը: Բուվեյթում մի կին

պրոֆեսոր հեռացվել էր աշխատանքից այն բանի համար, որ իր հողվածում հիշատակել էր, թե համալսարանում լեսբուհիներ կան:

Իսլամական ֆունդամենտալիստների հոմոֆոբիան իր դրսևորումներն ունի նաև արևմտյան աշխարհի տարբեր երկրներում: 2000 թվականին ավագ հոգևորական Շեյխ Շարկախուլին Մեծ Բրիտանիայում, Լոնդոնի կենտրոնում՝ Ռեզենտների հեղինակավոր զբոսայգում գտնվող մզկիթում, հրապարակավ հանդես եկավ լեսբուհիների ցմահ բանտարկության և գեյերի ու 10 տարեկանից բարձր գեյ տղաների մահապատժի օգտին:¹¹

Արևմուտքում գերիշխող հոմոֆոբիայի արմատները թաքնված են քրիստոնեական ֆունդամենտալիզմի մեջ: Օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները՝ ռադիոն, հեռուստատեսությունը, ինտերնետը, քրիստոնեական ֆունդամենտալիզմ քարոզողներն առանձնահատուկ թույնով են քարոզում իրենց հոմոֆոբ համոզմունքները: Ռև Ֆրեդ Փիտեյիս քարոզիչը, ներշնչված նրանից, որ մահապատժի դատավճիռ էր կայացվել 1995 թվականին Օկլահոմա Սիթիում դաշնային կառույցի պայթեցման համար պատասխանատուներից մեկին, հանդես եկավ հայտարարությամբ, թե նույնասեռականների համար նույնպես պետք է մահվան դատավճիռներ կայացնել:

Կանգալի՝ ընդդեմ գեյերի «Թոփեկա» կրոնական կազմակերպությունը ցույցեր էր անցկացնում ՉԻԱՀ-ից մահացածների հուղարկվածության թափոններից ոչ հեռու, ընդ որում ցուցարարների պաստառները վատահեցնում էին. «Գեյերը արժանի են մահվան»: Մյուս կազմակերպությունը՝ «ՄԹԲԵՅԹ», որը ևս միայն տարասեռականների խմբավորում էր (անվանումը վերածնվում է որպես «Բարոյագուրկ և նողկալի նույնասեռական աղբից ազատող ընկերություն»), իրեն միլիոն էր «Ամերիկյան գեյերից մաքրելու» գործին:

1998 թվականին Վայոմինգում երիտասարդ գեյ ուսանող Մեթյու Շեփարդի սպանությունը, որ իրականացրել էին երկու հոգի, տոնվում էր Կանգալի նախարարի կողմից: Նա օգտագործում էր իր վեր կայքը, որպեսզի շնորհակալություն հայտնեք Աստծուն այդ սպանության համար: ԱՄՆ-ում նկատվում է գեյերի հանդեպ բռնության աճ: 1998 թվականին դրա մակարդակը, նախորդ տարվա համեմատ, աճել էր 8%-ով այն դեպքում, երբ հանցագործությունների ընդհանուր մակարդակը նվազել էր 4%-ով: ՉԻԱՀ-ով հիվանդ մարդկանց դեմ ուղղված բռնությունների մակարդակը բարձրացել էր 32%-ով, ընդ որում հանցագործությունները կատարվում էին հիմնականում սպիտակամորթ տղամարդկանց կողմից: Վերջին տարիներին ԱՄՆ-ում հոմոֆոբիայի հողի վրա տեղի են ունենում նույնասեռականների սպանություններ, նրանց հավաքատեղիների ավերումներ:¹ «Միջազգային համայնքում» կազմակերպությունը տեղեկություններ է հրապարակում ԱՄՆ-ի բանտերում լեսբուհիների ու գեյերի վրա բազմաթիվ հարձակումների մասին (ինչպես ֆիզիկական, այնպես էլ սեռական), որոնք հաճախ կատարվում են պահակախմբի սադրանքով կամ մասնակցությամբ:¹³

Սակայն ոչ բոլորն են այդքան արևախուռ. կան նաև ավելի «նորթ» մտեցումներ: Որոշ կազմակերպություններ, օրինակ՝ «Նախկին գեյերի շարժումը», իրենց առջև նպատակ են դնում նույնասեռականներին վերածել տարասեռականների՝ օգտագործելով թերապիայի, ադոքթի մեթոդները, ինչպես նաև երկու-

սը միաժամանակ: Այդ կազմակերպությունները բավականին հարուստ են, նրանք տարբեր երկրներում կենտրոններ ունեն, ուր կարող են հաճախել «նորադարձների» թեկնածուները, նրանք նաև գեյերի հետ աշխատող հոգեբույժների որակավորված խմբեր ունեն: Տարասեռական ամուսնությունը նրանք դիտում են որպես նույնասեռականների փրկության միակ միջոց:

Եվ չնայած նման կազմակերպությունները չեն կարող հպարտանալ հարատև հաջողություններով, բայց դա նրանց չի կանգնեցնում:

«Նախկին գեյերի շարժումը» միջազգային ցանց և ներկայացուցչություններ ունի Հոնկոնգում, Պերուում և Բրազիլիայում: Դրությունը Բրազիլիայում շատ հարցերում նման է ամերիկյանին. այնտեղ գոյություն ունի բարգավաճող գեյ մշակույթ, առանձին նահանգներում՝ որոշ առաջադիմական հակախտրականության օրենքներ, բայց մյուս կողմից էլ՝ առկա է փողոցային բռնությունն ուղղված գեյերի դեմ: Բրազիլիայում է նկատվում աշխարհում ամենաբարձր ցուցանիշն այն հանցագործությունների, որոնց զոհերն են դառնում սեռական փոքրամասնություններին պատկանող մարդիկ: 1999 թվականին այնտեղ հանցագործների ձեռքով զոհ է գնացել 170 նույնասեռականներ: Մարդասպաններից քչերն են պատասխանատվության ենթարկվել: Բռնության ակտերի մեջ են ներքաշված ոստիկանությունն ու պրոֆաշիստական հրոսակները:

Ականջիդ օդ արա...

Տվյալներ կան, որ 2000 թվականի նոյեմբերի 25-ին 8-10 ոստիկաններից բաղկացած մի խումբ, ովքեր չեն եղել իրենց պարտականությունների կատարման մեջ, հարձակվել են մի 39-ամյա տարասեռական տղամարդու՝ Ջեֆրի Լայնոսի վրա: Պատճառն այն է եղել, որ ոստիկանները տեսել են, թե ինչպես է Ջեֆրին գրկում այլ տղամարդու: Հարձակման արդյունքում Ջեֆրին ծանր մարմնական վնասվածքներ են հասցրել, այդ թվում՝ կոտրել քիթն ու վնասել այտոսկրը: Հարձակումը զոհի համար նաև ծանր հոգեբանական հետևանքներ է ունեցել: Սպաներից մեկը ծաղրել է նրան՝ ասելով. «Մա ականջիդ օդ արա, որ դուք, պեղիկներդ, երբեք չեք հաղթել»:

Սպաները, ովքեր մասնակցել են Ջեֆրիի ծեծին, սկզբում ժամանակավորապես հեռացվել են ծառայությունից, սակայն հետո նրանց թույլատրվել է վերադառնալ իրենց պարտականությունների կատարմանը ոստիկանությունում:

Աղբյուրը՝ Crimes of Hate, Conspiracy of Silence, Amnesty International, 2001.

Խորհրդի անդամի սպանությունը

1993 թվականի մարտի 14-ի երեկոյան Բրազիլիայում իր տնից բռնությամբ դուրս է տարվել տեղական խորհրդի անդամ Ռեմիդո Խոսե դոս Մանտոսը: Դեպքը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ նրա նկատմամբ թշնամաբար տրամադրված քաղաքական գործիչներից մեկը հրապարակավ քննադատել է նրան երկսեռականության համար: Ռեմիդոյի գլխատված մարմինը հայտնաբերվել է երկու օր անց, աղբանոցում: Մարմնի վրա եղել են բռնության հետքեր:

Աղբյուրը՝ Breaking of Silence, Amnesty international, 1997.

Աֆրիկյան խուճապ

Հոմոֆոբիայի պատմության մեջ նույնասեռականությունը բազմիցս նկարագրել են որպես հիվանդություն կամ մեղք, հանցանք կամ սովորույթ, և կամ խնդիր, որը հատուկ է ինչ-որ ուրիշ մեկին: Դա ինչ-որ բան է՝ դրսից ներմուծված, որ այժմ ադտոտում է ազգի մաքրությունը: Հատկապես նման մոտեցումը մեր օրերում հատուկ է աֆրիկյան մայրցամաքի երկրներին:

1990 թվականին Ուգանդայի նախագահ Յովերի Մասիվենին փոփոխության ենթարկեց երկրի սահմանադրությունը և քրեական օրենսգրքը, ըստ որոնց «անբնական սեռականության» համար պատիժն ավելի դաժանացավ. 14 տարի ազատազրկման փոխարեն այժմ հասնում էր ցմահ բանտարկություն: 1994 թվականին նա հայտարարեց, որ իր կառավարությունը պետք է կրակի յուրաքանչյուրի վրա, ով երկիր է բերում նույնասեռականության անբնական փորձը: 1999 թվականին նա ևս մեկ անգամ նշեց, որ բոլոր նույնասեռականները պետք է ձերբակալվեն և դատվեն: Քենիայի նախագահ Գանիել Արապ Մոյն ասաց. «Նույնասեռականությունը դեմ է աֆրիկյան նորմերին և ավանդույթներին»: Ջիմբաբվեի վարչապետ Ֆեդերիկ Չիլուբի համար այն «խորագույն անառակության ցուցանիշ է»: «Նամիբիայի խնդուն /վարդագույն/ կոալիցիա» գեյերի խմբի հայտնվելուն ի պատասխան՝ երկրի նախագահ Սեմ Նուժոման 1996 թվականի դեկտեմբերին կայացած կանանց համաժողովում ասաց. «Նույնասեռականությունը պետք է դատապարտվի և պետք է մերժվի մեր հասարակության կողմից»: 2001 թվականին նա խոսքից անցավ գործի և հրամայեց ոստիկանությանը ձերբակալել, բանտ մատեցնել և երկրից արտաքսել գեյերին և լեսբուհիներին: Նրանց «վերացմանը» կողմ հանդես եկավ նաև ներքին գործերի նախարար Ջերրի Եկանդոն:

Նման հայտարարությունները, որոնք արվում են մեր օրերում, ինչպես նաև բռնության ակտերը, որոնք հաջորդում են դրանց, ցույց են տալիս, որ հոմոֆոբիան կենդանի է և նախկինից ավելի մեծ սպառնալիք է սեռական փոքրամասնությունների համար:

«Միջազգային համաձայնում» կազմակերպության նյութերում ասվում է. «Ողջ աշխարհում լեսբուհիներին, գեյերին, երկսեռականներին և փոխգեղեցիկներին բանտ են մատեցնում համաձայն օրենքների, որոնք կանոնակարգում են այն, ինչը կատարվում է ննջասենյակներում, և որոնք համբույրը վերածում են հանցանքի: Նրանց ենթարկում են կտտանքների, որպեսզի կորզեն «չեղվածության» խոստովանություններ և բռնաբարում են, որպեսզի «բուժեն»: Նրանց սպանում են սափրագլուխների հրոսակները այն հասարակություններում, որտեղ նույնասեռականներին վերաբերվում են որպես տակաճներին»:¹³

Կտտանքներ Ուգանդայում

«Նրանք ասացին՝ մենք ուզում ենք քեզ ինչ-որ բան ցույց տալ: Նրանք պատռեցին իմ հագուստը և բռնաբարեցին ինձ: Ես հիշում եմ, որ ինձ հասցրին բռնաբարել երկուսը, իսկ հետո ես կորցրի գիտակցությունս»:

Քրիստինան ձերբակալվել էր նրա համար, որ նույնասեռական էր, «հանցագործություն», որի համար Ուգանդայում ցմահ բանտարկություն է հասնում: Նրա

հանդեպ կտտանքներ էին կիրառում գաղտնի կենտրոնում, ուր պահում էին բան-տարկյալներին: Ոստիկանները մերկացնում էին նրան, ծեծում, սպառնում բռնաբարության: Հետո նրան մենակ էին թողել երեք սղամարդու հետ, ովքեր նրան բռնաբարել էին: Նա և նրա երեք գեյ ընկերները, որ 1998 թվականին մարդկանց իրավունքների համար պայքարող խումբ էին կազմել, ձերբակալվել էին նախագահ Մասիվենիի հրամանից հետո /ձերբակալել նույնասեռականներին/: Նրանց ենթարկել էին ֆիզիկական և սեռական կտտանքների: Երկու շաբաթից նրանց բաց էին թողել, և նրանք փախել էին երկրից:

Աղբյուրը՝ Crimes of Hate, Conspiracy of Silence, Amnesty International, 2001.

Որտեղից է գալիս հոմոֆոբիան

Հոմոֆոբիայի պատմությունը վկայում է այն անթիվ փորձանքների մասին, որոնք թափվել են տարասեռ օրինաչափությունից շեղվածների գլխին: Նույնասեռականներին անվանում են մեղսագործներ, հանցագործներ, ալլասերվածներ, հիվանդներ, վարակիչներ, ոչ հայրենասերներ: Նրանք ժանտախտ, թույն են բերում և սպառնում ընտանիքին, պետությանը, բնական կարգին և, առհասարակ, մարդկային գոյությանը: Մարդկային հասարակությունը հարուստ է տարատեսակ մշտնջենական նախապաշարմունքներով, սակայն դրանցից քչերը նույնքան կայուն ազդեցություն ունեն մարդկանց բանական մտածողության վրա: Էլիզաբեթ Յանգ-Բրույեիլն իր «Նախապաշարմունքների կազմախտությունը» աշխատության մեջ քննում է այնպիսի հիմնական նախապաշարմունքներ, ինչպիսիք են կանանց «երկրորդական լինելը», ցեղապաշտությունը, հակասեմիտիզմը և հոմոֆոբիան: Հեղինակն ապացուցում է, որ վերը նշված նախապաշարմունքներն ընկնում են այս կամ այն տեսակի համակցության մեջ՝ սեռում, հիստերիկ կամ նարցիսիսական:¹²

Սեռում նախապաշարմունքների դեպքում, Յանգ-Բրույեիլի նկարագրության համաձայն՝ նրանք դավադիրներ կամ թշնամիներ են, որոնց նպատակն է ավերումը, և, բնականաբար, նրանցից պետք է ազատվել: Հիստերիկ նախապաշարմունքների ժամանակ այն մարդիկ, որոնց դեմ ուղղված են դրանք, բնորոշվում են որպես «օտարականներ, ստորագույններ, սեռականորեն սպառնացողներ»: Նրանք, որոնց հատուկ են նարցիսիսական նախապաշարմունքները, չեն հանդուրժում այն միտքը, որ աշխարհում կան մարդիկ, ում նրանք դուր չեն գալիս: Հեղինակը կարծում է, որ միայն հոմոֆոբիան է ներգրավվում բոլոր երեք տեսակների մեջ, և այս փաստը կարող է օգնել հասկանալու, թե ինչու է հոմոֆոբիան այդպիսի տարածված և կայուն նախապաշարմունք դարձել:

Կան նաև շատ այլ տեսություններ: Ժողովրդական իմաստությունը հայտնում է, որ հոմոֆոբների մեծամասնությունը այն մարդիկ են, ովքեր զայրում են իրենց սեփական թաքուն նույնասեռականությունը, և կա դրա զվարճալի հաստատումը: Իրականում հոմոֆոբիան հատկապես սուր է արտահայտված «մաշո» տղամարդկանց նեղ շրջանում: Նման խմբերում տղամարդիկ գործազնունում են իրենց համերաշխությունը՝ համախմբվելով ընդդեմ «պեդիկների և գոմիկների»: Ֆենոմենը բնորոշ է դեռահասների հրոսակներին, ինչպես նաև ոստիկանական և զինվորական ստորաբաժանումներին:

Բոլոր պատմական շրջաններում հոմոֆոբիան առավելապես ուղղված է եղել տղամարդկանց, քան կանանց դեմ, չնայած դա բնավ չի նշանակում, որ լեսբիությունը ստացել է առավել հասարակական ճանաչում: Ամենից հավանական է, որ տվյալ փաստը կապված է կնոջ պատմականորեն ցածր սոցիալական կարգավիճակի հետ. կանայք հասարակությունում եղել են ավելի քիչ նկատելի, քան տղամարդիկ: Դա պայմանավորված է եղել նաև նրանով, որ իշխում էր սեքսի «ֆալո-սապաշտական» ըմբռնումը, ըստ որի՝ «Ուր չկա առնամուսնի՝ չկա և սեքս»: Երբ կանանց պատժում էին լեսբիական սեռական հարաբերությունների համար, նրանց հանցագործությունը ամենից հաճախ «խաբեություն» էր դիտվում, քանի որ նրանք զավթել են տղամարդու դերն ու արտոնությունները: Այդ են վկայում նաև այն տեղեկությունները, որ լեսբուհիները, ովքեր հարձակումների են ենթարկվում կամ գտնվում են բանտերում, առավել են ենթակա բռնաբարված լինելու ռիսկին տղամարդկանց կողմից, ովքեր ուզում են «նրանց իրենց տեղը ցույց տալ» կամ էլ «փոխել նրանց սեռագույությունը»:¹³

Ամենից հաճախ հոմոֆոբիայի հիմնական պատճառ են անվանում այն, որ նույնասեռականությունն «անբնական» է: Բայց եթե իրոք այդպես է, ապա ինչու աշխարհում այդքան շատ մարդիկ ունեն իրենց համար բնական նույնասեռական հակում և ոչ միայն մեր օրերում, այլև պատմական բոլոր ժամանակներում: Անվիճելի է, դա փոքրամասնության նախապատվությունն է, բայց չէ՞ որ կուսակրոնության մասին էլ կարելի է նույնն ասել:

Պատճառները, որոնք առաջ են քաշվում նույնասեռականների նկատմամբ հետապնդումներն արդարացնելու համար, կարող են անգամ զարմանալի թվալ: Օրինակ, երբ Ման Ֆրանցիսկոյի դեռահասների խմբին, որը հարձակվել էր գեյերի վրա, հարցրին, թե պատճառը որն է, նրանք իրենց գործողություններն այսպես բացատրեցին. «Մեզ դուր է գալիս ադրենալինը, որ զգում ենք հարձակման ժամանակ և այն, որ մենք դա միասին ենք անում»: Նրանք զգում են, որ գեյերի հետապնդումներում իրենք անպատիժ կմնան այն դեպքում, երբ դա չեն մարսի, եթե ծեծեն, ասենք, կանանց կամ մուգ գույնի մաշկով մարդկանց: Նրանք համարում են, որ, «պեդիկներին» ծեծելով, իրենք կարժանանան տարասեռականների հավանությանը: Իսկ նրանցից ոմանք էլ ասում են, որ իրենք առանձնապես դեմ չեն նույնասեռականներին, պարզապես գեյերը հեշտ գոհեր են:

Նման անձնական պատճառները կարող են միանգամայն ճշմարտանման թվալ, սակայն նրանք չեն բացատրում շատ հասարակություններում և մշակույթներում գոյություն ունեցող սեռական բազմազանության դեմ նախապաշարմունքների զանգվածային տարածումը: Նույնասեռականների հանդեպ ատելության մասնատարածումը ուղիղ կապ ունի քաղաքականության հետ: Եվ այս հարցը մենք կդիտարկենք հաջորդ գլխում:

Հետապնդման արդիական ձևերը, որոնց մեր օրերում տարբեր երկրներում պարբերաբար ենթարկվում են սեռական փոքրամասնությունները՝

- անարդարացի ծերբակալում,
- անարդարացի և անբավարար մեղադրանքներ՝ հատկապես դեռահասների հետ սեռական շփումների վերաբերյալ,
- ծեծ, կտտանքներ և բռնաբարություններ,
- հետապնդումներ աշխատանքի վայրում, հեռացումներ,
- ծաղրանք դպրոցներում և այլ վայրերում,
- ներխուժում անձնական կյանք,
- բանտարկություն, տուգանքներ, գանակոծում,
- մահապատիժ:

1. Homophobia, Byrne Fone, Metropolitan, 2000.
2. Hidden from History, Martha Vicinus, George Chauncey, eds, Penguin, 1991.
3. Different Rainbows, Peter Drucker ed, Gay M'n's Press, 2000.
4. Third Sex, Third Gender, Gilbert Herdt ed, essay by Serena Nanda, Zone Books 1993.
5. Cassell's Encyclopedia of Queer Myth, Symbol and Spirit, Randy P Conner et al eds, Cassell, 1997.
6. The Men with the Pink Triangle, Heinz Heger, Gay Men's Press, 1972.
7. The Global Emergence of Gay and Lesbian Politics, Barry D Adam, Jan Willem Duyvendak, Andre Krouel eds, Temple University Press, 1999.
8. 'Sexual politics' Jeffrey Weeks, New Internationalist, November 1989.
9. Amazon to Zami, Monika Reinfelder ed, Cassell, 1996.
10. World Review Pink Paper, London 18 May, 2001.
11. New Internationalist, October 2000.
12. The Anatomy of Prejudices, Elisabeth Young-Bruehl, Harvard University Press, 1996.
13. Crimes of Hate, Conspiracy of Silence, Amnesty International, 2001.
14. Assault of Gay America, Karen Franklin, 2000 www.pbs.org.
15. Sister Outsider: Essay and Speeches, Audre Lorde, The Crossing Press, 1984.

5. ՄԵՌԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ...

քաղաքական դիմոկրատներ...

ձախակողմյաններ և աջակողմյաններ...

ընտանեկան արժեքներ...

լավագույն օրագվեր... գեյերի կյանքի ոճը...

սեռի հարցեր... քաղաքական բազմակարծություն...

նոր կուսակցություններ, բազմազանության նոր տեսակներ...

Բրիտանացի պահպանողական բարոնուհի Յանգի և Ջիմբարվեի ազատագրական շարժման առաջնորդ մարքսիստ Ռոբերտ Մուգաբեի միջև ընդհանրությունները շատ չեն, բացի այն, որ նրանք կիսում են նույն հայացքները նույնա-

սեռականության վերաբերյալ: Նրանց կարծիքով դա ինչ-որ բան է, որը պետք է արժանանա արհամարհանքի, մերժվի, և չպետք է թույլ տալ, որ այն տարածվի: Մակայն այդ դեպքում, սոցիալական պատմաբան Ջեֆրի Վիքսի խոսքերով, նույնասեռականությունը չի կարող պատկանել որոշակի քաղաքական ուղղվածության: Իր քաղաքական և սոցիալական պատկանելության տեսակետից այն չի կարող դասվել ո՛չ ձախ, ո՛չ էլ աջ թևին:

Նույնասեռականների իրավահավասարությանը կողմ ակտիվիստների մեծամասնությունը, այդ թվում նաև շարժման պիոներները՝ Ուլրիխը և Քարփենբերը, իրենց քաղաքական հայացքներով հարում էին սոցիալիստներին: Մակայն ձախերի ավանդական վերաբերմունքը նույնասեռականների նկատմամբ հիմնականում խիստ բացասական էր: Ե՛վ ձախերը, և՛ աջերը պաշտոնապես և սահմանադրորեն դեմ էին ելույթ ունենում նույնասեռ հարաբերություններին, զրկում էին սեռական փոքրամասնություններին իրենց քաղաքացիական իրավունքներից, պահանջում էին սեռականության հսկողություն և նույնասեռականների հետապնդումներ: Այդպես էին վարվում և՛ Հիտլերը, և՛ Ստալինը, և՛ Կաստրոն, և՛ Թեոչերը:

Ինչո՞ւ իշխող վարչակարգը, անկախ քաղաքական երանգավորումից, պետք է նման կերպ ներխուժի չափահաս քաղաքացիների սեռական կյանք: Դա ունի սոցիալ-հոգեբանական բացատրություն. հասարակության միասնականությունը ինչ-որ չափով կախված է նաև «սեռականության զսպումից» (Ֆրեյդի լեզվով) կամ էլ դրա «սանձահարումից» (բարոյական իրավունքի լեզվով):

Եթե համաձայնե՞նք այս տեսակետին, սեռական վարքի որոշ ձևեր կհամարվեն հակասոցիալական և պետք է մերժվեն, որպեսզի չսպառնան սոցիալական կարգին: Այդպիսին են նրանց փաստարկները, ովքեր կուզենային նույնասեռականությունը հայտարարել անօրեն, որովհետև նրանք դա սպառնալիք են համարում ընտանիքին (ավելի ճիշտ, նրան, ինչը նրանք հասկանում են «ընտանիք» բառի տակ):

Այդպիսին է բարոնուհի Յանգի՝ Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի անդամի կարծիքը: Բարոնուհուն հաջողվեց լորդերի պալատին համոզել, որ պահպանվի 28 հոդվածը, որը պետության կողմից ֆինանսավորվող դպրոցներում և այլ տեղական հաստատություններում նույնասեռականությանը վերաբերող ցանկացած դրական բանավեճ (ինչը դիտվում էր որպես գովազդ) օրինազանցություն էր համարում:

Ընտանիքներ

Ընտանիքի գաղափարախոսությունը միշտ էլ եղել է այն հիմքը, որը միավորել է նույնասեռականների դեմ հանդես եկող կազմակերպություններին, հատկապես ԱՄՆ-ում և Բրիտանիայում: Նման կազմակերպությունների անվանումները հաստատում են վերոնշյալը, ինչպես օրինակ՝ «Ֆոկուս ընտանիքի վրա» կամ «Ընտանիքի հետազոտման ինստիտուտ»: Վերջինիս հիմնադիր Պատլ Կամերոնը նույնասեռականության նկատմամբ իր հետապնդումներն արդարացնում է հետևյալ կերպ. «Եթե ամենը, ինչը դուք ուզում եք, լավագույն օրագվում է հնարավորներից, ապա նույնասեռականությունը չափազանց հրապուրիչ է, որպեսզի նրան դիմադրես: Մեքսը ամուսնության մեջ սովորաբար ձանձրալի ավարտ է ունենում»:²

Կամերոնը և նրա մնամները համարում են, որ ընտանիքի ապագան վտանգված են: Վտանգի տակ է նաև ծնելիությունն առհասարակ: Չգիտես ինչու նրանք մոռանում են, որ ծնելիության մակարդակի վրա խորապես ազդում են հակաբեղմնավորիչներն ու հղիությունը կանխող բազմաթիվ այլ մեթոդները: Բոլոր սոցիալական հիվանդությունների համար սկսում են մեղադրել տարասեռ բջջի՝ ընտանիքի անկումը, և նույնասեռականները սոցիալական անպատասխանատվության կրողներ են դառնում այդ ինստիտուտից «ժրածարվելու» պատճառով:

Դա կարող է արտասովոր թվալ այն նույնասեռականների համար, ովքեր ապրում են գույգերով, կազմում ընտանիքներ: Հնարավոր է, նման ընտանիքները չեն պատկանում ավանդական ձևանմուշներին, բայց չէ՞ որ դրանց չեն պատկանում նաև տարասեռական ընտանիքներից շատ շատերը: Կարելի է նաև բանավիճել և ապացուցել, որ նույնասեռականությունն իրականում գորեղացնում է ընտանիքը՝ ազատելով որոշ չափահաս մարդկանց իրենց մեջ երեխա կրելու, հասունացնելու հոգսից և դրանով իսկ ավելացնելով նրանց քանակը, ովքեր կարող են խնամել երեխաներին:

Բայց, հնարավոր է, խնդրի էությունը ոչ այնքան ընտանիքի մեջ է, որքան իշխանության, այն բանի, թե ում է այն պատկանում: Ֆեմինիստտիկները ցույց տվեցին, թե որքանով է ընտանիքի գաղափարախոսությունը՝ սեռերի դերերի իր հստակ տարաբաժանումով, հիմք դառնում հայրիշխանության համար: Սոցիալական ֆեմինիստտիկները դրան ավելացրին այն, որ ընտանիքի գաղափարախոսությունը նաև կապիտալիզմի հիմքն է:

Տարբեր ընտանիքներ

«Ես երկու մայրիկ ունեմ, իսկ ուրիշ երեխաներ՝ միայն մեկը: Ես գզում եմ, որ տարբեր եմ բոլորից: Ես չեմ ասում իմ բոլոր ընկերներին, որ ունեմ երկու մայրիկ, բայց նրանք, ովքեր գիտեն, կարծում են, որ դա հրաշալի է: Ես դպրոցում ուրիշ երեխաներին իմ երկու մայրիկների մասին չեմ պատմում, որովհետև մտածում եմ, որ նրանք ինձ կնախանձեն: Երկու մայրիկն ավելի լավ է, քան մեկը»:

Վեցամյա երեխայի հարցազրույցից, աղբյուրը՝ Valued Families, by Lynne Harne and Rights of Women, The Women's Press, 1997.

Սեռական վերահսկողության քաղաքականությունը

Միանգամայն ակնհայտ է, որ ընտանիքն օգտագործվում է տարբեր քաղաքական նպատակներով: Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում 1950-ականների հետպատերազմյան հայրիշխանության հաստատումը տնտեսապես անկայի, աշխատող կանանց վերածեց տնային տնտեսուհիների և ճնշեց մինչպատերազմյան տարիներին ձևավորվող գեյերի և լեսբուհիների կյանքը: Ընտանիքը դարձավ անկյունաքար, և կնոջը հասնում էր մոր, տնտեսուհու և վաստակող ամուսնուն քաջալերող կնոջ դերը: 80-ականների ընթացքում, միջուկային սպառազինության մրցավազքի պայմաններում սկսվեց «ընտանեկան արժեքների» քարոզչությունը, և հոմոֆոբիան սկսվեց օգտագործվել որպես գաղափարախոսական գեյեր:

Դա խուճապի և ապագայի հանդեպ անվստահության ժամանակաշրջան էր: Միջուկային հակամարտությունը կարող էր բերել փոխադարձ ոչնչացման,

սկսվեց ՉԻԱՀ-ի համաճարակը: Այդ ֆոնի վրա ընտանիքը դիտվում էր որպես ավանդական հարատև արժեքների և ազգային անվտանգության հուսալի դրախտ, իսկ նույնասեռականությունը՝ վտանգավոր դժոխք:

Եվ այժմ էլ շատ մարդիկ համարում են, որ նույնասեռականությունն սպառնում է ոչնչացնել ընտանիքը՝ «դրախտը մեր դաժան աշխարհում» (ինչպես արձագանքեց այս ինստիտուտի մասին կանադացի սոցիոլոգ Բերի Ադամը: Բայց նա նաև նշեց, որ շատ մարդիկ, պատկանելով սեռական փոքրամասնություններին, «քվեարկում են ոտքերով»՝ հեռանալով ընտանիքներից, որոնք նրանց չեն բավարարում, ուր նրանց վիրավորանքով և ճնշմամբ են վերաբերվում, որպեսզի հնարավորություն ունենան «ստեղծելու իրենց սեփական դրախտը»:³

Եվ իրոք, շատերի համար ավանդական ընտանիքն իր արժեքներով կարող է բավական անբարյալացական վայր լինել: Էկվադորում հակախտրականության օրենսդրության բազմաթիվ արժանիքներից մեկն էլ այն է (ակտիվիստ Իրեն Լեոնի խոսքերով), որ եթե ինչ-որ մեկը փորձի կնոջից խլել իր երեխային այն բանի համար, որ նա լեսբուհի է, ապա կինն այժմ հնարավորություն ունի օրենքով բողոքարկելու և պաշտպանելու իր սահմանադրական իրավունքը:⁵

Ընտանեկան արժեքներ

1995 թվականին Ռուսաստանում լեսբուհի Իրինայի քույրերը սկսել էին պարտադրել նրան հրաժարվել իր որդու խնամակալությունից և դիմել հոգեբուժական օգնության նույնասեռականությունից «բուժվելու» համար: Նրա մայրը սպառնացել էր, որ եթե Իրինան չհնազանդվի, ինքը իշխանություններին կհայտնի նրա սեռական կողմնորոշվածության մասին: Նրա ծնողները մասնավոր հետաքննություն էին նախաձեռնել: Վարձված խուզարկուները փորձել են շանտաժի ենթարկել Իրինային և նրա գույքը կերտուհու, իբր թե իրենց մոտ ունեցած նրանց սեքսով զբաղվելու տեսագրությանը: Հետո մասնավոր խուզարկուները, որոնց վարձել էին Իրինայի ծնողները, առևանգել են աղջկան՝ սպառնալով սառը զենքով և բռնաբարել նրան: Իրինան բռնաբարության մասին ոստիկանություն չի հայտնել՝ դա անիմաստ համարելով: Դրա փոխարեն նա լքել է երկիրը՝ ապաստան խնդրելով ԱՄՆ-ում:

Գլոբալիզացված սպառողական ժամանակաշրջանի ընտանիքը

Միևնույն ժամանակ տարասեռ ընտանիքը շարունակում է օգտագործվել որպես կապիտալիզմի շինարարական աղյուսաքար, բայց այժմ սա արդեն գլոբալիզացված սպառողական կապիտալիզմն է:

Ինդոնեզիայում կատարված հետազոտությունների ժամանակ մարդաբան Էվելին Բլեքվուդը նկատեց՝ որքան երկիրն առաջ է ընթանում դեպի գլոբալիզացված շուկա տանող ուղիով, այնքան քարոզչությունն ավելի ու ավելի է ուշադրություն դարձնում տարասեռականության որոշակի ձևին: «Այն շեշտադրումը, որն արվում է տարասեռ ամուսնության և ընտանիքի վրա, թույլ է տալիս ենթադրել, որ տարասեռականությունն ակտիվ քարոզվում է ՉԼՄ-ների և բազմազգային կորպորացիաների միջոցով, - ասում է նա: - Նման քարոզչության հիմնական նպատակը կանայք են: Հեռուստատեսությանը և ամսագրերում հաճախ կարելի է հանդիպել մեղմ, գրավիչ

տնային տնտեսուհիների կերպարների: Գովազդները նրանց նորաձև հագուստների տարափ են առաջարկում, առողջությանը և մաշկին հետևելու միջոցներ, որպեսզի նրանց հաջողակ կլին դարձնեն: Նման գովազդային արշավանքի մեջ են ներգրավված խոշորագույն ֆիրմաներ: Կանանց անկախությունը չի խրախուսվում: «Կանայք, որոնց ցույց են տալիս «Սիներտոն» սերիայը, մեծ մասամբ զգացմունքային և հնազանդ են, նրանք ի վիճակի չեն լուծելու սեփական խնդիրները: Գերկանացիության և մայրության կարևորության շեշտադրումը գորեղացնում է կոշտ պատնեշները սեռերի միջև: Այս ամենի ենթատեքստն է. կնոջ ազգային և կրոնական պարտքն է ամուսնանալ տարասեռ ամուսնությանը և պահպանել կանացիությունը»⁴

Եվ զարմանալի չէ, որ բոլոր այն կանայք, ովքեր չեն ներգրավվում նման ծայրահեղ հայրիշխանական, տղամարդուն ենթարկվող կնոջ ձևանմուշի մեջ, իրենց բոլորովին կլին չեն համարում: Նրանք դառնում են փոխգեներացի միջավայրից վտարված անձինք (tombos), ընդունում են արական սեռի անուններ և նույնակալանացվում որպես այլ կանանց հետ սեռական հարաբերություններ ունեցող կին:

Այն, որ կանայք կարող են լիակատար հուզական և սեռական բավարարվածություն գտնել իրար հետ, պարզ և իրական վտանգ է շատ տարասեռական տղամարդկանց համար: Տեսակետը, որին կողմնակից են լեքսուի-ֆեմինիստուհիները, որոնց սեռական կողմնորոշվածությունը տղամարդկանց ճնշմանն ուղղված տրամաբանական պատասխանն է, կարծես թե հաստատում է պահպանողականների վախը, որ նույնասեռականությունը խախտում է սեռերի ավանդական դերերը: Եվ եթե տղամարդիկ մտնում են սեռական հարաբերությունների մեջ մեկը մյուսի հետ, ապա այդ փաստը նույնպես ենթադրում է, որ գոյություն ունեն հուզական և սեռական կյանքի կազմակերպման ուղիներ՝ տարբերվող նրանցից, ովքեր հավանության են արժանանում կրոնի և պետության կողմից:

Պետության ու կրոնի հավանությունը և նրանց միջև կապերը հստակորեն երևում են ժամանակակից աշխարհում: Պատահական չէ, որ ԱՄՆ-ում 20 մահանգներ, ուր նույնասեռականությունն անօրեն են համարում, հիմնականում տեղակայված են այսպես կոչված Բիբլիական գոտու երկայնքով: Այստեղ նույնասեռականության վրա հարձակվող քաղաքական գործիչները, որպեսզի արդարացում գտնեն իրենց նախապաշարմունքների համար, դիմում են կրոնին՝ լինի դա քրիստոնեությունը, հինդուիզմը, թե իսլամը:

Երկրներում, ուր ազդեցություն ունի իսլամական ֆունդամենտալիզմը, պետության և կրոնի միջև կապն ավելի հստակ է արտահայտված: Հինգ երկրներում, որտեղ մահապատիժ է սահմանվում նույնասեռական կապերի համար, հմտորեն օգտվում են շիրիաթի օրենքներից (կամ ավանդական իսլամական իրավունքից): Մեր օրերում 26 երկրում, և դրանք մեծ մասամբ աշխարհի մահմեդական երկրներն են, նույնասեռականությունն արգելված է օրենքով:

Անիսա Հեյլեն՝ «Բսլամի օրենքներով երկրներում ապրող կանանց ընկերակցություն» կազմակերպությունից, ֆունդամենտալիստներ է համարում ոչ թե նրանց, ովքեր ձգտում են վերադառնալ ցանկացած կրոնի «հիմքին», այլ նրանց, ովքեր «ծայրահեղ աջ քաղաքական ուժ են և որոնց նպատակն է հասնել քաղաքական իշխանության կամ հաստատվել քաղաքական բեմահարթակում

կրոնի ու կրոնական հավատքների աճաբարության, ինչպես նաև մշակույթի վրա հենված էթնիկ նույնականացման միջոցով»⁵

Կրոնական ծայրահեղականության առաջնորդներն ու նրանց հետևորդները սեռական փոքրամասնություններին իրենց թիրախ են համարում, և առաջին հերթին՝ կանանց: «Նույն այդ հին ճոռնաբանությունը, շարունակում է Անիսա Հեյլեն,- օգտագործվում է, որպեսզի արդարացվեն ճնշումները ֆեմինիստուհիների և «սխալ» կանանց դեմ, որոնց պարբերաբար կշտամբում են որպես ոչ մահմեդականների, այլ որպես մայրենի մշակույթի դեմ հանդես եկողների: Եվ բռնության արդարացման ժամանակ, օրենսդրական մակարդակի վրա, օգտագործվում են կրոնական, ազգային և մշակութային ձևանմուշներ»:

Կրոնական և քաղաքական առաջնորդները կարող են հոմոֆոբիան որպես զենք օգտագործել՝ տնտեսական ճգնաժամից կամ քաղաքական հակասություններից ուշադրությունը շեղելու նպատակով: Հոմոֆոբիան և անբարյացակամության դրսևորումները փոխգեներացիների նկատմամբ աճում են այն վայրերում, ուր տեղական քաղաքականության հարցերը մեծ մասամբ իրենց վրա են կրում գորեղացող ֆունդամենտալիստական ուժերի ազդեցությունը՝ լինի դա քրիստոնեական, հինդուիստական, թե մահմեդական:

Հեյլեն հիշում է, որ իսլամական ֆունդամենտալիստների առաջին գոհերից մեկն Ալժիրում դարձավ զեյ պոետ Ժան Մենակը, ով սպանվեց 1980-ականների սկզբին: Ալժիրում քարկոծվել է նաև Օուս Ալին՝ այրի մի կին: Նա մեղադրվում էր հակաիսլամական սեռական կապեր ունենալու համար: Նրա տունը ամբողջովին այրել են 1989 թվականին, ընդ որում՝ հրդեհի ժամանակ մահացել է նրա կրտսեր որդին:

Պատճառներից մեկը, թե ինչու սեռականության հարցերը նման խիստ ուշադրություն են գրավում ցանկացած կրոնի ֆունդամենտալիստական ուժերի կողմից, այն է, որ ինքնուրույն որոշումներ ընդունող մարդկանց օրինակը չափազանց լուրջ մարտահրավեր է ֆունդամենտալիզմին: Անկախությունը, և հատկապես կանանց անկախությունը, սպառնալիք է բռնատիրականիզմին և նահապետական վերահսկողությանը:

Բացարձակ միապետությունն ընդդեմ բազմազանությանը

Ջեֆրի Վիքսի խոսքերով՝ նույնասեռականությունն ինքնին կարող է նաև իրական վտանգ չներկայացնել արդեն հաստատված սոցիալական կարգերին և ռեժիմներին: Չէ՞ որ տարբեր գերպահպանողական վարչակարգեր հանդուրժում են նույնասեռական դրսևորումները, եթե դրանք գաղտնի են մնում: Իրական վտանգը երևան է գալիս այն ժամանակ, երբ սեռական փոքրամասնությունների ակտիվիստները դառնում են այլընտրանքային կենսակերպի մաս: «Երբ մարդիկ սատարում են սեռական բազմազանության գաղափարը, - բացատրում է Վիքսը, - դա ենթադրում է նաև աջակցում սոցիալական և քաղաքական բազմազանությանը: Երբ նրանք պնդում են իրենց սեռական նույնականացման մասին, երբ նրանք պաշտպանում են իրենց պատկանելությունը սոցիալական շարժումներին և միություններին՝ կազմավորված ըստ իրենց սեռական նախապատվությունների, նրանք դրանով իսկ քաղաքական հայտարարություններ են անում:

Այդժամ նույնասեռականությունը դառնում է ինչ-որ ավելի մեծ բան, քան ուղղակի անհատական քնահաճույք կամ անհատական ընտրություն՝ մարտահրավեր նետելով բոլոր տեսակի բացարձակ արժեքներին»:¹

Ֆունդամենտալիստները և նրանց հանցակից աջ թևի գործիչները մարտահրավեր են համարում նաև գեյերի կենսակերպը, որը հակաուղղված է ընտանիքի և կրոնի վրա ստեղծված նրանց արժեքների համակարգին: Մեռական փոքրամասնություններին պետք է վերադարձնել նորմալին՝ տարատես ձևանմուշին: Եվ այս ամենը, ինչպես նրանք են ասում, պետք է ամել հասարակության և ընտանիքի շահերից ելնելով:

Ողջ աշխարհում մենք բազմազանության և հավասարության դեմ կռալիցիաների ձևավորում ենք տեսնում: Ծայրահեղականության առաջնորդները և տարաբնույթ քաղաքական ու կրոնական բռնատիրական միտումները միավորում են իրենց ուժերը, որպեսզի դիմադրեն սեռականության ազատ դրսևորման իրավունքին: Միավորվելով՝ ֆունդամենտալիստները կարող են ազդել միջազգային հարցերի վրա:

Նոր կուսակցություններ, նոր բազմազանություններ

Մակայն գոյություն ունեն նաև հակառակ միտումներ: Ամբողջատիրական ռեժիմների փլուզումը աշխարհի տարբեր մասերում 1980-ականներին որոշակիորեն քաղաքական և մշակութային դաշտ ստեղծեց սեռական բազմազանության համար: Նախկին ԽՍՀՄ-ը բաժանվեց մի շարք նոր ժողովրդավարական հանրապետությունների, որոնցից շատերն այժմ ազատվել են նույնասեռականության համար պատժող օրենսդրության հողվածներից: Բայց դրա հետ մեկտեղ, նախապաշարմունքներն ընդդեմ նույնասեռականության՝ դեռևս ուժեղ են:

Լատինական Ամերիկայի մի քանի երկրներում վերջ դրվեց զինվորական բռնապետության արյունահեղ դարաշրջանին, և հայտնվեցին նոր քաղաքական կուսակցություններ, որոնք շատ ավելի բարեհաճորեն էին վերաբերվում նույնասեռականների իրավունքներին, քան նրանց կոմունիստական և սոցիալիստական նախորդները: Նիկարագուայում սանդինիստները ցույց տվեցին, որ հնարավոր է հակակապիտալիստական քաղաքականությունը միացնել սեռականության հանդեպ ավելի առաջադիմական վերաբերմունքին, և ձախ թևի նոր կուսակցություններից մի քանիսը հետևեցին այդ օրինակին:

Բրազիլիայում «Patrido Trabalhadores» աշխատավորական կուսակցության անդամ Մարթա Միալիսինը գլխավորեց, այսպես կոչված, «ընտանեկան ընկերակցության»՝ նույնասեռ գույզերի քաղաքացիական ամուսնության իրավունքի համար արշավը: 1980-ականներից սկսած գեյերի և լեսբիանների շարժման ակտիվիստները սերտորեն համագործակցում էին այս կուսակցության հետ՝ հավասարության ակցիաներ անցկացնելով բոլոր ուղղություններով: Եվ չնայած նրանց չհաջողվեց վերափոխել Բրազիլիայի սահմանադրությունը, այդուհանդերձ, հակախտրականության օրենսդրությունն ընդունվեց 2 նահանգներում /Մերգիպե և Գրոտո/ և ավելի քան 70 սեռական ինքնակառավարման մարմիններում: Ընտրություններին մասնակցել էին սեռական փոքրամասնություններից թեկնածուներ, նույնիսկ ինչ-որ չափով հասել հաջողության: Այսպես, օրինակ, Կատիյա Տապետին՝ լուրջ և նպատակասլաց մարդու համբավով տեղացի հանրաճանաչ փոխգեները, տեղ ստացավ ընտրական իշխա-

նական մարմիններում Պյատի աղքատ նահանգում:⁶

Արգենտինայում 1991 թվականին կազմավորվեց փոխգեներների առաջին խումբը («Փոխսեռականները՝ հանուն իրավունքների և նույնականացման»): Նրանք անցկացրին սեռական փոքրամասնությունների առաջին ցույցը երկրում, իսկ 1992 թվականին Արգենտինայում առաջին անգամ տեղի ունեցավ գեյերի և լեսբիանների շքերթ: Քաղաքական քարոզարժավ վարող և նույնասեռականներին իրենց իրավունքների համար պայքարի համող խմբակցության ջանքերը մեծ հաջողությամբ պսակվեցին, երբ 1996 թվականին իշխանության փոփոխությունից հետո, Բուենոս Այրեսի տեղական ինքնակառավարման մարմիններում արգելվեց սեռական կողմնորոշվածության հիման վրա խտրականությունը:³

Անգամ Կուբայի վարչակարգը որոշակի հանդուրժողականության նշաններ սկսեց ցուցաբերել՝ հնարավորություն տալով գեյերի և լեսբիանների ընկերակցությանն ավելի նկատելի դառնալ: 1999 թվականին լեսբիանների կենտրոնի բացմանը մասնակցեց մոտ 1200 մարդ: «Ուղղակի շրջանակում տեղադրիք քո անհամաձայնությունը մարքսիստական ուղղափառությանը, և ինչ էլ անես՝ արդեն ճիշտ կլինի», - մեկնաբանում է տնօրեն Լուսիա Կաստրոն:⁶

Այդ ժամանակ Մեծ Բրիտանիայում լեսբոփոստական կուսակցությունը, որը 1997 թվականին եկավ փոխարինելու պահպանողականներին, հետ կանգնեց իր ավանդական անտարբեր-քչնամական վերաբերմունքից նույնասեռականների իրավունքների հանդեպ և կողմ հանդես եկավ տարբեր փոփոխությունների անցկացմանն ու ամուսնական տարիքի հավասարեցմանը: Մակայն 28-րդ հողվածը, որի պահպանման համար իր քարոզարշավն էր անցկացնում բարոնուհի Յանգը, դեռևս չեղյալ չի հայտարարվել:

Որոշ երկրներում «կանաչների» կուսակցությունները, որոնք հանդես են գալիս շրջակա միջավայրի պահպանության համար, հենց սկզբից ընդունեցին հակախտրականության և իրավահավասարության քաղաքականություն: Աշխարհով մեկ սկսեցին կազմավորվել բազմազանությանը կողմնակից տարբեր տեսակի կռալիցիաներ: Երբեմն նման կռալիցիաներն իրենց մեջ ներառում էին նաև այլ փոքրամասնությունների. Կանադայում՝ Քվեբեքի անջատողականները, Իսպանիայում՝ բասկերը: Առաջադիմական աշխատավորական կազմակերպությունները նույնպես դաշնակիցներ դարձան. Կանադայում և ԱՄՆ-ում արհմիությունները կարևոր դեր են խաղում սեռական կողմնորոշվածության պաշտպանության կազմակերպման գործում:³

Ինչպես ցույց են տալիս Էկվադորի և Հարավային Աֆրիկայի վառ օրինակները, ուժերի միավորումը մարդու իրավունքները ներկայացնող այլ ժողովրդավարական խմբերի հետ ամենից արդյունավետ եղանակն է քաղաքականության մեջ և կարող է փոփոխություններ մտցնել անգամ շարժումներում: Ջեֆրի Վիքսի խոսքերով՝ սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը իրավական հասարակության հիմնաքարն է: Ավելի ընդլայնվող սոցիալական, մշակութային և սեռական բազմազանության աշխարհում նման սատարումը մնում է բազմազանությանն ապահովման և ժողովրդավարության չափանիշների հաստատման գլխավոր մեխանիզմը:¹

Լեսբիական Չապատիստա

Մեքսիկայի կաթոլիկ, պահպանողական հասարակությունում, ուր կյանքի բոլոր բնագավառներում գերակշռում են տղամարդիկ, Պատրիա ժիմենեզն անտվոր, քչախոս կին է: Նա ոչ միայն ֆեմինիստուհի և Չապատիստայի ակտիվիստներից մեկն է, այլև Ամերիկայի ազգային ժողովների առաջին բացահայտ լեսբուհի անդամը, ով 1997 թվականին ընտրվեց Ժողովրդավարական հեղափոխական կուսակցության (ԺՀԿ) ձախակենտրոն թևի կողմից: «Ես բարոգարժավ էի վարում, որն առանձնապես ուղղված էր գեյերի և լեսբուհիների ճնշումների դեմ պայքարին: Ես հանդիպումներ և հանրահավաքներ էի անցկացնում տասնյակ քաղաքներում, հաճախում էի մեքսիկական գեյ-բարեր, սեռական փոքրամասնությունների հանդիպման վայրեր՝ ներկայացնելով իմ թեկնածությունը և մարդկանց բանավեճերի հրավիրում»: Նա ասում է, որ գեյերի հարցերը բացահայտ քննարկվում էին Չապատիստա շարժման կողմից, որը հիմնավորված էր Չիապատում:

Կուսակցությանը կարծես թե հաջողվում է բնական ճանապարհով միահյուսել տարբեր քաղաքական թելերը: Ահա թե ինչ է նա ասում գեյ-շքերթների մասին, որը տեղի էր ունենում Տիուսանայում 1998 թվականին. «Այս երթը... նաև բողոք է հոմոֆոբիայի, կնաստյաց և ցեղասպան կառավարությունների դեմ... Ոչ ոք ազատ չի դառնա, մինչև ազատ չդառնան բոլորը»:⁵

1. 'Sexual Politics' Jeffrey Weeks, New Internationalist, November 1989.
2. Global Sex, Robert Altman, Chicago University Press, 2001.
3. The Global Emergence of Gay and Lesbian Politics, Barry D Adam, Jan Willem Duyvendak, Andre Krouel eds, Temple University Press, 1999.
4. New Internationalist, October, 2000.
5. Female Desires, Evelyn Blackwood and Saskia Wieringa eds, Columbia University Press, 1999.
6. Different Rainbows, Peter Drucker ed, Gay Men's Press, 2000.

6.ԿՐՈՆ. ԱՍՏՎԱԾԱՅԻՆԸ ԵՎ ԵՐԿՐԱՅԻՆԸ

Անբաժան եղջերուները... ծիծաղ՝ առանց ամոթի...
բարոյականության հսկումն ու միանձնուհիները...
սուրբ հերմաֆրոդիտները... կրկին Սոդոմ...
Գանա Ինտերնեշենալ...
ինչին են կողմ ֆունդամենտալիստները և գեյերը...
հոգևորականություն. եկեղեցական աստիճանի ստացում և ամուսնություն

«Ես պետք է ոչնչից չամաչեմ, ես ստեղծված եմ ըստ Աստծո պատկերի և նմանության», -երգում էր Բոյ Ջորջն իր «Գռեհկություն և գեղեցկություն» հայտնի այբովի ստեղծագործություններից մեկում՝ մեղմորեն, գուցե և հեզմանքով պաշտպանելով իր կրոնի իրավունքը նրանցից, ովքեր միշտ դա օգտագործել են սեռական փոքրամասնությունների ճնշելու նպատակով: Իսկ ի՞նչ կարող են մեզ պատմել նույնասեռական ցանկությունների վերաբերյալ և փոխգեղեցիկների մա-

սին աշխարհի հիմնական հինգ կրոնները՝ բուդդայականությունը, հինդուիզմը, իսլամը, հուդայականություն և քրիստոնեությունը:

Բուդդիզմ

Աշխարհի բոլոր հիմնական կրոններից բուդդիզմն է ամենից դրականորեն վերաբերվում սեռական բազմազանությանը, չնայած այդ վերաբերմունքը տարբեր է եղել տարբեր մշակույթներում և տարբեր դարաշրջաններում: Հին բուդդայական տեքստերի հավաքածու «Ջակատան»՝ կազմված Հնդկաստանի տարածքում, հիմնականում ցույց է տալիս բարեհաս վերաբերմունքը նույնասեռ մտերմությանը՝ գովերգելով Բուդդայի սիրային փոխհարաբերություններն իր աշակերտ Անանդայի հետ: Տեքստերից մեկում Բուդդան և Անանդան պատկերված են որպես երկու եղջերուներ, որոնք «անբաժան հետևում են միմյանց, արածում և փարվում իրար՝ շատ երջանիկ, գլուխը գլխի, դունչը դնչի, եղջյուրը եղջյուրի»: Մյուս տեքստերում նրանք ներկայացված են որպես երկու գեղեցիկ երիտասարդ եղբայրներ՝ բրահմանների ընտանիքից, ովքեր հրաժարվել են ամուսնանալ, որպեսզի երբեք իրարից չբաժանվեն:

Սակայն մեր թվարկության երրորդ և հինգերորդ հարյուրամյակների միջև ընկած ժամանակահատվածում հնդիկ բուդդայականները սկսեցին պարսավանքով վերաբերվել նույնասեռական մտերմությանը և փոխգեղեցիկությանը դրսևորմանը: Հաստուկ թշնամանք սկսեց դրսևորվել «երրորդ սեռի» կամ փոխգեղեցիկության նույնասեռական տղամարդկանց նկատմամբ, որոնց անվանեցին փանդակաս /pandakas/: Նրանց արգելվում էր վանականություն ընդունել: Եթե բացահայտվում էր, որ նրանք արդեն կուսակրոնություն են ընդունել, ապա նրանց վտարում էին մենաստանից: Այլ նույնասեռական վանականներ նույնպես ենթարկված էին մենաստանից վտարվելու վտանգին: Հնդիկ բուդդայական միանձնուհիներին, որոնք լեսբիական հարաբերությունների մեջ էին, պատժում էին, բայց չէին վտարում մենաստաններից:

Իր հանդուրժողականությամբ ցայտուն տարբերվում էր Չինական բուդդայականությունը: Դա իր հաստատումն է գտել բուդդայական միանձնուհիների շրջանում լեսբիական և փոխգեղեցիկության դրսևորման մասին պատմող տեքստերում: Մոտավորապես 14-րդ և 19-րդ դարերի միջև մի բուդդայական միանձնուհի հիմնել է Տասը բույրերի ընկերակցությունը, որի անդամները չէին ամուսնանում, սակայն կրթոտ լեսբիական հարաբերություններ էին պահպանում: Ընկերակցությունում նաև օրհնվում էին նույնասեռ միությունները: Այս ընկերակցությունը նախատիպ դարձավ հետագա միությունների համար, այդ թվում նաև «Ոսկե խոլորձի» ասոցիացիայի համար (տե՛ս գլուխ 3):

Ճապոնիայում բուդդայականությունը նույնասեռականությունն էլ ավելի հանդուրժողաբար էր ընդունում: Համարվում է, որ նույնասեռական փորձերը վաղ Խեյյան շրջանի (494-1185) Ճապոնիա են «ներմուծվել» 805 թվականին՝ Թանգյան Չինաստանից վերադարձող բուդդայական վանականների միջոցով, չնայած, դրանք իհարկե, Ճապոնիայում գոյություն են ունեցել դեռ դրանից առաջ:

Խեյյան շրջանի ավարտին նույնասեռականությունը հռչակ է ձեռք բերում արիստոկրատների շրջանում՝ հավանաբար, բուդդայական վանականների հետ ավելի ու ավելի սերտ կապերի պատճառով: Հաջորդ 4 հարյուրամյակների ըն-

բացքում բուրձայական հոգևորականներն ավելի գորեղ են արտահայտում իրենց կապվածությունն ու ցանկությունն իրենց սիրելիների հանդեպ: 16-րդ դարի կեսերին, երբ հայր Ֆրանցիս Քսավյեն Ճապոնիա է ժամանում՝ տեղաբնակչությանը քրիստոնյա դարձնելու հույսով, ցնցվում է՝ տեսնելով, թե որքան շատ բուրձայական վանականներ են ներքաշված նույնասեռ հարաբերությունների մեջ: Նա հոմոնեթրոսիզմը անվանում է «ճապոնական մեղք»:

Հայր Քսավյեն որոշում է, որ իր պարտքն է մաքրել Ճապոնիան «սողմնական մեղքից»: Նա գրում է. «Մենք հաճախ ասում ենք բուրձայական վանականներին, որ նրանք չպետք է նման ամոթալի մեղքեր գործեն, բայց ամենը, ինչ մենք ասում ենք, միայն զվարճացնում է նրանց. նրանք ծիծաղում են մեր բառերի վրա, նրանք չեն ամաչում, երբ մենք նախատում ենք նրանց, որ տրվել են նման զագրելի մեղքի»: Հաշվետվություններից մեկը պատմում է, թե ինչպես մի խումբ երիտասարդներ նրան և այլ քարոզիչների քարկոծել են, երբ նրանք գրոսնելիա են եղել Յամագուչիի փողոցներով՝ միաժամանակ գոռալով. «Ախ, այդ դո՞ւք էիք արգելում սողմնիան»:

Մի ուրիշ անգամ, երբ հայր Քսավյեն իր ընկերակիցների հետ այցելել է Ֆուկուոակա քաղաքում գտնվող Մոֆույուչի Չեն-շու մենաստան, սկզբում բուրձայական վանականները շատ ջերմորեն են վերաբերվել հյուրերին: Սակայն, երբ Քսավյեն սկսել է մեծախոսել այն դժբախտությունների մասին, որ բերում է սողմնիան, մի քանի վանականներ սկսել են ծիծաղել, իսկ մյուսները, որոնց այդքան էլ չեն զվարճացրել հյուրերի խոսքերը, խնդրել են քրիստոնյա քարոզիչներին հեռանալ մենաստանից:

Տիբեթյան բուրձայականության 4 ավանդույթներից հոմոնեթրոսիզմի հետ գուցե գորղվում է Գելուգ /Գելին գլխարկ/ ուղղությունը: Կանոններով վանականներին արգելվում էր տարասեռ հարաբերությունների մեջ մտնել, ինչն իր դերն ունեցավ մենաստաններում նույնասեռ հարաբերությունների լայն տարածման հարցում: Շատ գիտնականներ, այդ թվում նաև Հեյնրիչ Հարարն ու Ին Շաֆերը, ապացուցում են, որ Տիբեթի մենաստաններից նույնասեռ հարաբերությունները բնորոշ են եղել ոչ միայն Գելուգ վանականներին: Սակայն մեզ գրեթե ոչինչ հայտնի չէ Տիբեթի բուրձայականների շրջանում լեսբիության, երկսեռականության, փոխզենդերային դրսևորումների մասին:

Վերջին տարիներին բուրձայականությունը մեծ հռչակ ունի Արևմուտքի սեռական փոքրամասնությունների շրջանում: Հիմնվել են գեյ ու լեսբոսի բուրձայականների մեծաքանակ խմբեր, այդ թվում ՍՕԳ-Ս բուրձայական ծրագիրը, որն աշխատում է Լոս Անջելեսում ՄԻԱՎ վարակի տարածման դեմ:

Բուրձայի ուսմունքի մեջ հատուկ ուշադրություն է դարձվում հետևյալ գաղափարին՝ տանջանքը պայմանավորված է նրանով, որ մարդիկ ընդունակ չեն կյանքն ընդունել այնպիսին, ինչպիսին այն կա:

Հինդուիզմ

Ժամանակակից հինդուիզմը բավականին թշնամաբար է տրամադրված նույնասեռականության նկատմամբ: Շիվ Սենան և այլ խմբեր այն կարծիքին են, որ նույնասեռականությունը ո՛չ հինդուիստական, ո՛չ էլ հնդկական երևույթ է, այլ Արևմուտքի ծնունդ է, և որ իրենց պատմությունը, կրոնը և ավանդույթները երբեք չեն

ինացել, թե ինչ է նույնասեռականությունը: Սակայն, ինչպես ցույց են տալիս պատմաբանների հետազոտությունները (այդ թվում՝ Մադաշիվա Ամաբադաս Գնագեի և Ալիանա Գանելուիի), նույնասեռականության և փոխզենդերային դրսևորումները գոյություն են ունեցել նաև հինդուիզմի ավանդույթների շրջանակներում:

Մինչհինդուիստական հնդկական հովտի քաղաքակրթություններն ուսումնասիրող Գիտա Տադանն իր հետազոտություններում ցույց է տալիս, թե ինչպես Հինդուս աստվածուհուն երկրպագելը և սեռական տարատեսակության ընդունումը սկսեց վերածվել հինդուիզմի ավելի նահապետական հավատքների: Միևնույն ժամանակ պահպանվել են ավելի հին վկայություններ, որոնք հաստատում են, օրինակ, հերմաֆրոդիտ և փոխզենդեր աստվածների գոյությունը: Այսպես՝ Արդիանարիշվար աստծուն հաճախ անվանում են առաջին հերմաֆրոդիտ աստվածը:

Դանելուիի հետազոտությունների համաձայն՝ նույնասեռականները, հերմաֆրոդիտներն ու տրանսվեստիտները կարող են դիտարկվել որպես սրբազան էակներ՝ Արդիանարիշվարի «կերպարանքներ»:

Գրող Մինա Կումարն ուսումնասիրել է հետվեդական ուղղափառ գրականության վերաբերմունքը նույնասեռականության նկատմամբ և պարզել, որ այդ տեքստերը լեսբիությունը համարում են անօրեն, անբարոյական և կեղտոտ: Որոշ տեքստեր ամուլներին, նույնասեռականներին, տրանսվեստիտներին և ներքինիներին նույն տերմինով են անվանում՝ նրանց միավորելով մի կարգի մեջ, իսկ տղամարդ նույնասեռականներին համարելով մեղազործներ, որովհետև նրանց սեռական փորձերը որդեծնության չեն բերում: Սակայն նա նաև պարզել է, որ «մշակութային ուղղությունը, որը սերտորեն կապված է ընդունված ավանդույթների հետ, լեսբոսիների ավելի դրական կերպար է ստեղծել»:

Կանադացի օրգանը դիտում են որպես երջանկության անոթ: Բիուբանեշվարի քանդակը պատկերում է ծնկաչոք կնոջ, որի դեմքը թաքնված է կանգնած այլ կնոջ մոտ՝ veneris-ում: Վերջինիս աջ ձեռքի ժեստը վկայում է նրա աստվածային լինելու մասին:²

Հիջրա փոխզենդերներն իրենց դասում են աստվածամայր Բահուչարա Մատային նվիրված հինդուիստական կրոնի աղանդին: Ժամանակակից հիջրաները համարում են, որ իրենց առասպելական նախնիներից մեկը եղել է Արջունան՝ «Մահաբհարատա» էպիկական պոեմի հերոսը: Կատաղի ռազմիկ Արջունան իր կյանքի մի տարին անց է կացնում՝ ծպտվելով «երրորդ սեռի» մարդկանց զգեստներում, ապրելով հարեմում և կանանց սովորեցնելով երգի ու պարի արվեստը: Արջունան ասում է. «Օ՛, երկրի Տիրակալ, ես կդառնամ միջին սեռի մարդ: Օ՛, Տիրակալ, իհարկե, ինձ դժվար է թաքցնել ձեռքերիս աղեղալարի հետքերը: Սակայն ես կփաթաթեմ իմ ձեռքերը ժապավեններով: Ես կլրբեմ աղամանդե ակամջօղեր, դաստակիս կհագցնեմ ապարանջաններ, մազերս կհյուսեմ, կթողնեմ իջնեմ ճակատիս և, օ՛, թագավոր, կդառնամ միջին սեռի մարդ: Իմ անունը կլինի Վրիհանալա»:

Մեր օրերում հնդկական ենթացամաքում գոյություն ունեն մի շարք սեռական փոքրամասնությունների խմբեր, որոնք հատուկ օգտագործում են անուններ՝ կապված ավանդական հնդկական տեսակետների և մշակույթի հետ:

Իսլամ

Իսլամի բջնամությունը նույնասեռական էրոտիզմի հանդեպ ներկայացվում է Սողոմի մասին տեքստերում: Հոմոէրոտիզմն, առհասարակ, իսկ սեռական ակտը՝ մասնավորապես, անվանում են լիուհաթ /liwat/, և նրանց, ովքեր նկատվել են նման դրսևորումներում (հատկապես տղամարդկանց) անվանում են քաում Լոթ /qaum Lot/ կամ Լյուտի /Luti/, այսինքն՝ «Դավտի մարդիկ»: Համարվում է, որ Մուհամեդ մարգարեն ասել է. «Նա, ով անում է այն, ինչ Դավտի մարդիկ էին անում, Աստծո կողմից դատապարտված է... Ոչ մի տղամարդ չպետք է նայի այլ տղամարդու մարմնի ինտիմ մասերին, և ոչ մի կին չպետք է նայի այլ կնոջ մարմնի ինտիմ մասերին»:

«Դուրանը պարզ ասում է այն մասին, որ նույնասեռականությունն անօրեն է, անքնական է, մեղավոր է, տգետ է, հանցավոր է և ծախու», - հայտարարում է աջ քնի «Ջամաատ-յե-Իսլամի» ծայրահեղական պակիստանական քաղաքական կրոնական խմբավորումը:

Սակայն ոչ բոլոր մահմեդականներն են կիսում այս տեսակետը: Ամիսա Հեյլեն առարկում է. «Փաստորեն, Դուրանը շատ մշուշոտ է արտահայտում իր դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ, և դրա համար էլ այդքան շատ են հակասությունները, որպեսզի հասկանալի լինի իսլամի վերաբերմունքը նույնասեռականության նկատմամբ: Ոմանք համարում են, որ իսլամում նույնասեռականությունն «անօրինական է», մյուսներն էլ կարծում են, որ Դուրանը ակնհայտորեն չի դատապարտում այն»:

Դուրանում միակ իրական հիշատակումը նույնասեռականության վերաբերյալ մենք գտնում ենք Սողոմի և Գոմորի մասին գլուխներում: Որոշ մարդիկ, ի սպացույց այն բանի, որ Ալլահը պահանջում է հրաժարվել նույնասեռական փորձերից, մատնանշում են մարգարե Դավտի ժամանակներում Սողոմի և Գոմորի մարդկանց գլխին թափված սարսափելի պատիժը: Մյուսներն առարկում են, թե չի հիշատակվում, որ պատիժը հատկապես նույնասեռականության համար է եղել, այլ ավելի շուտ այն բանի համար, որ Սողոմի մարդիկ «ամեն ինչ չափից դուրս էին անում»: Նրանք համառորեն պնդում են, որ բուն Դուրանում ոչինչ չկա նույնասեռականների դատապարտման մասին, և որ նման դատապարտումը ամենից առաջ բխում է մահմեդական հասարակություններում գերակշռող հոմոֆոբ մշակույթից:

Միջին Արևելքի մինչիսլամական ավանդույթներում առկա է եղել աստվածուհիների, հատկապես Ալ-Լաթի, Ալ-Ռուզայի և Մանաթի պաշտամունքը: Ավանդական ծիսակարգերի արարողությունները հիմնականում վարում էին կին քահանաներն ու փոխգեներ նույնասեռական տղամարդիկ: Իսլամի հաղթական մուտքով ավելի վաղ շրջանի հոգևոր ավանդույթները ճնշվեցին, իսկ դրանց երկրպագուներին իսլամի բերեցին կամ սպանեցին: Կանանց հոգևոր հեղինակությունը ընդհանրապես շատ մեծ անկում ապրեց, իսկ բոլոր նրանք, որոնց նույնասեռական և փոխգեներ համարեցին, դարձան վտարյալ: Այնուամենայնիվ, վերոհիշյալ ավանդույթի դրսևորումները պահպանվել են սուֆիզմի մեջ՝ իսլամական միստիկ ավանդույթներում:

Հարյուրամյակներ շարունակ սուֆիստները հավանվել են նրանց կողմից, ովքեր մահմեդական կրոնի այլ ըմբռնման կողմնակիցներ են եղել, մասնավորապես իրենց միստիկական հայացքների, ինչպես նաև փոխգեներային և հոմոէրոտիկ դրսևորումների որոշ ձևերի ակնհայտ ընդունման պատճառով: Իսլամական տեքս-

տերից մեկը սուֆիստներին անվանում է «սողոմականների ընկերակցություն»:

Իր «Սեռականությունը իսլամում» աշխատության մեջ Աբդելվահաբ Բուուհ-դիբան բացատրում է, որ սուֆիստները նույնպես հետադիմական իսլամական իշխանությունների թիրախ դարձան այն պատճառով, որ համարձակվել էին տղամարդ սիրեցյալին «Աստծո արտացոլանք» անվանել: Նման մարմնավորմանը հավատարյալ «ամենազագրելի սուֆիստական հերետիկոսությունն էր»: Իշխանությունները պայքարում էին նրանց դեմ, ովքեր բացահայտվել էին փոխգեներային կամ հոմոէրոտիկ դրսևորումներում: Նրանց նկատմամբ կիրառվող տարբեր պատժամիջոցներից էին նաև ողջակիզումն ու քարկոծումը: 12-րդ դարի պատմաբան Իբն Աբասի տվյալներով՝ «սողոմականը պետք է ոտքերը վեր ցած նետվի քաղաքի ամենաբարձր շենքից, իսկ հետո քարկոծվի»:⁵ Իսլամական կրոնի որոշ ջատագույններ համարում էին, որ «սողոմիայի համար պատիժները հանդերձալ աշխարհում կլինեն էլ ավելի սարսափելի: Հարության օրը, եթե մեղավոր զուգրն-կերները չմեղանչեն, կվերածնվեն իրար սերտածնած մարմիններում»:

1970-ականներից գեյերի և փոխգեներների համար, ովքեր բնակվում են այնպիսի երկրներում, ուր գերակշռում էր իսլամական ֆունդամենտալիզմը, դրությունը դարձավ առավել ծանր (տե՛ս գլուխ 4): Ֆունդամենտալիստները օգտագործում էին կրոնը նաև ՄԻԱՎ վարակակիրների դեմ: Թուրք իսլամական բժիշկներ Մուստաֆա Մեներն ու Իբրահիմ Գեյիկը ՉԻԱՀ-ն անվանում էին աստվածային մախազոշացում նրանց համար, ովքեր թաղվել են ծախու կյանքի մեջ, և նաև նրանց համար, ովքեր չեն ապրում իսլամի օրենքներով: Այս երկու բժիշկները նաև դատապարտում էին մյուս այն բժիշկներին, ովքեր հավանություն էին տալիս պահպանակների օգտագործմանը ՄԻԱՎ վարակներից պաշտպանվելու համար՝ «փոխանակ հստակ միջոցներ ձեռնարկելն քարոյագուրկ և այլատերված սեռական գործողությունների դեմ»:

Սակայն, վերջին ժամանակներս իսլամական իշխանությունները սկսում են կամաց-կամաց գալ իրենց կրոնի և մշակույթի կողմից նույնասեռական էրոտիզմի և փոխգեներության հանդեպ վերաբերմունքը վերանայելու մտքին: Սա վերաբերում է նաև հասարակ մահմեդականներին: Այսպես, առաջնորդող հոդվածը «Իսլամիկ Կանադա Ռեֆլեքշիոնսիե 1994 թվականի համարում վիճում է այն մասին, որ «չնայած ճիշտ է, որ իսլամի կրոնն արգելում է նույնասեռականություն, բայց դա չի նշանակում, որ գեյերը պետք է դառնան բռնի հանցագործությունների և այլ հետապնդումների զոհեր»:

Տեսակետի նման աստիճանական փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ օրեցօր մեծանում է քանակն այն մահմեդականների, ովքեր բացահայտ հայտնում են իրենց նույնասեռական լինելու մասին: Չնայած սպառնացող իրադրությանը, սեռական փոքրամասնությունները հիմնում են իրենց կազմակերպությունները և ավելի նկատելի են դառնում մահմեդական երկրներում ու ընկերակցություններում: Օրինակ, կրոնական տեքստերի մեկնության շատ հետազոտություններ են անցկացվում, որպեսզի փոխվեն հոմոֆոբ մեկնաբանությունները և համապատասխանաբար՝ թշնամական վերաբերմունքը նույնասեռականների հանդեպ:

Շատ գրողներ, ինչպես Շաիդ Դոսամին, ասում են, որ իսլամը պետք է դի-

տարկվի որպես կենդանի հավատք, որը շարունակում է զարգանալ Մուհամեդ մարգարեի մահից հետո էլ, և, եթե երբևէ բացառապես տարասեռ հարաբերությունների անհրաժեշտությունը կարևոր սոցիալական դեր էր կատարում, ապա այժմ, հավանաբար, հասարակության համար ժամանակն է եկել ընդունել նաև կայուն նույնասեռական հարաբերությունները:³

Մյուս իսլամական հեղինակ Խալիդ Դուրանը համարում է, որ հավատացյալ գեյերի համար գոյություն ունի այլ ճանապարհ, այն է՝ ընդունել սուֆիզմն իր թարիքա /tariqa/, այսինքն՝ ինքնաճանաչման ուղիով իսլամական ավանդական օրենքի՝ շարիյա /shari'a/ ուղու փոխարեն:

Չրուցելով սուրբ մարդկանց հետ

Միջիայում ծնված մահմեդական գեյ ակտիվիստ Օմար Նախասը փորձում է փոխել հասարակության վերաբերմունքը նույնասեռականության նկատմամբ՝ օգտագործելով ուղիղ, մարդասիրական, պակաս աստվածաբանական մոտեցումներ: Նա փորձեր է ձեռնարկում նույնասեռականության թեմայով խոսելու իմաների (կրոնական առաջնորդների) հետ: Առայժմ նրա գործունեության մեծ մասն անցնում է Նիդեռլանդների իսլամական ընկերակցությունում, որտեղ նա ապրում է և աշխատում ԻՕԵՍՈՒՖ կազմակերպությունում, որը նրան տեղեկություններ է տալիս իսլամի և տղամարդկանց ու կանանց նույնասեռականության մասին:

«Նույնասեռականությունը շատ նուրբ ու բարդ թեմա է մահմեդականների համար, ասում է Նախասը, մեծ համբերություն, հարգանք և բառերի զգուշավոր ընտրության հմտություն է պահանջվում, որպեսզի կարողանաս ստիպել մարդկանց գրուցել այդ հարցի շուրջ»:

Նա համարում է, որ եթե հասարակության մեջ գոյություն ունի անհանդուրժողականության բարձր մակարդակ, ապա ոչ մի աստվածաբանական բանավեճ էլ չի օգնի. «Սկզբնապես պետք է հիմնավոր պայմաններ ստեղծել, որպեսզի մարդիկ ըմբռնումով ընդունեն նույնասեռականների նկատմամբ հանդուրժողականության դրսևորման թեմայով բանավեճերը: Եվ այդ պայմանները ճիշտ կլինի առաջին հերթին ստեղծել հենց կրոնի ներսում: Միայն այդ ժամանակ մարդիկ պատրաստակամություն կդրսևորեն այդպիսի բանավեճերը հասկանալու համար»:

Աղբյուրը՝ New internationalist, October, 2000

Հուդայականություն

Հին Կտակարանը բավական պարզ ասում է. «Դուք չպետք է պառկեք տղամարդկանց հետ այնպես, ինչպես կնոջ հետ. դա նողկալի է: Եթե մի տղամարդ պառկում է մյուսի հետ, ինչպես կնոջ հետ, ապա նրանք երկուսն էլ նողկալի արարք են գործում, նրանք պետք է մահվան դատապարտվեն»:

«Կինը չպետք է կրի տղամարդու հագուստ, տղամարդը չպետք է կրի կանացի հագուստ, եթե նրանք դա անում են, ապա նողկալի արարք են գործում ձեր Աստծո դեմ» (Օբսվոլդյան Աստվածաշունչ՝ համառոտ ծանոթագրություններով):

Դարեր շարունակ այս դրվագները՝ աստվածաշնչյան «Լևիտ» (18:22,20:13) և «Երկրորդումն Օրինաց» (22:5) գրքերից ազդեցություն են ունեցել նույնասեռ էրոտիզմի և փոխգեղեցիկների հանդեպ հրեականության վերաբերմունքի վրա: Աստվածաշունչն ուսումնասիրող գիտնականները կարծում են, որ այս պատվի-

րանների միանշանակ խիստ բնույթը բացատրվում է հին իսրայելցիների այն ջանքերով, որոնք ուղղված էին ազատվելու կանանիտներից, ովքեր բնակվում էին նույն հողում մինչև հրեաների գալը: Կանանիտների կրոնի համաձայն՝ սեռական և սեքսուալ տարատեսակությունները գուցորդվում էին կանացի աստվածների պաշտամունքով: Եվ այսպես, կանանիտների կրոնի իսպառ վերացման համար հրեաներին անհրաժեշտ էր արգելել կրոնի հետ կապված էրոտիկ փորձառությունները: Այդ փորձառությունների ամենագլխավոր խորհրդանիշերն էին քահանաները՝ տղամարդիկ (qedeshim) և կանայք (qedeshu), ովքեր աստվածուհի Ասիրատի և նրա աստվածային ամուսին Բաալի «սուրբ պռոնիկներն» էին:

Գրեթե 300 տարի Իսրայելի միապետների կողմից կոշտ արշավանք էր անցկացվում քեղեշիմների և քեղեշտուների դեմ: Մյուսները՝ ավելի հանդուրժող միապետները, քեղեշիմների և քեղեշտուների հնարավորություն էին տալիս ապրել հրեական տաճարներում: Բայց մոտավորապես մ.թ. 600 թվականին նրանց դեմ անցկացվող արշավանքի արդյունքում սուրբ պռոնիկներն արդեն մնացին միայն պատմության մեջ:

Չնայած «Լևիտի» և «Երկրորդումն Օրինացի» պատվիրանների խստությամբ, վերաբերմունքը նույնասեռականության նկատմամբ որոշ չափով մեղմացավ կանանիտների դեմ պայքարի թուլացումով: Նույն սեռի մարդկանց միջև կրքոտ ընկերությունը սկսեց ավելի հանդուրժողաբար ընդունվել և անգամ ողջունվում էր: Նման փոփոխության ապացույցը կարելի է գտնել Դավթի ու Հովնաթանի, ինչպես նաև Հուսի ու Նաումի մասին բիբլիական ասքերում: Ուշ անտիկ շրջանում, սակայն, թշնամական վերաբերմունքը նույնասեռականության նկատմամբ աճեց, ինչին օրինակ է ծառայում մ.թ. առաջին դարում ապրող Ֆիլո Հուդայասի աշխատությունը, որը հատուկ ընդգծում է կապը նույնասեռականության և Սողոմոնի կործանման միջև:

Երկրորդ դարի «Միշնե» ռաբբիական տեքստում ասվում է այն մասին, որ տղամարդկանց միջև սեռական ակտի համար պատիժ է ծառայում նրանց քարկոծումը: Նման դրությունը շարունակում էր գոյություն ունենալ և միջին դարերում: Ուժեղանում էին հետևյալ պատկերացումները. նույնասեռ էրոտիզմի համար տղամարդկանց սպառնում է աստվածային պատիժ վաղ մահվան տեսքով, երկրաշարժերը և արևի խավարումները նույնպես պատիժ են սողոմական մեղքի համար: Կրկին վերադարձավ պատկերացումն այն մասին, որ նույնասեռականությունը կապված է մոգության և կռապաշտության հետ:

17-րդ դարի վերջերին Մոզես Մայնոնիդեսի աշխատությունում հայտնվում են առաջին հրեական գրությունները, որոնք դատապարտում էին հատկապես լեսբիությունը. «Կանանց արգելվում է տրվել լեսբիական հարաբերությունների, բանգի այդպիսին են եղել Եգիպտոսի երկրի փորձերը»: Մակայն հուդայականության ինչպես ներքին, այնպես էլ ժողովրդական բանահյուսության ավանդույթները՝ ձևավորված միջնադարում, վառ արտահայտված ագրեսիվ երանգավորում չունեն սեռական և սեքսուալ տարատեսակ դրսևորումների հանդեպ: Օրինակ, Կաբալան հերմաֆրոդիտության երևույթը բացատրում էր որպես փորձ՝ վերատեղեցվելու Ադամի առաջնային հերմաֆրոդիտային բնույթը: Ժողովրդական բանահյուսությունը բացատրում էր, որ առեղծվածային փոխգեղեցիկային մապաստակը լույս աշխարհ է եկել Նոյյան տապանում, և որ այդ կենդանին ստացել է Արարչի օրհնությունը:

Մեռական փոքրամասնությունների հանդեպ հանդուրժողականության դրսևորումներն իրենց արտացոլումը գտան տղամարկանց հոմոէրոտիկ պոեզիայի վերելքի շրջանում Իսպանիայի հրեա պոետների մոտ: Այստեղ տղամարդ սիրեցյալը հաճախ համեմատվում է աստծո հետ. դա հոգևոր էրոտիկ պոեզիան էր՝ ի հակադրություն աշխարհիկ պարզ ոտանավորների: Ամենահռչակավորները եվրոպական պոետներից, ովքեր գովերգում էին հոմոէրոտիկ սերը 10-12-րդ դարերի միջև ընկած ժամանակահատվածում, եղել են Մոզես իբն Եզրան, Յաշակ բեն Մար-Մաուր, Յոսեֆ իբն Սադիկը, Սամուել իբն Նարգիլահը, Մոդոնոն իբն Գաբրիոլը, Հուդա-հա-Լևին, Աբրահամ իբն Եզրան և Իսահակ իբն Եզրան: Այս հոմոէրոտիկ պոետները հիմնականում նաև կանանց ամուսիններ ու սիրելիներ են եղել և ժամանակակից տերմինով նրանք կոյտարկվելին որպես երկսեռականներ: Հրեաների վտարումով (որոնք մահմեդականների հետ մեղադրվեցին իսպանական կաթոլիկ եկեղեցու կողմից՝ նույնասեռականությունն Իսպանիա «մերմուծելու» համար) 1492 թվականին լուսավորության և բարքերի համեմատաբար ազատության դարաշրջանը մոտեցավ ավարտին: Եվ հաջորդող չորս հարյուրամյակների ընթացքում մենք փաստացի չենք գտնում ոչ մի գրավոր հիշատակում հրեաների կյանքի սեռական և սեքսուալ տարատեսակության վերաբերյալ:

1970-ականներից սկսեցին կազմավորվել նույնասեռական ուղղվածության բազմաթիվ հրեական խմբեր, դրանց թվում գեյերի և լեսբոսների հրեական կազմակերպությունների համաշխարհային վեհաժողովը: Մյուս խմբերը, այդ թվում Ամերիկյան ռաբբիների գերագույն (բարեփոխված) գիտաժողովը և Ռաբբիներ-վերակառուցողների ասոցիացիան, հրեա նույնասեռականներին սատարելու բանաձև ընդունեցին:¹

Դանան և ռաբբիները

Որոշ ուղղափառ հրեաներ դեռևս անթաքույց թշնամանքով են վերաբերվում սեքսուալ և սեռական տարատեսակ դրսևորումներին: Երբ փոխսեռական երգիչ Դանա Ինտերնեշենայը Իսրայելից ընտրվել էր, որպեսզի 1997 թվականին Իսրայելյան ներկայացմի «Եվրատեսիլ» երգի միջազգային մրցույթում և անգամ հաղթեց այդ մրցույթում, Իսրայելի ազդեցիկ ուղղափառ կրոնական առաջնորդները փորձում էին այս պատճառով կասավարության տասպալման միջոցառումներ ձեռնարկել:

«Ես ամաչում եմ,- ասաց «Շասե կրոնական կուսակցության ներկայացուցիչ ռաբբի Շոլոմ Բենիգրին,- որովհետև այն ժամանակ, երբ հրեաների բոլոր սերունդներն աշխարհին դեպի լույսն էին տանում, մենք դեպի խավարն ենք տանում աշխարհը... Աստված դեմ է դրան: Դա հիվանդություն է, որն անհրաժեշտ է բուժել, այլ ոչ թե որպես նորմալ երևույթ ճանաչել պետական մակարդակով»: Սակայն հազարավոր հրեաներ, որոնք Թեյ Ավիվի փողոցներ էին դուրս եկել տոներու Դանայի հաղթանակը, դժվար թե համաձայնեին նման տեսակետի հետ:³

Քրիստոնեություն

Մի քանի տարի առաջ լույս տեսավ «Ի»-ն էլ ասում է իսուր նույնասեռականության վերաբերյալ» վերնագրով մի գիրք: Այս գիրքը կազմված էր մաքուր էջե-

րից: Նազարեթի չիսուսի՝ բարոյական հարցերի և մեղքերի վերաբերյալ բոլոր լայնածավալ մեկնաբանությունների մեջ մենք, ինչպես պարզվում է, չենք կարող նույնասեռականությանը վերաբերող որևէ բառ գտնել:

Այսպիսով, զարմանալի է թվում այն փաստը, որ քրիստոնեության պատմությունը հարուստ է սեռական փոքրամասնությունների հետապնդումների և դատապարտման բազմաթիվ օրինակներով: Այժմ քրիստոնեական կրոնի ուղղափառ ճյուղերն էլ ավելի խանդավառությամբ են կողմ հանդես գալիս գեյերի ու լեսբոսիների դեմ խտրականությանը՝ դա արդարացնելով նրանով, որ նույնասեռականությունը հակասում է քրիստոնեական արժեքներին: Որոշ առավել ծայրահեղական ֆունդամենտալիստական քրիստոնեական ուղղություններ անգամ ասորում են իրենց հետևորդներին՝ նույնասեռականների հանդեպ բռնության ակտեր իրագործելու, մյուսներն էլ ՉԻԱՀ-ը դիտարկում են որպես աստվածային պատժի ակներև նշան՝ այդպիսի մեղքի համար:

Մյն ժամանակ, երբ Հիսուսը լռություն էր պահպանում այս հարցի շուրջ, նույնասեռականության դատապարտման համար անկաշկանդ օգտագործվում էին Պողոս առաքյալի մեկնաբանությունները (1:26-28): Ահա թե ինչ էր ասում Պողոս առաքյալը հեթանոսների վերաբերյալ, ովքեր հրաժարվում էին ճանաչել միակ Աստծուն. «Աստված նրանց նողկալի մտերմությունների հոշոտմանը մատնեց, և անգամ նրանց կանայք փոխում էին իրենց բնական դերը հակաբնականի: Տղամարդիկ, մոռացության մատնելով իրենց իսկական առաքելությունը, այրվում էին հեշտասիրությունից իրար հանդեպ, տղամարդիկ տղամարդկանց հետ այնպիսի բաների էին տրվում, որ անգամ պատկերացնելը դժվար է, այսպես էին նրանք հատուցում միակ Աստծուն չընդունելու սխալի համար» (1:26/28):¹

Ազդեցիկ քրիստոնյա աստվածաբան սբ. Թոմաս Ակվինացու, հեշտասիրության կարգում ներառել է մեղքի չորս հակաբնական տեսակները՝ ձեռնաշարժություն, սեռական ակտ կենդանիների հետ, սեռական ակտ անբնական դիրքում և սեռական հարաբերություն անհամապատասխան սեռի հետ՝ տղամարդը՝ տղամարդու, կինը՝ կնոջ: Ավելի ուշ ժամանակների աստվածաբանները վկայակոչում էին Ակվինասի դասակարգումը, նրանց շարքում և Ժան Գերսոնը, փարիզյան համալսարանի 15-րդ դարի ռեկտորը, որը սեքսը կանանց միջև՝ «գրա համար չնախանշված անոթի մեջ սերմի արձակումը», հավասարապես ներառեց իր «բնության դեմ հանցագործությունների» դասակարգման մեջ:⁵

Լեսբիական սեռականության գիտակցման դեմ պայքարի փորձեր էին ձեռնարկվում առավել ճանաչված մենաստանային ընկերակցություններում: Դեռ 423 թվականին սուրբ Ավգուստինը զգուշացնում էր իր կուսակրոնություն ընդունած քրոջը. «Մերը, որը դուք տածում եք իրար հանդեպ, չպետք է լինի մարմնական, այլ պետք է լինի հոգևոր, քանզի այն բաները, ինչը կիրառում են անհամեստ կանայք այլ կանանց հետ անամոթ շարժումների և խաղերի տեսքով, երբեք չպետք է կիրառվեն ամուսնացած կանանց և օրիորդների կողմից, ովքեր պատրաստվում են ամուսնանալ: Առավել ևս նման անամոթությունը չպետք է կիրառվի որքևայրիների և առաքիների կույսերի կողմից, ովքեր սուրբ խոստում են ընդունել լինել Քրիստոսի հարսնացուները»:

Որպեսզի միանձնուհիները չարվեն մման գայթակղությունների, Փարիզի և Ռուանի (1214թ.) տեղական ինքնակառավարման մարմիններն արգելել էին նրանց քնել նույն անկողնում և պատվիրել էին, որ գիշերները մենաստաններում լամպեր վառվեն: 13-րդ դարի մենաստանային կանոնները վկայում են, որ միանձնուհիները չպետք է մտնեն իրար խցեր, որ նրանց խցերը չպետք է կողպվեն, որպեսզի արքայազնուհիները կարողանան ստուգել նրանց ցանկացած պահի, և որ միանձնուհիները մենաստաններում պետք է խուսափեն միմյանց հետ առավել մտերիմ ընկերական հարաբերություններից:

Սակայն դարեր շարունակ բոլոր սոցիալական մակարդակների քրիստոնյաները, ներառյալ բարձրաստիճան վանականները, միմյանց հետ մտնում էին նույնասեռ հարաբերությունների մեջ: Նրանցից հազարավորները մահապատժի են ենթարկվել, բանտարկվել կամ դատապարտվել են երկարատև տանջալից պատիժների նույնասեռական փորձերի համար (տե՛ս գլուխ 4):

Այն լեսբուհիների, գեյերի և երկսեռականների համար, ովքեր դատախարակվել են քրիստոնեական ավանդույթների շրջանակներում, առավել ընդունելի էր է եղել իրենց սեռականությունը թաքցնել փորձելը կամ հեռավորություն պահելը քրիստոնեական կրոնից:

Սակայն 20-րդ դարի սկզբներից նույնասեռականության նկատմամբ քրիստոնեության վերաբերմունքի մասին պատկերը փոխվում է: Ելիզար վոն Կապֆերը (հայտնի է նաև որպես Ելզարիոն) հիմնադրում է Կլարիստիչ շարժումը, որը հոմոէրոտիզմը, կրոնը և Հին Հունաստանի դիցաբանությունը, ինչպես նաև քրիստոնեական ասպետության միջնադարյան եվրոպական ծածկագիրը միացնելու փորձ էր:¹

Գերիկ Շերվին Բեյլի՝ 1955 թվականին լույս տեսած «Նույնասեռականությունն ու արևմտյան ավանդույթը հեղափոխական գիրքը պարտադրեց քրիստոնեական հեղինակներին և կրոնական առաջնորդներին զբաղվել Աստվածաշնչի վերանայմամբ, որպեսզի պարզ լինի՝ արդյոք հակահոմոէրոտիկ (որոշ դեպքերում՝ հակափոխգենդերային) տրամադրությունները քրիստոնեությունում իրենց տակ իրական հիմք ունեն, թե ոչ: Մա լայնածավալ հետազոտությունների սկիզբ ծառայեց: Տվյալ թեմայով շատ աշխատություններ, այդ թվում եպիսկոպոս Ջոն Մելքի Սպոնգի «Սեղսավոր կյանք» (1989թ.) հետազոտությունը, հարցը դիտարկում են՝ մեկնաբանելով Սողոմոնի մասին ասքը: Տվյալ ասքը, ինչպես համաձայնում է եպիսկոպոսը, հիմնականում վերաբերում է ոչ թե նույնասեռականությանը, այլ հյուրընկալության կանոնների խախտմանը:

1960 թվականից ամրապնդվում է այն միտքը, որ նույնասեռականությունն ու քրիստոնեությունը կարող են դրականորեն համագոյակցել: Տվյալ ոլորտում պիոներ դարձավ Միքայել Իտլինը՝ էվլարիստական կաթոլիկ եկեղեցու վանականը ԱՄՆ-ից, ով նույնասեռականությանն ուղղված աստվածաբանություն է մշակել՝ ընդգծելով պացիֆիզմի և քաղաքացիական իրավունքների կապը: 1968 թվականին Ռևերենդ թրոյ Պերին ԱՄՆ-ում գեյերին ուղղված քաղաքային ընկերակցության բողոքական եկեղեցի է հիմնել: Ստեղծվում էին նաև այլ խմբեր: Առավել էական ներդրում տվյալ շարժման զարգացման մեջ ներմուծեց կաթոլիկ վանական Վուդը, որը հրատարակել է «Միրո այլ տեսակ. նույնասեռականու-

թյունը ու հոգևորը գիրքը» (1978թ.), ուր նա սահմանել է «գեյերի հոգևորը» հասկացությունը: Այդ ժամանակ եպիսկոպոսական եկեղեցու լեսբուհի վանական Քարտեր Հելվարդը գուգահեռներ էր անցկացնում «սիրով զբաղվելու» և «կյանքում արդարության և արդարադատության նորմերի կիրառման» միջև: Հակառակ դիրքի կողմնակիցներն էին ուղղափառ կաթոլիկ եկեղեցին և քրիստոնյա ֆունդամենտալիստների ընդարձակվող շարժումը, որը մեծ մասամբ բողոքական էր: ԱՄՆ-ում ընդդիմադիր շարժման առավել ճանաչված առաջնորդներն էին Ջեյրի Ֆավվելը, Պատ Ռոբերտսոնը և Ջեյ Գրիստեդը (վերջինս սիրում էր արտահայտվել հետևյալ կերպ. «Աստված ործկում է նույնասեռականությունից»): Առավել արմատական տեքստերից մեկը, որը հրատարակվել է քրիստոնեական եկեղեցու աջ թևի ջանքերով 1990-ականների սկզբներին, «Աստվածաշունչը նույնասեռականության համար մահապատիժ է պատվիրում» աշխատությունն է եղել: Այս գրքույկը համոզում է իր ընթերցողներին, որ այն քրիստոնյաները, ովքեր բռնություն չեն գործադրում գեյերի նկատմամբ, չեն կատարում իրենց քրիստոնեական պարտքը: Հնարավոր է, գուգադիպություն չէ այն փաստը, որ 1990-ականների սկզբին Կոլորադոյում հանցագործությունների կտրուկ աճ էր նկատվում կապված բնակչության որոշ մասի հանդեպ ատելության հետ:¹

Ուղղափառ կաթոլիկ եկեղեցին և աջ թևի այնպիսի կաթոլիկ կազմակերպություններ, ինչպես, օրինակ, «Օպուս Դեյր», նույնպես սկսեցին ավելի ագրեսիվ վերաբերմունք ցուցաբերել նույնասեռականության նկատմամբ: Եվ անգամ պապը հանդես եկավ որոշ հատուկ արտահայտություններով այս թեմայի շուրջ: 1999 թվականի հուլիսին հավատքի դոկտրինայի հարցերով Վատիկանի սուրբ սինոդը պատվիրեց հայր Ռոբերտ Նաջենտին և քույր Ժենյեյն Գրամիլին ընդհատել իրենց 30-ամյա հովվերգական գործունեությունը կաթոլիկ գեյերի և լեսբուհիների միջավայրում: Իրենց «մասնագիտական աշխատանքում՝ կապված հավատքի հետ, նրանց հրամայվել էր դիմում ստորագրել, որում ասվում էր, թե իրենք «ամբողջովին ընդունում են այն փաստը, որ նույնասեռական ակտերը միշտ օբյեկտիվորեն մեղավոր են» և որ «նույնասեռական նախապատվությունները... պետք է օբյեկտիվորեն դիտարկվեն որպես հիվանդություն»: Գրամիլը հրաժարվել է ստորագրել այս դիմումը և ասել է, որ եթե ինքը չի կարողանալու իր կարծիքը հայտնել արդարության հարցերի շուրջ, ապա դա կհակասի իր կոչմանն ու մասնագիտությանը:

Նմանատիպ իրավիճակ էր ստեղծվել նաև սեռական փոքրամասնությունների ակտիվիստների գիտաժողովում, որն անց էր կացվում 2000 թվականի հուլիսին Հռոմում: Այդ ժամանակ անմիջապես իր գլխավոր ելույթից առաջ Վատիկանը փորձեց սոփիակ լռել գեյերին սատարող ֆրանսիացի եպիսկոպոս Ժակես Գաիլոտին: Մա կատարվում էր այն ժամանակ, երբ նույնասեռականության հարցերով վիճաբանությունները կաթոլիկ եկեղեցու շրջանակներում անցնում էին առավել բացահայտ կերպով: Մարկ Ջորդանը իր «Սողոմոն լույսությունը» գրքում ապացուցում է, որ կաթոլիկ եկեղեցու ինստիտուտը միաժամանակ և՛ հոմոէրոտիկ, և՛ հոմոֆոբ է. նա գեյերին և՛ իր թևերի տակ է առնում, և՛ հալածում է:

Սակայն կաթոլիկ հոգևորականության որոշ դեմքեր, որոնք կողմ էին հանդես գալիս հավասարությանը, հիմնում են գեյերին օժանդակող խմբեր: «Նոր ուղի-

ների նախարարությունը» ԱՄՆ-ում մեծ կազմակերպությունների օրինակներից մեկն է, «Օտրաս Օվեժասը» (Այլ եկեղեցական համայնք) մեծ խմբի օրինակ է Մեքսիկայում:

Մի շարք անգլիական եկեղեցիներում նույնասեռականությունը սինոդի վերնախավի ամենամյա միջազգային ժողովների տարածայնության առարկան էր դարձել: Եվ չնայած թաքնված գեյերի գոյությունը բարձրաստիճան վանականների մեջ բնավ բացառիկ երևույթ չէ, այնուամենայնիվ, բացահայտ և իրենց նախապատվություններում կողմնորոշված գեյերին հոգևոր աստիճան տալը լրիվ ուրիշ բան է: Հարավային Աֆրիկայի անգլիական եկեղեցու նախկին արքեպիսկոպոս Դեսմոնդ Տուտուն հավասարության վառ ջատագով և կողմնակից է գեյ և լեսբուհի վանականներին հոգևոր աստիճան տալուն, բայց նրա տեսակետը դեռևս մեծամասնության աստարմանը չի արժանանում: Անգլիական եկեղեցին ավելի շուտ համակրում է նրան, որպեսզի ավելի հանդուրժողաբար վերաբերվեն փոխգեղեցիկ վանականներին, քան վանական նույնասեռականներին:

Եկեղեցու մյուս քրիստոնյաներն ավելի մեծ հանդուրժողականություն են ցուցաբերում: Կանադայի միացյալ եկեղեցին՝ երկրի ամենախոշոր կազմակերպություններից մեկը, վարում է գեյերին ու լեսբուհիներին որպես վանական ընդունելու քաղաքականություն և խրախուսում է նրանց հոգևոր աստիճանի շնորհումը: Քվակերներին միաբանությունը նույնասեռականներին վերաբերվում է հավասարության սկզբունքով և օրհնում է նույնասեռական գույգերի երկարաժամկետ գույզը նկերային հարաբերությունները նույն սկզբունքների հիման վրա, ինչ տարասեռ ամուսնությունները: Սակայն քրիստոնեական եկեղեցիների մեծամասնության համար, մեծ վերաբերմունքը դեռևս անսովոր է:

Եվս մի այցելություն Սոդոմ

Եսիսկոպոս Սպոնգի հետազոտությունների համաձայն՝ այն տղամարդիկ, ովքեր շրջապատեցին Ղովտի տունը, պահանջելով նրանից իրենց հանձնել իր երկու հյուրերին, որպեսզի «ավելի մոտիկից ծանոթանան նրանց հետ», ամենից առաջ, պատրաստվում էին անարգել երկու անձանոթներին: Շատ անիրական է թվում ենթադրությունն այն մասին, որ Սոդոմի բոլոր բնակիչները եղել են նույնասեռականներ: Երբ «լավ մարդ» Ղովտը առաջարկում է ամբոխին հանձնել իր երկու կույս աղջիկներին՝ պահանջվող հյուրերի փոխարեն, մենք պետք է ենթադրենք, որ, ամբոխին խմբակային բռնաբարության առաջարկելով իր աղջիկներին, հայրն արեց այն, ինչը պահանջվում էր «լավ հորից»: Եվ երբ Ղովտը, այն բանից հետո, երբ քաղաքը կործանվեց Աստծո կողմից, բեղմնավորում է իր երկու աղջիկներին, մենք պե՞տք է արդյոք ենթադրենք, որ ինստեստը ևս գովելի երևույթ է:

Սպոնգը ասում է. «Հնարավոր է, առավել կարևոր է խմբակային բռնաբարության հարցը, որն էլ հավանաբար եղել է Սոդոմի տղամարդկանց մտադրությունը: Կարո՞ղ է արդյոք խմբակային բռնաբարությունը դիտվել որպես արժանավայել երևույթ, անկախ այն բանից, դա իր բնույթով նույնասեռ է, թե տարասեռ: Հավանաբար, Ղովտը համարում էր, որ նույնասեռական խմբակային բռնաբարությունը չարիք ու մեղք է հատկապես այն պատճառով, որ դա հակասում է Սիջին Ասիայի հյուրընկալության

օրենքներին, այն դեպքում, երբ իր երկու դուստրերի տարասեռ խմբակային բռնաբարությունն ավելի ընդունելի էր, քանզի դա չէր խախտի հյուրընկալության օրենքները: Դի՞շտ կլինե՞ր ենթադրել, որ նույնասեռական խմբակային բռնաբարության դատապարտումը նշանակում է նաև նույնասեռականության՝ որպես երևույթի դատապարտում: Ես այդպես չեմ կարծում ու նաև համարում եմ, որ յուրաքանչյուրը, ով լրջմիտ կկարդա այս աստվածաշնչյան հատվածը, կպարզի, որ Սոդոմի իրական մեղքը եղել է Սոդոմի բնակիչների մի մասի չկամությունը հետևելու հյուրընկալության օրենքներին»:⁶

Մարդու իրավունքների հարցը

Մարդկության պատմության բոլոր ժամանակաշրջաններում էլ կրոնը հաճախ օգտագործվել է այս կամ այն մարդկային խմբերի ճնշման համար: Կրոնական դոգմաների հակասությունը և մշտական փոփոխումը՝ ընդունման և մերժման, հանդուրժողականության և անհանդուրժողականության, այն բանի ցուցանիշն են, որ սեռական փոքրամասնությունների համդեպ նախապաշարմունքները հազվադեպ են իրենց բնույթով բացառապես կրոնական լինում:

Շատ ավելի հաճախ մեծ նախապաշարմունքների արմատները թաքնված են քաղաքականության մեջ, և նրանց էությունը իշխանության գերազանցության, պաշտպանության կամ հաստատման մեջ է: Նախապաշարմունքները՝ սկիզբ առած կրոնական դոգմաներից և հայացքներից, հաճախ խրախուսվում են որպես եկեղեցական համայնքի հսկողության մեխանիզմ, որպեսզի ճանապարհից հեռացնեն նրանց, ովքեր չեն աստարում հոգևորականության վերնախավի քաղաքականությանը կամ կարող են մարտահրավեր նետել կենտրոնական իշխանությանը և կրոնական հիմքերի պահպաններին: Նման նախապաշարմունքները նաև օգտագործվում են որպես կանանց ճնշելու գործիք: Ֆունդամենտալիզմի դեմ պայքարի և կարեկցանքի ու մարդասիրության սկզբունքներին վերադառնալու համար, որը ցանկացած կրոնի հիմքն է, Հռոմում 2000 թվականին անցկացվեց ակտիվիստների. «Հավատքի գատումը ատելությունից» բազմակրոնական ժողովը՝ կազմակերպված մարդու իրավունքների գեյերի և լեսբուհիների միջազգային հանձնաժողովի կողմից: Ժողովը միացյալ հռչակագիր ընդունեց, որը կոչ էր անում հարգել սեռական փոքրամասնությունների քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:

1. Cassell's Encyclopedia of Queer Myth, Symbol and Spirit, Randy P Conner et al eds, Cassell, 1997.
2. Facing the Mirror: Lesbian Writing from India, Ashwini Sukthankar, Penguin, 1999.
3. New Internationalist, October 2000.
4. Female Desires, Evelyn Blackwood and Saskia Wieringa eds, Columbia University Press, 1999.
5. Hidden from History, Martha Vicinus, George Chauncey, eds, Penguin, 1991.
6. 'Sodom revisited', Bishop John Selby Spong, New Internationalist, November, 1989.

7. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ԲԱՅԱՏՐԵԼՈՎ ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂԱՆՈՐԴՈՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
Պատճառները փնտրելիս...
Ժամտաքիսներից և ճանճիկներից...
հորմոններից և քրոմոսոմներից... նույնասեռականության
«բուժման միջոցներից»...
«գեյների գլխուղեղի հատկություններից»... «գեյների գենից»... մինչև...
ո՞ւմ է դա հետաքրքրում

Նույնասեռականությունը «բացատրելու» իր փորձերում գիտությունը հաճախ գնացել է շատ տարբեր ուղիներով, որոնցից շատերը մեղմ ասած՝ տարօրինակ են:

Երկար ժամանակ գիտական շրջաններում այն կարծիքին էին, թե նույնասեռական վարքը բնորոշ է միայն մարդկանց: Համարվում էր, որ այդ «անբնականի» պիտակ ստացած երևույթը բնորոշ չէ կենդանիներին: Հաճախ բնախույզներն ու կենսաբաններն իրենց ուշադրությունն ուղղակի չէին կենտրոնացնում կենդանիների միջև նույնասեռականության դրսևորումների վրա կամ էլ սխալ էին մեկնաբանում այն:

Ավելի ժամանակակից հետազոտությունները պարզել են, որ նույնասեռական վարքը բնորոշ է թռչունների և կաթնասունների 450 տեսակին: Ահա մի քանիսը առավել հետաքրքրական օրինակներից՝

- արու օրանգուտանգները հաճույքով բերանային սեքսով են զբաղվում իրար հետ,
- արու ծովափղերը հիշատակված են սողունիայում,
- ամառային ամիսներին գիշատիչ կետերը իրենց ժամանակի մոտ տասներորդ մասը նվիրում են նույնասեռական ակտերին:

Կենդանիների սեռական ցանկությունների հետազոտությունները ենթադրում են, որ նրանց սեռական վարքը և նախապատվությունները նման են մարդկանց սեռական կողմնորոշվածությանը: «Գեյ ճանճիկների» բացահայտումը մեծ դեր խաղաց սեռական կողմնորոշվածության վերաբերյալ ժամանակակից կենսաբանական հիմնավորում գտնելու համար:

1970-ականներին կալիֆոռնիական ափին դիտվում է մի երևույթ, որն այսպես է բնութագրվում՝ «լեսբոսի ճայերի զանգվածային հայտնություն»: Նրանց կրկին գտնելու փորձը 1996 թվականին հաջողությամբ պսակվեց, սակայն թռչունների այս տեսակին ամուր սոսնձվեց «անբարոյական» բառը՝ շնորհիվ «Բիլիսն ու Բաթերը Ամերիկա են կառուցում» ֆիլմի «Լեսբի ճայերը» երգի: Նույնասեռ սեռական ակտիվությունը, որ նկատվել է ժամտաքիսների, գերմանամկների, կրծողների և բարձրակարգ կաթնասունների միջև, գիտնականների համար ձևանմուշներ դարձան սեռական կողմնորոշվածությունն ուսումնասիրելու գործում:²

Ի՞նչ են ասում բժիշկները

Անտիկ ժամանակներից փիլիսոփաները և բժիշկները, ինչպես Պլատոնը և Սորանուսը, գլուխ էին կոտրում սեռական ցանկությունների և կողմնորոշվածության հանելուկների վրա: Բայց 19-րդ դարի սկզբից գիտնականները, բժիշկները և հոգեկան հիվանդություններով զբաղվող մասնագետները նույնասեռականության խնդիրների ուսումնասիրություններն սկսեցին հատուկ եռանդով, ինչին

շարժառիթ ծառայեց ցանկությունը՝ բուժել և արմատախիլ անել այն, ինչը դիտարկվում էր որպես սեռական այլասերվածություն:

Գեյ իրավաբան Կարլ Ուրիխը՝ առաջնորդվելով ժամանակակից սաղմնաբանության հայացքներով, սեռական կողմնորոշվածության բացատրության համար մշակեց իր կեղծ գիտական «ուրանային» տեսությունը: 1866 թվականին Ուրիխը ուղարկեց իր տեսական մշակումները հոգեբույժ Ռիչարդ Վոն Կրաֆտ Էբինգհին, ով Ուրիխի գաղափարներից շատերն օգտագործեց իր «Փսիխոպաթալոգիա սեքսուալիս» գրքում՝ էապես վերամշակելով դրանք: Ուրիխի միտքն այն մասին, որ նույնասեռականությունը բնածին և բնական երևույթ է, վերափոխվեց հակառակի՝ «քրեական» բժշկական տեսության, որն ապացուցում էր, որ նույնասեռականությունն այլասերվածություն, հիվանդություն և նորմայից շեղում է: Ուրիխը, սակայն, Կրաֆտ Էբինգհին և մյուս «խելագարների» բժիշկներին վերաբերվում էր ոչ թե որպես հակառակորդների, այլ, ավելի շուտ, որպես ընդդիմախոսների:

«Մեքսուալ շրջադասություն» հասկացությանը վիճակված էր դառնալու առավել հանրաճանաչ բժշկական տերմին, որը նաև օգտագործվեց բրիտանացի սեքսաբան Հավելոյ Էլիսի կողմից իր՝ 1897 թվականին հրատարակված գրքին վերնագիր տալու ժամանակ: Նրա «Մեքսուալ շրջադասություն» աշխատությունը ժողովրդականացրեց գաղափարն այն մասին, որ «շրջադասությունը» սեռի բնածին անոմալիա է: Մինչդեռ, նրա համահեղինակ գեյ Ջոն Ադինգտոն Սայմոնսը այն կարծիքին էր, որ նույնասեռականները պետք է դիտարկվեն որպես «փոքրամասնական» խումբ, սակայն նա զիջեց Էլիսի տեսակետին և համաձայնեց այն ընթացման հետ, որ նույնասեռականությունը նկրդի և բնածին անոմալիայի հետևանք է: Նա գուր հույսեր էր փայլախոսում, որ նման բացատրությունը մարդկանց մոտ կարեկցանք և հանդուրժողականություն կառաջացնի նույնասեռականների նկատմամբ: Ընդհուպ 1910 թվականը, նույնասեռականության վերաբերյալ աշխատությունների և հոդվածների մեծ մասը, որոնք հրատարակվում էին բժշկական ամսագրերում և որոնց մեջ մշակվում էին «դեգեներատիվ» և «էվոլյուցիոն» տեսությունները, հանրամատչելի չէր: Առավել «անպարկեշտ» մասերը հրատարակվում էին լատիներեն: Էլիսի «Մեքսուալ շրջադասության» առաջին ամբողջական հրատարակությունը անգլերեն լեզվով նախատեսված էր բժիշկների և իրավաբանների խիստ սահմանափակ ընթերցողների համար: Համենայն դեպս, այս հրատարակությանը ոչ մի լրագրային կամ ամսագրային մեկնաբանություն չհաջորդեց: Բրիտանական գլխավոր բժշկական «Նշտար» հանդեսը հրաժարվեց իր կարծիքն արտահայտել «Մեքսուալ շրջադասության» վերաբերյալ, իսկ լայն հասարակությունից քչերն էին ծանոթ Էլիսի աշխատությանը:³

Ի՞նչ են ասում հոգեբանները

20-րդ դարի կեսերին հատկապես ընդունելի էին այն տեսությունները, որոնք սեռական կողմնորոշվածությունը հիմնականում բացատրում էին՝ ելնելով մարդու առաջին սեռական փորձից: Դա հնչում էր հետևյալ կերպ. եթե դուք հաճելի սեռական փորձ եք ունեցել որևէ մեկի հետ՝ անկախ նրա սեռից, ապա հետագայում նույնպես կցանկանաք սեռական հարաբերություններ ունենալ հենց այդ սե-

ռի մարդկանց հետ: Իսկ եթե սեքսը տհաճ է եղել, ապա ապագայում դուք կխուսափեք սեռական շփումներից այդ սեռի գուզընկերոջ հետ: Նման տեսությունների հանրաճանաչությունը սատարվում էր նաև այն գաղափարով, որ մարդուն, հատկապես եթե նա անփորձ է սեքսի հարցերում, կարելի է հեշտությամբ մոլորեցնել և դարձնել լեսբուհի կամ գեյ: Մոլորեցման տեսությունը հաստիկ ընդգծում էր, որ բոլոր մարդիկ բնականաբար կդառնան տարասեռականներ, եթե նրանց չմոլորեցնեն իսկական ուղուց «հափշտակող մույնասեռականներ»:

Տեսությունների մի այլ խումբ, այսպես կոչված, «ընտանիքի զարգացման տեսությունները», բացատրում են սեռական կողմնորոշվածությունը՝ ելնելով ընտանիքում ծնողների փոխհարաբերություններից: Այս հետազոտությունները հիմնականում վերաբերում էին տղամարդկանց: Դասական վարկածը, որը սկիզբ է առնում ֆրեյդյան տեսությունից, դիտարկում է տղամարդու մույնասեռականությունը որպես ընտանիքում ուժեղ մոր ազդեցության արդյունք՝ մի կողմ քաշված հոր պայմաններում, այն դեպքում, երբ տղամարդու տարասեռականությունը արդյունք է հոգեբանորեն ուժեղ մույնականացված հոր հետ՝ մի կողմ հեռացված մոր պայմաններում և նրա ենթագիտակցորեն փոխարինմանը այլ կանանցով:

Հոգեբաններն ավելի ուշ միևնույն կերպ սկսեցին բացատրել նաև լեսբիության երևույթը, որը, ըստ նրանց, մոր հետ մույնականացման բացակայության կամ նրանից հեռացված լինելու արդյունք էր:

Առավել համոզիչներից էին «Առողջ դատողության տեսությունները», համաձայն որոնց՝ սեռական կողմնորոշվածության զարգացումը կախված է նրանից, թե ինչ աստիճանի է երեխայի վարքը բնորոշ կամ ոչ բնորոշ իր կենսաբանական սեռին: Ծանաչված մշակույթներից յուրաքանչյուրն ինչ-որ չափով մարդուն գուզորդում է վարվելաձևի կարծրատիպերի հետ՝ բնորոշ տղամարդկանց և կանանց: Երեխան, որը համապատասխանում է այն վարվելաձևի կարծրատիպերին, որոնք հասարակությունը համարում է բնորոշ նրա սեռին, համարվում է «տիպիկ», և կարելի է կանխատեսել, որ չափահաս կյանքում նա կդառնա տարասեռական: Բայց կնանման տղաները և «տոմբոի» աղջիկները, ամենից շուտ, կդառնան մույնասեռականներ. այսպիսին են «Առողջ դատողության տեսություն» կանխադրույթները: Այս տեսության որոշ վարկածների համաձայն՝ մարդու սեռական ցանկությունները նրա չափահաս կյանքում շատ դեպքում որոշվում են իր սեռին ոչ բնորոշ վարվելաձևի ցուցադրման մասնակալան փորձով:²

Սակայն շատ գեյեր և լեսբուհիներ համարում են, որ իրենց կյանքում չի կատարվել ոչ մի այնպիսի բան, ինչը կարող էր նրանց դարձնել մույնասեռական: Նրանց համար իրենց մույնասեռականությունը իրենց հիմնական կայուն բնութագիրն է և այլ ընտրություն նրանք պարզապես չունեն: Էնդրյու Մուլիվանը՝ ԱՄՆ-ում լույս տեսնող «Նյու Ռեփորթի»-ի նախկին խմբագիրը, հաստատորեն հավատում է հետևյալին. «Չափահաս մարդկանց (գեյերի) ճնշող մեծամասնության համար մույնասեռական լինելն իրենց անձնական ընտրությունն է՝ ճիշտ այնպես, ինչպես տարասեռականները չեն ընտրել իրենց սեռական կողմնորոշվածությունը»:

Այնուամենայնիվ, ինչպես նշում է Էդվարդ Շտեյնը, չի կարելի առանձնապես ապավինել մարդկանց կարծիքներին այնպիսի բարդ հարցի վերաբերյալ, ինչպիսին

իրենց սեփական սեռական կողմնորոշվածությունն է պարզապես այն պատճառով, որ նրանք ինչ-որ հետևության են եկել իրենց իսկ ինքնավերլուծության արդյունքում:

Ըստ սոցիալ-կառուցվածքաբանական տեսությունների՝ սեռականությունը որոշվում է սոցիումով և մույնասեռականների, տարասեռականների, երկսեռականների մույնականացմամբ, որոնք պատմական և սոցիալական կառույցների տարատեսակներ են: Մրանք դրսևորումներ են, որոնք որոշակի նպատակներով ձևավորվում են հասարակության կողմից և հասարակության շրջանակներում: Գրող և ակադեմիկոս Էլիզաբեթ Վիլսոնի խոսքերով՝ սեռական մույնականացումը և սեռական ցանկությունը ինչ-որ որոշակի և կարծրացած բաներ չեն. նրանք ենթարկվում են փոփոխության և զարգացման: Մենք կարող ենք որոշել մեր սահմանները և մույնականացումը, բայց միայն այն բանի համար, որպեսզի չենթարկվենք քառս ընկնելու վտանգին՝ փորձելով հասկանալ սեփական կողմնորոշվածությունը:⁴ Սոցիալական և մշակութային կառուցվածքաբանական տեսություններն առավել հանրամատչելի էին 1970-1980-ականներին գեյերի և լեսբուհիների ազատագրական շարժման ժամանակ: Սակայն գեյերի և լեսբուհիների մույնականացման հասկացությունները հաճախ դիտարկվում էին մի տեսակ երկակիորեն, որպես ինչ-որ բարդ, հակասական, սակայն տարասեռ հայրիշխանությանը դիմադրելու անհրաժեշտ գործիք:

Վերջերս, սակայն, գեյերի հակառակորդները՝ «բարոյական մեծամասնությունը» և նրա հակամույնասեռականների կազմակերպությունները կարողացել են սոցիալ-կառուցվածքաբանական տեսությունները շրջել մույնասեռական ընկերակցությունների դեմ: «Բարոյական մեծամասնությունը փորձում է ապացուցել, որ եթե սեռական մույնականացումը կառուցվում է հասարակության կողմից, ապա հասարակությունն էլ կարող է այն «ապակառուցել»: Այսպիսով, «Նախկին գեյերի շարժումը» համարում է, որ ինքը կարող է մույնասեռականներին «փոխակերպել» տարասեռականների:

Այդ ժամանակ ցանկությունը՝ գտնել սեռական կողմնորոշվածության կենսաբանական աստառը, վերածվեց իսկական խառնաշփոթի:

Կինսիի դասակարգումը

Հավանաբար, առավել հանրամատչելի և լուսավորչական հետազոտությունները մույնասեռականության վերբերյալ վերջին 100 տարվա ընթացքում եղել են ամերիկյան հետազոտող Ալֆրեդ Կինսիի և նրա գործընկերների գիտական որոնումները, որ անց էին կացվում 20-րդ դարի կեսերին:

Իր լայնածավալ հարցազրույցների անցկացման ընթացքում Կինսիի հետազոտողները՝ Պոմերոյն ու Մարտինը, հայտնաբերեցին տպավորիչ թվով մարդկանց, որոնք պատմում էին իրենց փորձի մասին՝ ինչպես մույնասեռ, այնպես էլ տարասեռ կապերի և կամ հոգեբանական պատրաստվածության մասին՝ մտնելու նման կապերի մեջ: Ստացված տվյալների հիման վրա գիտնականները եկան այն եզրակացության, որ շատ անհատներ հստակորեն չեն դասվում մույնասեռականների կամ տարասեռականների որոշակի խմբերին: Մարդկանց սեռական կողմնորոշվածությունը և նրանց նախապատվությունները դասակարգելու համար մշակվեց սանդղակ՝ հիմնված այս կամ այն մարդու կենսափորձին բնորոշ տարասեռ և մույ-

նասեռ կապերի կամ ցանկությունների հարաբերական քանակի վրա: Այս դասակարգումը հայտնի է «Կինսիի դասակարգում» անվամբ և բաղկացած է 7 կետից՝

0. բացառապես տարասեռականներ. չկան նույնասեռական ցանկություններ, կապեր,

1. հիմնականում տարասեռականներ. նույնասեռական ցանկությունները, կապերը կրում են պատահական բնույթ,

2. հիմնականում տարասեռականներ, սակայն նույնասեռական կապերը, ցանկությունները օրինաչափորեն կրկնվում են,

3. հավասարապես տարասեռականներ և նույնասեռականներ,

4. հիմնականում նույնասեռականներ, բայց տարասեռ կապերը, ցանկությունները օրինաչափ են,

5. հիմնականում նույնասեռականներ. տարասեռ կապերը, ցանկությունները պատահական բնույթ են կրում,

6. բացառապես նույնասեռականներ. չկան տարասեռ կապեր, ցանկություններ

7. չեզոքներ. չկան սոցիալական սեռական շփումներ կամ ռեակցիաներ:

Կինսիի տեսությունն առաջարկեց կրկնաբևեռ հայացք, որի համաձայն՝ մարդու սեռական կողմնորոշվածությունը կարող է սահմանվել սանդղակի շրջանակներում երկու ծայրահեղ բևեռների միջև:

Խոսքը կենսաբաններիցն է

Միտքը, որ միգուցե սեռական կողմնորոշվածության գաղտնիքը թաքնված է մարդու մարմնի մեջ, արդեն այդքան էլ սպառնալից չէ գեյերի համար, ինչպես ավելի վաղ ժամանակներում էր: Օգնում է նաև այն, որ հետազոտողներից ոմանք իրենք են բացահայտ նույնասեռականներ:

1916 թվականին գեներտիկ Ռիչարդ Գոդլձիդտը առաջարկեց տեսություն այն մասին, որ հմարավոր է նույնասեռականների մարմինները չեն համապատասխանում իրենց սեռական քրոմոսոմներին: Այդ գաղափարը ընդունվեց այդ ժամանակի շատ մտավորականների, այդ թվում Մազնուս Հիրշվելդի կողմից: 1950 թվականին, սակայն, այդ տեսությունը հերքվեց:

Մյուս գիտնականները փորձում էին լուծումը գտնել արյան հոսքում հորմոնների մակարդակի, սեռական գեղձերի և մեզի մեջ: Փորձարարները հայտարարում էին, որ լեսբուհիների մոտ՝ ի տարբերություն տարասեռ կանանց, առավել բարձր է տղամարդու հորմոնի՝ տեստոստերոնի մակարդակը և ցածր է կանացի հորմոնի՝ էստրոգենի մակարդակը: Իսկ գեյերի մոտ հակառակակ է. ի տարբերություն տարասեռ տղամարդկանց՝ նրանց մոտ էստրոգեն հորմոնի մակարդակն ավելի բարձր է, քան տեստոստերոնի մակարդակը: Համարվում էր նաև, որ տարասեռականների և նույնասեռականների միջև տարբերությունները թաքնված են սեռական գեղձերի կառուցվածքում:

Այս վարկածները բերեցին գեյերի և լեսբուհիների «բուժման» փորձերի տարատեսակ վիրաբուժական և հորմոնալ միջամտությունների կիրառման, այդ թվում ամորձատման և որոշ դեպքերում՝ ամորձիների փոխպատվաստման:⁵

Չնայած ակնհայտ հաջողությունների ապացույցների բացակայությանը,

մարդկանց նույնասեռականությունից «բուժելու» փորձերը՝ հիմնված նույնասեռականների և տարասեռականների ներքին մարմնական տարբերությունների մասին տեսությունների վրա, շարունակվում էին Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում մինչև 1970-ականների վերջը: Փաստորեն, գեյերի մեծամասնության մոտ, ում հանդեպ կիրառել էին տեստոստերոնով թերապիան, նկատվում էր սեռական ցանկությունների ուժեղացում, սակայն նրանց սեռական ձգտումների օբյեկտը այդպես էլ չէր փոխվում:²

Նույնասեռականությունից «բուժվելու» մեթոդները

19-րդ դարի վերջերից բժիշկները փորձում էին մշակել նույնասեռականությունից «բուժման» մեթոդներ, սակայն այս հարցում նրանք այդպես էլ որևէ հաջողության չհասան: Ահա այդ մեթոդներից մի քանիսը՝

Թերապիա՝ մարմնավաճառների օգնությամբ. կին առևտրային սեքս աշխատողների հետ սեռական հարաբերությունները պետք է ստիպելին «սխալ» տղամարդկանց կրկին տարասեռ ցանկություն զգալ:

Թերապիա՝ ամուսնությամբ. տարասեռ սիրային հարաբերությունների մեջ մտնելով կամ ամուսնանալով՝ «սխալ» մարդը բնական կերպով պետք է տարասեռ դառնար:

Այրում. Նյու Յորքի հետազոտող դոկտոր Վիլյամ Համոնդը նույնասեռական հիվանդներին բուժելու համար առաջարկում էր «ողնագոտկատեղային շրջանի ներքևի մասի այրման» մեթոդը: Այրումները պետք է անցկացվեին 10 օրը մեկ:

Ամորձատուժ կամ ամորձիների հեռացում, որպեսզի նույնասեռական տղամարդը սեռական ցանկություն չզգա: Իսկ եթե նույնասեռականությունը ժառանգական է, ապա վերարտադրողական օրգանների հեռացումը կարող է երկարատև բուժում ապահովել:

Կուսություն. եթե նույնասեռականությունը անբուժելի է, ապա նույնասեռական ունի միայն մեկ բարոյական ընտրություն՝ կուսություն:

Հիպնոս. ԱՄՆ-ից դոկտոր Ջոն Դ. Քվակենբուրը հայտարարել էր, որ անբնական կիրքը սեփական սեռի մարդկանց հանդեպ կարող է բուժվել հիպնոսի միջոցով:

Թերապիա զգվանքի պատվաստմամբ. կիրառվում էր 20-րդ դարի առաջին կեսերին՝ տարբեր մեթոդների այդ թվում նաև էլեկտրաշոկի օգտագործմամբ, խրախուսվում էր տարասեռ ցանկությունը, իսկ նույնասեռականները պատժվում էին:

Հոգեվերլուծություն. նույնասեռականությունը 1950-ականներին դոկտոր Էդմունդ Բերգերի կողմից համարվում էր «հոգեկան մագոխիզմ», ինչը պայմանավորված է ենթագիտակցությամբ և մարդուն դնում է ինքնակործանման ուղու վրա: Նա պնդում էր, որ «Եթե գտնեք դրա պատճառը (օրինակ, ենթագիտակցական վրդովմունքի հույզերն ընդդեմ ուժեղ մոր գերակշռության), ապա կբուժվեք»:

Թերապիա ճառագայթումով. ռենտգենով թերապիան, ինչպես համարվում էր, իջեցնում է նույնասեռականների մոտ անկանոն սեքսով զբաղվելու ցանկության աստիճանը, դրոժում պետք է մեղադրել սեռական գեղձերի գերակտիվությանը:

Հորմոնալ թերապիա. ստերոիդներն օգտագործվում էին, որպեսզի տղաներին դարձնեն առավել «առնական», իսկ աղջիկներին ավելի «կանացի»: Ստե-

րողներին երկարատև ընդունումը կարող էր բերել անպտղության և քաղցկեղի:

Լոբոտոմիա. կտրելով գլխուղեղի աջևի մասի նյարդաթելերը, բժիշկները ձգտում էին վերացնել նույնասեռական, ինչպես նաև բոլոր մյուս սեռական ցանկությունները և կարգավորել հուզական արձագանքումների մեծ մասը: ԱՄՆ-ում լոբոտոմիան կիրառվեց մինչև 1950-ականների վերջերը:

Հոգեկրոնական թերապիա. հոգևոր դոկտորներն ու թերապևտները կրոնական ուսմունքները զուգակցում էին հոգեվերլուծության հետ՝ փորձելով նույնասեռականին ներշնչել, որ նա տարասեռական դառնա:

Թերապիա գեղեցկությամբ. ամենը, ինչը պետք է տղամարդանման լեսբուհուն իսկական կնոջ վերափոխվելու համար՝ «գեղեցկանալն է» լավ ռճաբանի օգնությամբ: Աղբյուրը՝ ‘Thirteen Theories to Cure Homosexuality’ by Don Romesburg

Գեյի ուղեղը

Շատ գիտնականներ համարում են, որ նույնասեռականների և տարասեռականների միջև տարբերությունը թաքնված է ուղեղում, և ժամանակակից հետազոտությունները հիմնականում կենտրոնացել են հատկապես այս ոլորտի վրա:

1991 թվականին Սայմոն Լե Վեյը՝ ԱՄՆ-ի «ՍԱԼԿ» ինստիտուտից, հրապարակեց իր աշխատությունը հիպոտալամուսում՝ ուղեղի ոչ մեծ շրջանում որոշակի խմբերի քիմիկատների չափսերի ուսումնասիրման մասին: Հիպոտալամուսը կարևորագույն դեր ունի սեռականության, սիրտ-անոթային համակարգի աշխատանքի, մարմնի ջերմաստիճանի վերահսկման, հուզական-սթրեսային ռեակցիաների, աճի և այլ ֆունկցիաներում: Լե Վեյի հետազոտությունները կենտրոնացված էին հիպոտալամուսի այն շրջանի վրա, որը, ինչպես համարվում է, տարբեր է տղամարդկանց և կանանց մոտ: Շատ գիտնականներ այն տեսակետն են պաշտպանում, ըստ որի՝ պտղի ներքնկերքային զարգացման որոշակի փուլում մարդու ուղեղում սկսում է որոշակի սեռին բնորոշ հատկություններ ի հայտ գալ: Սակայն, նման ենթադրությունները գիտականորեն հաստատված չեն: Լե Վեյի կարծիքով՝ ընդունելով այն փաստը, որ մարդկանց մեծամասնությունը, որոնց հիմնականում դուր են գալիս կանայք, տղամարդիկ են, իսկ կանանց հիմնականում դուր են գալիս տղամարդիկ, հնարավոր է որոշել ուղեղի այն հատվածը, որը կառուցվածքով տարբեր է կանանց և տղամարդկանց մոտ, և որն իր վրա է կրում պատասխանատվությունը նրանց սեռական կողմնորոշվածության համար: Նա հետազոտել է 41 մահացած հիվանդի ուղեղ: Նրանցից 19-ի մահը ՁԻԱՀ-ից առաջացած բարդություններից է եղել (այս տղամարդկանց բժշկական բարտերը թույլ են տալիս ենթադրել, որ նրանց՝ ՄԻԱՎ-ով վարակվելը արդյունք է նույնասեռական շփումների): Մյուս 6 տղամարդիկ նույնպես մահացել էին ՁԻԱՀ-ից, և չնայած նրանց սեռական կողմնորոշվածությունը չպարզված մնաց, Լե Վեյը համարում էր, որ նրանք տարասեռականներ էին: Եվս 10 տղամարդ մահացել է ոչ ՁԻԱՀ-ից, նրանց սեռական կողմնորոշվածությունն անհայտ էր, բայց Լե Վեյը նրանց էլ էր դասում տարասեռականների շարքը: Նա հետազոտել է նաև 6 կնոջ ուղեղ, բոլորը համարվում էին տարասեռականներ: Նրանցից մեկը մահացել էր ՁԻԱՀ-ից, իսկ մյուսները՝ այլ պատճառներից: Իր հետազոտությունների արդյունքում Լե Վեյը բացահայտեց, որ հիպոտալամուսի այն մասը, որը

ստացել էր «ԻՆԱԶՄ-3» անվանումը, ավելի փոքր չափսեր ուներ գեյերի մոտ, քան անհայտ սեռական կողմնորոշվածություն ունեցող տղամարդկանց մոտ է. դրա չափսը նույնասեռական տղամարդկանց մոտ մոտավորապես այնպիսին էր, ինչպիսին կանանց մոտ: Սա բերել էր հետազոտողին այն ենթադրության, որ «ԻՆԱԶՄ-3»-ը գեյ տղամարդկանց մոտ ինչ-որ չափով «խեմիկազցված է»: Լե Վեյը հայտարարեց, որ իր գիտական գործունեությունը հայտնություն է «Ի՞նչն է մարդկանց դարձնում գեյ կամ տարասեռական» հարցի պատասխանը գտնելու որոնումներում:

Նրա տեսությունը սակայն լրջորեն վիճարկվում էր գիտական շրջաններում: Այն, որ տղամարդիկ, որոնց «ԻՆԱԶՄ -3»-ը, ըստ Լե Վեյի՝ փոքր էր, մահացել էին ՁԻԱՀ-ից, և որ մահվան ժամանակ փաստացիորեն նրանց բոլորի մոտ տեստոստերոնի մակարդակը ցածր է եղել ՁԻԱՀ-ից բուժվելու կողմնակի ազդեցության պատճառով, ստիպում էր կասկածել հետազոտության արդյունքների իսկության վրա: Հնարավոր է, ուղեղի հետազոտվող հատվածի չափսերի վրա ազդեցություն են ունեցել հորմոնալ փոփոխությունները՝ կապված ՁԻԱՀ-ի հետ: Որոշ գիտնականների կարծիքով այն, որ հետազոտվել են նաև ՁԻԱՀ-ից մահացած մի քանի տարասեռական տղամարդկանց ուղեղներ, բավարար չէ, որպեսզի հերքվի նման հնարավորությունը: Նաև չէին հետազոտվել լեսբուհիները, որոնց ուղեղը, եթե տեսությունը ճիշտ է, պետք է ցուցադրի «ԻՆԱԶՄ-3» գոտու մեծացում:²

Գեյի գեներ

Վարկածը, որ սեռականությունը կարող է փոխանցվել ժառանգաբար, պաշտպանում էին դեռ միջնադարյան գիտնականները: Վերջերս, սակայն, այն ընդունել է, այսպես կոչված, գեյի գենի «որսի» ձև:

Այս ոլորտի գլխավոր հետազոտողը կենսաբան Դին Համերն է՝ ԱՄՆ-ի քաղցկեղի ուսումնասիրման ազգային ինստիտուտից: Համերը սկսեց իր հետազոտությունները՝ գեյերի ընտանեկան պատմությունների ուսումնասիրմամբ: 1990-ականների սկզբին Բայթիմորում գեյերի համար նախատեսված թերթում նա տեղադրեց հայտարարություն «Գեյեր, դուք ունե՞ք գեյ եղբայրներ» վերնագրով:

Առավել կարևոր արդյունքներից մեկը, որոնց հասավ Համերը, նույնասեռականության բարձր մակարդակի հայտնաբերումն էր գեյերի ընտանեկան շրջանակներում՝ մայրական գծով: Սակայն մեկնաբանները արտահայտեցին իրենց կասկածները ինչպես արդյունքի, այնպես էլ դրա կարևորության վերաբերյալ: Ընդդիմախոսներից մի քանիսն ասում էին, որ նույնասեռականության տարբեր մակարդակները բարեկամների միջև մայրական և հայրական գծով կարևոր վիճակագրական ցուցանիշ չեն: Մասամբ սա տեղի ունեցավ այն պատճառով, որ Համերի հետևությունները հիմնված էին ստացված արդյունքների և հիմնական բնակչության միջև նույնասեռականության հիմքային մակարդակի համահարաբերակցության վրա, որի ցուցանիշը սահմանվել էր 2%: Իսկ եթե հիմքային մակարդակը կազմում է 4% և ավելի, ապա, ինչպես կարծում են ընդդիմախոսները, Համերի կողմից ստացված արդյունքները կարևոր չեն վիճակագրության տեսանկյունից:

Համերի հետազոտությունները, որոնք անցկացվեցին 1993 և 1995 թվականներին, ստույգ որոշեցին յուրահատուկ գենետիկ նկարագիրը՝ կապված տղա-

մարդկանց մույնասեռականության հետ: Նա պարզեց, որ 40 գույզ գեյ եղբայրներից 33-ը ունեն Ղ-ՆԹ-ի հաջորդականության մույն հավաքակազմը քրոմոսոմի այն շրջանում, որը կոչվում է Xq28:

1999 թվականին Օնտարիոյից նյարդաբան Ջորջ Ռայսը փորձեց կրկնել Համերի փորձը: Նա Ղ-ՆԹ-ի հետազոտություն անցկացրեց 52 գույզ գեյ եղբայրների շրջանում և պարզեց, որ նրանց Xq28 հաջորդականությունը ցույց չի տալիս առավել մեծություն, ինչը կարելի էր սպասել պատահական գույզադիստրիբյուցիոն կարող է կապված լինել ժառանգականության հետ: Նա ուղղակի համարեց, որ Xq28 շրջանը այն տեղը չէ, որը պատասխանատու է սեռական կողմնորոշվածության համար: Նա հայտարարեց, որ մույնասեռականության հետ կապված գենետիկ գործոնների հետազոտությունները պետք է շարունակել:

Մույնասեռական երկվորյակների ուսումնասիրությամբ զբաղվող ամերիկացի հոգեբան Մայքլ Բեյլիի խոսքերով՝ հնարավոր չէ որոշակի հետազոտությունների գալ այն պատճառով, որ հետազոտվող գույզերի թիվը բավարար չեն եղել:

Ում ինչ տարբերություն

«Գեյերի գենի» բացահայտումը շատ կարևոր կլիներ որոշ լեսբուհիների և գեյերի համար, ովքեր հույս ունեին, որ կենսաբանական բացատրությունը լրացուցիչ փաստարկ կդառնար խտրականության դեմ իրենց պայքարում: Նման բացահայտումը շատ պատճառներով կարևոր կլիներ նաև խմբերի համար, որոնք հանդես էին գալիս գեյերի դեմ: Նրանց համար Ռայսի բացահայտումը ուղղակի հաստատում էր հետևյալը. «գեյերի գեն» գոյություն չունի, և մույնասեռականությունը միայն վարքի տեսակ է, որը մարդիկ իրենք են ընտրում իրենց համար և որին նրանք «սովորում են», ուստի այդպիսի վարվելաձևը արժանի չէ օրինական աստարման:

«Շատ տարիներ Համերի հետազոտություններն օգտագործվում էին սեռական փոքրամասնությունների ակտիվիստների կողմից, - ասում է Իվետե Կանտուն՝ ընտանեկան հետազոտությունների խորհրդի քաղաքական վերլուծաբանը: -Մեր կարծիքով՝ պատճառ չկա փոքրամասնության հատուկ կարգավիճակ տալ ինչ-որ մեկին, ով ուղղակի ընտրում է որոշակի սեռական վարվելաձև»:

Մի՞թե իրոք այդքան կարևոր է, թե ինչպիսին է սեռական կողմնորոշվածության բնույթը: Իրականում այդքան անհրաժեշտ է արդյոք գտնել այս հարցի պատասխանը: Հնարավոր է, սեռական կողմնորոշվածությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Մեզինչ ունանք կարող էին մույնասեռականության երևույթի բազմաթիվ սեփական «գաղափարներ» և «բացատրություններ» առաջարկել, մեր անձնական պատմությունները կարող էին օգտագործվել տարբեր տեսությունների հաստատման համար: Սակայն, միևնույն է (և շատ խմբեր, որոնք հանդես են գալիս սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար, համաձայն են սրա հետ)՝ սեռականության ծագումը չպետք է ազդի մարդու սոցիալական և քաղաքական իրավունքների վրա: Հավասարությունը չի պահանջում գիտական արդարացում:

Սեռական կողմնորոշվածության գիտական հետազոտությունները հետաքր-

քիր են և տպավորիչ, դրանք գործունեության մեծ դաշտ են բացում գիտնականների համար: Բայց ո՞րն է մեծան հետազոտությունների նպատակը, ի՞նչ կարող են նրանք բերել հասարակ մարդկանց՝ լեսբուհիներին, գեյերին, երկսեռականներին: Նրանք, ովքեր հանդես են գալիս գեյերի դեմ, իրենց սեփական փաստարկներով են առաջնորդվում, և եթե բժշկությունը չկարողանա ծառայել նրանց տեսակետի հաստատմանը, ապա նրանք օժանդակություն կգտնեն այլ ոլորտներում:

«Գեյերի գենի» բացահայտումն արդյոք հղի չէ՞ մի շարք վտանգներով, հատկապես այնպիսի հասարակություններում, ուր իշխում է հոմոֆոբիան, իսկ սեռական փոքրամասնությունները չունեն լիիրավ քաղաքացիական իրավունքներ: Օրինակ, եթե արգանդում սաղմնաբջջի հետազոտություններ արվեն և «գեյի գեն» հայտնաբերեն, արդյոք դրան չի՞ հաջորդի հղիության արհեստական ընդհատումը, որպեսզի «հիվանդ» երեխա լույս աշխարհ չգա: Կամ արդարացվա՞ծ է արդյոք մույնասեռական սաղմը տարասեռականի վերափոխելու ներընկերային թերապիան:

Բժշկությունը շարունակում է երկսայր թուր մնալ՝ ինչպես լեսբուհիների, գեյերի և երկսեռականների, այնպես էլ փոխգենդերների համար, որոնց մասին մենք կպատմենք հաջորդ գլխում:

1. The Penguin Atlas to Human Sexual Behavior, Judith Mackay, Penguin, 2000.
2. The Mismeasurement of Desire, Edward Stein, Oxford University Press, 1999.
3. The Myth of Modern Homosexual, Rictor Norton, Cassell, 1999.
4. The Cultural Construction of Sexuality, Pat Caplan ed, Tavistock Publications, 1987.
5. Queer Science: the Use and Abuse of Research into Homosexuality, Simon Le Vay, MIT Press, 1996.
6. ABC News, 22 April, 1999.

8. Փոխգենդերներ. մենք, ինչպես աստղերը երկնքում
Սեռը ավելի բարդ է, քան ուղղակի «նա»-ն կամ «նե»-ն...
արևմտյան հայացքը «միգասեռային այլանդակությամբ»...
«երրորդ սեռ»...
ներքինիները Հնդկաստանում...
մարդու իրավունքները... «տրանսների» ազատագրական շարժումը...

Տղա է, թե՞ աղջիկ. սա առաջին հարցն է, որ տալիս են, երբ երեխա է ծնվում: Եվ, սովորաբար, ստանում են պատասխան՝ հայացք օգտելով փոքրիկի միգասեռական օրգաններին:

Երբ դուք առաջին անգամ եք հանդիպում մարդուն, ապա, ենթագիտակցորեն, նշում եք ինքներդ ձեր համար՝ տղամարդ է նա, թե կին: Եվ եթե դուք չեք կարողանում միանգամից որոշել նրա սեռը, ապա, հավանաբար, փորձում եք գտնել մարդու մեջ ինչ-որ տարբերակիչ հատկանիշներ, որոնք նրան դասում են տղամարդկանց կամ կանանց կենսաբանական սեռին: Որոշ պատճառներից ելնելով՝ ձեզ կարևոր է իմանալ մարդու սեռը:

Սեզանից շատերը պարզ ծրագրավորված մշակույթով մարդու սեռը դասում են

կենսաբանականի և սոցիալականի: Սակայն իրականում կյանքն ու բնությունը ավելի բարդ և բազմազան են, քան մենք կարծում ենք:

Մինչ այժմ մարդկանց մեծամասնությունը փոխզենողներին մասին տեղեկացվում են «սարսափների և ծիծաղաշարժ, անհեթեթ բաներ» պատմող լրագրերից կամ էլ՝ «աղմկահարույց» հոդվածներից, որոնք պատմում են «սեռ փոխելու» վիրահատությունների մասին: Ամենից հաճախ մնան պատմություններ անող մարդիկ տղամարդուց կին փոխանակման են՝ ի ծնն տղամարդիկ, ովքեր իրենց կին են զգում և ասում են, որ վաղ հասակից իրենց զգացել են «բռնված և փակված մի մարմնում, որն իրենց չի պատկանել»: Հանրաճանաչ անգլիացի գրող-ճանապարհորդ Ժան Մորիսը նրանցից մեկն է, ով նկարագրել է իր ավելի շուտ «հոգևոր», քան կենսաբանական սեռի պատկանելության փորձը: Եվ այդ զգացողությունը ծանոթ է շատ փոխզենողներին:

Այժմ ավելի ու ավելի փոխզենողներ «դուրս են գալիս ընդհատակից»: Եվ այն փաստը, որ առաջ նրանք չէին շտապում բացահայտորեն խոսել իրենց սեռական պատկանելության մասին, ցույց է տալիս, թե ինչ աստիճան էին ոտնահարվում և դեռ շարունակվում են ոտնահարվել փոխզենողներ մարդու իրավունքները:

Ովքե՞ր են փոխզենողները: Նրանց թվին են պատկանում կին փոխանակմանները, ովքեր իրենց տղամարդ են զգում (FTM) և տղամարդ փոխանակմանները, ովքեր իրենց կին են զգում (MTF), տրանսվեստիտները՝ հակառակ սեռի զգեստ հագնող մարդիկ, միջսեռականները, հերմաֆրոդիտները (ովքեր ծնվել են երկու սեռերի միգամեռական օրգաններով) և ներքինիները (օրինակ՝ հիջրամերը՝ Հնդկաստանում): Նրանց թվին են պատկանում նաև նրանք, ովքեր մասամբ են փոխզենողներ, նրանք, որոնց կենսաբանական սեռը տարբերվում է իրենց սոցիալական սեռից (ի դեպ, նրանք ոչինչ չեն ձեռնարկում իրենց բնությունը փոխելու համար), մարդիկ, ովքեր ենթարկվել են վիրահատական միջամտության և հորմոնալ թերապիայի՝ իրենց կենսաբանական սեռն ամբողջովին կամ մասամբ փոխելու համար, ինչպես նաև նրանք, ովքեր այս նպատակի համար ենթարկվել են միայն հորմոնալ թերապիայի:

Միաժամանակ մարդաբանական հետազոտությունները պարզել են, որ փոխզենողներից մեծամասամբ տարբեր մշակույթներում հաճախ հաստիկ տեղ է զբաղեցնում, և փոխզենողներն իրենց բնույթը տարբեր քաղաքակրթություններում տարբեր են արտահայտում: Պերուի փոխզենողները մնան չեն Ինդո-նեգրիայի փոխզենողներին, Հյուսիսային Ամերիկայի փոխզենողները քիչ են մնան Նամիբիայի փոխզենողներին: Սակայն ակնհայտ է այն փաստը, որ փոխզենողներից մեծամասամբ տարածված է ողջ աշխարհում, և փոխզենողների գոյությունը սովոր է գրում սեռի վերաբերյալ հաստատուն հայացքների վրա:

Հանելուկներ և տարատեսակություններ

Չի-Չին ապրում է Դոմինիկյան Հանրապետության գյուղերից մեկում: «Ես աղջիկ եմ ծնվել, բայց մի օր աղջիկը մահացավ, և ծնվեց տղան: Եվ այդ տղան իմ մեջ ծնվեց այն աղջկանից: Ես հպարտ եմ, որ ես այսպիսին եմ: Շատ մարդիկ իրոք մախամձում են մեզ», - ասում է նա ռեժիսոր Ռոնալդո Սանչեսին 1997 թվականի «Guevote» փաստագրական ֆիլմում: Ֆիլմը պատմում է այն մասին, թե

ինչպես են անցնում Չի-Չիի և Բոնիի՝ երկու կեղծ հերմաֆրոդիտների օրերը, և թե ինչպես են նրանց և իրենց ընտանիքների, ծնողների, գյուղի մյուս բնակիչների հարաբերությունները:

Եվ նրանք միայնակ չեն: Կեղծ հերմաֆրոդիտության հազվադեպ տեսակը առաջին անգամ նկատվեց 1970-ականների սկզբին Դոմինիկյան Հանրապետության մի խումբ գյուղական բնակիչների մոտ: Այդ տեսակը հայտնաբերվեց 38 մարդու մոտ, և այն բնորոշ էր 23 մեծ ընտանիքների 4 սերունդների: Չի-Չիի մայրը ծնել էր 10 երեխա: «Տալից երեքը՝ աղջիկներ, և երեքը՝ տղաներ, իսկ մնացած չորսը՝ «հաստիկ տեսակի» երեխաներ», - ասում է նա և շարունակում: - Դեռ մինչև երեխաների ծնվելը ես գիտեի, որ մնան բաներ առաջներում էլ են եղել, բայց երբեք չէի մտածել, որ դա կարող էր ինձ հետ պատահել... Ես ասացի, որ նրանք պետք է ընդունեն իրենց ճակատագիրը, որովհետև Աստված գիտի, թե ինչ է անում: Ես նաև նրանց ասացի, որ իսկական տղամարդիկ հաճախ ավելի քիչ են հասնում, քան նրանք, ովքեր ծնվել են աղջիկ: Այդպես էլ եղավ: Իմ այն որդիները, ովքեր իսկական տղամարդ են, չեն հասել նրան, ինչին հասել են իմ մյուս երեխաները»:¹

Նման դեպքերի բժշկական բացատրությունը հետևյալն է. դեռ չծնված տղաներն անընդունակ են տեստոստերոն արտադրել, որն օգնում է տղամարդկային արտաքին միգամեռական օրգանների զարգացմանը: Ծնվելիս մնան երեխաներն ունենում են սեռական օրգաններ՝ կազմված ամորձապարկից՝ կանացի սեռական շրթունքների տեսքով, առնանդամից՝ ծլիկ հիշեցնող և չիջեցված ամորձիներից:

Ըստ ակտիվիստ և գրող Ջաչարու Նաթաֆի տեղեկությունների՝ մնան երեխաներից շատերը Դոմինիկյան Հանրապետությունում ծնվելիս աղջիկ են համարվել և, համապատասխանաբար, դաստիարակվել են որպես աղջիկ: Սակայն, գենետիկորեն, մնան երեխաները եղել են տղա, և դեռահաս հասակում նրանց մոտ զարգացել են տղամարդկային հատկանիշները, այդ թվում, սկսել է առնանդամի աճը և իջել են ամորձիները: Գյուղական բնակիչները մնան երեխաներին անվանել են գլեդոչ /guevedoche/ կամ «ձվեր տասներկուսում»:²

Որոշ գիտնականների համար այս երևույթն իդեալական «բնական» գիտական փորձ էր, որը կարող էր նրանց օգնել մեկընդմիջտ ապացուցել, որ սեռական մույնականացման զարգացման մեջ հորմոնները շատ ավելի մեծ դեր են խաղում, քան մշակույթը: Հետազոտողների մի խումբ՝ Ջուլիան Իմպերատ Գինսլիի գլխավորությամբ, ենթադրում է, որ առանց բժշկական և սոցիալական միջամտության մնան երեխայի մոտ բնական կերպով սեռական հասունացման շրջանում կզարգանա տղամարդու սեռական մույնականացումը, անգամ այն դեպքում, եթե նրան որպես աղջիկ դաստիարակեն:³

Այնուամենայնիվ, ոչ բոլորն են համաձայն մնան բավական պարզեցված մոտեցմանը: Ազգագրագետ Գիլբերտ Հերդոլը ուշադրություն դարձրեց այն փաստին, որ գլեդոչները տարբերվում են մյուսներից, և նրանք տեսնում են, որ իրենք արտասովոր են՝ համեմատելով իրենց միգամեռական օրգաններն աղջիկների օրգանների հետ, երբ միասին լողանում են: Գյուղական բնակիչները, որոնք գիտեին գլեդոչների գոյության մասին մի քանի սերունդ շարունակ, ընդունում էին նրանց որպես «երրորդ սեռի» ներկայացուցիչներ՝ երբեմն անվանելով մաչի-ամբռա /machi-embra/ (տղամարդ-կին):⁴

Բայց ոչ բոլոր այդպիսի երեխաներն են հետագայում ցանկություն հայտնում փոխել սեռը՝ կամ լիարժեք կին, կամ լիարժեք տղամարդ դառնալու նպատակով: Նրանցից շատերն իրենց ընդունում են այնպիսին, ինչպիսին իրենք կան:

Այսպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ Դոմինիկյան Հանրապետությունում գոյություն ունի համայնք, որը ճանաչում է «երրորդ սեռի» մարդկանց իրական գոյությունը՝ որպես մարդկային բնության դրսևորում և որը համապատասխան սոցիալական դերեր է ստեղծում մեծ մարդկանց համար: Այստեղ վերաբերմունքը «երրորդ սեռի» մարդկանց հանդեպ թույլ է տալիս նրանց ասել. «Եթե ես այսպիսին եմ, ուրեմն Աստված գիտե, ինչու եմ այսպիսին... Եթե ես ինձ լավ եմ զգում, ապա ինչո՞ւ ինչ-որ բան պետք է փոխեմ: Ես մեծացել եմ այսպիսին, ինչո՞ւ ես ինչ-որ ուրիշ բան պետք է փոխեմ»:

Օրենքը և դանակը

Նման դրական մոտեցումը սեռական բազմազանությանը, սեռի տարատեսակությունների ընդունումը, ցավոք, ընդհանրական չեն արևմտյան աշխարհի մեծ մասի համար: Արևմտյան աշխարհը հեռու է դրանից. այստեղ կանոն է սեռերի միայն կամ արական, կամ իգական լինելը: Մարդիկ, փոխզենողեր ակտիվիստ Լեսլի Ֆեյնբերգի խոսքերով, տեսնում են միայն «երկու մեղ դուռ՝ տղամարդկանց համար և կանանց համար»: Բայց որոշ մարդիկ ուղղակի չեն կարող անցնել այդ դռներով: Եվ երբ հարկ է փաստաթղթեր լրացնել, նրանք ուղղակի չեն կարողանում իրենց համար ընտրել «տղամարդ» կամ «կին» սյունակը: Փաստորեն, եթե նրանք չեն ենթարկվել բժշկական միջամտության, որպեսզի սեռափոխություն անեն, ապա գոյություն չունեն...:

Այն ժամանակներից, երբ ԱՄՆ-ում և Եվրոպայում 1970-ականներին միջսեռական երեխաների միզասեռական օրգանների շտկումը դարձավ սովորական գործընթաց, գիտական աշխարհում բորբոքվեցին վիճաբանություններն այն մասին, թե ո՞րն է սեռական նույնականացման և սեռական դերերի հիմքը՝ կենսաբանությունը, թե՞ մշակույթը:

Ջոն Մանիի և Մերիլենդի Ջոն Հոփքինսի կլինիկայի ու համալսարանի գործընկերների աշխատանքը մեծ ազդեցություն ունեցավ միջսեռական երեխաների, փոխսեռականների և սեռական տարատեսակություններով մարդկանց այլ խմբերի «բուժման» վրա:

Լայն հռչակում ստացավ դեպքը երկվորյակ եղբայրներից մեկի հետ. թլպատման ժամանակ, քյոլիդացության պատճառով, նա գրկվեց առնանդամից և 7 ամսական հասակում, 1963 թվականին, նրան սեռափոխության թանկարժեք վիրահատության ենթարկեցին: Երեխային սեռական օրգաններ էին փոխապատվաստել այնպես, որ դրանք ոչնչով չտարբերվեին կանացի սեռական օրգաններից, իսկ սեռական հատմության շրջան մտնելիս պլանավորել էին նրան կանացի հորմոններով թերապիայի ենթարկել:

1973 և 1975 թվականների միջև ընկած ժամանակահատվածում Մանին հայտնեց այն մասին, որ վիրահատության և թերապիայի արդյունքը բարեհաջող է, և այդ հաջող դեպքը հաջորդող 20 տարվա ընթացքում ելակետ դարձավ ոլորտի հետազոտողների և բժիշկների գործունեության համար: Երկվորյակ տղայի սեռը փո-

խելու հռչակավոր վիրահատությունը ներշնչեց բժիշկներին բուժել տղաներին, որոնք ծնվում էին «շատ փոքր» առնանդամով. նման երեխաների համար նրանք սկսեցին խրախուսել սեռի փոփոխման, առնանդամի և ամորթների հեռացման և կանացի օրգանների պլաստիկ վիրահատությունները, ընդ որում՝ վիրահատությունը պետք է կատարվեր մինչև 3 տարեկան հասակը, որպեսզի նրանք կարողանային հնարավորինս որպես աղջիկ մեծանալ: Սակայն, Հոփքինսի թիմի տվյալների համաձայն, նրանք չկարողացան մինչև վերջ հետևել 1963 թվականի վիրահատության արդյունքներին, քանի որ երկվորյակն «անհետացավ տեսադաշտից»:

Սակայն դա այդպես չէր: Ինչպես պարզվեց, երկվորյակն իրեն աղջիկ չէր զգում, և նրա վարքը բնորոշ չէր իր հասակի աղջիկների վարքին. 12 տարեկանում նա հրաժարվեց խմել իրեն նշանակված էստրոգենի հաբերը՝ ուղղակի շարտեով դրանք: Նա նաև հրաժարվեց հեշտոցի լայնացման լրացուցիչ վիրահատությունից, որը բժիշկները «կառուցել էին» նրա համար: 14 տարեկանում երկվորյակն այլևս չցանկացավ վերադառնալ Ջոն Հոփքինսի կլինիկա, մինչև անգամ կարողացավ բոլոր սեռական բժիշկներին համոզել ֆալոպիաների և կաթնագեղձերի հեռացման վիրահատություն կատարել, իրեն տղամարդու հորմոններով թերապիա նշանակել: Այժմ երկվորյակն ասարում է չափահաս տղամարդու կյանքով:⁵

Արմատախիլ անելով «երկիմաստությունը»

Միջսեռականները, որոնց հաճախ հերմաֆրոդիտներ են անվանում, սովորաբար ծնվում են երկու կենսաբանական սեռերին բնորոշ միզասեռական օրգաններով, սակայն հազվադեպ է պատահում, երբ նրանք ծնվում են տղամարդու և կանացի միզասեռական օրգանների ամբողջական հավաքակազմով: Միջսեռականների ծնելիության ամենաբարձր ցուցանիշն ԱՄՆ-ում է՝ 4%, ինչը տարեկան կազմում է մոտավորապես 10 մլն երեխա:⁶

Հյուսիսային Ամերիկայի միջսեռականների ընկերակցության տվյալների համաձայն՝ յուրաքանչյուր 2000 երեխայից մեկը ծնվում է երկու սեռերի միզասեռական օրգաններով: Սրա պատճառների թիվը հասնում է ամենաքիչը երկու տասնյակի: Ամեն տարի ԱՄՆ-ում մեծ երեխաների սեռական օրգանների վիրահատական փոփոխության 2000-ից ավելի վիրահատություն է անցկացվում, որպեսզի արմատախիլ արվի նրանց սեռական պատկանելության «երկիմաստությունը»: Միջսեռականների ընկերակցությունն արշավներ է կազմակերպում ընդդեմ բժշկական այն միջամտությունների, որոնք կիառվում է այն փոքրիկների նկատմամբ, ովքեր, բնականաբար, չեն կարող տալ իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը:

Բժիշկները համարում են, որ մարդիկ ընդունակ կլինեն լիիրավ կյանքով ապրել միայն այն դեպքում, եթե կարողանան իրենց դասել որոշակի կենսաբանական և սոցիալական սեռի: Սակայն միջսեռականների ընկերակցության հիմնադիր Շերիլ Չեյքը այն կարծիքին է, որ մարդկանց մեծամասնությունն իրեն ավելի լավ կզգար առանց մեծ բժշկական միջամտությունների: Շերիլն ինքը ծնվել է երկու սեռի օրգանների հավաքակազմով և մինչև 18 ամսականը դաստիարակվել է որպես տղա: Հետո բժիշկներն ասել են նրա ծնողներին, որ նա բոլոր հատկանիշներով աղջիկ է և հեռացրել են նրա մեծացած ծլիկը: 8 տարեկանում վիրահատ-

հատել ու հեռացրել են նրա նրա ձվարանների «տղամարդկային» հատվածը: Այժմ նա ապրում է կնոջ կյանքով, սակայն ծիլիկի հեռացման վիրահատական միջամտությունը և սպիացած հյուսվածքներն այժմ թույլ չեն տալիս նրան ծիլիկային զգացողություններ և օրգզամ ապրել: Տիկին Չեյզն ասում է. «Միզասեռական օրգանների հաշմանդամություն» արտահայտությունը մենք պատրաստակամությամբ կիրառում ենք նրանց հանդեպ, ովքեր ապրում են «երրորդ աշխարհի» երկրներում, սակայն ցանկացած հաշմանդամ դարձնող բժշկական միջամտություն, չգիտես ինչու, բժշկական խելամտություն է համարվում»:⁷

Չեյզն այս հարցում մենակ չէ: Բազմաթիվ միջսեռականներ մանուկ հասակում ենթարկվում են չարդարացված զննումների, վիրահատությունների, ցավի, վարակումների: Արդեն չորս տասնամյակ բժիշկներն իրականացնում են իրենց՝ մարդկանց խելող վիրահատությունները, և մեծ մասամբ նրանց հիվանդները հետագայում «տեսադաշտից կորչում են»: Իսկ դա նշանակում է, որ գոյություն չունեն ստույգ բժշկական տվյալներ ինչպես նման վիրաբուժության հետևանքները գնահատելու, այնպես էլ հետագայում խորհուրդներ տալու համար: Ամենայն հավանականությամբ, նման վիրահատությունները կատարվում են ոչ այնքան բժշկական անհրաժեշտությունից, որքան հիվանդների «ծայրահեղ բարդ սոցիալ-հոգեբանական վիճակը» մեղմելու նպատակով: Միջսեռական երեխաներին, նրանց ծնողներին և ընկերներին խորհրդակցական օժանդակությամբ ապահովելու փոխարեն, որպեսզի օգնեն նրանց ընդունել գոյություն ունեցող փաստը, բժիշկները միայն բարդացնում են վիճակը: Մինչև վիրահատությունը, բժիշկները, համաձայն իրենց տեքստիների, երկու սեռերի հատկանիշներ ունեցող միզասեռական օրգաններն անվանում են «ձևախախտված», իսկ վիրահատությունից հետո՝ «շտկված»: Սակայն, ունեցած տվյալների համաձայն, միջսեռականներն իրենք, որոնք մանուկ հասակում ենթարկվել են «շտկող» վիրահատությունների, իրենց օրգաններն անվանում են «ամբողջական», «բնական» մինչև վիրահատական միջամտությունը և «խելված» վիրահատությունից հետո:

Բացի դրանից, հաճախ երեխաներին ուղղակի խաբում են: Բնորոշ է մի կնոջ օրինակը, ում 12 տարեկանում, երբ նրա մարմինը սկսել է փոխվել, համոզել են ենթարկվել ձվարանների հեռացման վիրահատության՝ դա պատճառաբանելով նրանով, որ նրա մոտ քաղցկեղ են հայտնաբերել: Իրականում վիրահատության ընթացքում փոքրիկ հիվանդի մոտ հեռացրել էին ծիլիկը և զարգանալ սկսող ամորձիները:

Ասացվածքն այն մասին, որ «հեշտ է փոս փորել, քան պատ կառուցել», լիովին միջսեռական երեբեխաների մասին է ասված. նրանց մեծամասնությանը վիրաբույժներն ուղղակի վերափոխում են աղջիկների: «Նորմալ» բժշկական չափանիշների համաձայն՝ տղաների մոտ առնանդամի չափսը պետք է հասնի գոն 2.5 սմ-ի, այն դեպքում, երբ աղջիկների ծիլիկը պետք է լինի 0.9 սմ-ից ոչ ավել:

Ըստ հոգեբան Մյուզան Կեսլերի՝ երեխաների սեռական օրգանները, որոնց հավելանուկների չափսը տատանվում է 0.9 սմ-ից մինչև 2.5 սմ, համարվում են խելված և պահանջում են վիրահատական միջամտություն: Որոշ դեպքերում, անգամ եթե ծնողները չեն նկատում խնդիրը, բժիշկները, միևնույն է, համառորեն պնդում են «շտկման» մասին: Անցկացվում են վեց ամսական աղջիկների հեշտոցի խորաց-

ման վիրահատություններ, անգամ եթե վիրահատական միջամտությունները ոչ միշտ են բերում ցանկալի արդյունքի, և պահանջվում են կրկնվող վիրահատություններ ավելի մեծ հասակում: Մյուզան Կեսլերը համարում է, որ «միզասեռական օրգանների երկիմաստությունը» անհրաժեշտ է «շտկել», քանի որ դա սպառնում է ոչ թե երեխայի կյանքին, այլ մշակույթին, որում նման երեխան ծնվել է:

1994 թվականին Չեյզը և նրա հետևորդները սկսեցին հավաքել պատմություններ «Հերմաֆրոդիտները, որոնք սեփական կարծիք ունեն» տպագիր հրատարակության համար: Այս հրատարակության առաջին համարի շապիկի վրա գետեղել էին կարմրաքիթ հյուսիսային եղջերու Ռուդոլֆի նկարը, որի՝ ձեռքով նկարագրող քիթը զարդարում էր գրքի յուրաքանչյուր նմուշը: Հողվածում բժիշկները քննարկում էին Ռուդոլֆի քիթը որպես զգվելի ձևախելման օրինակ, և ևս մեկ նկար «վիրահատությունից» հետո, որն արտացոլում էր «գերազանց» արդյունքը՝ ցույց տալով այլանդակված Ռուդոլֆին արցունքն աչքերին:

Որոշ բժշկական փորձագետներ նույնպես կասկածի տակ են դնում «շտկող» վիրաբուժության անհրաժեշտությունը: Ջոն Հոփքինսի համալսարանի՝ երեխաների և չափահասների հոգեբանության պրոֆեսոր Ռենե Ռեյներն ասում է, որ պետք չէ այդքան մեծ ուշադրություն դարձնել միզասեռական օրգաններին՝ մատնանշելով, որ «ուղեղն էլ մարդու ամենակարևոր սեռական օրգաններից է»:⁸

Համակարգված սեռ

Իրականում մարդու սեռը նույնականացնելը շատ ավելի բարդ է, քան կարծում են շատերը: Կենսաբանական սեռը որոշելու համար պետք է ի գիտություն ընդունել մի քանի գործոններ՝ քրոմոսոմային սեռը (X կամ Y), հորմոնալ սեռը (էստրոգեն կամ տեստոստերոն), գեղձերի սեռը (ձվարաններ կամ ամորձիներ), արտաքին սեռական օրգանների սեռը (հեշտոց կամ առնանդամ), վերարտադրողական սեռը (սերմնաբջիջ կամ ձվաբջիջ), ինչպես նաև այլ, որոնք կապված են ներքին օրգանների հետ:

Այս գործոնները երբեմն հակասում են միմյանց: Եվ հազիվ թե մեզանից որևէ մեկը իմանա, թե ինքը 100 տոկոսով, հորմոնների և քրոմոսոմների տեսանկյունից, կին է, թե՛ տղամարդ, քանի որ իրական կյանքում ոչ այնքան հաճախ ենք համապատասխան հետազոտություններ անցնում դա պարզելու համար: Միայն օլիմպիական խաղերին մասնակցելու դեպքում կարող են քրոմոսոմային անալիզ հանձնել, թեպետ մյուս մարզական կազմակերպությունները հրաժարվել են նման գործընթացից՝ դա անարդարացի համարելով: Բրիտանական մարզական բժշկության պարբերականի տվյալներով, օրինակ, ատլետները չեն կարող քրոմոսոմային սեռի թեստն անցնել, քանի որ քրոմոսոմային տարատեսակություններն անպայման չէ որ արտացոլվեն արտաքինում: Թեստը կարող է բացահայտել, որ ատլետը կին չէ, իսկ դա նշանակում է, որ նա չի կարող մասնակցել կանանց սպորտային մրցումներին: Մեռի մյուս ցուցանիշները նույնպես կարող են տարափոխվել: Անգամ վերարտադրողական հնարավորությունները որոշակի մարդու պարզ ցուցանիշ չեն. որոշ միջսեռականներ կարող են երեխաներ ունենալ: Այսպիսով, կենսաբանական սահմանը կնոջ և տղամարդու միջև այնքան էլ հստակ չէ:

Բրիտանացի ակադեմիկոս Ստեֆան Վիտլը գրել է. «Այսօրվա բժշկությունը ճանաչում է միջսեռականների 700-ից ավելի տարբեր ախտանիշներ, իսկ յուրաքանչյուր 200 նորածններից մեկը կրում է իր մեջ միջսեռային այս կամ այն տեսակի ձևավորություն: Նման երեխաների մի մասը երբեք չի իմանա դրա մասին, մյուսներն էլ կիմանան, եթե ավելի մեծ հասակում անպտղության համար կլինիկայում ախտորոշում անցնեն»:⁹

Պետք է նկատի ունենալ, որ կենսաբանական սեռը և սոցիալական սեռը տարբեր հասկացություններ են: Սոցիալական սեռը ենթադրում է մշակութային, հոգեբանական և պատմական համատեքստ, այն վերաբերում է մարդկանց հասարակական դերերին, նրանց աշխատանքին, նրանց հագուստին, նրանց վարքին:

Մարդու կենսաբանական սեռը սովորաբար կանխորոշված է այն մարմնով, որում նրան վիճակված է ծնվել: «Տղա» կամ «աղջիկ» բառերը ծննդյան վկայականում ազդում են նրանց հետագա սոցիալական կյանքի բոլոր ոլորտների վրա:

Երրորդ սեռ

Տարբեր մշակույթներում «խառնակազմ» տեսակի միզասեռական օրգաններով մարդկանց տարբեր կերպ են վերաբերվում: Երկու՝ կենսաբանական և սոցիալական սեռերի ձևանմուշը ոչ մի դեպքում ընդհանուր չէ: Օրինակ, ինչպես ցույց են տալիս վկայությունները, 1930-ականներին նավախո ցեղի ամերիկյան հնդկացիները երեք ֆիզիկական աստիճաններ են ճանաչում՝ տղամարդ, կին և հերմաֆրոդիտ կամ նաղ /nael/: Նաղը մարդկանց հատուկ կարգավիճակ է, հատուկ ֆունկցիաներ, հատուկ հագուստի ոճ, և, շնորհիվ փորձի և իմաստության, նրանց հաճախ են դիմում խորհրդի համար: Հատուկ կենսաբանական և սոցիալական հերմաֆրոդիտների խումբ է ճանաչվել նաև այլ ամերիկյան հնդկացիների խմբերի մեջ, ուր երրորդ սեռի մարդիկ ճանաչված են որպես բեղդաշներ (տե՛ս 3 գլուխը): Մարդը, ով բեղդաշ է դառնում, երրորդ սեռի խումբ է անցնում՝ իր հոգևոր և անձնական նկատառումներով, ու չի փոխում իր մարմինը: Բեղդաշները փոխում են իրենց սոցիալական սեռը, չփոխելով կենսաբանականը, և նրանց ընտրությունը ընդունվում է մշակույթով, որում նրանք ապրում են՝ անկախ բնությունից: Նրանք, նրանց սիրեցյալները և նրանց զուգընկերները իրենց նորմալ են զգում, համարում են հասարակության իրավահավասար անդամ:

Հիջրաների գոյությունը Հնդկաստանում ունի 2500 տարվա պատմություն: Այժմ, նրանք հայտնի են որպես երրորդ սեռի կաստա. հիջրաները հերմաֆրոդիտներ կամ ներքինիներ են կամ «էրոտիկ տղամարդ-կանանց սուրբ կաստա»: Նրանցից ոմանք միջսեռականներ են ծնվում, մյուսները ենթարկվում են ամորձատման: Սակայն նրանց ընկերակցությունը ներառում է նաև տրանսվեստիտներին, նույնասեռական առևտրային սեքս աշխատողներին և Բահուչարա Մատա աստվածուհու կրոնական հետևորդներին:⁴

Հնդկաստանում հիջրաներին վերաբերվում են որպես երրորդ սեռի, և նրանց համար հասարակությունում հատուկ տեղ գոյություն ունի: Պետք է նշել, որ նրանց հասարակական դիրքը բարձր չէ, նրանց հավասարեցնում են անառակ կանանց, մարմնավաճառների, սոցիալական վտարյալ անձանց: Այնուամենայնիվ, հիջրա-

ները հասարակության համար վտանգավոր, վնասակար ուժ չեն համարվում: Վատ նշան է համարվում հիջրաների թատերախմբի ծառայությունները մերժելը հարսանեկան և այլ տոնախմբությունների ժամանակ կամ երգերով ու պարերով մի փոքր երկիմաստ ներկայացումների համար նրանց չվճարելը: Փող վաստակելու համար հիջրաները նաև օրհնում են երեխաներին և անեծքներ թափում մեծահասակների գլխին. համարվում է, որ նրանք ընդունակ են խորհրդանշական վերահսկում իրագործել կյանքի և մահվան վրա՝ նկատում է մարդաբան Մերենա Նանդան իր հեղինակային աշխատությունում:

Կաստան իր թևերի տակ է առնում բոլոր երեխաներին, որոնք անատմիպես ծնվում են որպես հերմաֆրոդիտներ, ինչպես նաև նրանց, ովքեր մեծ ցանկություն են հայտնում դառնալու հիջրա: Իր հետազոտությունում Նանդան հիջրաներին համեմատում է փոխսեռականների հետ և նկատում, որ այն պատճառով, որ Արևմտյան աշխարհում գոյություն չունի «երրորդ սեռ» հասկացությունը, փոխսեռական մարդիկ այնտեղ գտնվում են մշտական ճգնաժամի մեջ. հասարակությունում նրանց համար ուղղակի տեղ չկա:⁴

Շատ ժամանակակից հիջրաներ զբաղվում են առևտրային սեքսով: Հնդկաստանում որոշ տղամարդիկ նախընտրում են սեքսով զբաղվել հիջրաների հետ նրանց պատրաստակամության պատճառով, այն դեպքում, երբ նրանց կանայք համաձայնում են դրան՝ առանց ցանկության: Մերենա Նանդայի անցկացրած հարցազրույցները ցույց են տալիս, որ նրանք, ովքեր ընտրում են հիջրաների ուղին, իրենց ընտրությունը պատճառաբանում են իրենց նույնասեռական կողմնորոշվածությամբ: «Մենք հազվադեպ ենք աղջիկների պես, որովհետև սեռական ցանկություն զգում ենք տղամարդկանց հանդեպ»: Մյուսները հացի փող են վաստակում ծիսակատարություններ մատուցելով, իսկ ոմանք էլ նույնիսկ նախընտրում են քաղաքականության ասպարեզ մտնել:

Լեռնային Պապուա Նոր Գվինեայի արևելյան մասի սամբայի բոլոր ցեղերի երրորդ սեռի մարդիկ հայտնի են որպես կվոլու-սաթմվո /kwolu-satmwol/ կամ «կանայք՝ կերպարանավորվող տղամարդկանց»: Բժշկության տեսանկյունից՝ նրանք նման են Գոմիինիկյան Հանրապետության գեղորշներին, նրանց մոտ դիտվում է հերմաֆրոդիտիզմի հազվադեպ տեսակ, որը կոչվում է «5-ալֆա ռեդուկտազի դեֆիցիտ»: Իր սամբա ազգության դաշտային հետազոտությունների ժամանակ 1970-ականներին մարդաբան Գիլբերտ Հեդդոնը մտմտում էր գաղափարներ, որոնք հետագայում կազմեցին նրա բեղմնավոր էսենցիայի կորիզը՝ երրորդ կենսաբանական սեռ, երրորդ սոցիալական սեռ: Նա պարզել է, որ թեպետ որոշ դեպքերում, կվոլու-սաթմվոներից ոմանք ծնվելուց հետո կարող են միանգամից սպանվել, սակայն հասարակությունը, ընդհանուր առմամբ, ընդունում է կվոլու-սաթմվոներին այնպիսին, ինչպիսին նրանք կան, և նրանց դաստիարակությունում նախապատվությունը տալիս են տղամարդկային հատկությունների դաստիարակմանը: Իրենց յուրահատուկ սեռական նույնականացման մեջ նրանք պահպանում են որոշ կամացի տարրեր, սակայն դա չի խանգարում նրանց դառնալ հարգված շամաններ, քրմեր և ռազմիկ-առաջնորդներ: Գոյություն ունեն «երրորդ սեռի մարդկանց նաև այլ օրինակներ. բայոտ /bayot/ կամ լակինոն /lakinson/ սեբու ժողովրդի

մոտ Ֆիլիպիններում, վարիա /waria/ Ինդոնեզիայում, մահու /maha/ Թաիլանդում:⁴

Մակայն աշխարհի շատ վայրերում գոյություն ունի վախ ու խտրականություն սնող ուժեղագույն տաբու: «Մարդկանց թվում է, որ անհասկանալի սեռի մարմինները սպառնալիք են կրում,- ասում է ակտիվիստ Ջաչարու Նաթաֆը:- Հնարավոր է, երկու սեռերի միգասեռական օրգաններով մարմինը հրահրում է ցանկություն, և մարդիկ մտածում են, որ մման մարմին ունենալը նշանակում է ունենալ ավելի մեծ սեռական ներուժ, քան ունեն սովորական մարդիկ: Հնարավոր է «կենսաբանական և սոցիալական սեռերի մոտացիա» հասկացությունը առաջացնում է մման վախ կամ անհամագոր ռեակցիաներ»:

Անկախ պատճառներից, բժիշկ մասնագետները շարունակում են դրական վերաբերվել «երկինաստությունից» ազատվելու արմատական վիրահատական միջոցների և վիրահատում են ցանկացած «շեղում»:

«Իսկ ի՞նչ ասել կարեկցանքի և հավատքի մասին, որպեսզի ծնողները հաղթահարեն իրենց հուզական ցավը և վերջ տան անհանգստանալ այն բանի համար, որ իրենց երեխան «կատարյալ» չէ, և կարողանան պատրաստակամությամբ դաստիարակել իրենց երեխային, եթե նույնիսկ նա տարբերվում է մյուսներից,- հարցնում է Նաթաֆը: -Իսկ ի՞նչ ասել երեխայի իրավունքների, հատկապես՝ իր սեռական նույնականացումն ինքնուրույն ընտրելու իրավունքների մասին, եթե անգամ այդ ընտրությունը կհակասի նրան, ինչին դատապարտել են նրան բժշկական փորձագետներն ու վիրաբույժները»:

Վերջերս Կոլումբիան դարձավ այն սակավաթիվ երկրներից մեկը, ուր երեխայի իրավունքների օգտին օրենք ընդունվեց՝ մման դեպքերում սեռական նույնականացում ընդունելու որոշումը թողնելով երեխային:¹⁰

Ներքինի քաղաքագետը

«Քաղաքականության համար մեզ պետք չեն միգասեռական օրգաններ: Մեզ խելք է պետք»,-այս անսովոր, բայց ճշմարտացի լոզունգի հեղինակը Շաբնե Նեհրուն է, առաջին ներքինի քաղաքագետը, ով իր թեկնածությունը քվեարկության էր դրել հնդկական ազգային ժողովում:

Պառլամենտ նա չանցավ, սակայն Խիզարի քաղաքապետարանի խորհրդի անդամ լինելն արդեն քիչ բան չի ասում: Նա մեծ հաջողությունների է հասել իր՝ վերակառուցված հետնախորշերի շրջանը ջրով ապահովելու, կոյուղու և ճանապարհների վերակառուցման գործում: «Կար ժամանակ, երբ ես զվարճացնում էի մարդկանց պարերով,- ասում է Շաբնան: -Այժմ ես կատարում եմ նրանց համար բարի, մարդասիրական առաքելություն»:

Նա ծնվել է ներքինի, իսկ ծնողները եղել են ձեռնարկատերեր՝ բարձր կատալից: «Չմայած իմ մեջ գոյություն ունեին երկու սեռեր, ինձ որպես աղջիկ են դաստիարակել»,- ասում է նա:

Երբ մայրը մահացավ, նրան ընտանիքից տարավ ներքինիների մի խումբ, և նա գտավ իր տեղը սեռական վտարյալների ենթամշակույթում՝ իր կարգով ավելի ցածր, քան անձեռնմխելիները:

Շաբնան և նրա քաղաքագետ պաշտոնակիցներից մի քանիսը, որ նույնպես

ներքինիներ են, ապացույցն են այն բանի, որ հիջրաները, որոնք երկար ժամանակ աքսորի էին ենթարկվել որպես հասարակության տակաճների, սկսում են հասարակական հարգանք նվաճել: Անգամ կարծիք կա, որ ներքինիները, ծանրաբեռնված չլինելով ընտանիքով և երեխաներով, իդեալական հակադրություններ են քաղաքական կաշառակերության և քավոր-սանահերության, որը բարգավաճում է հնդկական հասարակությունում:

Աղբյուրները՝ The Chandigarh Tribune, 13 March, 2000; Wall Street Journal, 24 September, 1998; Serena Nanda in Third Sex, Third Gender, op cit.

Բռնություն և խոցելիություն

Շատ տեսանկյուններից փոխգեղեր մարդիկ առավել խոցելի են հասարակությունում: Նրանք խտրականության են ենթարկվում ամենուր՝ տանը, ուսումնական հաստատություններում, աշխատավայրերում, և շատ երկրներում գոյություն չունեն նրանց իրավունքների պաշտպանություն իրավական հիմքեր: Բազմաթիվ փոխսեռականներ դառնում են առևտրային սեքս աշխատողներ և մեծ մասամբ դա տեղի է ունենում այն պատճառով, որ նրանց համար դժվար է այլ աշխատանք գտնել ու նաև այն պատճառով, որ նրանց վիրահատության համար մեծ գումարներ են անհրաժեշտ: Այս ամենն իր հերթին նրանց ավելի խոցելի է դարձնում ՄԻԱՎ վարակի և բռնությունների հանդեպ:

Բռնության մակարդակը, որին ենթարկվում են փոխսեռականները, առավել բարձր է Լատինական Ամերիկայի որոշ երկրներում: Մեքսիկայում՝ Տակստլա Գատիբեզ քաղաքում գտնվող Չիսպաս մահանգում, 1991-ից մինչև 1994 թվականները սպանվել է 12 փոխսեռական առևտրային սեքս աշխատող: Ակտիվիստները հասարակայնության ուշադրություն են հրավիրել այսօրինակ դեպքերի վրա, սակայն ոստիկանությունը հրաժարվել է զբաղվել մման սպանություններով, և ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Ոստիկանական չարաշահումներին զուգահեռ ավելանում է դեպքերի քանակը: 2000 թվականի փետրվարին Կորոբոն, ձերբակալման ժամանակ, Արգենտինա Վանեսա Լեդեաման մահացել է չպարզաբանված հանգամանքներում: Ոստիկանությունը սպառնացել էր ակտիվիստներին, որոնք արշավ էին կազմակերպել այս դեպքի հետաքննության համար:

Սեռական և ֆիզիկական անարգանքները սովորական երևույթ են դարձել. ձերբակալվածներին կարող են ստիպել մերկանալ, կարող են ծեծել կամ հարկադիր սեռական հարաբերության մեջ մտնել: «Միջազգային համաներում» կազմակերպության նյութերի համաձայն՝ փոխգեղերների վրա հարձակումները հաճախ նպատակ են հետապնդում վնասվածքներ հասցնել նրանց և հատկապես մարմնի այն հատվածներին, որոնք «վկայում» են նրանց «այդպիսին» լինելու մասին: Օրինակ, տղամարդուց կին փոխսեռականներին ծեծում են այնպես, որպեսզի վնասեն նրանց դեմքը և կրծքերի ներպատվաստուկները, մինչդեռ դրանց պատռվելու դեպքում թունավոր նյութերը կարող են օրգանիզմ ներթափանցել և ծանր հետևանքներ ունենալ առողջության համար:¹³

Փոխգեղերների ընկերակցություններն այլ երկրներում, օրինակ՝ Թուրքիայում, նույնպես հաճախ են դառնում ոստիկանության նկրտումների առարկա:

Առօրյա կյանքում նրանց համար ծանր փորձություն կարող է դառնալ ավանդապաշտ բժշկին այցելելը. փոխզենողները հաճախ են ասում այն մասին, որ բուժաշխատողները նվաստացնում են իրենց: Արդյունքում նրանցից շատերը խուսափում են դիմել բժշկական օգնության, անգամ երբ հիվանդանում են: Իսկ շատ երկրներում սեռը վիրահատական միջամտությամբ փոխածները խնդիրներ են ունենում փաստաթղթերի հետ՝ չկարողանալով փոխել դրանք: Այսպիսով, նրանց զրկվում են պաշտոնապես ամուսնանալու իրավունքից, դառնում են նվաստացումների, անառողջ ուշադրության և անգամ այլ մարդկանց անձը հաստատող փաստաթղթերի օգտագործման կասկածով հնարավոր ձեռքակալման թիրախներ:

Դայանի սպանությունը

2000 թվականի հուլիսին Վալենսիայում (նահանգ Կարաբոբյում, Վենեսուելա) երկու տղամարդ ներխուժել են Դայանի (Խոսե Լուիս Լիվեզի) սենյակ և կրակել նրա վրա: Վնասվածքը մահացու էր:

Նրա մահվան հանգամանքներն այն մտքին են բերում, որ Դայանին մահապատժի էին ենթակել՝ շրջանցելով իրավաբանական որոշ օրենքներ: Նրան զնդակահարել են այն ժամանակ, երբ դեռ չէր ապաքինվել դրանից առաջ պետական ոստիկանության սպայի կողմից արձակած գնդակի վերքերից: «Respeto de la Personalidad» փոխզենողեր իրավապաշտպանների կազմակերպության տվյալներով՝ բռնություններն ու չարաշահումները, հատկապես ոստիկանության կողմից, լայն տարածված են Վալենսիայում: Ոստիկանները բռնի ուժով կտրում են փոխզենողների եղունգներն ու մազերը: Նրանց, ովքեր հրաժարվում են սեռական ծառայություններ մատուցել ոստիկաններին, կիսամերկ տանում են քաղաքի ծայրամասեր և թողնում այնտեղ: Կարաբոբյի ոստիկանական ուժերի հրամանատարը հայտնում է. «Մենք առևտրային սեքս աշխատողներին և նույնասեռականներին վերաբերվում ենք ոստիկանական ծածկագրի օրենքներով: Նրանք իրավունք չունեն ազատ զբոսնել փողոցներով»:

Աղբյուրը՝ Gay and Lesbian Human Rights Commission website www.iglhrc.org

Մարտահրավեր

Փոխզենողների շարժումը մարտահրավեր է նետում ինչպես երկու սեռերի ձևաչափերի դաժան անասանությանը, այնպես էլ դրանից բխող մարդկանց իրավունքները սահմանափակող փորձերին:

Փոխսեռականները, որոնց սեռական նույնականացումը չի համապատասխանում նրանց բնածին կենսաբանական սեռին, սովորաբար երկու ուղի ունեն այս խնդիրը լուծելու՝ կա՛մ պետք է սեռը փոխեն, որպեսզի ճշումների չենթարկվեն հասարակության կողմից, կա՛մ անվերջ պայքարների մեջ մտնեն՝ իրենց ընկալելի դարձնելու, իրենց իրավունքները պաշտպանելու համար:

Ավելի ու ավելի շատ փոխսեռականներ այլևս չեն թաքնվում. նրանք դուրս են գալիս «ընդհատակից», հիմք դառնում սոցիալական շարժման ստեղծման համար: Չաչարի Նաթաֆը սա հետևյալ կերպ է բացատրում. «Որպես փոխզենողեր տղամարդ, ես չեմ կարող սովորական տղամարդու տեղ անցնել, բայց ես չեմ

պատրաստվում թաքնվել, այլ բացահայտորեն հանդես եմ գալիս խտրականության դեմ: Ես չեմ դարձել փոխսեռական իմ քմահաճույքով. ես որոշեցի չփոխել իմ սեռական պատկանելությունը՝ որպես բողոքի նշան: Ես ընտրել եմ այս ուղին, որպեսզի հասնեմ ներդաշնակության: Ես ցանկանում եմ ազատվել խորհրդանշական շղթաներից, որոնցով ինձ կապկպել են հասարակական կանոնները: Կանոնների ոսկրացածություն՝ ահա թե որն է անբնականը»:

Գիտնականներն այժմ զբաղվում են թեմաներով, որոնք առաջ «յոթ կնիքով կնքված գաղտնիք էին» գիտության համար: «Քանի՞՞ կենսաբանական և սոցիալական սեռ գոյություն ունի»,- հարց է տալիս Գիլբերտ Հերդտը՝ դիտարկելով երկու՝ կենսաբանական և սոցիալական սեռերի կոշտ ձևաչափի աղյուսակը, որն ամուր արմատացած է արևմտյան գիտակցության մեջ և սահմանափակող մոտեցում է ենթադրում անգամ այնպիսի առաջադեմ մտավորականների համար, ինչպիսիք են Դարվինը և Ֆրեյդը:

Երկու սեռերի համակարգը քարացած ճշմարտություն չէ: Այդ համակարգն ընդամենը արդյունք է այն հասարակությունների, որոնք կապված են վերաբուսողման հետ, եզրակացնում է Հերդտը: «Մեզ պետք են կենդանի մարդաբանությունն ու սոցիալական պատմությունը, որոնք մեզ կբերեն մարդկանց կյանքի իրականության ավելի ամբողջական ըմբռնմանը»,- ասում է նա:⁴

Եվ, հայտնելով իրենց մասին, փոխսեռականներն իրենք են այժմ իրականություն ստեղծում: Ավելի ու ավելի փոխզենողներ և փոխսեռականներ որոշում են ապրել որպես երկու սեռի մարդիկ կամ որպես երկու սեռի խաչաձևումներ և ընտրում են հերմաֆրոդիտի մարմինը: Ակտիվիստ Մայքլ Հերնանդեզն ասում է. «Ես ձեռք բերեցի հավասարակշռություն, համերաշխության զգացում: Ես ինչ-որ ավելի մեծ բան եմ, քան ուղղակի տղամարդ կամ ուղղակի կինը: Ես ոչ տղամարդ եմ, ոչ էլ կին, ես ամբողջականություն եմ, որն իր մեջ է ներառում երկու կեսերը... Ես ուղղակի գոյություն ունեմ: Անունն ու պատկանելությունն արդեն այդքան էլ կարևոր չեն... Սեռը և վարքը նույնքան փոփոխական են, ինչպես աստղերը երկնքում: Գոյություն չունի ստանդարտ ձևանմուշ, որը որոշակիությամբ կապացուցի, որ ինչ-որ մեկը փոխզենող է»:¹²

Բազմաժանր գրող և հռետորական Լեսլի Ֆեյնբերգը մեկնաբանում է. «Կանանց ազատագրական շարժումը խթան դարձավ բռնության և խտրականության հարցերի քննարկումների համար, որոնց հետ մշտապես առնչվում են կանայք մեր հասարակությունում... Դա մեծ քայլ էր դեպի առաջ: Եվ այժմ ևս մի շարժում հայտնում է իր մասին և նոր էջ բացում պատմության մեջ՝ փոխսեռականների ազատագրական շարժումը: Եվ մենք կրկին խոսում ենք հասարակության վերաբերմունքի մասին այն մարդկանց նկատմամբ, ովքեր ոչ ավանդական կողմնորոշվածություն ունեն կամ որոնց կենսաբանական սեռը չի համապատասխանում հասարակական սեռային դերին: Եվ այս բանավեճը նոր ներդրում կլինի մարդկանց գիտակցության ընդլայնման գործում»:

Այս պայքարն իր մեջ թաքցնում է բոլորիս ազատագրման ներուժը՝ անկախ սեռական պատկանելությունից, տղամարդկային և կանացի ըմբռնման կոշտ, կարծրատիպային ուղիներից:

Կենդանի, շփակված օտար մարմնում

«Այժմ ես չեմ կարող ասել, որ ես փակված եմ ինձ համար օտար կանացի մարմնում: Ես միայն կարող եմ ասել, որ ես եղել եմ տղամարդու կենդանի հոգի՝ կնոջ մարմնում և ես որոշեցի մնալ հենց այդպիսին. ես ընտրեցի ներդաշնակության ուղին մարմնի ու հոգու միջև և որոշեցի ընդմիջտ, կյանքի ողջ ընթացքում մնալ տղամարդ», -ասում է Ջեմիսոն Գրինը, ամերիկացի գրող և հռետոր:

Աղբյուրը՝ Reclaiming Genders, Kate More and Stephen Whittle eds, Cassell, 1999.

1. Guevote, Rolando Sanchez, Fama Film AG, Bern, Switzerland, 1997.
2. This chapter draws extensively from Zachary I Nataf's article 'Whichever I Feel', New Internationalist, April, 1998.
3. New England Journal of Medicine, Juliane Imperato-MgGinley et al, 'Androgens and the Evolution of Male Gender Identity Among Male Pseudo-Hermaphrodites', No 300, 1979.
4. Third Sex, Third Gender, Gilbert Herdt ed, Zone Books, NY, 1994.
5. Hermaphrodites with Attitude Quarterly, Bo Laurent, Fall/Winter, 1995-1996.
6. Quelle Difference? Biology Dooms the Defense of Marriage Act, David Berberly, High Concept (Website: www. sufablebooks.com/wbmedical/).
7. San Francisco Chronicle, David Tuller, 'Intersexuals begins to Speak Out on Infant Genital Operations', 21 June, 1997.
8. Clinical Psychiatry News, Katherine Maurer, vol 25, No 7, July 1997.
9. Reclaiming Genders, Kate More and Stephen Whittle eds, Cassell, 1999.
10. IGLHRC, 2000.
11. Breaking the Silence, Amnesty International, 1997.
12. Trans Liberation, Leslie Feinberg, Beacon Press, 1998.
13. Crimes of Hate, Conspiracy of Silence, Amnesty International, 2001.

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. ՊԱՇՏՊԱՆԵԼՈՎ ԾԻԱԾԱՆԸ
Ի՞նչ պետք է արվի

Սեռական փոքրամասնությունները բացել են լռության ու գաղտնիության վարագույրը, և նրանց պայքարն այժմ ավելի շատ քննարկվում է քաղաքացիական և մարդու իրավունքների համատեքստում:

Իհարկե, դա չի նշանակում, որ նրանց պայքարը ամենուրեք հարգանք է ներշնչում: Այն փաստը, որ սեռական փոքրամասնությունները գնալով առավել նկատելի են դառնում, կարող է բերել հակազդեցության և թշնամանքի գորեղացման: Բայց շատ տեղերում բռնության ալիքները դիմադրություն են հրահրում: Համարձակ մարդիկ հիմնում են կազմակերպություններ անգամ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը և Նամիբիան, ուր ատելությունն ու կեղեքումը դրսևորվում են հատուկ դաժանությամբ: Եվ անհրաժեշտ օժանդակության ցուցաբերումը պայքարում ծայրահեղ կարևոր է նրանց գոյատևման համար:

Գոյություն ունեցող շատ միջազգային կազմակերպություններ (օրինակ՝ «Միջազգային համայնություն»-ը, «Գեյերի ու լեսբուհիների իրավունքների միջազ-

գային հանձնաժողով»-ը), որոնք փորձում են ազդել միջազգային կազմակերպությունների վրա՝ իրենց ձեռքբերումներով ու արդեն ունեցած հաջողություններով:

Բազմազանության համար պետք է պայքարել նաև տեղական և ազգային մակարդակով: Մոլորական քաղաքացին հավասարություն է պահանջում աշխատանքի վայրում, բնակարանային հարցերում, առողջապահական, ընտանեկան, կենսաթոշակային ապահովության և այլ իրավական հարցերում: Սեռական փոքրամասնություններին պատկանող մարդիկ նույնպես ունեն հավասարություն պահանջելու իրենց իրավունքը: Սրա հետ պետք է հաշվի նստի յուրաքանչյուրը: Հարձակվել նրանց վրա, ովքեր նույնպես ապրելու իրենց իրավունքն ունեն, անմարդակային է ու դաժան: Ցավոք, շատ երկրներում դեռևս ակնառու է բռնությունը սեռական փոքրամասնությունների հանդեպ, ինչը նույնիսկ պաշտպանվում է օրենքով:

Այնուամենայնիվ, վերջին երկու դարերում սեռական փոքրամասնությունները մեծ ճանապարհ են անցել արդարության համար պայքարում: Բայց նրանք դա չեն կարող միշտ մենակ անել: Պետք է հարգել ազատությունը, հանդուրժողականությունը և տարատեսակությունը: Սեռական բազմազանության ծիածանը բոլորի համար է, և բոլորը պետք է այն պաշտպանեն:

Գործելու ոլորտները

«Միջազգային համայնություն» կազմակերպությունը կողմ է հետևյալին՝

1. չեղյալ հայտարարել նույնասեռականությունը քրեականացնող օրենքները,
2. դատապարտել կտտանքները, անկախ այն բանից, թե ով է դրանց գոհը,
3. ապահովել պաշտպանություն ձեռքարկված ժամանակ,
4. կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել լեսբուհիների, գեյերի, երկսեռականների և փոխսեռականների բռնաբարության դեմ,
5. արգելել ստիպողական բժշկական «գուժումը». դա հավասարազոր է կտտանքների,
6. վերջ դնել անպատժելիությանը. լեսբուհիների, գեյերի, երկսեռականների և փոխսեռականների հանդեպ կտտանքների և վատ վերաբերմունքի մասին դիմումների հետաքննություններ անցկացնել,
7. բռնություններից պաշտպանել լեսբուհիներին, գեյերին, երկսեռականներին և փոխսեռականներին, պարտավորեցնել ոստիկանությանն ու իշխանության այլ օրգաններին վերջ տալ հոմոֆոբիական դրսևորումների ցամաքացած փորձի,
8. պաշտպանել նրանց, ովքեր իրենց սեռական կողմնորոշվածության պատճառով փախել են կտտանքներից. կառավարությունները պետք է լրջորեն վերանայեն և փոփոխություններ մտցնեն ապաստանի տրամադրման քաղաքականության մեջ՝ գերծ մնալով կանխակալ վերաբերմունքից,
9. պաշտպանել և օժանդակել լեսբուհիների, գեյերի, երկսեռականների և փոխսեռականների իրավունքների համար պայքարողներին,
10. ուժեղացնել միջազգային պաշտպանությունը. կտտանքների և վատ վերաբերմունքի կանխման համար կարող են օգտագործվել ՄԱԿ-ի բազմաթիվ միջոցներ, եթե դրանք վավերացվեն,
11. պայքարել խտրականության դեմ, ընդունել սեռական կողմնորոշվածության կամ սեռական նույնականացման հողի վրա խտրականության բոլոր ձևերն արգելող սահմանադրական և այլ դրույթներ:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՈՒՐԱՆ

Սեռը անձի կենսաբանական հատկանիշն է: Ավանդորեն մարդկությունը տարբերակում է արական և իգական սեռեր, մինչդեռ որոշ քաղաքակրթություններ կամ նոր տեսություններ միջսեռը դիտարկում են որպես երրորդ սեռ:

Սեռական կողմնորոշվածությունը մարդու սեռականության չորս բաղադրյալներից մեկն է և բնորոշվում է մշտական հուզական, զգայական, զբաղմունքային, սեքսուալ հակումներով որոշակի սեռի անձանց հանդեպ:

Տարասեռական կողմնորոշվածությունն անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեքսուալ հակումն է հակառակ սեռի ներկայացուցի նկատմամբ: Տարասեռականները գրգռվում և սեռական բավականություն են ստանում միայն հակառակ սեռի ներկայացուցիչների հետ կենակցելուց:

Նույնասեռական կողմնորոշվածությունն անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեքսուալ հակումն է նույն սեռի ներկայացուցիչ նկատմամբ: Նույնասեռականները գրգռվում և սեռական բավականություն են ստանում իրենց իսկ սեռին պատկանող ներկայացուցիչների հետ կենակցելուց:

Գեյն արական սեռի անձ է, որն ունի նույնասեռական կողմնորոշվածություն:

Լեսբուհին իգական սեռի անձ է, որն ունի նույնասեռական կողմնորոշվածություն:

Երկսեռական կողմնորոշվածությունն անձի մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեքսուալ հակումն է դեպի և՛ իր սեռի, և՛ հակառակ սեռի ներկայացուցիչները: Երկսեռականները գրգռվում և սեռական բավականություն են ստանում և՛ տղամարդու, և՛ կնոջ հետ կենակցելուց:

Երկսեռականը (քիսեքսուալ) արական կամ իգական սեռի անձ է, որն ունի երկսեռական կողմնորոշվածություն:

Փոխգեներներն (տրանսգեներներ) այն անձն է, որի գեներային ինքնությունն ու ինքնաարտահայտումը տարբերվում են նրա սեռի վրա հիմնված ավանդական գեներային դերերից:

Փոխսեռականն (տրանսսեքսուալ) այն անձն է, որն արդեն ունեցել է կամ պատրաստվում է ունենալ կենսաբանական սեռի փոփոխություն (հոգեախտորոշում, վիրաբուժություն, հորմոնային թերապիա):

Միջսեռն (ինտերսեռ) այն անձն է, որի սեռական և վերարտադրողական օրգանները չեն համընկնում ավանդական արական և իգական հասկացողությունների հետ:

Քուիրն այն անձն է, որի սոցիալական և մշակութային գեներային կամ սեռային ինքնությունը չի համընկնում հարիշխանական նորմատիվ համակարգի հետ, և որը համակրում է սոցիալական և մշակութային գեներային կամ սեռային բազմազանություն:

Սեռական վարքագիծն անձի սեռահարաբերությունների դրսևորումներն են, որոնք ևս կարող են լինել տարասեռական, նույնասեռական և երկսեռական, սակայն չեն բնորոշվում մշտական հուզական, զգայական, զբաղմունքային և սեքսուալ հակումներով:

SUS այն տղամարդն է, ով ցուցաբերում է նույնասեռական վարքագիծ և սեռական հարաբերություններ է ունենում տղամարդկանց հետ (MSM-man having sex with man):

ԿՍԿ այն կինն է, ով ցուցաբերում է նույնասեռական վարքագիծ և սեռական հարաբերություններ է ունեցում կանանց հետ (WSW-woman having sex with woman):

Գեներներն անձի ինքնությունն ու ինքնաարտահայտումն է այնպիսի հասարակական դերերով, որոնք աշխարհագրական, էթնիկ, պատմական, մշակութային և սոցիալական նորմերի վրա հիմնված ավանդորեն տարանջատվում են արականի և իգականի: Այս տարանջատման հիմքում ընկած են հասարակության կողմից ընդունված անձի կարծրատիպային դերակատարումները: Սակայն, լինում են դեպքեր, երբ անձի սոցիալական սեռը չի համընկնում ո՛չ արական, ո՛չ էլ իգական սեռական դասակարգումների հետ: Մարդկանց, որոնք իրենց դասում են թե՛ արական, թե՛ իգական սեռերին, անվանում են երկգեներներ, իսկ նրանց, ովքեր իրենց չեն դասում ո՛չ արական, ո՛չ էլ իգական սոցիալական սեռին, անվանում են անգեներներ:

Գեներային ինքնությունն անձի սոցիալական արտահայտումն է հասարակությունում, ինչը կարող է չհամընկնել նրա կենսաբանական սեռի հետ, սակայն հիմնված է արական և իգական երկակի հասկացողությունների վրա:

Գեներային ինքնաարտահայտումն անձի գեներային ինքնությունն արտահայտվում է իր պահելաձևով, նախասիրություններով, վարքագծով, արտաքին այլ դրսևորումներով, որոնք տվյալ հասարակությունը վերագրում է որպես արական կամ իգական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Adam Barry, The Global Emergence of Gay and Lesbian Politics, Temple University Press, 1999;
2. Altman Denis, Global Sex, The University of Chicago Press, 2001;
3. Blackwood Evelyn and Wieringa Saskia E., (eds.), Female Desires, Columbia University Press, 1999;
4. Caplan Pat (ed.), The Cultural Construction of Sexuality, Tavistock Publications, 1987;
5. Collins Rose, Portraits to the wall, Cassell, 1994;
6. Conner Randy P., Sparks David Hatfield, Sparks Mariya, (eds.), Cassell's Encyclopedia of Queer Myth, Symbol and Spirit, Cassell, 1997;
7. Crimes of Hate, Conspiracy of Silence, Amnesty International, 2001;
8. Dekker Rudolf M., Van de Pol Lotte, The Tradition of Female Travestism in Early Modern Europe, Macmillan Press, 1989;
9. Druncker Peter (ed.), Different Rainbows, Gay Men's Press, 2000;
10. Duberman Marin Baumi, Vicinus Martha, Chauncey George, (eds.), Hidden from History, Penguin, 1989;
11. Feinberg Leslie, Trans Liberation, Beacon Press, 1998;
12. Fone Byrne, Homophobia, Metropolitan books, 2000;
13. Foucault Michel, The History of Sexuality, Penguin books, 1976;
14. Le Vay Simon, Queer Science: The Use and Abuse of Research into Homosexuality, MIT Press, 1996;
15. Lorde Andre, Sister Outsider: Essays and Speeches, The Crossing Press, 1984;
16. Mackay Judith, The Penguin Atlas to Human Sexual Behavior, Penguin, 2000;

17. More Kate and Whittle Stephen (eds.), Reclaiming Genders, Cassell, 1999;
18. Nanda Serena, Herd Gillbert (ed.), Third Sex, Third Gender, Zone Books, 1993;
19. Nardi Peter M. And Schneider Beth E. (eds.), Social Perspectives in Lesbian and Gay Studies, Routledge, 1998;
20. Nataf Zachary, Lesbians talk Transgender, Scarlet Press, 1996;
21. Norton Rictor, The Myth of the Modern Homosexual, Cassell, 1997;
22. Reinfelder Monika, (ed.), Amazon to Zami, Cassell, 1996;
23. Seabrook Jeremy, Love in a Different Climate, Verso, 1999;
24. Stein Edward, The Mismeasurement of Desire, Oxford University Press, 1999;
25. Suthankar Ashwini, Facing the Mirror: Lesbian writing from India; Penguin, 1999;
26. Weeks Jeffrey, Making Sexual History, Polity 2000;

Ինչո՞ւ որոշ մարդիկ նույնասեռականներ են, մյուսները՝ տարասեռականներ, երրորդները՝ երկսեռականներ: Ինչու որոշ կանայք իրենց տղամարդ են զգում, իսկ որոշ տղամարդիկ իրենց հոգու խորքում գիտեն, որ իրականում իրենք կանայք են: Գոյություն ունի՞ արդյոք նույնասեռականության գեն: Աշխարհը փոխվում է, և հատկապես այն փոխվում է սեռական փոքրամասնությունների՝ լեսբուհիների, գեյերի, երկսեռականների ու փոխգենդերների համար: Որոշ երկրներում նրանց՝ հավասարության համար պայքարում ծանր նվաճած հաղթանակն իր պտուղներն է բերում հակախտրականության օրենսդրության տեսքով: Սիւնույն ժամանակ այլ երկրներում նույնասեռականներին շարունակում է մահապատիժ սպառնալ... «Սեռական բազմազանության արժանահավատ ուղեկից» գիրքը ապամոլորությունից դուրս է բերում սեռական ծիածանի գույները: Այն լույս է սփռում համընդհանուր տեսությունից ծածուկ լեսբուհիների, գեյերի, տրանսվեստիստների, ներքինիների և փոխսեռականների համաշխարհային դարավոր պատմության վրա: Այն դիտարկում է գիտության և բժշկության մոտեցումները խնդրին և պատմում է սանձազերծված կրոնական ֆունդամենտալիստների, քրիստոնյաների, մահմեդականների և հինդուիստների պատերազմի մասին՝ պատերազմ նրանց դեմ, ովքեր չեն տեղավորվում սեռական ձևանմուշների մեջ:

«Սեռական բազմազանության արժանահավատ ուղեկից»-ը մեկն է այն գրքերից, որ հրատարակում է New Internationalist Publications Ltd (www.newint.org).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեֆրի Վիքսի նախաբանը.....	3
Ներածություն.....	4
Շրջայց աշխարհով.....	5
Սա հեղափոխություն է.....	14
Քողարկված պատմություն.....	30
Հոնոֆորիա.....	42
Սեռական վերահսկողության քաղաքականությունը.....	62
Կրոնը.....	70
Գիտությունը.....	84
Փոխզենդերներ.....	93
Եզրակացություն.....	106
Տերմինների բառարան.....	108
Օգտագործված գրականություն.....	09

Ստորագրված է տպագրության` 07.10..2009թ.

Չափսը` 60x84 1/16:

Ծավալը` 7.0 տպ. մամուլ:

Տպաքանակը` 400:

Տրամադրվում է անվճար

«Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ